

ԿՐՈՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համար 15
օգոստոս, 2011



Հանդեսի հրատարակումը ֆինանսավորվել է
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական
մասնաճյուղի և Նիդեռլանդների Թագավորության կառավարության կողմից

The Publication is financed with the assistance of the Open Society Institute
Assistance Foundation Armenia and the Government of the Kingdom of the the
Netherlands

2011

Խմբագրական խորհուրդ

Լևոն Աբրահամյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ստեփան Դանիելյան

Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն

Հրանուշ Խառատյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հովհաննես Հովհաննիսյան

Երևանի պետական համալսարան

2

Վարդան Զալոյան

Հունանիտար հետազոտությունների հայկական կենտրոն

Արամ Սարգսյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Գլխավոր խմբագիր`

Ստեփան Դանիելյան

Խմբագիր`

Արթուր Ավթանդիլյան

Սրբագրիչ`

Արփիկ Համբարձումյան

հեռ.՝ 010 22 36 97

կայք՝ www.religions.am

Էլեկտրոնային հասցե՝ colfordem@gmail.com,
colfordem@religions.am



Համագործակցություն
հանուն ժողովրդավարության
կենտրոն

Բովանդակություն

Հրապարակումներ

Արման Փոլադյան

Հայաստանի եզրհաղավանների շրջանում
կրոնափոխության դեպքերի մասին..... 8

Հոդվածներ

Պատրաստեց Նազենի Ղարիբյանը

Պատմութիւն Հայոց իրաց.....21
(Narratio de rebus Armeniae)

3

Թարգմանություններ

Խոսե Կազանովա

Իսպանիա. պետական եկեղեցուց
մինչև եկեղեցի-պետությունից եկեղեցու բաժանում52

Ուսումնասիրություններ

Օրենքներ, ուսումնասիրություններ, մեկնաբանություններ

Կրոնական խնդիրների լուսաբանումը
Հայաստանի ԶԼՄ-ներում - 2010.....73

Կրոնի և համոզմունքների ազատությանը
վերաբերող մոր օրենսդրական նախաձեռնություններ116

Editorial Board

Levon Abrahamyan

*Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences
of the Republic of Armenia*

Stepan Danielyan

"Collaboration for Democracy" Centre

Hranush Kharatyan

*Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences
of the Republic of Armenia*

4

Hovhannes Hovhannisyan

Yerevan State University

Vardan Jaloyan

Armenian Center of Humanitarian Research

Aram Sargsyan

Armenian State University of Economics

Editor-in-chief

Stepan Danielyan

Editor

Artur Avtandilyan

Proofreading

Arpik Hambardzumyan

Web-site: www.religions.am phone: 37410 223697,
e-mail: colfordem@gmail.com , colfordem@religions.am



COLLABORATION
FOR DEMOCRACY
CENTRE

Summaries

Nazeni Gharibyan NARRATIO DE REBUS ARMENIAE

This article refers to a famous source of history called *Narratio de rebus Armeniae*. The author of this work is Chalcedonian who tries to show the heretical nature of the creeds believing in one Nature of Christ. This work has not been properly evaluated in Armenian historiography and needs to be well discussed in the future. The first study of this manuscript was done by Belgian Armenologist G. Garitte and after him H. Bartikyan translated the text into Armenian with annotations and interpretations. The French translation was implemented by J-P. Mahl.

In this article the introduction, content and conclusions of G. Garitte's work is represented, as well as the translation of H. Bartikyan and comparative analysis is made on that basis. This comparative analysis shows that many aspects of Armenian history are still unrevealed and this kind of sources are very helpful to illustrate the dark points of Armenian history.

5

Arman Poladyan ON THE CHANGE OF RELIGION AMONG THE YEZIDS OF ARMENIA

In the article, the author, based on the interviews done with the representatives of Yezids, analyzes the trends and tendencies of the changing of religion among the biggest ethnic minority group of Armenia – Yezids. There were many attempts to proselytize Yezids as by Islam and by different branches of Christianity. The basic trends of Christianity that could gain some followers among Yezids are some Protestant denominations. The representatives of this group assert that the change of religion is basically connected with social and economic conditions, as well as by the high rate of migration.

The author analyzes the problems arising from the change of religion in the framework of families, tribes and society. He also shows the mechanisms and difficulties of the adaptation process as for newly proselytized Yezids is quite hard to follow Christian values at the same time preserving its national identity. He also mentions that some of the villages of Yezids almost totally became either Baptist or Pentecostal. The author also described the places (villages) where Yezids mostly accepted any kind of Christian denomination.

As many Yezids accepted Christianity, they were put out from the community because the adaptation process is quite hard and complicated.

THE ILLUSTRATION OF RELIGIOUS ISSUES IN ARMENIAN MASS MEDIA, 2011

The analysis was prepared by the Collaboration for Democracy NGO in the framework of the "Religious Tolerance in Armenia" project.

This analysis represents the materials illustrated in Armenian Mass media concerning the religious organizations and various religious issues. The source for materials was the www.religions.am web-site which has the all materials published in electronic and non-electronic media of Armenia having more then 2000 visitors or 2000 publishing samples. For this report over 800 materials have been reviewed and analyzed. The aim of the report is to show the cases for intolerance , religious hatred, its reasons, various worldviews, etc. This report mainly refers to the articles and materials having negative approach in order to understand the approaches of the authors, as well as to analyze the basis for such approach existing in authors mind and in society. This report can give an overall understanding on the religious situation in Armenia, the general approaches of Armenian Mass Media towards the religious organizations, which also emerge in relation with the political and other spheres of life in Armenia.

This report analyzes the Law on religious organizations and its illustration in Armenian Media. It is also quite important to understand the attitude of State officials towards the religious organizations and evaluate new approached in public discourse. The report also reveals the mechanisms of spreading the religious hostility and hatred towards the registered and non-registered religious organizations. The religious issues became very important in education and in political life of Armenia, which are also illustrated in this report.

Jose Casanova FROM STATE CHURCH TO THE SEPARATION OF CHURCH FROM STATE

In this article the world famous scholar Jose Casanova analyzes the religious developments in Spain mostly emphasizing the contemporary situation in Spain and the impact of historical developments on the relationship of secular and religious in Spain. He explains how the relationship of State and the Catholic Church has been changed due to the changes in political power and what kind of transformations have the Spain society had because of such changes. It is quite important to mention that the author pays special attention to the role of Church during the Franco regime and how the Church could influence on the formation and activities of civil society in Spain.

The author analyzes the inner and outer causes for transformation of

Catholic Church in Spain as it firstly was the main defender of Franco regime and later became the most critique of the same regime. He made special emphasize on the Vatican II and the process of aggiornamento started after that. The encyclical called *Pacem in Terris* opened a new age for Catholic Church in Spain, which became the main defender for civil and human rights. Casanova also analyzes the relationship of young and old clergy in the development and transformation of Catholic Church having its influence on the internal life of Spain.

The author shows that though the Church was involved in the democratic processes and the Catholic activists and organizations played an essential role in transformation of the Church and society, but in many cases, the conservative clergy impeded the approaches and ideas of progressive clergymen.

«Կրոն և հասարակություն» հանդեսը ներկայացնում է Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունները

Արման Փուլադյան

Ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, Իրանին և իսլամին նվիրված հետազոտությունների և հրապարակախոսական հոդվածների հեղինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶԻԴԱԴԱՎԱՆՆԵՐԻ ՀՐԶԱՆՈՒՄ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

8

Տակավին իր սկզբնավորման ժամանակներից եզդի էթնիկ-դավանանքային խումբը ենթակա է եղել հավատափոխության այլազան դրսևորումների: Իհարկե, իրողություն են հենց adawı=adabi առաջին հոգևոր առաջնորդների և եղբայրների՝ այլ կրոնական հոսանքների հետ ունեցած առնչությունները (որոնք, ի դեպ, համայնքի ձևավորման վրա ունեցել են հիմնարար ազդեցություն. բավական է նշել, որ առաջին աղավինները և ինքը՝ Շեյխ Ադի բին Մուսաֆիրը, մեծ ճանաչում գտած սուֆիներ էին)¹: Սակայն մեր քննարկումը վերաբերում է ձևավորված գաղափարաբանական իրողության պայմաններում բացահայտ կրոնափոխությանը: Այն հիմնականում ակնհայտ պարտադրանքի բնույթ է կրել, ինչպես մահմեդական հարևան նվաճողների պարագայում, երբ վերջիններս նպատակադրվել էին «հրով ու սրով» դարձի բերել այդ մի բուռ լեռնական աշիրեթներին²: Բռնի իսլամացման փորձերը, որոնք սկզբնավորվել են դեռևս 12-13-րդ դարերում, երբ նոր էին կազմավորվել աղավիհական առաջին լեռնաբնակ համայնքները, ուղեկցել են եզդիների պատմության շատ փուլերում:

Այլ է քրիստոնյա աշխարհի կողմից այս համայնքին «դարձի բերելու» պատմական փորձը: Վերջինս հատկանշվում է զուտ իր քարոզչական բնույթով: Այստեղ ևս չարժե կենտրոնանալ վաղ աղավիհական և նեստորական համայնքների յուրատիպ հարաբերությունների վրա, որոնց անդրադառնալու փորձերը այսօր էլ առաջ են բերում նաև գիտականորեն չարդարացված հրապարակումներ: Այնպես որ, եզդիների շրջանում քրիստոնյա առաջին քարոզիչների մուտքը կարելի է թվագրել այն ժամանակահատվածով, երբ Մոսուլի շրջակայքում հայտնվեցին առաջին պապական քարոզիչները: Սկզբում դրանք ֆրանցիսկյան, ապա և դոմինիկյան, կարմեյան քարոզիչներն էին: 17-րդ դարից Սին-

1 В. Аракепова, К истории формирования езидской общины, Иран-Намэ, Армянский востоковедческий журнал, №40, Ереван, 2006, ст. 64-66. Արման Փուլադյան, Եզդիների սուրբ գրքերի, դավանանքային հիմնարար խորհուրդների, պանթեոնի և հանրային կառուցվածքաբանության շուրջ, Կրոն և հասարակություն, հ.13, 2010, էջ 94-95, 110-116:

2 Ազիզ Թամոյան, Մենք եզդի ենք, Երևան, 2001, էջ 18, հատված 1989թ. սեպտեմբերի 30-ին Երևանում կայացած՝ Հայաստանի եզդիների 3-րդ համագումարում նրա ելույթից, Ազիզ Թամոյան, Մի գերդաստանի պատմություն, Երևան, 2006, էջ 179-187, Արման Փուլադյան, նույն տեղում, էջ 98-99:

ջարի լեռներում գործունեության փորձ է ձեռնարկում Հավատի պրոպագանդա (Propaganda Fide) հաստատությունը: Սկզբնապես կաթոլիկ միսիոներներին բարեկամաբար ընդունած եզդի ցեղապետերը, հետագայում հասկանալով նրանց ժամանումների իրական նպատակը, հրաժարվում են նրանց հետ որևէ «համագործակցությունից»: Եվ պապական բանագնացները, որոնք սկզբում Հռոմին հղված իրենց նամակներում եզդի աշիրեթներին բնութագրում էին որպես «հեզ ու բարեհամբույր կռապաշտների», որոնց դժվար չի լինի «դարձի բերել, հետագայում Սուրբ Աթոռին այս կապակցությամբ տրամազօրեն հակառակն են գրում, թե՛ «լեռնաբնակ այս ցեղախմբերը բավական ամուր են կառչած իրենց «սուտ վարդապետությանը»³:

Խոսելով մեր ժամանակներում Հայաստանում եզդիների քրիստոնեություն ընդունելու մասին՝ հարկ է նկատի ունենալ նրանց շրջանում բացառապես արդի բողոքական հարանվանությունների և վերջիններիս քարոզիչների կատարած աշխատանքները⁴: Դեռ խորհրդային տարիներին երևանաբնակ առանձին եզդի ընտանիքներ անդամակցել են Մկրտական (բապտիստական) և Ավետարանական եկեղեցիներին, մասնակցել վերջիններիս տնային խմբակների հավաքներին ու արարողություններին: 1980-ականների վերջերին և 90-ականների սկզբներին Հայաստանում ի հայտ են գալիս «հոգևոր արթնության հասած» մի քանի եզդի հոգևոր հովիվներ, որոնց հաջողվում է ազգակիցների միջավայրում կատարած քարոզչության շնորհիվ այս ուղղությամբ հասնել զգալի հաջողությունների: Հիշատակելի են Բորիս Շամոյանը՝ Արագածի շրջանում (գյուղ Քարվանսարա, ներկայիս՝ Ամրե Թագա) և Նադր Օզմանյանը՝ Հոկտեմբերյանի շրջանում (գյուղ Ջանֆիդա): Ներկայումս նշյալ և հարակից գյուղերում կազմավորվել են փոքրիշատե կայուն ավետարանական խմբեր՝ ներառված տարբեր Ամբողջաավետարանական և Մկրտական եկեղեցիների մեջ: Ի տարբերություն անցյալի, այժմ այս եկեղեցիների քարոզչական աշխատանքի շնորհիվ առանձին դեպքերում արդեն ամբողջ գյուղեր ընդգրկված են ավետարանական տարբեր կառույցներում: Եզդի մտավորականության ներկայացուցիչ մեր զրուցակիցները (որոնք խնդրեցին չիրապարակել իրենց անունները) այս իրողությունը բացատրեցին անմխիթար սոցիալական պայմանների և հոծ արտագաղթի հանգամանքներով: Պայմանավորված վերջիններով՝ ապագա կրոնափոխները զգալիորեն զրկվում են նաև ազ-

3 J.S. Guest. The Yezidis. A Study in Survival. New York, 1987. Виктория Аракепова, նույն տեղում:

4 «Արդի բողոքական հարանվանությունները» Ռեֆորմացիայի այսպես կոչված «երրորդ ալիքի»՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ձևավորված գաղափարաբանական ուղղություններն են («առաջին» ալիքը ձևավորվել է 16-րդ դարի առաջին և 16-րդ դարի երկրորդ կեսերին, իսկ «երկրորդը»՝ 19-րդ դարի առաջին կեսին): «Երրորդ ալիքը» ծնունդ տվեց Հոգեգալստական-խարիզմատ կամ այլ կերպ՝ Ամբողջաավետարանական շարժումներին: Վերջիններիս մերօրյա ներկայացուցիչների պնդմամբ 20-րդ դարում ամբողջաավետարանական տարբեր եկեղեցիների անդամների ընդհանուր քանակը գերազանցել է բողոքականության «առաջին» և «երկրորդ» ալիքների եկեղեցիների համապատասխան ցուցանիշները (տես «Կյանքի խոսք», հ.5, 12, 2009, էջ 19): «Բրիտանական հանրագիտարանի» համաձայն՝ 1998թ. Ամբողջաավետարանական շարժումն ընդգրկել է 540մլն հետևորդի:

Մինչև մեր օրերը որոշակի տվյալներ չկան, արդյոք որևէ բողոքական եկեղեցի գործե՞լ է եզդիների շրջանում, մասնավորապես նրանց բնակության վայրերում՝ Սինջարի լեռներում կամ այլուր:

գակիցների արգելող-խրատող միջամտությունից: Ջրուցակիցներս ընդգծեցին նաև այն հանգամանքը, որ արտագաղթողների մեջ զգալի են եզդիական դավանանքի աչալուրջ և նախանձախնդիր հոգևոր դասերի՝ շեյխերի և փիրերի ներկայացուցիչները:

10

Ներկայումս Ամբողջաավետարանական և Մկրտական եկեղեցիների՝ եզդիադավանների միջավայրում իրականացրած քարոզչությունը և, որպես հետևանք, վերջիններիս՝ քրիստոնեության ընդունման դեպքերը (անհատների, ընտանիքների, թե ամբողջ գյուղի մակարդակով) առանձին վերլուծություն են պահանջում: Խնդրո առարկա երևույթը եզդիական էթնիկ-դավանանքային խմբի ներսում (տվյալ դեպքում՝ հայաստանյան) իր հետ, բնականաբար, մուծում է ներխմբային հարաբերությունների նոր որակներ և վերջիններով պայմանավորված հանգամանքներ: Քրիստոնեություն ընդունած այս նոր խմբերը հիմնականում ժառանգել ու ժառանգում են այն բոլոր ընկերային-հասարակական բնորոշիչները, որոնք հատուկ են եզդի բնակչությանը: Ասվածի վառ ապացույցը ազգային ինքնության փնտրտուքի և (կամ) ինքնաընկալման տարբերության առկայությունն է: Այսպես, եթե Արագածոտնի մարզում այս «նորադարձ քրիստոնյաները» իրենց հիմնականում համարում են քրդեր, ապա Արմավիրի մարզում առավելաբար տիրում է ազգությանը եզդի լինելու ինքնաընկալումը: Քրդական ինքնաընկալումը ելնում է այն մեկնաբանությունից, որ «եզդիությունն» ընդամենը կրոնն է, որը իրենք՝ քրդերը, դավանում են: Եվ *«ընդունելով քրիստոնեություն, իրենք՝ նորադարձները, մերժել են եզդիականությունը որպես հեթանոսություն և դարձի են եկել ճշմարիտ հավատքի, մինչ ազգությունը մնացել է նույնը՝ քուրդ»*: Մյուս՝ «բուն» եզդիական միջավայրում, եզդիությունն ի սկզբանե ընկալվում է հենց որպես ազգություն, ըստ որում, քրդերից ու վերջիններիս առնչվող ամեն ինչից խիստ տարբեր, անգամ՝ հակառակորդ: Այստեղ քրիստոնեության ընդունումը մեկնաբանվում է որպես հրաժարում նախկին «շարֆադինյան» կրոնից, որի հետևանքով էլ իրենց բնութագրում են ուղղակի «եզդի քրիստոնյաներ», ի տարբերություն «շարֆադինյան եզդիների»⁵: Այն հանգամանքը, որ տարբեր մարզերում այս նորահավատ քրիստոնյաներն ունեն տարբեր էթնիկ ինքնաընկալում, բնականաբար, պայմանավորված է այդ մարզերում, առհասարակ, եզդի բնակչության տարբեր խմբերի տարբեր էթնիկ ինքնաընկալումներով: Նշենք, որ, ի տարբերություն Արագածոտնի և Արմավիրի մարզերի, մյուսներում, օրինակ՝ Կոտայքում կամ Արարատում, էթնիկ ինքնատարբերակումը տեղաբաշխվածության առումով այդքան հստակ չէ, և տարբեր բնակավայրերում այն կարող է տարբեր լինել:

5 Մալակ Շարֆադինը եզդիական դավանանքի առանցքային անձերից է, «յոթ սուրբ ձիավոր – հրեշտակներից» մեկը: Այն ադալիական հոգևորական առաջնորդներից մեկի՝ սուֆի Շարաֆ ադ – Գինի (զոհված՝ 1257թ.) առասպելաբանական տարբերակն է: Եզդիների շրջանում ընդունված է իրենց ողջ դավանանքը հաճախ կոչել Շարֆադինի անունով. *դինէ մըն Մալակէ Շարֆադինը* (կրոնս Շարֆադինն է): Տե՛ս Ա. Թամոյան, Մենք..., էջ 145, Ա. Թամոյան, Մի..., էջ 17-20, В. Аракелова, նույն տեղում..., էջ 66, Ա. Փոլոյան, նույն տեղում, հ.14, էջ 91:

Մյուս կողմից՝ նման խառը տեղաբաշխվածությունը հավելյալ լարվածություն է մտցնում առանց այն էլ միմյանց նկատմամբ անբարյացակամ տրամադրված, տարբեր ինքնաընկալում ունեցող երկու խմբերի միջև: Ինքնաընկալման տարբեր մեկնաբանությունները, բնականաբար, նոր քրիստոնեական միջավայր են բերում նախկին բանավեճը՝ քու՞րդ ես, թե՞ եզդի, որն էլ հաճախ վերածվում է միջխմբային վիճաբանությունների, ապա և փոխադարձ կոշտ մերժողականության: Փաստորեն, **էթնիկ ինքնության անորոշությունը հայաստանյան եզդիության շրջանում իրեն զգալ է տալիս:** Այստեղ հարկ է նկատել մի հետաքրքիր հանգամանք. **քրդական ինքնաընկալում ունեցող նախկին եզդիադավանները նոր՝ քրիստոնեական միջավայր են փոխանցում նաև իրենց հատուկ քրդական ազգայնական զգացումներն ու շարունակում են տոգորված մնալ քուրդիստանյան հայրենասիրությամբ:** Վերոհիշատակյալ Բորիս Շամոյանը, որը ներկայումս Արագածոտնի մարզի «քրդական եկեղեցու» հովիվն է և հովվում է մոտ յոթ գյուղի ավետարանական քրդերին, մեզ հետ զրույցում նշեց, որ, որպես քուրդ մարդ, ինքը հավատում է, որ մի օր իրողություն կդառնա անկախ Քուրդիստանը: **«Քուրդ ժողովուրդը ևս արժանի է անկախ և ազատ հայրենիք ունենալու»:** Առհասարակ, հանդիպումներից պարզ դարձավ, որ քուրդիստանյան հայրենասիրական զգացումներ ունեցող այս խմբի ներկայացուցիչների մոտ առկա է նաև Աբդուլլահ Օջալանի՝ որպես ազգային խարիզմատիկ առաջնորդի ընկալումը⁶:

Ջրույցում Բորիս Շամոյանը նշեց, որ քրիստոնեական հավատքի տեսանկյունից անընդունելի է և բանականության տեսանկյունից էլ անտրամաբանական, երբ եզդի քուրդը քրիստոնյա մկրտվելուց հետո իրեն որևէ կերպ կաշկանդված զգա կրոնաբարոյախոսական հին (եզդիական – Ա.Փ.) ուղեմիջներով: Եվ դա, առաջին հերթին, վերաբերում է եզդիների հոգևոր դասի ներկայացուցիչների նկատմամբ ունեցած բացարձակացված պատկերացումներին: Ըստ որում, թե՛ եղբայր Բորիսը և թե՛ մեր մյուս զրուցակիցները (և՛ եզդիադավան, և՛ քրիստոնյա) հաստատեցին, որ **ամբողջաավետարանական և մկրտական կարգով քրիստոնեություն ընդունած նախկին եզդիադավանները գերազանցապես աշխարհիկ մրիդների դասից են:** Ըստ Բորիս Շամոյանի՝ համեմայն դեպս, իրեն երկու դեպք է հայտնի, երբ փիրերից որևէ մեկը քրիստոնեություն ընդունի. մեկը Ամրե Թազա գյուղում, զրեթե ամբողջովին «քրիստոնեացված» (մեկ փիր կին իր զավակի հետ, «բայց ոչ անուսինը»), մյուսը՝ Արմավիրի մարզում: Առանձին վկայությունների համա-

6 Նշենք, որ հատկապես վերջին տարիներին Արևմտյան Եվրոպա արտագաղթած քրդերի միջավայր է ներմուծվում այսպես կոչված «անօջալան քրդի» գաղափարը, ըստ որի՝ լավ և հայրենասեր քուրդ լինելու համար բնավ էլ վճռորոշ պայման չէ՝ Օջալանի՝ որպես ազգային առաջնորդի ընկալումը: Մյուս կողմից՝ Յաստանում քրդական ինքնաընկալմամբ եզդիադավանների շրջանում առկա՝ Օջալանի մեծարման ու համաքրդական հայրենիքի գաղափարների արժարժման երևոյթները հիմնականում պայմանավորված են դեռևս 1990-ական թթ. այստեղ տարվող այն աշխատանքներով, որոնք իրականացնում են արևմտաեվրոպական երկրներից գործուղված քրդական կառույցների պատվիրակները: Ի դեպ, մեծավ մասամբ վերջիններիս գործունեությամբ էր պայմանավորված նաև այն, որ դեռ 90-ականների սկզբին հայաստանյան եզդիների շրջանում մեծ թափ հավաքեց քրդական ինքնաընկալումը:

ծայն ՝ քրիստոնեական հավաքներին մասնակցում են նաև շեյխերի դասի ներկայացուցիչներ: Ի դեպ, անունը հրապարակել չցանկացող մեր եզդիադավան գրուցակիցներից մեկը հոգևոր դասի (որպես նախնայաց ավանդների պահպանների) «աղանդավորական» քարոզչության նկատմամբ անբարյացակամության կամ անտարբերության հիմնական պատճառներ է համարում, իհարկե, դասային հպարտությունն ու նախանձախնդրությունը: Քիչ դեր չունի նաև զգոնությունը եզդի հասարակության, հավատակիցների կարծիքի նկատմամբ. *«Չլինի թե իմանան ու իրենք ծաղրի ու խայտառակության առարկա դառնան»*: Եվ, սակայն, խնդրո առարկա երևույթի ամենառացիոնալ բացատրությունը վերոնշյալ և մի քանի այլ գրուցակիցներ տեսնում են շեյխերի ու փիրերի ֆինանսատնտեսական գործառույթներում, որոնք իրականացվում են կրոնական տարբեր արարողակարգերի ժամանակ: Այստեղ ունեցած վճռորոշ ու առանցքային դերակատարումը նրանց օժտում է, ըստ էության, անսահմանափակ իրավունքներով (մրիդների կրոնական զգացմունքների վրա): Նման միջոցառումներում կրոնական ավանդական շարժառիթներով գոյանում են ոչ քիչ ֆինանսական և նյութական միջոցներ, որոնց նկատմամբ շեյխերի ու փիրերի աներկիմաստ ակնկալիքները միշտ էլ դաջվում են «հասարակ» մրիդների հիշողություններում: Հարկ է ավելացնել, որ հայաստանյան շեյխերն ու փիրերը չեն դադարում հեղինակություն լինել նաև արտագաղթած եզդիների համար, այնպես որ *«ամեն շեյխ ու փիր արտասահմանում տասնյակներով մրիդներ ունի»*, և վերջիններիս կրոնական պարտքն է տարբեր առիթներով ֆինանսանյութական մուծումներ անելը: Նշենք, որ կրոնական արարողությունների համակարգը տարածվում է եզդիական կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ ծնունդ, կնունք, ամուսնություն, հուղարկավորություն և այլն, ընդհուպ տարրական կենցաղավարություն: «Բըսկի հեռացման» արարողակարգի ժամանակ (երբ մկրատով կտրվում է մեկ տարին չբոլորած, սովորաբար 7-8 ամսական, երբեմն 11 ամսական արու զավակի մազափունջը) այդ հատուկ ծեսն իրականացնող ընտանիքի շեյխը երբեմն *«մինչև տասնյակ հազարների հասնող կլորիկ գումար է պահանջել»*: Սակայն ըստ բազմաթիվ մեկնաբանությունների՝ «այդ ամենն» ուղղվում է համայնքին, նրա կարիքավոր ընտանիքներին օգնելուն և տարաբնույթ բարեգործություններին: Եթե նման փաստարկներին կարելի է համաձայնել, օրինակ՝ Հյուսիսային Իրաքի, Լալեշի սրբավայրի և հարակից հոծ բնակավայրերի առումով, որտեղ տիրում է եզդիական ընդգծված ավանդապահությունը (որոշակիորեն ձևավորված է դասային ողջ համակարգը, հստակեցված են բոլոր դասերի գործառույթները), ցավոք, դրանք թերի են հայաստանյան եզդիական իրականության համար, որտեղ տիրում են դասային առավել «պարզեցված», եռաստիճան համակարգը և ներխմբային հարաբերությունների աղճատված, դեֆորմացված, ընդհուպ գռեհկացված կացությունը: Ահա նման իրավիճակը հոգևոր դասին հեռու է պահում ավետարանական քարոզիչներից ու նրանց քարոզներից: Մյուս կողմից,

վերջիններիս սլաքն այստեղ, առաջին հերթին, ուղղվում է շեյխերի, փիրերի և մրիդների միջև ցանկացած սահմանազատման ու տարբերակման վերացմանը. մրիդների համար առաջիններն այլևս «մեր տերերը» չեն, դադարում են կրել որևէ սրբազան խորհուրդ և դրանով պայմանավորված որևէ հեղինակություն: Դասային համահարթեցման, հեղափոխական պահանջների այս պայմաններում օրինաչափորեն պետք է վերանան նաև եզդիական դավանանքում հիմնարար նշանակություն ունեցող երեք հայտնի արգելքները՝ դարբա խըրկան, դիսկա դանեն և շալակե գեռինը⁷: Մասնավորապես, վերջինս, որով սրբազան արգելքի տակ է ընկնում ամուսնական կապը տարբեր դասերի և նույնիսկ ենթադասերի ներկայացուցիչների միջև: Նոր կրոնը նոր պայմաններ է առաջադրում, և շեյխական ու փիրական կոչումներ կրող ցեղախմբերի միջև նորահավատության տրամաբանությամբ պետք է ջնջվեն նաև խնամիանալու արգելքները միմյանց ու մրիդների միջև:

Նույնը վերաբերում է նաև դիսկա դանեին, որով սրբագործվում է եզդու և ոչ եզդու միջև ամուսնության արգելքը: Նախկին եզդին և նորահավատ քրիստոնյան այլևս այլազգիի հետ ընտանիք կազմելու խնդիր չունեն, եթե կա նման ներքին և փոխադարձ ցանկություն:

Նշված բոլոր վիճակները վերաբերում էին նրան, թե «քրիստոնեություն ընդունած» նախկին եզդիների, ինչպես նաև նրանց ու եզդիադավանների միջև հարաբերությունների ինչպիսի նոր որակներ պետք է ստեղծվեին քրիստոնեական նորամուտ վարդապետության առաջադրություններով և տրամաբանությամբ: Իրականությունը, սակայն, օրինաչափորեն մի փոքր այլ է: **Եզդիական վերոնշյալ բոլոր պատկերացումները և դրանցից ածանցվող, դրանցով կարգավորվող հարաբերություններում քրիստոնեական նորադարձության տրամաբանության ուժը բնավ էլ միանշանակ չի գործում:** Իրենք իրենց «քրիստոնեություն ընդունած» և «քրիստոնյա» համարող եզդիների շրջանում (և հատկապես գյուղական բնակավայրերում) սովորույթի կամ դրանից կամա-ակամա չիրաժարվելու ուժով պահպանվում են թե՛ եզդիական հոգևոր դասերի նկատմամբ եղած (ամենևին ոչ ստիպողական) երկյուղածությունը, թե՛ եզդիականության բնորոշ երեք հիմնարար արգելքները⁸: Ըստ որում, ասվածը վերաբերում է թե՛ «քրդական» և թե՛ «ոչ քրդական», «բուն եզդիական» ինքնաընկալում ունեցող խմբերին: Առանձին վկայությունների և զրույցների համաձայն, շեյխերը և փիրերը չեն դադարում այցելել իրենց հոգևոր հոգածության ներքո գտնվող ընտանիքներին, եթե անգամ վերջիններս «ընդունել են այլ կրոն»: Նման քրիստոնյա ընտանիքները պարզապես դիտվում են «Մալակե Թաուսի և Շեխադու նախանշած միակ ճշմարիտ ուղղուց ժամանակավորապես շեղված մոլորյալներ, որոնց համար դեպի համայնք հետդարձի դռները միշտ էլ բաց են»⁹: Իրենք՝ այդ ընտանիքների անդամները ևս, իրենց

⁷ Այս մասին տես՝ Ա. Փոլաոյան, նույն տեղում, հ. 14, էջ 111-112:

⁸ Առաջին արգելքը՝ դարբա խրկան (բառացի՝ հոգևորականի հանդերձանքի վրա ձեռք բարձրացնելու արգելքը), ըստ էության, փոխաբերական իմաստով՝ հենց հոգևոր դասերի նկատմամբ երկյուղածություն ու հարգանք է ենթադրում:

հերթին, երբևէ հակված չեն լինում այրել բոլոր կամուրջները թե՛ իրենց՝ շեյխերի ու փիրերի, թե՛ առհասարակ համայնքի, ցեղակիցների ու ազգակիցների միջև: Չեն ջնջվում նաև հոգևոր և հանդերձյալ կյանքի եղբայրների և քույրերի հետ ունեցած կապերը¹⁰: Թե՛ հոժարական և թե՛ շրջապատի քամահրական, քննադատական կարծիքից խուսափելու համար այդպիսիները հիմնականում մասնակցում են թե՛ եզդիական տոնական տարբեր միջոցառումների, թե՛ համայնական տարբեր հավաքների, մասնակցում այսպես կոչված «հասարակական եռուզեռին»: Կարելի է եզրակացնել, որ **նորահավատները, ընդհանուր առմամբ, ապրելով միմյանց հետ բնակության առումով նոր ընկերակցության պայմաններում, կամա-ակամա կրում են հիմնական միջավայրի՝ եզդիության ընկերային ու մշակութային իրականության ազդեցությունը: Մեր զրուցակիցներից մեկն այս առումով տեղին համարեց մեջբերել եզդիական հայտնի ասացվածքը. *էլ մակա մարիայա* (Համայնքն է մարդու մայրը):** Իհարկե, այնպիսի բնակավայրերում, որտեղ արդեն մեծամասնություն են իրենց քրիստոնյա համարողները, վերջիններս լիովին ազատ են նոր կենցաղավարության ու կենսակերպի համար:

Նշեցինք, որ նոր պայմաններում չեն դադարում գործել նաև հիմնարար արգելքները: Թե՛ միջդասային և թե՛ եզդի-այլազգի ամուսնական կապերը բացառող սրբազան օրենքները շարունակում են մեծ դեր ունենալ իրենց քրիստոնյա համարող նախկին եզդիների հոգեմտածելակերպում: Պարզվեց, որ նորահավատները պատրաստ չեն, և նրանց ներկայիս սերունդը դժվար թե ներքին մղում ունենա իրաժարվելու եզդիականության այդ բնորոշիչներից: Հետաքրքրական է, օրինակ, շալպկե գեռինի պարազայում հետևյալ մեկնաբանությունը. *«Քանի որ քրիստոնեությունը ընդունածներս բոլորս էլ մրիդներ ենք* (տես՝ վերը-Ս.Փ.), *սպա նույնիսկ մեզանից յուրաքանչյուրի ցանկության դեպքում էլ խնամհանալ շեյխի կամ փիրի ընտանիքի հետ, վերջիններիս կողմից միանշանակ կներժվի»:* Սակայն այն հարցերին, թե արդյո՞ք վարկածային-երևակայական տարբերակում մեր զրուցակիցները՝ «նախկին մրիդները», կընդդիմանային իրենց քրիստոնյա երեխաների ընտանիք կազմելուն, ասենք, «նախկին շեյխ» և քրիստոնյա դարձած ընտանիքից սերած քրիստոնյա երեխայի հետ, պատասխանները միանշանակ չէին: Մի քանիսը դժվարացան պատասխանել (կամ ցույց տվեցին, թե դժվարանում են), մի քանիսն էլ աներկիմաստ ասացին, որ լավ կլիներ

⁹ Ասվածը հետաքրքրական համադրության մեջ է այն վիճակի հետ, երբ որևէ այլազգի անկեղծ և հոգևոր ինչ տարողունակությամբ ու խորքայնությամբ էլ ընդունի եզդիականության դրույթները, մեծ ցանկության դեպքում էլ չի կարող *օծվել* եզդի. *եզդին ծնվում է որպես եզդի, և ոչ մի այլազգի չի կարող լինել եզդի:* Ասել է թե *եզդիությունը արյուն է:* «Եզդիխանաս» թերթի խմբագիր Խըղըր Հաջոյանը հիշատակեց մի այսպիսի դեպք, երբ, իբր, մի քանի այլազգի, տարիներ առաջ, ծանոթանալով եզդիական վարդապետությանը, սրտանց ցանկություն են հայտնել ընդունել այդ կրոնը և օծվել ու կոչվել եզդի: Շեյխը, որին դիմել էին նրանք այդ խնդրանքով, մերժել էր, բացատրելով. *«Ասացե՛ք, իսկ դուք կարո՞ղ եք եզդիության դարձնելու* (հավատքի բերելու – Ս.Փ.) *ծեր ծնողներին, բոլոր հարազատներին, պապ ու տատերին, վերջապես ձեր տոհմերի այս աշխարհից հեռացած բոլոր ժամանակների նախնիներին»:*

¹⁰ Եզդիների շրջանում հոգևոր և հանդերձյալ կյանքի եղբոր ինստիտուտի մասին տես Ս. Թամոյան, Մենք... էջ 222, Քուրդիստանում եզդիական իրականության դերն ու մշամակությունը, «Միջագետք» երկշաբաթերթի հրատարակություն, Երևան, 2002, էջ 88-89, Ա. Փոլադյան, նույն տեղում, հ.14, էջ 112:

իրենց զավակների ընտրությունը լինել քրիստոնյա մրիդների միջավայրից:

Նույն պահպանողական մոտեցումը կա նաև դիսկա դանեի դեպքում: Մեր այն հարցին, թե ինչպե՞ս կվարվել ինքն անձամբ, երբ քրիստոնյա քուրդ իր ամենահարազատ մարդկանցից մեկը որոշել է ընտանիք կազմել հայ կամ որևէ այլ օտարազգի (ավետարանական-մկրտական) քրիստոնյայի հետ, ինքը՝ հովիվ Շամոյանը, այսպես մեկնաբանեց. «*Ես կփորձեմ նրան տարհանոգել այս հարցում, քանի որ ճիշտ են գտնում, որ մեր եզդի քրիստոնյաները միմյանց հետ ընտանիք կազմեն: Դա ավանդույթ է: Ինչու՞ ամուսնանալ օտարազգիի հետ, երբ կարելի է կյանքի կողակից ընտրել սեփական քրիստոնեական միջավայրից*»: Եղբայր Բորիսը հավելեց նաև, որ «*եթե անհուսորեն մեծ լինի փոխադարձ սիրո արդյունքում ամուսնության ձգտումը, ինքը կգիջի*»: Անթաքույց էր, որ թե՛ հովիվը, թե՛ նոր հավատակից մեր գրուցակիցները առավել հակված կլինեն խնամի-անալու իրենց նախկին, «արևապաշտ» հավատակիցների¹¹ (դասով՝ մրիդ-Ա.Փ.), քան քրիստոնյա օտարազգիների հետ¹²:

Ի մի բերելով առկա երևույթները, կարելի է ամփոփել. **հին՝ եզդիական և նոր՝ քրիստոնեական իրականությունների համադրման պայմաններում խնդրո առարկա խմբում գոյանում են ներ և արտախմբային հարաբերությունների նոր որակներ: Վերջիններով էլ պայմանավորված՝ եզդի բնակչության ընդունած պատկերացումային քրիստոնեությունը բնորոշվում է իր հաճախ անթաքույց յուրատիպ ազգայնականությամբ, որտեղ, սակայն, դավանանքների սինկրետիզմի դեռևս զուրկ է որոշակի գաղափարաբանական մեկնաբանությունից:** Չնայած դրա առանձին տարրեր նկատվեցին հոգևոր հովիվների հետ գրույցներում: Օրինակ, ըստ Բորիս Շամոյանի՝ եզդիական դավանանքում, ծեսերում, սովորույթներում կան շատ բուն քրիստոնեական տարրեր, մասնավորապես, հուղարկավորության ծեսի ժամանակ հանգուցյալի պատանքին առնչվող երեքանգամյա գործողությունը: Այս և այլ օրինակներով գրուցակիցս, ըստ էության, փորձում է ոչ միայն ընդգծել քրիստոնեական վարդապետության առաջնայնությունը եզդիականության նկատմամբ, այլև դրանով ապացուցել վերջինիս «քրիստոնեական ակունքների» գոյությունը: Նկատենք, որ ավետարանական քարոզչի մեկնաբանությունները կարևորվում են վերոնշյալ սինկրետիկ մեկնաբանությունների հասկանալի փնտրտուքների տեսանկյունից և չեն կարող հավակնել գիտական ուսումնասիրության¹³:

11 Եզդիական դավանանքի՝ արևապաշտության հետ ունեցած առնչության մասին տես Մифы народов мира (МНМ), Малаки-Тазы, М. Б. Мейлах, том II, стр. 95; Ա. Թամոյան, Մենք... էջ 144, Քուրդիստանում... էջ 93:

12 Հայտնի են դեպքեր, երբ առանձին նորահավատներ, որոնք բնակվում են բացառապես այլազգիների հարևանությամբ (Հայաստանում կամ արտերկրում), ըստ որում՝ մեծ քաղաքներում ընտանիքներ են կազմել հենց օտարների հետ: Նման դեպքեր առկա են նաև եզդիադավանների շրջանում, սակայն երկու դեպքում էլ մնաց երևույթները հատուկենտ են և մինչ այժմ որևէ վիճակագրական դիտարկման ենթակա չեն եղել:

13 Կարծում ենք՝ քրիստոնեական և եզդիական վարդապետությունների թե՛ գաղափարաբանական և թե՛ ծիսական կողմերի բազմաթիվ նկատելի աղերսներ մեկնելի են նախևառաջ երկուսի համար էլ ընդհանուր՝ հնդեվրոպական առասպելաբանական ակունքներով և սկիզբ են առնում դեռ վաղ ադամիական առաջին համայնքների ժամանակներից: Այս մասին մանրամասն տես Գառնիկ Ասատրյան, Դիվականք, Իրան-Նանե, թիվ 14-15, Երևան, 1995, В. Аракелова, նույն տեղում, Ա.Փոլադյան, նույն տեղում:

Ասել, թե եզդիների և նրանց կրոնափոխ ազգակիցների հարաբերությունները հարթ են և զերծ փոխընկալմամբ պայմանավորված խնդիրներից, իհարկե, ճիշտ չի լինի: **«Նախնիների նախանշած ճշմարիտ ուղուց»** երես թեքելով՝ նորահավատները դրանով իրենց վրա են բևեռում դոմինանտ միջավայրի չարդարացնող և հանդիմանական վերաբերմունքը, ըստ որում, **«միակ ճշմարիտը»** լինելու նաև սեփական հավանությունների պայմաններում: Ստեղծված փոխադարձ անվստահության մթնոլորտում համատեղ բնակության պայմաններում չեն բացառվում նաև բախումնային իրավիճակները: Մեզ հետ զրույցում Բորիս Շամոյանը նկատեց, որ *«եզդիները առիթը բաց չեն թողնում ասելու, թե իբր մենք մեր նախնիներին և նրանց ավանդությունները ուրացողներն ենք: Հաճախ ուղղակիորեն պիտակավորվում ենք որպես դավաճաններ, որի հետևանքով էլ սկիզբ են առնում սուր վիճաբանություններ: Պատահել է, երբ ընդհանուր հավաքների, միջոցառումների կամ հորելյանական նշումների ժամանակ հոտնկայս խմել են Մալակե Թաուսի կենացը: Երբ հրաժարվել ենք նույնն անել, մեզ կոչել են օտարամոլներ ու դավաճաններ»¹⁴*: Ասենք, որ նորահավատ քրիստոնյաների նկատմամբ անվստահությունն ու մերժողականությունը առկա են թե՛ քրդական, թե՛ եզդիական ինքնաընկալում ունեցող բնակչության շրջանում: Հավելենք, որ իրենց՝ նորահավատների մեջ էլ նախկին հավատակիցների նկատմամբ նկատելի է անթաքույց քամահրական մոտեցումը, որի հետևանքով առաջինները երկրորդներին չեն վարանում կոչել «սատանայապաշտներ»՝ դրանով ակնարկելով չար ուժի և Մալակե Թաուսի՝ դարերով ձևավորված նույնականացումը¹⁵: Դա եզդիականություն դավանողներին ավելի է գրգռում կրոնափոխների դեմ: Այդուհանդերձ, ինչպես վերը նկատեցինք, *«մոլորյալ արյունակիցների հետևից երբևէ չեն փակվում հետդարձի դռները»*:

Հարկ է ավելացնել, որ ինչպես այլ հասարակություններում, եզդիների մոտ ևս ամբողջապետարանական և մկրտական քարոզիչներն ու նրանց հետևորդները բնութագրվում են նաև «հավատացյալներ» և (կամ) «աղանդավորներ» եզրերով (առաջինի մեջ դնելով, իհարկե, բացառապես բացասական լիցք): Ըստ որում, եզդիները երբեք հավասարության մշան չեն դնում «իսկական», ասել է թե՛ Հայ Առաքելական եկեղեցու, վերջինիս հետևորդների և սեփական «աղանդավորների» միջև: Երևույթն, ինչ խոսք, շատ ծանոթ է: Նպատակ չունենալով սույն հոդվածում որոնել ու վերլուծել դրա ազգային-հոգեբանական և հասարակագիտական պատճառները՝ ուշադրություն դարձնենք հետևյալ ուշագրավ զուգահեռ իրողությանը: Հայտնի է, որ եզդիների մեջ միշտ էլ տա-

¹⁴ Քրիստոնեություն ընդունած մեր զրուցակիցները ասացին, որ, առիասարակ, «ապաշխարությունից հետո» ձեռնպահ են մնում ինչպես որևէ ոգելից խմիչք, այնպես էլ ծխախոտ օգտագործելուց:

¹⁵ Նման մոտեցումը, կրոնական-զաղափարաբանական հող ունենալով հանդերձ, կրում է նաև այլկրոնների մոտ դարերով կարծրացած շահադիտական մեկնաբանությունների հետքը: Այս ամենի մասին մանրամասն տես Գ. Ասատրյան, նույն տեղում, T. Gilbert, Note sur les sectes dans le Kurdistan.- Journal Asiatique. Septime serie, tom 2, Paris, 1873, մեջբերումն ու ֆրանսերենից թարգմանությունը՝ Մուշեղ Ասատրյանի, արտատպված՝ Իրան-Նամե, հ. 24-25, Երևան, 1997, էջ 51; G. Asatrian, V. Arakelova. Malak-Tawus: the Peacock Angel of the Yezidis.- "Iran & the Caucasus: Research Papers from the Caucasian Centre of Iranian Studies, Yerevan", BRILL, Leiden, vol. 7, 1-2, 2003, pp. 1-36; Ա. Փոլադյան, նույն տեղում, հ.13, էջ 94-103:

րածված է եղել և ներկայումս էլ տարածված է այցելությունը Հայ առաքելական եկեղեցիներ ու վանքեր, որպես սրբատեղիներ, և նման այցելությունները գնահատվում են որպես «այցելություն սրբին»: (Ի դեպ, եզդիները *պիրոզ* (Սուրբ) են կոչում նաև իրենց իրեշտակներին նվիրված ուխտավայրերը, որոնք կարող են գտնվել պարզապես շենյեթի ու փիրերի տներում:) Նման այցելությունները կարող են լինել ինչպես քրիստոնեական, այնպես էլ եզդիական առանձին տոների ժամանակ և իրենց մեջ կրել «մուրազ» ստանալու ակնկալիքը: Ընդհանուր «Սուրբ անձերից» հիշատակելի են Խըղըր Նաբին (Էյլազը) և Իսայի Նուրանին (Լուսապայծառ Իսա): Առաջինի «հայկական» համարժեքն է Սուրբ Սարգիսը, երկրորդինը՝ ինքը՝ Քրիստոսը (Իսան Հիսուսի դուրանական ձևն է): Եզդիական կրոնական ավանդություններում Խըղըր Նաբին ևս *հրեա* է: Եզդիներն ունեն վերջինիս նվիրված համանուն հատուկ տոն, որը նշվում է փետրվարի 13-ից հետո հանդիպող առաջին ուրբաթ օրը: Ու թեև տոնը եզդիների համար «ոչ պարտադիր» է, սակայն միշտ էլ հանդիսավորությամբ նշվում է: Այդ օրը հաճախ կարելի է եզդի ուխտավորների հանդիպել նաև երևանյան Սբ Սարգիս եկեղեցում, քանի որ *«Խըղըր Էյլազն հենց Սուրբ Սարգիսն է»*: Եզդի գրուցակիցներս հաստատեցին, որ դեռ խորհրդային տարիներին գյուղական բնակավայրերից սովորական էին այցելությունները գյուղերից հեռու գտնվող ու կիսավեր հայկական վանքերը, որպեսզի *«մուրազատու իրեշտակներին երկրպագեին ու բարիքներ խնդրեին»*: Նման ընկալումներն ու տրամադրությունները չեն փոխվել նաև այսօր: Եզդիական **պահպանողական հոգեմտածելակերպում, որտեղ տեղ կա վերոնշյալ համընդհանրությունների համար, մերժելի և անընդունելի են «ոչ ավանդական» քրիստոնեությունն ու դրան հարող ամեն ոք և ամեն ինչ, երբ վերջիններս որևէ կերպ առնչվում են սեփական իրականությանը:**

Ներկայումս խոսել Ամբողջավետարանական և Մկրտական եկեղեցիներ ու հավաքներ այցելող «նախկին եզդիներին» առնչվող վիճակագրության մասին դժվար է¹⁶: Նրանց առնչվող նման աշխատանքներ, որպես այդպիսիք, չկան: Ցանկության դեպքում արժեքավոր կարող են լինել հենց նրանց քարոզիչ հովիվների հետ զրույցները, որոնց էլ ձեռնամուխ եղանք սույն հոդվածը պատրաստելիս: Ի դեպ, նրանք բոլորն էլ խոսակցությունների ժամանակ կարծիք հայտնեցին, որ «քրիստոնյա եզդիների (կամ քրդերի)» մոտավոր ընդհանուր թիվը Հայաստանում իրենց ամենալավատեսական գնահատականներով դժվար գերազանցի վեց հարյուրը: Ճշգրիտ որևէ տվյալ նույնիսկ իրենց և (կամ) որևէ մեկին չի կարող հայտնի լինել այն պատճառով, որ *«դժվար է հաստատա-*

16 «Նախկին եզդիներ»՝ մեր կողմից միտումնավոր գրելաձևն ու արտահայտությունը նպատակ ունեն հուշելու (որը փորձեցինք ցույց տալ նաև հոդվածի շրջանակներում), որ նոր կրոնական համայնքի մաս կազմողները չեն կարող (լիովին) վերացնել եզդիական ավանդույթներով պայմանավորված հասարակական ինստիտուտների հետ իրենց կապը, քանի որ դա հղի է հավատակիցների կողմից վերջնականապես արհամարհված և անտեսված լինելու ընկերային անցանկալի հեռանկարով: Քիչ չեն դեպքերը, երբ եզդին քրիստոնեական միջավայրում է հայտնվում՝ բնավ էլ լրջությամբ չգիտակցելով նոր վարդապետության գաղափարախոսությունը: Ասվածով էլ պայմանավորված՝ հոդվածում օգտագործված են նաև «իրենց քրիստոնյա համարող» և «իրենց քրիստոնեություն ընդունած համարող» արտահայտությունները:

պես ասել, թե շրջապատում ո՞վ է իրապես ապաշխարած և անկեղծ քրիստոնյա»: Քանակի մոտավորության վրա խիստ զգալի է նաև շարունակական արտագաղթի գործոնը (հիմնականում՝ ԱՊՀ երկրներ ու եվրոպա): Այդուհանդերձ, հայտնի է, որ Հայաստանում եզդիներից բաղկացած քրիստոնեական կայուն խմբեր կան Արագածոտնի, Կոտայքի, Արմավիրի և Արարատի մարզերում: Դեռ 1989թ. Արագածի շրջանի Քարվանսարա (Ներկայիս՝ Ամրե Թազա) գյուղում կային մի քանի եզդիներ (թե՛ տղամարդ, թե՛ կին), որոնք այցելում էին ավետարանական-մկրտական հավաքների: Ներկայումս Ամրե Թազան մեծավ մասամբ «ապաշխարել ու քրիստոնեացվել է», որն էլ հատկանշում է նրան մարզի մյուս բնակավայրերից: Բացի այդ, մարզում վեց գյուղ կա, որտեղ համատեղ ապրում են նոր և հին կրոնների ազգակից հետևորդները: Դրանք են Ավշենը (նախկինում՝ Չոբանմազ), Սիփանը (նախկինում՝ Փամբ Քրդական), Ալազյազը, Դերեկը (հնում՝ Ջառջառիս), Ռիյա Թազան (հնում՝ Դոնդադսազ), Շենկանին (հնում՝ Քոռբուլաղ)¹⁷: Ընդհանուր առմամբ, ենթադրվում է մոտ հարյուր հիսուն նորահավատ: Մարզի «քրդական եկեղեցի» կոչվող համայնքի հովիվն է վերոհիշատակյալ Բորիս Շամոյանը (եղբայր Բորիսը): Վերջինս արդեն երկու տասնամյակ է, ինչ «քրիստոնեական հավատքի մեջ է» և իր բոլոր՝ «հին» թե «նոր» հավատակիցների շրջանում ջերմեռանդ ավետարանչի համարում ունի: Նշենք նաև, որ Արագածոտնի «քրդական եկեղեցին» ներառված է Հայաստանում գործող ավետարանական կազմավորումներից մեկի՝ Հայաստանի ավետարանական հավատքի եկեղեցիների միության մեջ (ավագ հովիվ, դոկտոր Ռաֆայել Գրիգորյան)¹⁸:

Կոտայքի մարզում գործում է Հիսուս Քրիստոսին հավատացողների եկեղեցին, որտեղ իրենց ներկայությունն ունեն նաև նախկին եզդիադավանները: Կոնկրետ թիվ նշել այս առումով, առանց առավել հիմնավոր հետազոտությունների, ճիշտ չի լինի: Նշենք միայն, որ նախկին հավատակիցների շրջանում այստեղ ավետարանչական գործունեությամբ է զբաղված նորիսադրնցի Միլազ Ռասոյանը (որպես հովիվ՝ ձեռնադրված չէ): Վերջինս կարծում է, որ նախկին հավատակիցներից կազմված իրենց քրիստոնեական համայնքը չպետք է գերազանցի հարյուր հիսունը: Ըստ որում, քանակով հատկանշվում է Նոր Գեղի բնակավայրը. մոտ հարյուր մարդ:

Արմավիրի մարզում, համաձայն սուղ տվյալների, դեռ 1970-ական թթ. եղել են «առանձին հավատացյալ եղբայրներ»: 1990-ականներին եզդիների շրջանում ավետարանչություն է արել Հոգեգալստական (Հիսունական) եկեղեցու քարոզիչ Նադրը Օզմանյանը Ջանֆիդա գյուղից: (Ներկայումս նա բնակվում է Նիժնի Նովոգորոդում, որտեղ ձեռ-

¹⁷ Կյանքի վերջին տարիներին Ջառջառիսում էր հաստատվել Ջահանգիր Աղան, որտեղից էլ նրան աստորում են 1938թ.:

¹⁸ Նշյալ միությունը, ինչպես գրույցում նշեց Հայաստանի ավետարանական եկեղեցիների կոորդինացիոն խորհրդի քարտուղար և Ամբողջավետարանական եկեղեցու ավագ հովիվ, դոկտոր Սամվել Նավոյանը, Հայաստանի Ամբողջավետարանական հավատքի եկեղեցիների համագործակցության կազմում գտնվող չորս եկեղեցիներից մեկն է:

նադրվել է հովիվ: Իր հոգածության ներքո ունի մոտ երեք հարյուրի հասնող համայնք, մեծավ մասամբ՝ նախկին եզդիադավաններ: Կան նաև քիչ թվով հայեր: Այսօր Արմավիրում եզդի բնակչության շրջանում գործում են մի քանի ավետարանական եկեղեցիներ: Մոտավոր գնահատումներով՝ նրանց հարողների թիվն այստեղ չի գերազանցում երկու հարյուրը: Հիմնականում կենտրոնացած են Ջանֆիդա, Մրգաշատ, Այգեշատ, Արտաշար, Եղեգնուտ (նախկինում՝ Բադալ), Նալբանդյան (նախկինում՝ Շահրիար) և Արևիկ գյուղերում: Արարատի մարզում եզդիներից ավետարանական հավաքներին մասնակցողների և նորահավատների ընդհանուր քանակը չի անցնում յոթանասունից (հիմնականում Ավշար և Արարատ գյուղերում): Նրանք հարում են Հայաստանի Ավետարանական մկրտական եկեղեցիների միությանը (ավագ հովիվ՝ Ասատուր Նահապետյան): Նրանց մեջ թեպետ չկա ձեռնադրված հովիվ, սակայն որպես առաջնորդ է եղբայր Սիաբանդ Ուզոյանը: Վերջինից տեղեկացանք, որ իր ներկայացրած մկրտական համայնքում ազգային առումով տիրում է եզդիական ինքնության զգացումը (ինչպես ընդհանրապես մարզի եզդիադավանների մեջ):

Հայտնի է, որ բոլոր ժամանակներում և ամենուր բողոքական տարբեր հարանվանությունների միջև հարաբերությունները հաճախ աչքի են ընկնում անթաքույց անվստահության միջով: Պատճառը հիմնականում քույր եկեղեցիների ընտանիքում առաջնայինն ու ավագը դիտվելու յուրաքանչյուրի հավակնություններն են: Նման իրավիճակից չեն խուսափել նաև Հայաստանում գործող ավետարանական ընտանիքի եկեղեցիները, որն **ուղղակի անդրադառնում է նրանց կողմից ընդհանուր կազմակերպվածության և, առհասարակ, հասարակական արդյունավետ քաղաքականության մշակման վրա**¹⁹: Հարաբերությունների այդ որակը, բնականաբար, չէր կարող իր ազդեցությունը չունենալ տարբեր եկեղեցիներում ներառված «քրդական» կամ «եզդիական» խմբերի հետ տարվող աշխատանքների, ինչպես նաև հենց իրենց՝ տարբեր համայնքներում գտնվող նորահավատների հարաբերությունների վրա: Ասվածի համատեքստում էլ պետք է բացատրել, օրինակ, այն, որ չնայած Բորիս Շանոյանը «քրդական» եկեղեցու հովիվ է ձեռնադրվել հոգեգալստական եղբայրների կողմից, սակայն հետագայում առաջացած խնդիրների պատճառով հարել է այլ եկեղեցու: Ըստ որում, ավետարանական ընտանիքին մաս կազմելու տրամաբանությամբ նոր եկեղեցում պահպանել է հովվի կոչումը: Մեկ այլ օրինակում «չհամակերպվելու» համանման բացատրությամբ Միլլազ Ռասոյանը, Նոր Հաճընում սկզբնապես հարելով Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների (Հոգեգալստական) եկեղեցուն (ավագ հովիվ՝ Մամիկոն Ղազարյան), այժմ ներկայացնում է առանձին եկեղեցու «եզդիական թևը»:

¹⁹ Հայաստանում, ինչպես և այլուր, ավետարանական եկեղեցիների միջև բաժանարար գիծն անցնում է առավել ծկուն, հարմարվող աստվածաբանություն ու հասարակական հարաբերությունների մշակույթ ունեցողների և այդ հարցում առավել պահպանողականների միջև:

Ընդհանուր առմամբ այսպիսին է Հայաստանում նախկին եզդիադավան ու նորահավատ քրիստոնյաներին առնչվող իրականությունը, որն, ինչ խոսք, կարոտ է առավել հստակ ուրվագծման:

Հայաստանից դուրս գործող խնդրո առարկա խմբերի վերաբերյալ էլ ավելի քիչ բան կարելի է ասել: Եզդիներից կազմված քրիստոնեական խմբեր կան Վրաստանում, Ռուսաստանում, ավելի քիչ՝ Գերմանիայում: Վրաստանում ակտիվ է Հոգեգալստական եկեղեցին: Նորահավատների ընդհանուր թիվը մոտ երեք հարյուր է, որից մոտ յոթանասունը՝ Թբիլիսիում: Ի դեպ, Թբիլիսիում մոտ քառասուն նորահավատի հովվություն է անում Բորիս Շամոյանը:

Ռուսաստանում նորահավատների խմբերը հիմնականում կազմված են Հայաստանից ու Վրաստանից արտագաղթածներից, չնայած, առանձին վկայությունների համաձայն, կան դեպքեր, երբ ոչ հազվագյուտ եզդիներ ավետարանական կամ մկրտական եկեղեցիներին հարում են նաև տեղի ռուսաստանցի ավետարանիչներին հետևելով: Ըստ Շամոյանի, Ռուսաստանում «քրդական» եկեղեցու հետևորդների թիվը հասնում է մոտ վեց հարյուրի, որից երեք հարյուրը Նիժնի Նովգորոդում են: Նաղըր Օզմանի (Օզմանյան) հովվության ներքո: Զրուցակցիս խոսքերով, խմբակներ կան նաև Նովորոսիյսկում և Կուբանում: Այն հարցին, թե հայտնի՞ են արդյոք քրիստոնեություն ընդունելու դեպքեր եզդիների բուն հայրենիք համարվող Հյուսիսային Իրաքում (որտեղ գտնվում են համաեզդիական գլխավոր սրբավայրերը՝ Լալըշա Նուրամին և Շեյխ Ադիի ու առաջին ադալիների դամբարանները), Բորիս Շամոյանը դժվարացավ պատասխանել *«նման օրինակներին տեղեկացված չլինելու պատճառով»*, սակայն ասաց, որ ներկայումս Իրաքում *«չատացել է, ընդհանրապես, քուրդ քրիստոնյաների թիվը, հատկապես Սադամ Հուսեյնի իշխանափոխությունից հետո. ընդհանուր առմամբ՝ մոտ հազար հոգի»*²⁰:

Հոդվածը պատրաստելիս տեղեկացանք, որ Հայաստանում կան նաև եզդիներ, որոնք հաճախում են «Եհովայի վկաներ» կազմակերպության հավաքներին և իրենց համարում են այդ կառույցի անդամներ: Սակայն նրանց թիվը չի գերազանցում երեք տասնյակը: Համեմայն դեպս, դա հաստատեցին կազմակերպության ներկայացուցիչները: *«Այդուհանդերձ, հնարավոր է, որ նրանց թիվն ավել լինի, քանի որ «Եհովայի վկաների» հավաքներին գյուղաբնակ եզդիները (այն էլ հիմնականում՝ կանայք) հաճախում են զուտ հետաքրքրասիրությունից և նոր շրջապատ ձեռք բերելու ցանկությունից դրդված: Դրանք ոչինչ չասող թվեր են, որոնք չպետք է վախեցնեն: Այնպես որ, չի բացառվում նրանց թիվն ավել լինի, այս մասին զրուցելիս ասաց ավետարանական եկեղեցիներից մեկի (նախկինում՝ եզդիադավան) հովիվը:*

²⁰ Ըստ Ազիզ Թամոյանի՝ Իրաքում, 2006թ-ի դրությամբ, բնակվում էր մեկ միլիոնից ավելի եզդի; տես Ա. Թամոյան, Մի..., էջ 14:

Փարիզի համալսարանի՝ արվեստի պատմության դոկտոր, հայագետ, ԵՊՀ դասախոս եւ ավագ գիտաշխատող, վաղմիջնադարյան արեւելաքրիստոնեական արվեստի, եկեղեցու պատմության եւ եկեղեցաբանության մասնագետ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՅ (Narratio de rebus Armeniae)

21

Ինչպես արդեն հպանցիկ տեղեկացրել ենք «Կրոն եւ հասարակություն» հանդեսի նախորդ համարներից մեկում հրապարակած «Հայոց կաթողիկոսների հունարեն եւ հայերեն ցուցակները» թարգմանական հոդվածում, հայ պատմագրության մեջ եզակի աղբյուր է այսպես կոչված «Narratio de rebus Armeniae»-ն՝ «Պատմութիւն Հայոց իրաց»-ը¹ (այսուհետ՝ Իրք), որ մեզ է հասել միայն հունարեն թարգմանությամբ: Հեղինակը հայ քաղկեդոնական է, որ հավանաբար պատկանել է հայոց եւ բյուզանդական եկեղեցիների միության կողմնակիցների թեւին: Այս բնագիրը խիստ արժեքավոր է եւ առանձնահատուկ բնույթ ունի, որովհետեւ նախ՝ միաբնակ սկզբնաղբյուրներից հայտնի փաստերի ու դեպքերի նկարագրություններն այստեղ տրվում են այլ լույսի ներքո, եւ ապա նրա մեջ կան բազմաթիվ փաստեր, որոնք չի արձանագրել հայ միջնադարյան մատենագրությունը:

Իրքի բանասիրական ծավալուն եւ մեծարժեք ուսումնասիրությունը քննական բնագրով, մեկնաբանություններով եւ ծանոթագրություններով իրականացրել է բելգիացի խոշոր հայագետ Ժերար Գարիտը (G. Garitte, La Narratio de rebus Armeniae, ndition critique et commentaire. Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132, Subsidia tome 4, Louvain 1952): Գարիտի ներկայացրած բնագիրը արեւելահայերեն է թարգմանել Հրաչ Բարթիկյանը², ֆրանսերեն՝ Ժան Պիեռ Մահեն³:

Ստորեւ ներկայացնում ենք Գարիտի գրքի «Ներածության», «Եզրակացության» եւ «Մեկնաբանությունների» համառոտած եւ խմբագրած թարգմանությունը, ինչպես նաեւ բուն Իրքի՝ Հ. Բարթիկյանի թարգմանած տեքստը՝ հունարեն բնագրի եւ ֆրանսերեն թարգմանության համեմատությամբ արված մեր շտկումներով եւ Գարիտի նշած տեքստային համարակալման հավելմամբ:

¹ Հայտնի է նաեւ արեւելահայերեն թարգմանության մեջ նշված «Պատմություն հայոց հարցի մասին» վերնագրով, տեւ Հ. Բարթիկյան, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, հ. 6, 1962, էջ 457-470:

² Տեւ հղում 1:

³ J.-P. Mahn, La Narratio de rebus Armeniae, traduction française, Revue des Etudes Arméniennes, 25 (1994-1995), p. 429-438.

Ներածություն

22

Իրքն առաջին անգամ հրատարակել է դոմինիկյան միաբան, հունագետ Ֆրանսուա Կոմբըֆիսը (François Combefis) 1648 թ., իր *Novum Auctorium* աշխատության երկրորդ հատորում⁴: Ինքն էլ հունարեն աղբյուրին տվել է լատիներեն այս վերնագիրը գրքի անվանական ցանկում: Կոմբըֆիսը ճշտիվ չի տեղեկացրել, թե ինչ ձեռագրից է քաղել տեքստը, միայն նշել է, որ այն վերցրել է «Ex-Reg.»-ից, այսինքն՝ արքայական գրադարանից: Չետագա տեքստագիտական մանրամասն զննումից պարզվել է, որ այն գետնեղված է այժմյան ֆրանսիական Ազգային գրադարանի փարիզյան մատենական ֆոնդի Paris. gr. 900 համարը կրող ձեռագրում, որ ընդօրինակվել է հավանաբար XV դարասկզբին: Այնուհետև եղել է այս նույն բնագրի մի քանի այլ հրատարակություն⁵: Սակայն, բարեբախտաբար, այս ձեռագիրը Իրքի մեզ հասած միակ օրինակը չէ. Վատիկանի պապական գրադարանում պահպանվել է եւս երեք տեքստ՝ Vat. gr. 1455-I, Vat. gr. 1101 եւ Vat. Ottob. gr. 25 համարակիր ձեռագրերում, համապատասխանաբար՝ XIII, XIII-XIV եւ XVI դարերով թվագրվող, որոնցից առաջին երկուսը նկատելիորեն տարբերվում են փարիզյան օրինակից՝ թույլ տալով համեմատական շտկումներ, հավելումներ եւ ճզգրտումներ անցկացնել Կոմբըֆիսի հրատարակած տեքստում:

Չնայած Իրքի հայերեն բնօրինակը մեզ չի հասել, սակայն այն գործածվել է երկու այլ աղբյուրների շարադրման ժամանակ. հայերեն՝ Ջաքարիա կաթողիկոսին ուղղված Փոտ պատրիարքի թղթում եւ վրացերեն՝ կաթողիկոս Արսեն Սափարելու Հայոց եւ Վրաց բաժանման մասին գրքում: Փոտ պատրիարքի թղթի առաջին մասում պատմվում է, որ հայերը սկզբում ընդունել են Քաղկեդոնի ժողովը եւ մերժել են միայն Դվինի եկեղեցական ժողովի ժամանակ: Այնուհետև համառոտ ներկայացվում է, թե ինչպես հայերը մի քանի անգամ ընդունել են Հունաց եկեղեցու հետ միաբանությունը՝ Յուստինոս II-ի, Մաւրիկի եւ Հերակլի օրոք: Մեկ այլ պարբերության մեջ թուղթը երկար-բարակ ներկայացնում է Նիկեայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի եւ Քաղկեդոնի ժողովների պատմությունը, որտեղ նույնպես բավական նմանություններ կան Իրքի տեքստի հետ:

Արսեն Սափարելու գրքի զուգահեռները Իրքի հունարեն տեքստի հետ ավելի ընդարձակ են եւ ավելի հարազատ, քան Փոտի նամակինը: Այն հայերեն համառոտ թարգմանված է Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի եւ Հայերի մասին» գրքում⁶ (իսկ ֆրանսերեն թարգմանությունը ծանոթագրություններով լույս է տեսել *Revue des Etudes Armeniennes* հանդեսի վերջին համարում⁷ - Ն.Ղ.):

4 *Historia haeresis Monothelitarum, sanctaeque in eam sextae synodi actorum, vindiciae. Diversorum item antiquae, ac medii aevi, tum historiae sacrae, tum Dogmatica, Graeca Opuscula. Accedit etc.*

5 Որոնցից ամենակարեւորները՝ Andre Gallandi, *Bibliotheca Veterum Patrum*, tome XIV, Venise 1781 ; Migne, *Patrologie Grecque*, vol. 127, col. 885-900 et vol. 132, col. 1237-1253, Paris 1864:

6 Երեւան, 1934, էջ 27-70:

7 *Z. Aleksidze et J-P. Mahn*, 2010, pp. 59-132.

Ահա այս երկու աղբյուրները եւ Վատիկանի երկու ձեռագրերուն պահպանված օրինակները մեզ բացառիկ հնարավորություն ընձեռեցին հունարեն տեքստի վերլուծության եւ քննական բնագրի պատրաստման համար, որի շնորհիվ հնարավոր դարձավ գոնե մասամբ վերականգնել Իրքի կորսված հայերեն սկզբնական բնագիրը:

Վերականգնված բնագրի արեւելահայերեն թարգմանությունը

Պատմություն

Սուրբ Գրիգորի օրերից սկսած մինչեւ այժմ՝ նրա աթոռի հաջորդների ու նրանց ժամանակներում իշխած Հռոմայեցվոց եւ Պարսից թագավորների մասին. գիտենալու, թե մինչեւ երբ (Գրիգորի հաջորդները) պահպանեցին Սուրբ Գրիգորից եւ Նիկեայի ժողովից ստացած ուղիղ հավատը, թե երբ եւ ում պատճառով նրանք մոլորվեցին, ինչ ընթացք ունեցան, ինչ հարցեր ծագեցին հավատի շուրջ, եւ թե ինչպես նրանք մնացին մոլորության մեջ մինչեւ այսօր:

23

1. Ամենաաստվածասեր եւ Սուրբ Կոնստանդինի օրոք տեղի ունեցավ Նիկեայի ժողովը՝ Արիոսի դեմ, Տրդատի ԼԴ (34) տարին եւ Սուրբ Գրիգորի՝ Վիրապից դուրս գալու քսաներորդ տարին, Սուրբ Արիստակեսի, իր հոր կենդանության ժամանակ, եպիսկոպոսության օրերին, որ մասնակցեց ժողովին:

2. Ապա եպիսկոպոս եղան Վրթանէսը, Գրիգորիսը, Յուսիկը, Փառներսէիը Աշտիշատ գյուղի Ասպրակոնից, ապա Սուրբ Ներսէսը:

3. Իսկ Հայոց թագավորներ դարձան Խոսրովը, Տիրանը, Արշակը, Վարազդատը, Պապը, Արշակը:

4. Վերջինիս օրոք Հայքը բաժանվեց: Այդ ժամանակ էր, որ կառուցվեց Թեոդոսուպոլիսը, 5. որ նախկինում գյուղ էր Կալե Արխե անունով:

6. Իրոք, երբ մեծ առաքյալ Բարդուղիմեոսը Պարթեւաստան գնաց, Եփրատ գետում մկրտեց Պարսից արքայի եղբորորդուն եւ նրա հետ երեք հազար մարդ:

7. Այնտեղ նա կառուցեց ամենասրբուհի Աստվածածնի անվան տաճար, 8. եւ այդ վայրում գտնվող գյուղն անվանեց Կալե Արխե՝ «Բարի սկիզբ»:

9. Ահա Թեոդոս Մեծը, ծանոթանալով այդ վայրին եւ նրա ջրին, հավանեց եւ կառուցեց այնտեղ հռչակավոր մի քաղաք՝ վերանվանելով Թեոդոսուպոլիս:

10. Մեծ Հայքի թագավոր Արշակը հնազանդվեց նրան, 11. իսկ Հայոց թագավոր Խոսրովը թագավորում էր Պարսից Շապուհ արքային ենթակա Հայոց տարածքում:

12. Չորս տարի անց Շապուհը նրան զրկեց իր թագավորությունից:

13. Թեոդոս Մեծի ժամանակ տեղի ունեցավ ԳԾ (150) հայրերի Սուրբ ժողովը Կոստանդնուպոլսում՝ ընդդեմ Մակեդոն Հոգեմարտի, եւ նգովեցին նրան:

14. Այդ նույն տարիներին Հայոց երկրում եպիսկոպոս էր Սուրբ Ներսէսը:

15. Իսկ հավատո հանգանակը, որ ստացել էին Սուրբ հայրերից, մեկն էր եւ նույնը ինչպես Վռամշապուհ թագավորի, այնպես եւ նրա որ-

դի Արտաշեսի ժամանակ: 16. Նրանցից հետո Հայոց վրա տիրեցին մարգապանները:

17. Այնուհետև, Թեոդոս Փոքր կայսեր տասներևհինգերորդ տարում կայացավ երրորդ ժողովը՝ երկու հարյուր հայրերի, որոնք նզովեցին Նեստորին: 18. Այդ ժողովից հետո Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս երանելի Պողոկը հորինեց «Սուրբ Աստված»-ը՝ տեղի ունեցած աղետալի երկրաշարժից հետո Տեր Աստծո մոտ ողորմություն գտնելու համար: 19. Այդ ժամանակից ի վեր տիեզերական եկեղեցին ընդունեց Երեքսրբեան հիմնը՝ ըստ սերովբեների փառաբանության, ինչպես որ սովորել ենք Եսայի մարգարեից⁸: 20. Բայց Սուրբ Պողոկից առաջ վեճ էր գնում Երեքսրբեան հիմնի շուրջ «որ խաչեցար»-ի հավելման համար: 21. Իսկ հին միաբնակ Սաբելիուսը եւ նույն աղանդից բազմաթիվ հետևորդներ, որ պաշտպանում էին «որ խաչեցար»-ը, նզովվեցին եւ բանադրվեցին:

24

22. Նույն այն Թեոդոսի օրոք երանելի Փլաբիանոսը թագավորանիստ քաղաքի պալատում պաշտոնանկ արեց պիղծ Եւտիքեսին եւ նրան նզովեց: 23. Իսկ ինքը՝ Եւտիքեսը, եկավ եւ խնդրեց Դիոսկորոսին, իսկ վերջինս էլ պահանջեց կայսրից, որ նա Եփեսոսում գումարի նոր ժողով՝ դատապարտելու համար Սուրբ Փլաբիանոսին եւ արդարացնելու պիղծ Եւտիքեսին: 24. Սակայն Դիոսկորոսն ու Եւտիքեսը մնացին մենակ, ինչպես ագռավը՝ անապատում եւ բվեճը՝ ավերակների մեջ: 25. Հռոմի երանելի պապ Լեւոնը, իմանալով եկեղեցու խռովության մասին, խստիվ հանդիմանեց Թեոդոս կայսրին: 26. Նա պահանջեց տիեզերական ժողով գումարել, բայց կայսեր մահվամբ այդ մտադրությունը լուծության մատնվեց: 27. Սակայն Մարկիանոսը, գահ բարձրանալով, իրականացրեց այդ մտադրությունը:

28. Սուրբ Սահակի մահվանից վեց տարի անց տեղի ունեցավ Շահապիվանի ժողովը: 29. Երանելի Սուրբ Սահակը վախճանվեց կյանքի ճժ (110) տարում եւ փոխեցավ ի Տեր: Եպիսկոպոսական աթոռը նրա հրամանով ժառանգեց Յովսէփը: 30. Վերջինիս տասներկուերորդ տարում Հազկերտը կրակապաշտություն պարտադրեց Հայոց աշխարհում: 31. Թեոդոս Փոքր կայսեր ԼԷ (37) տարում նվազեց Հայոց եպիսկոպոսների թիվը, նրանց մեջ ազատորեն գլուխ բարձրացրեց հանդգնությունը. նրանց միջի երեւելիները սկսեցին իրենք ձեռնադրել եպիսկոպոսներ: 32. Պարսից արքայի հրամանով Տիեզերական եկեղեցու որդիները բաժանվեցին եւ ցրվեցին: 33. Այդ հանդգնությունը⁹ սկիզբ էր առել Սուրմակի աթոռակալության ժամանակվանից, հատկապես նրա երկրի եպիսկոպոսների շրջանում: Այն մինչեւ օրս անբուժելի մնաց:

34. Մեր Տեր Յիսուս Քրիստոսի գալուստից մինչեւ Մեծն Կոնստանդինի թագավորության յոթերորդ տարին, որում գումարվեց Նիկեայի ժողովը, ՅժԷ (315) տարի է: 35. Իսկ Նիկեայի ժողովից մինչեւ Կոստանդնուպոլսի ժողովը, որ կայացավ Թեոդոս Մեծի Ե (5) տարում՝ ՀԳ (73) տա-

⁸ Եսայի, Զ, 3:

⁹ Այսինքն՝ առանց Կեսարիայի միջանտության ինքնագլուխ եպիսկոպոս ձեռնադրելու իրավունքը:

րի: 36. Նրանից էլ մինչեւ Եփեսոսի առաջին ժողովը, որ գումարվեց Թեոդոս Փոքրի ժամանակ նրա թագավորության ժԵ (15) տարում՝ Է (47) տարի: 37. Դրանից էլ մինչեւ Դիոսկորոսի ժողովը, որ գումարվեց Եփեսոսում, նույն կայսեր օրոք՝ ԻԲ (22) տարի: 38. Դրանից էլ մինչեւ Քաղկեդոնի Սուրբ ժողովը, որ կայացավ Մարկիանոսի թագավորության երկրորդ տարում՝ Ե (5) տարի: 39. Դրանից էլ մինչեւ Անաստաս կայսեր թագավորությունը՝ (40) տարի եւ ավելի:

40. Այն ժամանակ միաբնակներ Դիոսկորոսի ու Եւտիքեսի պատճառով մեծ խռովություն բարձրացավ: 41. Վշտացած էր Անտիոքի Սելերոսը, Ալեքսանդրիան եւ Սուրբ քաղաքը (այսինքն՝ Երուսաղեմը- Ն.Ղ.), 42. որովհետեւ պալատականներից ոմանք, որ նույն ախտով էին տառապում, իրենց կողմը քաշեցին կայսրին եւ ամբողջ աշխարհը խռովությամբ լցրին: 43. Այսու, Միջագետքը եւ այլ երկրներ այդ նույն պղծությամբ պղծելով՝ ստիպեցին բոլորին նզովել Քաղկեդոնի Սուրբ տիեզերական ժողովը եւ խոստովանել Քրիստոսի մեջ աստվածային եւ մարդկային մեկ բնություն, ինչպես քարոզում են Դիոսկորոսն ու Եւտիքեսը: 44. Նրանք սահմանեցին նաեւ «Սուրբ Աստված»-ի վերջում արտասանել «որ խաչեցար»-ը, 45. որի համար այդ դեպքերից քիչ առաջ անտիոքցի Պետրոս Թափիչը նզովվել էր այն ժամանակվա Սուրբ հայրերի կողմից, որովհետեւ այդ աստվածատյացը Սուրբ Երրորդությունը, հիմար Նեստորի պես, չորրորդություն էր քարոզում: 46. Ովքեր ուղղափառ մնացին եւ չենթարկվեցին Անաստաս կայսրին, այս անգամը բոլորին աքսորեց եւ դառն մահվան դատապարտեց:

47. Այդ օրերին ոմն անիծյալ եպիսկոպոս՝ Տիմոթեոսը, բազմաթիվ ճառեր հորինեց ընդդեմ մեկ Քրիստոսին երկու բնությամբ դավանողների, ինչպես եւ բազում անարգանքներ (տեղաց) ընդդեմ Քաղկեդոնի ժողովի:

48. Դրանից հետո Յուստինոս կայսեր եւ Պարսից (արքա) Կավատի ժամանակ ոմն Յուլիանէ՝ Ալիկառնասի եպիսկոպոսը, եւ Յակոբ՝ Բաթնանի եպիսկոպոսը, պառակտվեցին միմյանցից: 49. Այս Յուլիանէն ասում էր, թե Փրկիչը երկնքից անապական մարմին ստացավ եւ միացավ Սուրբ Մարիամին նրա որովայնից դուրս, եւ ոչ թե նրա արգանդում, ինչպես բոլոր կանանց մոտ է: 50. Ելնելով ավետարանչի խոսքերից, որ ասում է. «Այս է հացն որ յերկնից իջեալ է, զի որ ուտիցէ ոք ի սմանէ մի մեռանիցի»¹⁰, 51. եւ նույնպես. «Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ, կեցցէ ի յաւիտեան. եւ հացն զոր ես տաց մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի»¹¹: 52. Ահա սա էր վկայակոչում այդ անմիտը, անգիտանալով զորությունն բանի, որն ասում է. «Եւ Բան մարմին եղել եւ բնակեաց ի մեզ»¹² 53. Եւ որ. «Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ պատեաց ի խանձարուրս եւ եդ զնա

10 Յովի. 2.50:

11 Նույն տեղ., 51-52:

12 Նույն տեղ., Ա.14:

ի մտուր:»¹³ 54. Եւ որ դարձյալ. «ոգի մարմին եւ ոսկերս ոչ ունի»¹⁴: 55. Նրանք չգիտեին, որ Աստօժ եկեղեցին ընթանում է ամենաճիշտ (ճանապարհով), որ Նա է նրա ուղեցույցը, եւ որ այդ (եկեղեցին) երբեք չի մոլորվել: 56. Դրանից էլ նրա հետեւորդները անվանվեցին յուլիանականներ, Յակոբինը՝ յակոբիկներ, իսկ Սելերոսինը՝ սելերիականներ:

57. Յուլիանականներն ընդամենը երեք եպիսկոպոս ունեին: Յուլիանէի մահից հետո նրա (մնացած) երկու ընկերները անդրադարձան, որ Սուրբ հայրերի կանոնների համաձայն՝ (նոր) եպիսկոպոս ձեռնադրելու համար պետք է ներկա լինի առնվազն երեք եպիսկոպոս: 58. Ուստի, նախքան Յուլիանէին գերեզման իջեցնելը, նրա եւ իրենց ձեռքերը դնելով՝ եպիսկոպոս օծեցին: 59. Այդ պատճառով էլ նրանց անվանեցին Նեկրոխիրոտոնիտոյ¹⁵՝ «մահացածի ձեռքով օծվածներ», եւ մինչեւ այժմ պատվում են Յուլիանէի պահպանված աջը:

60. Բայց նորից նվազեցին այս հերձվածի եպիսկոպոսները, եւ որովհետեւ հերձվածի պատճառով իրենց (գլխավորները) իրավունք չունեին ձեռնադրվելու, դիմեցին Հայոց եպիսկոպոսներին: 61. Այդ նպատակով նրանք բարեկամացան Տարոնի եպիսկոպոս Ներշապուհին, որ եպիսկոպոսությունը ստացել էր Կավատի ԺԹ (19) տարում, 62. եւ շատ տարիներ էր անցկացրել իր ընկերոջ՝ ասորի Աբդիշոյի հետ, որը Սասունի մտակայքի Սարեբայ վանքից էր: 63. Նրան ասացին. «Բոլորը մոլորվել են, գնալով Նեստորի եւ նրա մանաների հետեւից՝ Քաղկեդոնում, 64. եւ որովհետեւ ոչ ոք չկա, որից կարող ենք ձեռնադրություն ստանալ, դիմել ենք ձեր Սուրբ բարեպաշտությանը, որ նրա ձեռնադրությամբ եպիսկոպոս դառնանք»:

65. Ինչպես վերելում ասացինք, դիմեցին նրանց, որ հրաժարվել էին Սուրբ Գրիգորի ավանդությունից եւ անջատվել Կեսարիայի աթոռից: 66. Ձի եւ հրաման էին ստացել Պարսից արքայից, որ իրենք կատարեն իրենց ձեռնադրությունը: 67. Նրանք ասում էին, թե «Սուրբ Գրիգորից ենք ստացել ձեռնադրությունը եւ նրա աշակերտներն ենք ի Քրիստոս»: 68. Երբ Ներշապուհ եպիսկոպոսը հայտնեց սա Ներսէս կաթողիկոսին, որն Աշտարակից էր, եւ ուրիշ եպիսկոպոսների եւ ազատների, 69. որոշվեց մեծ ժողով գումարել Դվին քաղաքում, նույն այն Ներսէս կաթողիկոսի քսաներորդ տարում, Յուստինիանոս կայսեր ԺԳ (13) տարում, եւ Պարսից Խոսրով արքայի ԻԴ (24) տարում, Յեազդբուզդիի նահատակության տարում, հայոց թվականության սկզբում: 70. Այդ ժամանակ նզովեցին Քաղկեդոնի Սուրբ ժողովը որպես նեստորական, ըստ Աբդիշոյի գրության, 71. որովհետեւ այդ (նույն) տարում թարգմանեցին Աբդիշոյի կողմից բերված վերոհիշյալ գրությունները, որոնք գրվել էին Տիմոթեոսի եւ Փիլոքսեն Ասորու կողմից՝ ընդդեմ Քաղկեդոնի ժողովի եւ նրանց, ովքեր ի վերայ մեր Աստված Քրիստոսի խոստովանում էին երկու բնություն: 72. Ընդունելով այդ գրվածքները՝ նրանք նույն ժողովում,

13 Ղուկ. Բ.7:

14 Նույն տեղ., ԻԴ.39:

15 Մահածեռնադրված:

որ կայացած Դվին քաղաքում, դավանեցին մեկ բնություն Աստուծո Բանին եւ մարմնի, եւ որ անմահ բնությամբ նա խաչվեց եւ մահացավ: 73. Դրա համար էլ «Սուրբ Աստված»-ին ավելացրին նաեւ «որ խաչեցար»-ը՝ ըստ Պետրոս Թափիչի, որ տառապում էր Սաբելիոսի (ախտով): 74. Եւ նգովքով որոշեցին չհաղորդվել Երուսաղեմի եւ Հռոմի հետ եւ նրանց հետ, որ ի վերա մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խոստովանում են երկու բնություն: 75. Նրանք Աբդիշոյին եպիսկոպոս ձեռնադրեցին, ինչպես եւ յակոբիկ Եւտիբեսին եւ նրանց երկու այլ ընկերներին, որոնցից մեկը յուլիանական էր, իսկ մյուսը՝ այլ աղանդի կողմնակից, 76. որոնց ձեռնադրելով ուղարկեցին Ասորիքի Միջագետք՝ միմյանց հետ միաբանությունը առհավետ պահելու որոշմամբ, որն ամրապնդեցին ինքնագիր գրությամբ: 77. Երկար ժամանակ անց ոմն Վարդան իշխան, սպանելով պարսիկ բռնակալ Սուրենին, որի դեմ ապստամբել էր, Հայաստանից փախչում է 78. Կոստանդնուպոլիս Խոսրովի (40) տարում եւ Յուստինիանոսի L (30) տարում, որ Սուրբ Սոֆիան կառուցեց: 79. Վարդանը եւ իր հետեւորդները չէին հաղորդվում (հույների) հետ, ասելով. «Մեր վարդապետներից չունենք հրաման հաղորդվելու ձեզ հետ»: 80. Այդ առթիվ կայսրը հրամայեց նույն այս Վարդանին՝ հրավիրել Հայոց եպիսկոպոսներին եւ վարդապետներին եւ հարցը ճշգրիտ քննել: 81. Կոստանդնուպոլսում կայացավ մեծ ժողով՝ ընդդեմ որոշ աղանդավորների, որին անվանում են «հինգերորդ ժողով»: 82. Եւ միաբանելուց հետո հրավիրեցին Վարդանին եւ նրա շքախմբին Սուրբ Սոֆիայի մի դուռը, որ մինչեւ օրս կոչվում է Հայոց Դուռ, 83. եւ այն ժամանակ նգովեցին Օրիգենեսին, Եվագրիոսին, Դիդիմոսին, նեստորականներին, յակոբիկներին, յուլիանականներին, գայանոսականներին եւ ընդհանրապես Եւտիբեսի եւ Դիոսկորոսի աղանդի կողմնակիցներին: 84. Վերադառնալով Հայք, նրանց մի մասը սիրով ընդունեց միությունը, իսկ մյուս մասը Յովհաննես կաթողիկոսի ժամանակ պռոնկացավ (իմա՝ հերձվածող դարձավ), որի մասին այժմ մասնավորապես խոսելու կարիք չկա: 85. Այսպիսով, նրանք նամակ գրեցին Աղուանից աշխարհի կաթողիկոս Աբասին հետեւյալ բովանդակությամբ. «Եկ, միաբանիր մեր հավատքին՝ Քրիստոս Աստուծոյ մի բնություն ընդունելուն եւ Երեքսրբեան հիմնին ավելացրու «որ խաչեցար»-ը»: Իսկ նա չէր համաձայնվում: 86. Նույնպես եւ (գրեցին) Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսին, սակայն նա եւս չէր համաձայնվում, 87. ասելով, որ «իմձանից առաջ երանելագույն եպիսկոպոսներ Պետրոսն ու Գրիգորը այդպես էին ասում «Սուրբ Աստված»-ը, իսկ ես ոչ կավելացնեմ, ոչ էլ կպակասեցնեմ»: 88. Նմանապես գրեցին եւ վրացիներին, որոնք խիստ պատասխան տալով՝ չուզեցին հնազանդվել նրանց, այլեւ խայտառակ կերպով վնդեցին իրենց մոտ ուղարկված մարդկանց՝ որպես հերձվածողների աշակերտների, որ կրկնում են հրեաների դրույթները: 89. Ոչ ոք չենթարկվեց նրանց կամքին, բացի հայերենախոս Տաշիր, Չորափոր եւ Գարդման կոչված գավառներից եւ Արցախի որոշ գավառներից: 90. Այդ ժամանակ մեծ խռովություններ էին տեղի ունենում իշխանների ապստամբության կապակցությամբ, եւ

Հռոմում, եւ Պարսկաստանում, եւ քսան տարի վիճում էին հավատքի շուրջ, 91. ինչպես որ ասում է Ովսիէն. «Պատերազմն եկ ի վերայ որդւոցն անօրենութեանց խրատել զնոսա եւ ժողովեսցին ի վերայ նոցա ազգք խրատել զնոսա ի վերայ երկուց անիրաւութեանց նոցա»¹⁶: 92. (Սա տեւեց) Յովհաննէս եւ Մովսէս կաթողիկոսների օրոք մինչեւ խոսրով արքայի առաջին տարին, որը գահ բարձրացավ Մաւրիկ կայսեր օգնությամբ, հռոմեացիների մեծ հզորության ժամանակ: 93. Ջորավար Մուշեղ Մամիկոնեանը, Տարոնացի վերանվանյալը, գնալով Պարսկաստան եւ հաղթանակ տանելով՝ հաստատեց խոսրովին գահի վրա: 94. Սա թագավորեց ԼԷ (37) տարի. ամբողջ Հայքը մինչեւ Դվին տվեց Մաւրիկ կայսեր այն բանի համար, որ նրա կողմից արքա էր դարձել: 95. Նա բազմաթիվ մեծարժեք նվերներ տվեց (Մուշեղին) եւ իր զորքին: 96. Նույն տարին Պարսից արքա խոսրովը Մուշեղին ուղարկեց Մաւրիկի մոտ: 97. Ժամանելով Կոստանդնուպոլիս՝ պատվական խաչի մեծ տոնի օրը նա հրաժարվեց հաղորդությունից, ինչպես եւ իր ուղեկիցները: 98. Կայսրը նրան հարցրեց՝ իմանալու համար պատճառը: Մուշեղը պատասխանեց. «Քաղկեդոնի ժողովի պատճառով է, եւ որովհետեւ դուք ի վերայ մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոստովանում եք երկու բնությունն»: 99. Կայսրն ասաց. «Ձեր նախորդ Վարդանը, նրա ազատները եւ նրա վարդապետները գրավոր համաձայնություն տվեցին՝ խոստովանել երկու բնությունն»: 100. Մուշեղը պատասխանեց. «Նրանք այդ արեցին կամ անգիտության եւ կամ էլ վախի պատճառով: Սակայն եթե դու ցանկանաս հանգիստ լսել եւ սխալը արդարորեն ուղղել, ապա դու ճշմարտությունը կզտնես իմ վարդապետների մոտ»: 101. Այդժամ կայսրը նամակներով հրաման ուղարկեց, որպեսզի Հայոց բոլոր եպիսկոպոսները եւ Մովսէս կաթողիկոսը իր դպիրների հետ ներկայանան Կոստանդնուպոլիս: 102. Իսկ Մովսէս կաթողիկոսը ուշադրություն չդարձրեց հրամանին՝ ասելով. «Ես չեմ անցնի Ազատ գետը, չեմ ուտի փռան (իմա՝ թթիւմորով – Ն.Ղ.) հացը եւ չեմ խմի թերմոնը (իմա՝ տաք ջուր-Ն.Ղ.)»: 103. Վասպուրական աշխարհի եպիսկոպոսները եւ ովքեր գտնվում էին Պարսից տիրապետության տակ, նմանապես չցանկացան զնալ: 104. Իսկ Տարոնի եպիսկոպոսները եւ ովքեր գտնվում էին հռոմայեցիների տիրապետության տակ, զնացին Կոստանդնուպոլիս: 105. Երկար քննելուց հետո նրանք հռոմեներից համոզվեցին եւ գրավոր խոստովանելով միությունը նրանց հետ՝ երդվեցին: 106. Բայց երբ վերադարձան Հայք, Մովսէսը նրանց չընդունեց, նույնպես եւ Պարսկահայոց մյուս եպիսկոպոսները: 107. Նրանք իրենց կաթողիկոս ձեռնադրեցին Յովհաննին՝ Կոզովտի Բագարան գյուղից: 108. ԺԴ (14) տարի շարունակ, մինչեւ Մաւրիկ կայսեր վախճանը, նրանց միջեւ հարաբերությունները սրված էին՝ Քրիստոսի երկու բնության եւ Քաղկեդոնի ժողովի հարցում:

109. Նրա (Մաւրիկի) վախճանից հետո Պարսից խոսրով արքան գրավեց Հայոց աշխարհը: 110. (Դա այն ժամանակ էր) երբ հերձվածող

¹⁶ Ովսիէ, Ժ. 9-10:

Աբրահամը կաթողիկոս դարձավ: 111. Այդ նույն տարին նա ստիպեց եպիսկոպոսներին, երեցներին եւ վանահայրերին նզովել Քաղկեդոնի ժողովը, հակառակ դեպքում հեռանալ երկրից: Սրանք նզովեցին, եւ վեճը դադարեց: 112. Երեք տարի անց պատերազմ տեղի ունեցավ Բասենում, եւ պարսիկները պարտության մատնեցին հռոմայեցիներին, պաշարվեց Կիթարիճ քաղաքը եւ Թեոդոսուպոլիսը՝ Փոկաս կայսեր Ե (5) տարին եւ Խոսրովի Ի (20) տարին: 113. Նրանք գրավեցին բազմաթիվ այլ քաղաքներ, (գերեցին) նաեւ Յովհան կաթողիկոսին, որ թեպետ Չայքում էր գտնվում, բայց ենթարկվում էր հռոմայեցիներին: 114. Այդ ժամանակ հերձվածող Աբրահամ կաթողիկոսը ստիպեց Յովհանի բաժնի եպիսկոպոսներին նզովել Քաղկեդոնի ժողովը կամ հեռանալ Չայքի շրջաններից: 115. Վերջիններս չհամաձայնեցին, եւ նրանցից ոմանք անցան Տայք, ոմանք՝ հռոմոնոց երկիրը եւ վախճանվեցին օտարության մեջ:

116. Ապա հերձվածող Կոմիտաս կաթողիկոսը, որի ժամանակ բազում խռովություն եւ ավերածություններ տեղի ունեցան Հռոմոնոց աշխարհում Խոսրովի ձեռքով, բոլորից սուր կերպով գրգռեց վեճը՝ նզովելու համար Քաղկեդոնի ժողովը: 117. Նա բազմաթիվ ճառեր գրեց իր անվամբ, կանոններ եւ տիպեր՝ Սուրբ Սահակի անվամբ, որոնց թվում եւ հայերեն անվանվող Ավարտական (իմա՝ Հաւատարմատ - Ն.Ղ.) կոչված գիրքը: 118. Նա ուզում էր, որ իր աթոռը ժառանգի ոմն Յովհան, բայց նրա փոխարեն այն ժառանգեց Քրիստափորը:

119. Երբ Քրիստափորը զրկվեց աթոռից, այս Յովհանն ուրախացավ, բայց այդ ժամանակ եւս նրան ոչինչ չհաջողվեց ստանալ, 120. որովհետեւ կաթողիկոս դարձավ Եզրը: Եւ այդ ամբողջ ժամանակ Յովհանը, մոլեգնած, չար աչքով էր նայում նրան:

121. Խոսրովի մահվան Դ (4) տարում եւ Հերակլի թագավորության ԻԳ (23) տարում այս (կայսրը), գալով Մեծ Չայք, հրամայեց Թեոդոսուպոլիսում մեծ ժողով գումարել բոլոր եպիսկոպոսների եւ վարդապետների, կաթողիկոս Եզրի եւ բոլոր ազատների մասնակցությամբ՝ Քրիստոսի՝ մեր Աստուծո երկու բնությունների եւ Քաղկեդոնի ժողովի հարցերը քննելու եւ եզրակացության հանգելու համար: 122. Երեսուն օր նրանք քննեցին այդ հարցը, եւ հայերը համոզվեցին (Սուրբ) Գրերից եւ իրենց ձեռքով գրավոր երդվեցին այլեւս այդ մասին երբեք չհակաճառել:

123. Բայց վերադառնալով Դվին, նույն այն Յովհանը դրդեց իր կրոնակիցներին, Գարդմանի եպիսկոպոս Ստեփանոսին եւ Սյունյաց Մաթուսաղային եւ մի քանի ուրիշների, որոնք չէին գնացել ժողովի, չհաղորդվել ոչ կաթողիկոս Եզրի եւ ոչ էլ նրա համախոհների հետ: 124. Մի քանի օր անց վերոհիշյալ Ստեփանոսը եկավ Եզր կաթողիկոսի մոտ: 125. Յովհանն իմանալով, որ նա անցել է նրա (Եզրի) կողմը, մեծ զայրությամբ թշնամացավ Ստեփանոսի դեմ, նույնպես եւ Մաթուսաղայի դեմ, որովհետեւ նա եւս միավորվեց Եզրի հետ: 126. Յովհանն ասում էր. «Ձեր մեղքերի հետ համեմատած՝ Եզրի մեղքն ավելի թեթեւ է, որովհետեւ նա կայսեր երկյուղից էր, որ շեղվեց ճշմարիտ ուղուց, իսկ դուք

անափառությամբ եւ կաշառքով է, որ անբուժելի մեղքի մեջ ընկաք»:

127. Եզրը դիմեց նույն Յովհաննին՝ ասելով. «Երիցս հրավիրեցի քեզ էլ, Մաթուսաղային էլ, Ստեփանոսին էլ, ասելով, որ մեր երկրի վարդապետներն ու դպիրները դուք եք. թող գայիք եւ պատասխան տայիք կայսերը, չէ՞ որ նա բոլորին էլ հրավիրել էր: 128. Դուք արհամարհեցիք ու չեկաք, եւ այժմ մեղադրում եք մեզ, որ նրա հետ համաձայնության ենք եկել: 129. Ինչ որ մենք նրանցից լսեցինք՝ ճշմարիտ համարեցինք եւ խոստովանեցինք մեր Տեր Յիսուս Քրիստոսի երկու բնությունը՝ կատարյալ Աստված եւ կատարյալ մարդ, մեկ անձնավորություն եւ մեկ դեմք եւ անբաժան տնօրինության մեջ: 130. Սուրբ հայրերի գրվածքները, որ մենք ընթերցեցինք, եւ մերոնց (գրվածքները) վկայեցին նույնի մասին, եւ մենք համոզվեցինք նրանց ասածներում, որոնք համաձայն են Սուրբ Գրոց: 131. Այժմ էլ դեռ ուշ չէ. Սուրբ հայրերի բոլոր գրվածքները մեզ մոտ են, ստուգեցեք եւ իմացեք ճշմարտությունը»: 132. Բայց երբ նա ցույց տվեց (Սուրբ) Գրոց վկայությունը, Յովհաննը՝ Չակառակորդը, ասաց. «Այդ բոլորը Սուրբ հայրերի գրոց մեջ նեստորականներն ավելացրին, ինչպես ժամանակին Սատորնիլոսը Սուրբ Գրոց մեջ բազմաթիվ հերձվածողական (մտքեր) ավելացրեց, 133. ինչպես, օրինակ, ըստ Դուկասի ավետարանի. «Սկսաւ Յիսուս տրտմել եւ հոգալ. եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից եւ զօրացուցանէր զնա»¹⁷, եւ դարձյալ. «Եւ մտադիրութեամբ եւս կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան»¹⁸, եւ նմանները: 134. Յովհաննի այս խոսքերը Եզրին էլ, նրա կողմնակից եպիսկոպոսներին էլ հակառակ թվացին (հավատին), եւ բոլորը հեռացան նրանից այդ խոսքերից դրդված:

135. Իսկ նա շարունակում էր վիճել, դրա համար էլ ստացավ «Չակառակորդ» անունը: 136. Իսկպպես, խոսքի զորությունը բարի մարդկանց համար դառնում է առաքինության զենք, իսկ չար մարդկանց համար՝ չարության փուշ:

137. Եզրի մահվանից հետո նա կարծում էր, թե իշխանների օգնությամբ կստանա աթոռը: 138. Բայց երբ աթոռն ստացավ Ներսեսը, նա առավել եւս հուզվեց, որովհետեւ տեսնում էր, որ վերջինս հաղորդակից էր հռոմայեցիների կայսեր (հավատին): 139. Նա բոլորին մղում էր հակաճառության, ասելով, որ Ներսեսը եւս Եզրի պես մոլորվեց: 140. Ներսեսը հրապարակավ հրավիրեց նրան բազմաթիվ եպիսկոպոսների, վարդապետների եւ ազատների ներկայությամբ, եւ մանրամասն քննության ենթարկելով նրա հակաճառությունը՝ աքսորի դատապարտեցին, եւ նա վռնդվեց կաթողիկոսի ու Չայոց իշխանի կողմից: 141. Նրա ու նրա ընկերների ճակատին շիկացած երկաթով աղվեսադրոշմ խարանեցին, իսկ նրան արտաքսեցին Կովկաս լեռը:

142. Այստեղից վերադարձավ, որովհետեւ տեղի կռապաշտները նրան չընդունեցին, եւ Անաստաս (կաթողիկոսի) մահվանից հետո եկավ Չայք իր նախկին բնակավայրը եւ վախճանվեց խոր ծերության մեջ:

17 Ստք. ԻԶ.37:

18 Դուկ. ԻԲ.43-44:

143. Նրա աշակերտները բազմանալով բոլորին շեղեցին ճշմարտության ուղուց, եւ նրանց հերձվածը երկրում տարածվեց մինչեւ Յուստինիանոս կայսեր ժամանակները:

144. Վերջինս իր (թագավորության) Ե տարին կաթողիկոս Սահակին եւ նրա եպիսկոպոսներին Կոստանդնուպոլիս կանչելով՝ միավորեց նրանց, ովքեր ընդունում են մեր Տիրոջ եւ Աստծո երկու բնությունը՝ աստվածային եւ մարդկային, մեկ անձնավորությամբ, անշփոթ եւ անբաժանելի, եւ նրանք գրավոր երդում տվեցին այլեւս չհակառակվել:

145. Բայց երբ նրանք վերադարձան, Հայքում մնացածները ըմբոստանում էին նրանց վերակացության դեմ՝ որպէս հոռոմների հետ հաղորդված:

146. Այնուհետեւ հակառակվում ու վիճում էին Սահակի ու նրա հետ գնացածների հետ, ասելով. «Եթէ դարձի չգաք եւ չնզույճեք նրանց, չենք ընդունի ձեզ մեր երկրում»:

147. Իսկ նրանք, կրկին գերադասելով մարդկային փառքը Աստծո փառքից, նորից նզովեցին նախ իրենց՝ որպէս հոռոմների հետ հաղորդվածների, ապա հոռոմներին, եւ այսպիսով ցույց տվեցին, որ անբուժելի են իրենց չարության մեջ:

148. Այսպիսիների մասին է, որ Պետրոս առաքյալն ասել է. «Ձի եթէ փախուցեալք ի պղծութեանց աշխարհի՝ գիտութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ դարձեալ ընդ նոյնս շեղեալք պատիցին, եղեւ նոցա վախճանն չար, քան զառաջինն:

149. Ձի լալ էր նոցա, եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ, քան զի ծանեան եւ յետս կացին ի Սուրբ պատուիրանէն, որ նոցա աւանդեցաւ:

150. Եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօնութեան, եթէ շուն դառնայ անդրէն ի փսխած իւր, եւ խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ»¹⁹:

Եզրակացություն

Իրքը քաղկեդոնական տեսանկյունից շարադրում է Հայ եկեղեցու պատմությունը Բյուզանդական եկեղեցու հետ հարաբերություններում՝ սկսած Նիկեայի տիեզերական ժողովից մինչեւ 700 թվականը: Այն մեզ հասել է հունարեն, բայց պարզ է, որ շարադրվել է ոչ հույն ընթերցողների համար. բնագրում եղած առանձին մանրամասնություններ, որոնք ոչ մի կերպ պարզաբանված եւ մեկնաբանված չեն, միայն հայ ընթերցողին կարող էին հասկանալի լինել: Իրքում ընդունված թվագրման համակարգը եւս հատուկ է հայ սկզբնաղբյուրներին, այսինքն՝ հիշվում են միաժամանակ Պարսից արքայի եւ Բյուզանդիայի կայսեր գահակալության տարեթվերը կամ էլ միայն Պարսից արքայի:

Ինչպես եւ ազդարարում է վերնագիրը, այն ներկայացնում է, թե ինչպես Հայ եկեղեցին, որ սկզբում հաղորդության մեջ էր Հունաց եկեղեցու հետ, բաժանվեց վերջինից Դվինի ժողովում, որի ժամանակ նզովվեց Քաղկեդոնի ժողովը, եւ ինչպես նա կրկին ու կրկին պառակտության մեջ ընկավ հետագա յուրաքանչյուր միությունից հետո՝ Յուստինոս II-ի, Մարիկի, Հերակլի եւ Յուստինիանոս II-ի օրոք: Համաձայն վերնագրի՝

19 2 Պետրոս, Բ. 20-23:

շարադրանքը նույնպես բնականորեն բաժանվում է երեք մասի. ա) երկու եկեղեցիների դավանական միության ժամանակաշրջանը, բ) Դվինի ժողովը, գ) միության վերականգնման փորձեր:

Երկրորդ եւ երրորդ բաժիններում խոսքը միայն Հայ եկեղեցու պատմության մասին է, այնինչ առաջին բաժնում հարակից ներկայացված են Հայ եւ Հունաց եկեղեցիների պատմությունները: Այս ակնհայտ տարբերությունը անհրաժեշտ հետեւանքն է մինչեւ պառակտումը Հայոց դավանական դիրքորոշման եւ Դվինի ժողովից հետո ստեղծված իրավիճակի տարբերության: Այնքան ժամանակ, քանի դեռ Հայ եկեղեցին Հունաց եկեղեցու հավատի մասն է կազմում, այն նաեւ Հունաց եկեղեցու պատմության մասն է, եւ եկեղեցական ժողովները ընդհանուր են երկուսի համար, ինչպես հեղինակն ինքն է նշում:

Ի դեպ, քննելով պատմության առաջին մասը, նկատում ենք, որ այն ոչ թե պարզապես Հունաց եկեղեցու պատմությունն է շարադրում, այլ շատ խելացի կերպով կառուցված է որպես ներածություն, որտեղ ներկայացված են քաղաքական եւ կրոնական իրողությունների հարկավոր տվյալներ՝ հասկանալու համար պատումի շարունակությունը: Տվյալները, որ առաջին հայացքից թվում է, թե վերաբերում են զուտ բյուզանդական եկեղեցուն եւ ոչ մի կապ չունեն Հայ եկեղեցու պատմության հետ, դառնում են անհրաժեշտ, երբ դրանք դիտարկում ենք Իրքի շարադրանքի ընդհանուր համատեքստում: Այսպես, օրինակ, ընթերցողը պետք է արդեն ծանոթ լինի Երեքսրբեանի պատմությանը, երբ նրան կներկայացվեն Դվինի ժողովի որոշումները, կամ Տիմոթեոս Կուզի գրվածքների հիշատակությանը, որ նախապատրաստում է նրա հայերեն թարգմանությունների դրվագը, իսկ Նեստորի դատապարտման պատմությունը ավելորդ չէ, քանի որ հետո տեսնում ենք, թե ինչպես պառակտիչները քաղկեդոնական դավանանքը նույնացնում են նեստորականության հետ: Եւտիքեւի դատապարտումից Քաղկեդոնի ժողովի գումարմանը հանգեցրած իրադարձությունների նկարագրությունը, ինչ խոսք է կան է մի գրքում, որի երկու երրորդը նվիրված է այդ ժողովից հետո ծագած կրոնական վեճերի քննությանը, դե իսկ Յուլիանէ Ալիկառնացուն եւ նրա աշակերտներին նվիրված հատվածի ծավալը լիովին արդարացվում է այն փաստով, որ Հայ եկեղեցին պառակտության մեջ է մտնելու հենց յուլիանականների միջոցով:

Առաջին մասում տեղ գտած տեղեկությունները Հայաստանի մասին կարելուովում են նույն պառակտման պատմության տեսանկյունից. օրինակ՝ Հայքի քաղաքական առաջին բաժանումը եւ երկրի մեծ մասի անցումը Պարսկաստանի տիրապետության տակ բացատրում են, թե ինչպես է Հայ եկեղեցին ավելի ուշ ներքաշվում պառակտության մեջ պարսկական քաղաքականության հետեւանքով:

Ուշադիր վերլուծությունը երեւան է հանում Իրքի մտահղացման անթերի ամբողջականությունը. շարադրանքը նպատակ չունի ներկայացնել Հայ եկեղեցու ողջ պատմությունը, այլ միայն այդ եկեղեցու «ելեւէջների» պատմությունը, որ Հունաց եկեղեցու հավատը երկար ժամանակ

բաժանելուց հետո ժխտում է այն Դվինի ժողովում, այնուհետև վերադառնում միությանը մի քանի անգամ եւ յուրաքանչյուրից հետո կրկին ընկնում պառակտության մեջ:

Իրքը հունարեն թարգմանությունն է հայերեն մի աղբյուրի, որ գործածվել է նաեւ Արսեն Սափարելու գրքում եւ Փոտի Թղթուն: Այս ընդհանուր աղբյուրը, սակայն, նույնությամբ չի վերարտադրվել երեքից եւ ոչ մեկում: Այդուհանդերձ, Իրքը ներկայացնում է հայերեն կորած բնագրի ամենահարազատ տարբերակը՝ չնայած ոչ կատարյալ վերարտադրությանը, քանի որ մի քանի տեղում սղագրումներ են արված, եւ հնարավոր չէ հաստատապես ասել՝ այս սղագրումներն արդեն գործածած կայի՞ն հայերեն օրինակում, թե՞ հունարեն թարգմանչինն են: Որպես քաղկեդոնական գրվածք՝ գրեթե ճակատագրական է, որ այն իրավունք չի ունեցել պահպանվելու հայ ազգային մատենագրության մեջ, եւ պատահական չէ, որ մեզ հասած վկաները պատկանում են երկու հարեւան քաղկեդոնական երկրների՝ Բյուզանդիայի եւ Վրաստանի մատենագրություններին:

Հայ ազգային ավանդույթից իր ժառանգականությամբ միանգամայն անկախ Իրքում ներկայացված Հայ եկեղեցու պատմությունը բովանդակությամբ նույնպես անկախ է հայ պաշտոնական պատմագրությունից: Այսպիսով, այն մեզ է փոխանցում արտասովոր արժեք ունեցող պատմական վկայություն. մի քանի կարեւոր փաստեր եւ բազում մանրամասներ այսօր հայտնի են միայն այս աղբյուրի շնորհիվ՝ ջնջվելով կամ աղավաղվելով ազգային ավանդույթի կողմից: Նույնիսկ երբ այն ներկայացնում է հայ ազգային պատմագրության մեջ նույնպես շարադրված իրողություններ, նրա հաղորդածը մնում է միանգամայն անկախ եւ այսպիսով օգնում շատ դեպքերում վերականգնել ճշմարտությունը:

Իրքի վկայությունը խիստ արժեւորվում է հատկապես նրանով, որ ներկայացրած դրվագների ճշող մեծամասնությունը հայ պատմիչները փորձել են միտումնավոր աղավաղել կամ կոծկել: Իրքի հեղինակը ստիպված չէ օբյեկտիվությունը կորցնել, ինչպես մյուս հայ պատմիչները, քանի որ իր ներկայացրած գրեթե բոլոր փաստերը բնութիւնով համահունչ են իրեն ներշնչող գաղափարներին: Ի հավելումն, նա արտահայտվում է միշտ աչքի ընկնող չափավորությամբ, նույնիսկ այն դեպքերում, երբ խոսքը իր դավանանքի ամենամուլի հակառակորդների մասին է:

Իրքի պատմությունների համակարգված համեմատությունը այլ աղբյուրների հետ երեւան է հանում նրանում պահպանված տեղեկությունների հավաստիության բարձր մակարդակը:

Իրքի գրության ժամանակի եւ հեղինակի մասին գրականության մեջ կան իրարամերժ կարծիքներ: Մեր կատարած տեքստագիտական, բանասիրական եւ պատմական քննությունը ցույց է տալիս, որ Իրքի հայերեն բնագիրը հավանաբար շարադրվել է 700 թվականին: Տեքստը անանուն է. մենք ճշգրիտ ոչինչ չենք կարող ասել հեղինակի անձի մասին, բացի այն, որ նա հայ քաղկեդոնական է եւ գրել է հայ ընթերցողների հա-

մար: Հավանաբար, նա պատկանել է Հունաց եկեղեցու հետ միավորման եռանդուն կողմնակիցների թվին, որոնք դեռևս ուժեղ թեւ էին ներկայացնում Հայ եկեղեցու ներսում հատկապես Կարինի ժողովից հետո:

Թե երբ է կատարվել հունարեն թարգմանությունը, դժվար է ասել, ինչպես եւ դժվար է որել է հստակ տեղեկություն ստանալ թարգմանչի անձի մասին: Նույնպես դժվար է որոշել, նա հո՞ւյն էր, թե՞ հայ. տեքստում եղած թարգմանական սխալները եւ հայկաբանությունները կարող են բացատրվել ինչպես հայկական բնօրինակին բավական կառչած հույն թարգմանչի դեպքում, այնպես էլ հունարենի որոշ նրբություններին ոչ լավ ծանոթ հայ թարգմանչի դեպքում: Հավանականությունն, անշուշտ, հակված է երկրորդի կողմը, քանի որ Բյուզանդական կայսրությունում ավելի շատ հունախոս հայ էր ապրում, քան հայացած բյուզանդացի:

Մեկնաբանություններ

34

Իրքի երկարաշունչ վերնագիրը, որ ավելի շուտ նմանվում է ցանկի, ամբողջությամբ ներկայացնում է շարադրանքի բովանդակությունը: Հունարեն շարադրանքում տեղ են գտել հայերեն գունավորմամբ մի շարք դարձվածքներ եւ արտահայտություններ, որոնք ապացուցում են վերնագրի՝ բնօրինակի անբաժանելի մաս լինելը: Վերնագրում հեղինակը երկու անգամ նշում է, որ պատմությունը շարադրելու է մինչեւ իր ապրած օրերը: Սա միանգամայն բավարար է ապացուցելու, որ այն գրված է VII դարի վերջին, քանի որ նախ՝ շարադրանքն ավարտվում է այդ ժամանակով, եւ, ինչպես տեսանք, վերնագիրը հարազատ է բնագրին: Չնայած ծավալուն լինելուն՝ վերնագիրն, այնուամենայնիվ, որոշակիորեն չի նշում, թե շարադրանքը Հայ եկեղեցու պատմությունն է, ավելին, «հայոց» կամ «հայեր» բառերը բացակայում են, այն միայն նշում է՝ «Սուրբ Գրիգորի օրերից մինչեւ այժմ», որն, հավանաբար, պետք է որ միանգամայն պարզ լիներ հայ հեղինակի եւ հայ ընթերցողի համար, մինչդեռ բյուզանդացի հեղինակը չէր գլանա շեշտել, որ իր շարադրանքի նյութը Հայոց պատմությունն է: Նշանակում է՝ պատմությունն իսկապես ուղղված է եղել հայ ընթերցողներին եւ գրված՝ հայերեն:

Առաջին պարբերության մեջ մի քանի գուգահեռ տարեթվերի օգնությամբ հեղինակը ճշտում է Նիկեայի ժողովի (325 թ.) ժամանակը: Այդ տարեթվերը չեն հանդիպում ոչ մի հայկական աղբյուրում: Բացի այդ, չկա նաեւ ոչ մի բառացի նմանություն հայերեն տեքստերի հետ. մասնավորապես, Իրքը միակն է, որ Սուրբ Գրիգորի տարիները հաշվում է Խոր վիրապից դուրս գալուց սկսած: Նշենք, սակայն, որ «34-ում Նիկեայի ժողովի ժամանակը տրված է Կոնստանդին Մեծի (305-337) 7-րդ տարում եւ Քրիստոսի ծննդյան 315-րդ տարում (325-ի փոխարեն):

Իրքը Հայոց առաջին կաթողիկոսներին անվանում է պարզապես «եպիսկոպոս», որը ճիշտ է արտահայտում պատմական իրողությունը. մինչեւ V դարի կեսերը, այսինքն՝ այնքան ժամանակ, քանի դեռ Հայոց

եկեղեցին Կեսարիայի եկեղեցու իրավասության ներքո էր, Չայոց եկեղեցու հայրապետը պաշտոնապես կրում էր «եպիսկոպոս» տիտղոսը:

Սուրբ Գրիգորի տոհմից կաթողիկոսական աթոռին հաջորդողների ցուցակում նշված է նաև Գրիգորիսը, որը Լուսավորչի թոռան՝ Յուսիկի երկվորյակ եղբայրն էր: Ըստ հայոց աղբյուրների, սակայն, նա չի գլխավորել Չայոց եկեղեցին, այլ 15 տարեկանում նշանակվել է Վրաց եւ Աղվանից եկեղեցիների եպիսկոպոս: Այդուհանդերձ, նրա անունը գտնում ենք նաև Չայոց կաթողիկոսների հունարեն ցուցակում, Եզնիկի Նշանագիր կարգացում եւ Տէր Միքելեանի երկու Ցուցակներում (տե՛ս Կրոն եւ հասարակություն, հ.14, էջ 59):

Փառնեբսեի կաթողիկոսի վերաբերյալ, որը Գրիգորի տոհմից չէր, Իրքը նշում է, թե նա Աշտիշատ գյուղի Ասպրակոնից էր: Այս անվան միակ բացատրությունը կարող է լինել «յագարակէն» (ագարակից) հայերեն բառի աղավաղումը, քանի որ այս տեղանունը միանգամայն անհայտ է: Չետաքրքիր է, որ Փառնեբսեի միակն է, որի ծննդավայրը նշված է. սա նշանակում է, որ նա Գրիգորի տոհմից չէ:

Իրքն այնուհետև հաջորդաբար նշում է Չայոց թագավորների անունները մինչև Չայաստանի առաջին բաժանումը հունաց եւ պարսից միջև: Հունական մասի Չայոց մայրաքաղաք է դառնում Թեոդոսուպոլիսը, որի հիմնադրման նախապատմությունը՝ կապված Բարդուղիմեոս առաքյալի հետ, հավանաբար արտահայտում է տեղական ավանդույթը: Այս ավանդույթը, ինչպես նաև Կալե Արխե տեղանունը, որի հայերեն օրինակը հնարավոր չէ ճշտորեն գուշակել, եւ որը, հավանաբար, հենց հունարեն էլ եղել է, ոչ մի այլ աղբյուրում հիշատակված չեն: Ժամանակակից պատմագիտության մեջ սովորաբար Թեոդոսուպոլիսի հիմնադրումը վերագրվում է Թեոդոս II-ին (408-450) եւ ոչ Թեոդոս Մեծին (379-395), մինչդեռ Իրքը քաղաքի հիմնադրումը կապում է Չայքի բաժանման հետ, որ տեղի է ունեցել Թեոդոս Մեծի օրոք: Նշենք, որ պատմականորեն ավելի տրամաբանական է, որ Չայաստանի բաժանումից հետո հունական մասում, որն այլևս սահմանային գոտի էր դարձել, բերդաքաղաք հիմնադրվեր: Այս առումով, ուրեմն, Իրքի վկայությունն ավելի ճշմարտամոտ է դառնում: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Չայոց բաժանման պատմության՝ մեր աղբյուրում ներկայացված տարբերակը հայկական ավանդական աղբյուրներից ուղղակիորեն կախվածություն չունի:

Ըստ հայկական պատմական ավանդության՝ Սուրբ Ներսէսը (353-373 ?) մասնակցել է 381թ. Կոստանդնուպոլիսի երկրորդ ժողովին: Իրքը բառացիորեն չի շեշտում այս փաստը, սակայն նշում է, որ սույն ժողովը գումարվել է Ներսէսի կաթողիկոսության օրոք, իսկ հաջորդ նախադասությունը, որտեղ հեղինակը եզրակացնում է հայոց եւ հունաց դավանական միաբանության մասին, հավանաբար ակնարկում է Ներսէսի մասնակցությունը ժողովին: Իրականում, Ներսէսը մահացել է 374 թ. առաջ, եւ Կոստանդնուպոլիսի ժողովում Մեծ Չայքից եպիսկոպոս ներկա չի եղել:

Իրքը Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս Պղոկլին (434-446) է վերագրում Երեքսրբեան հիմնի ներմուծումն ու տարածումը: Իրականում, այս հիմնի ծագումն անհայտ է. Իրքը, հավանաբար, ակնարկում է բյուզանդական ավանդույթը, ըստ որի՝ երբ Պղոկլու օրոք քաղաքում մեծ երկրաշարժ տեղի ունեցավ, հրաշքով երկինք բարձրացած մի մանուկ հավաստեց, որ երկնքում հրեշտակները երգում էին. «Սուրբ Աստված, Սուրբ եւ հզոր, Սուրբ եւ անմահ»: Ոչ մի այլ հայ աղբյուր չի հիշատակում այս ավանդույթը: Ջարմանալի է, որ Իրքում Երեքսրբեան հիմնին «որ խաչեցար»-ի հավելումն առնչվում է նոնարխիստների հերձվածի պարագլուխ Սաբելիուսի հետ, որը բանադրվել է Կալիստոս պապի կողմից III դարի սկզբին: Անաքրոնիկ շփոթությունը հավանաբար առաջացել է այն բանի հետեւանքով, որ Սաբելիուսի անունը հաճախ է կապվում 468-470 թթ. Անտիոքի պատրիարք Պետրոս Թափիչի՝ «որ խաչեցար»-ի հավելման իրական նախածեռնողի եւ սաբելիանական հերձվածում մեղադրվողի հետ:

Մեր տեքստն այնուհետեւ համառոտ պատմում է միաբնակության հիմնադիր Եւտիքեսի (378-454) դատապարտումից մինչեւ Չորրորդ ժողովի գումարման պատճառ դարձած իրադարձությունները, Թեոդոս II-ի մահվանից մեկ տարի հետո Մարկիանոս կայսեր (450-457) կողմից Քալկեդոնի ժողովի գումարումը: Ողջ պարբերությունը սեղմ առնչություն ունի Փոտ պատրիարքի թղթի հետ, որի շարադրանքն ավելի ընդարձակ ու հանգամանալի է. թվում է, թե Իրքի հեղինակը սրբագրել եւ համառոտել է մի տեքստ, որից օգտվել է նաեւ Փոտ պատրիարքի թուղթը:

Սուրբ Սահակի (389-428, †438) մահվանից հետո Չայոց եկեղեցին գումարում է Շահապիվանի ժողովը (444 թ.): Իրքի տեղեկությունը ժողովի մասին օգնում է ճշտել գումարման թվականի հետ կապված խնդիրը: Նմանապես, մեր աղբյուրը նշում է Սուրբ Սահակի կյանքի տեղությունը՝ 110 տարի, մինչդեռ հայ պատմագիրներից միայն Թովմա Արծրունին է դա հիշատակում, բայց նշելով 120 տարի:

Սուրբ Սահակին հաջորդած հայրապետը Սուրմակն է, որ երկու ասորի հայրապետերի պաշտոնավարումից հետո կրկին հետ է ստանում աթոռը Սահակի եւ Մաշտոցի մահվանից հետո: Իրքը նշում է, որ Սուրմակի նշանակումից հետո Չայոց աշխարհում եպիսկոպոսները նվազեցին, քանի որ նա ինքնակոչ էր եւ, ուրեմն, նրա կատարած ձեռնադրությունները՝ անվավեր: Ըստ Իրքի՝ Չայոց եւ Յունաց եկեղեցիները պառակտվում են հայոց կաթողիկոսների ձեռնադրման իրավունքը ինքնագլուխ ստանձնելու եւ Կեսարիայի արգելքը անտեսելու հետեւանքով, որը տեղի է ունենում պարսից արքայի հրամանով: Առաջին հայացքից նման տարօրինակ բացատրությունը հասկանալի է դառնում, երբ այլ տեքստերից տեղեկանում ենք, որ պարսից արքան հրամայում է հայ կաթողիկոսներին ինքնուրույն ձեռնադրություն կատարել Կեսարիայի արգելքից հետո²⁰: Այսպիսով, պարսից արքայի կողմից Սուրմակի պարտադրված նշանակումից հետո Չայոց եկեղեցին մերժում է Կե-

²⁰ Տե՛ս Կաթողիկոսների հունարեն Ցուցակ, § 12-13, 21, Արսեն Սափարելի, Մելիքսեթ-Քեկ, 1934, էջ 37:

սարիայի աթոռի իրավասությունը եւ բաժանվում Յունաց եկեղեցուց՝ պարսից արքայի հրամանին հնազանդվելու համար: Այսինքն, ըստ Իրքի հեղինակի՝ Յայոց եւ Յունաց եկեղեցիների պառակտումը տեղի է ունենում Սուրմակի օրոք, որը կաթողիկոսական իշխանություն ուներ «իր երկրում», այսինքն՝ Պարսկահայքում, ի տարբերություն Յունահայքի, որ ենթարկվում էր կայսերը: Նա այս մասին կրկին հիշատակում է, երբ պատմում է, թե ինչպես 555(553)թ. Դվինի ժողովը պաշտոնապես որդեգրում է բյուզանդական եկեղեցու դավանանքին հակառակ դիրքորոշում:

Ներկայացնելով չորս եկեղեցական ժողովների ժամանակագրությունը, որ մեծ մասամբ անձիշտ է, Իրքը Քաղկեդոնի ժողովից անմիջապես անցում է կատարում Անաստաս կայսեր գահակալության ժամանակին (491-518)՝ չնշելով ո՛չ Քաղկեդոնի ժողովի գումարման պատճառը, ո՛չ Լեւոն I կայսեր ժամանակը (457-474), ո՛չ Ջենոն կայսեր (474-491) Յենոտիկոնը (482 թ.) եւ ո՛չ էլ հատկապես Բաբգէն կաթողիկոսի գումարած 505-506 թթ. Դվինի ժողովի կողմից Յենոտիկոնի ընդունումը:

Այստեղ ուղղափառության դիրքերից հեղինակը նկարագրում է Անաստասի օրոք հակաքաղկեդոնական հալածանքները, որոնց մասին, սակայն, լռում են եւ միաբնակ թեքումով աղբյուրները (որը հասկանալի է), եւ ուղղափառ բյուզանդական աղբյուրները, ուստի առայժմ հնարավոր չէ պարզել, թե ինչ իրադարձությունների մասին է խոսքը: Երեւում է՝ հեղինակը պալատականների վրա է զցում Անաստասի հակաքաղկեդոնական քաղաքականության մեղքը, համարելով, որ կայսրը իր տիրակալության հենց սկզբից հանդես չի եկել որպես Քաղկեդոնի ժողովի բացահայտ հակառակորդ: Փաստացի, Անաստասի գահակալության առաջին կեսին Ասորիքում եւ Պաղեստինում հարաբերական հանգստություն էր տիրում. կայսրը, լինելով խաղաղասեր բնավորության տեր մարդ, փորձում էր պահպանել տարբեր եկեղեցիների իրավիճակի նախկին ստատուս քվոն: Նրա խորհրդականների՝ մեջ, որոնք կայսրին դրդեցին հանդես գալ գործուն միաբնակ քաղաքականության դիրքերից, պետք է, անշուշտ, նկատի ունենալ պրետորիայի կուսակալ Մարինուս Ափամեացուն. վերջինիս ազդեցությամբ է Կոստանդնուպոլսի եկեղեցուն պարտադրվում Երեքսրբեանի միաբնակ ձեւակերպումը: Անաստասի խորհրդականների քաղաքականությանը բնորոշ է երկու գիծ. նրանք պարտադրում են մերժել քաղկեդոնական դավանանքը՝ խոստովանելով մեկ բնություն, եւ հավելել «որ խաչեցար»-ը Երեքսրբեանին: Տեքստում Միջագետքը պետք է անշուշտ հասկանալ Ասորիքը: Այստեղ, իրոք, հակաքաղկեդոնական կուսակցությունը, որ կատաղի պայքար էր մղում Փլավիոս պատրիարքի դեմ, լիակատար հաղթանակ է տանում 512 թ.՝ վերջինիս աթոռանկությանը եւ նրա փոխարեն Սեւերոսի ձեռնադրմամբ:

Այսպիսով, 512թ. նոյեմբերի 4-ին՝ կիրակի օրը, Անաստասը հրամայում է Կոստանդնուպոլսում երգել Երեքսրբեանը՝ հավելված միաբնակ տարբերակով. կայսեր վճիռը առաջացնում է լուրջ ընդհարումներ,

որոնք շարունակվում են հաջորդ երկու օրը՝ նույնիսկ Անաստասին դնելով գահը կորցնելու սպառնալիքի տակ:

Իրքն այստեղ հարեւանցի ակնարկում է Յոնի Ֆելիքս III պապի (483-492) եւ մի շարք եպիսկոպոսների կողմից Պետրոս Թափիչին ուղղված մեղադրականներ եւ բանադրանքներ բովանդակող նամականիւն, որ, սակայն, կեղծ աղբյուր է եւ հավանաբար թխվել է Կոստանդնուպոլսի քաղկեդոնական վանականների ձեռքով այդ նույն ժամանակաշրջանում Երեքսրբեանի շուրջ ծավալված վեճերի կապակցությամբ: Կյուրեղ Սկյութոպոլցին մոտ 555թ. գրված Սուրբ Սաբասի Վարքում արդեն հիշատակում է Ֆելիքս պապի կողմից Պետրոս Թափիչի դատապարտումը:

Մեր տեքստը չափազանցում է՝ ասելով, թե Անաստասը «բոլոր ուղղափառներին աքսորեց եւ դառն մահվան դատապարտեց»: Ճիշտ է, նրա օրոք շատ եպիսկոպոսներ շնորհագրկվեցին եւ աքսորվեցին, շատ անձինք էլ սպանվեցին ընդհարումների ժամանակ, բայց պատմությանը հայտնի չէ, որ կայսրը անհնազանդներին մահվան դատապարտած լինի դավանական դիրքորոշման պատճառով:

38

Հաջորդ պարբերության մեջ խոսքն, անկասկած, Տիմոթեոս Կուզի մասին է, որ ընտրվել է Ալեքսանդրիայի պատրիարք 457 թ., աթոռանկ արվել 459/460 թթ., կրկին աթոռ բարձրացել 15 տարի անց եւ մահացել 477 թ.: «Այդ ժամանակներում» արտահայտությունը պետք է հասկանալ շատ ընդարձակ իմաստով, քանի որ այն չի կարող վերաբերել Անաստասի տիրակալության ժամանակին (491-518), որի մասին խոսվում է անմիջապես նախորդ տողերում: Տիմոթեոս Կուզը բազում գրվածքներ ունի՝ ուղղված Քաղկեդոնի ժողովի, Լեւոնի տոմարի եւ երկաբնակության դեմ, որոնցից պահպանվել են նաեւ հայերեն թարգմանությունները:

Յակոբ Սարուգեցու (Բաթնանի եպիսկոպոս 518/19-521) հիշատակությունը բավական անսպասելի եւ նույնիսկ զարմանալի է Իրքի ներկայացրած համատեքստում, որտեղ Յակոբը խզում է կապերը Յուլիանէ Ալիկառնացուց: Խնդիրն այստեղ ժամանակագրական բարդությունը չէ: Երկու եպիսկոպոսների բաժանման իրադարձությունը թվագրված է Յուստինոս կայսեր գահակալության տարիներով (518-572), հայտնի է, որ Յակոբ Սարուգեցին Բաթնանի եպիսկոպոս է դարձել Յուստինոսի օրոք, իսկ վերջինիս գահ բարձրանալուց հետո է, որ Յուլիանէ Ալիկառնացին ստիպված է եղել, ինչպես շատ այլ միաբնակ եպիսկոպոսներ, լքել պաշտոնը: Խնդիրն այն է, որ ոչ մի աղբյուր չի հիշատակում Յուլիանէի եւ Յակոբի միջեւ եղած որեւէ առնչության մասին, առավել եւս՝ նրանց բաժանման մասին: Միակ անունը, որ այս նախադասության մեջ կարելի է տալ Յուստինոսի օրոք Յուլիանէ Ալիկառնացու հետ կապերը խզած անձին, Սեսերոս Անտիոքացին է: Հարությունից առաջ Քրիստոսի մարմնի ապականության շուրջ հայտնի բանավեճը թշնամացրել է այս երկու եպիսկոպոսներին, որոնք, Յուստինոսի գահ բարձրանալով, աքսորվել էին Եգիպտոս: Մյուս կողմից, հնարավոր չէ ընդունել, որ Սեսերոսի անունը Յակոբով է փոխարինվել հունարեն տեքստի ընդօրինակումների ընթացքում: Սխալն, անշուշտ, Իր-

քի հեղինակինն է, որ, թերեւս, շփոթել է Յակոբ Բաթնանացուն Յակոբ Բարադեացու հետ, իսկ վերջինիս էլ Սեսերոսի հետ, քանի որ երեք անուններն էլ միասին հանդես են գալիս ստորեւ, § 56-ում:

Մենք չգտանք ոչ մի հույն կամ արեւելյան տեքստ, որ կարող էր աղբյուր ծառայած լինել Իրքի § 49-55 պարբերություններում շարադրված Յուլիանէ Ալիկառնացու վարդապետության համար: Պարսից արքայի տիրակալությամբ թվագրումը, ինչպես նաեւ Իրքի հեղինակի տեսանկյունից հերձվածողական համարվող տեքստում ավետարանական հղումների առկայությունը հուշում է, որ ենթադրելի աղբյուրը հայկական է եղել: Այստեղ ներկայացված թեզը բավական հեռու է իսկական յուլիանականությունից. իհարկե, Յուլիանէի համար Քրիստոսի մարմինը անապական է, եւ նա դա կրկնում է բոլոր առիթներով եւ տարբեր ձեւակերպումներով, սակայն նա երբեք չի պնդում, թե այդ մարմինը երկնային ծագում ունի, եւ թե այն ձեւավորվել է բնական օրենքներից զատ այլ ճանապարհով: Ընդհակառակն, նա հստակ ասում է, որ Քրիստոսը մարմին է առել «մեզ ամեն ինչով համագո Սուրբ Կույսի մսից եւ ոսկորներից»: Կարելի է ենթադրել, որ Իրքում տեղ են գտել Ալիկառնացու ծայրահեղական աշակերտներից մեկի դավանական հայացքները, քանի որ նրան երբեւէ հակաճառած ոչ մի հեղինակի մոտ այս թեզը չկա: Հունական աղբյուրներում այն ավելի շուտ անվանվում է «ակտիստեստ» եւ վերագրվում է Վալենտինին եւ Ապոլինարին, իսկ Եւտիքէսը 448 թ. սինոդում մեղադրվել է վալենտինիզմի հերձվածով: «Յուլիանական» (կամ «յուլիանիտ») եւ «յակոբիկ» անվանումները հայկական աղբյուրներում չեն հանդիպում Խոսրովիկ Թարգմանչից առաջ (726/727):

Ըստ Նիկեայի ժողովի 4-րդ կանոնի՝ նոր եպիսկոպոս ձեռնադրելու համար պետք է տվյալ թեմի բոլոր եպիսկոպոսները ներկա լինեն, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա բոլորի գրավոր համաձայնությամբ ամենաքիչը երեք հոգի է հարկավոր ծեսը կատարելու համար: Յուլիանէի մահվանից հետո նրա աղանդի հետեւորդ երկու եպիսկոպոսների կողմից (հենց Յուլիանէի դիակի ձեռքն օգտագործելով) նոր եպիսկոպոսին ձեռնադրելու պատմությունը, բացի Իրքից, հանդիպում է միայն Արսեն Սափարելու մոտ. մյուս աղբյուրներում նման դեպքը վերագրվում է այլ յուլիանականների: Իրքի հաղորդած հաջորդ եզակի տեղեկությունը, ըստ որի՝ յուլիանականները երկրպագում էին Յուլիանէի աջը որպես մասունք, շատ հետաքրքիր է, քանի որ եթե այդպիսի պաշտամունք իրոք կար յուլիանականների մոտ, ապա այն կարող էր ծառայած լինել նրանց հակառակորդներին՝ մահացածի մասնակցությամբ ձեռնադրություն իրականացնելու առասպելի ստեղծման համար: Պարզ է, որ իրենք՝ յուլիանականները, չէին կարող լինել մասունքի եւ դրա պաշտամունքի ծագման նման բացատրության հեղինակը: Դրա փոխարեն Իրքի հեղինակը վստահ է ձեռք-մասունքի պաշտամունքի փաստին, որովհետեւ նշում է, որ այն դեռ գոյություն ուներ իր կենդանության օրոք: Յուլիանէի մահվան ճշգրիտ թվականը հայտնի չէ, նա 530-ին արդեն կենդանի չէր:

Յուլիանականների վարդապետության եւ եպիսկոպոսության մասին շարադրանքից անմիջապես հետո Իրքը այս նույն աղանդավորներին ձեռնադրող եպիսկոպոսներին որոնելիս բերում է Չայք, մասնավորապես Տարոնի եպիսկոպոս Ներշապուհի մոտ, որ կապված էր ասորի վանական Աբդիշոյի հետ: Նրանք բացատրում են, որ Չայք են եկել, որովհետեւ մյուս բոլոր եկեղեցիները թաղված են նեստորական աղանդի մեջ, եւ միաժամանակ բացահայտում են, որ Չայոց եկեղեցին բաժանված է Կեսարիայի աթոռից եւ պարսից արքայի հրամանով ինքնուրույն է եպիսկոպոսներ ձեռնադրում: Ներսէս կաթողիկոսը, տեղեկանալով իրողությանը, ժողով է հրավիրում Դվինում, որտեղ Քաղկեդոնի ժողովը նզովվում է, Երեքսրբեանին կցվում է «որ խաչեցար»-ը, եւ Չայոց եկեղեցին այսպիսով բաժանվում է Երուսաղեմի ու Նոր Զոմմի հաղորդությունից: Այս ժամանակ էլ հայերեն են թարգմանվում Տիմոթեոս Կուզի եւ Փիլոքսեն Սաբբուզացու (Փիլաքսոն, Նաբովքի եպիսկոպոս) գրվածքները:

Չայ պատմագրության մեջ Դվինի ժողովի մասին տեղեկությունները աղոտ եւ հակասական են: Միայն 1901թ. Գիրք Թղթոցի հրատարակությունից հետո է, որ հնարավոր եղավ հստակեցնել իրողությունները: Ժողովածուում տեղ գտած նամակները, որոնք պաշտոնական եւ դեպքերին ժամանակակից փաստաթղթեր են եւ պատմական անգնահատելի արժեք ունեն, օգնեցին բոլորովին նոր լույսի ներքո մեկնաբանել այս ժողովի նշանակությունը եւ նախորդող պարագաները: Այսպիսով, հայտնի դարձավ, որ ասորի քրիստոնյաների մի խումբ գրել է Ներսէս Բին՝ խնդրելով եպիսկոպոս օծել Սարեբա վանքի քահանա Աբդիշոյին եւ նրան հանձնել հավատո հանգանակ: Չայոց կաթողիկոսն ու եպիսկոպոսները կատարում են խնդրանքը եւ նորընծա Աբդիշոյին նամակի հետ Ասորիք են ուղարկում, որտեղ Չայոց եկեղեցին հայտնում է իր լիակատար դավանական միասնությունը Ասորիքի եկեղեցու հետ:

Այնուհետեւ Դվինում ժողով է գումարվում արքայից արքա Խոսրովի 24-րդ տարում, որտեղ դատապարտվում է «նեստորականների պիղծ աղանդը» (ինչպես ցուցանում են Գիրք Թղթոցի առաջին երկու նամակները՝ այս ձեւակերպումը վերաբերում է քաղկեդոնականներին²¹):

Ինչպես տեսնում ենք, այս տեղեկությունը միանգամայն համապատասխանում է Իրքին, Արսեն Սափարելու Պատմությանը եւ Փոտ պատրիարքի Թղթին ծառայած ընդհանուր աղբյուրում արտահայտված մեկնաբանությանը Դվինի ժողովի մասին: Ոչ մի հայկական աղբյուր այսպես ճշգրիտ եւ այսպես ճիշտ չի պահպանել Դվինի ժողովի մասին հիշողությունը: Ուստի, ինչ ասվել է արդի գիտնականների կողմից սրա վերաբերյալ Գիրք Թղթոցի հրատարակությունից առաջ՝ հնացած է եւ մի-

21 Ինչպես հայտնի է դարձել վերջին հետազոտություններից, իրականում Դվինում երկու ժողով է գումարվել, առաջինը՝ 553 թ.՝ Քաղկեդոնի ժողովը նզովելու եւ Աբդիշոյին ձեռնադրելու նպատակով, եւ երկրորդը՝ 555 թ., Խուժաստանի նեստորականների դեմ միջոցներ ձեռնարկելու նպատակով, որոնք, հաստատվելով Չայքում 480-ականներից ի վեր, հաջորդ սերնդում արդեն հիմնել էին սեփական եկեղեցին եւ քարոզչություն էին ծավալում: Այս մասին հստակ նշում է Արսեն Սափարելին, (տես J-P. Mahn, նշված հոդվածը, հղում 3):

այն կարող է գաղափար տալ հայ պատմիչների հակասությունների եւ շփոթությունների մասին:

Իրքի հեղինակը հստակ նշում է, որ հայոց կաթողիկոսին դիմած ասորիները յուլիանական աղանդից էին. ահա թե ինչու նա նախորդ պարբերության մեջ այդքան կարեւորել էր այս աղանդի վարդապետության եւ պատմության հանգամանալի նկարագրությունը: Հայ պատմիչները գրեթե ամբողջությամբ անտեսում են ասորիների նախածեռնությունը. միայն Կիրակոս Գանձակեցին է նշում դա, որ հավանաբար տեղեկությունը քաղել է հենց Գիրք Թղթոցում զետեղված փաստաթղթերից, որովհետեւ ասորիներին անվանում է «ուղղափառ», ինչպես այս փաստաթղթերում: Իրքը ոչ միայն մանրամասն հաղորդում է այս տեղեկությունները, այլեւ ավելացնում, որ ասորիները յուլիանական աղանդից էին: Այս կարեւոր փաստը հաստատվում է հենց Գիրք Թղթոցի նամակներով, որոնցում արծարծված վարդապետությունը հստակ յուլիանական գունավորում ունի: Բացի այդ, Յովհաննէս Երուսաղեմցի եպիսկոպոսը Աղվանքի Աբաս կաթողիկոսին գրած նամակում նույնպես ասում է, որ հայերին գայթակղած ասորիները թաթախված էին Յուլիանէ Ալիկառնացու հերձվածուն: Հայերին գրած նամակում «ուղղափառ ասորիները» հայտնում են, որ ապրում են հալածանքների մեջ՝ հերձվածողներով շրջապատված, այդ պատճառով էլ Հայոց եկեղեցուն են դիմում եպիսկոպոս ստանալու համար:

Մեկ այլ փաստաթղթում Յովհաննէս Երուսաղեմացին տեղեկացնում է նաեւ, որ քիչ ավելի ուշ՝ 580-ականներին, ասորի յուլիանականները, նույն դժվարության մեջ ընկնելով, կրկին դիմում են հայերին, ինչպես Աբդիշուն՝ եպիսկոպոսական օծում ստանալու համար: Յուլիանական թերունով մեկ այլ աղանդ՝ այսպես կոչված «ահարոնականները», պառակտվելով յուլիանականներից եւ չունենալով նվիրապետ՝ նույնպես գնում են Պարսկահայք, այնտեղի եպիսկոպոսների կողմից ձեռնադրություն ստանալու համար: Իրոք, տարբեր աղբյուրներ նշում են ասորի հոգեւորականների ձեռնադրություններ հայ եպիսկոպոսների կողմից:

Իրքը, ինչպես նաեւ Գիրք Թղթոցի նամակները, կարեւոր դեր են հատկացնում Ներշապուհ (նաեւ Մերշապուհ տառադարձմամբ) եպիսկոպոսին: Ըստ Իրքի՝ նա Աբդիշոյի մտերիմն էր, եւ ինքն էլ միջնորդ էր դարձել Հայոց կաթողիկոսի եւ ասորիների միջեւ: Հայ պաշտոնական փաստաթղթերում նրա անունը միշտ գտնում ենք կաթողիկոսի անվան կողքին, սակայն կենսագրական այլ տեղեկություն չի հիշատակվում: Դրա փոխարեն Իրքը որոշ մանրամասներ է հաղորդում Ներշապուհի մասին, որ նա Տարոնի եւ Մամիկոնեից եպիսկոպոս է դարձել արքայից արքա Կավասի 19-րդ տարում, այսինքն՝ 506/507 թթ. միջեւ (որից կարելի է եզրակացնել, որ նա Բաբգէնի հրավիրած՝ Դվինի առաջին ժողովին մասնակցած նույն Ներշապուհն է), որ նա երկար տարիներ անցկացրել է Աբդիշոյի ընկերակցությամբ, եւ որ նա է փոխանցել յուլիանական ասորիների խնդրանքը Ներսէս կաթողիկոսին: Իրքից տեղեկանում ենք նաեւ, որ Աբդիշուն է Հայք բերել Տիմոթեոս Կուզի եւ Ֆիլոքսեն Մաբ-

բուզացու հակաքաղկեդոնական գրվածքները: Դատելով տեքստից, որտեղ Դվինի ժողովում որդեգրած դավանական դիրքորոշումը վերագրվում է այս գրվածքների ազդեցությանը, վերջինները պետք է որ թարգմանված լինեին ժողովից առաջ. ըստ երեւութին, դրանք Յայք են բերվել Արդիշոյի առաջին այցելության ժամանակ եւ թարգմանվել մինչեւ ժողովն ընկած ժամանակահատվածում:

Ըստ մեր հեղինակի, ասորի յուլիանականները դիմել են Յայոց եկեղեցուն, որովհետեւ վերջինս Յունաց եկեղեցու իրավասությունից անկախացած է եղել, եւ ոչ թե նրանից բաժանված է եղել դավանական պառակտության պատճառով: Փոտի Թղթում նույնիսկ կա պարբերություն, որ բացակայում է Իրքում, որտեղ պարզ ասված է, որ մինչեւ Ներսես II-ի հրավիրած Դվինի ժողովը Յայքը երբեք չի ընդդիմացել Քաղկեդոնի ժողովի դավանանքին: Յայ կաթողիկոսների հունարեն ցուցակը նույնպես նշում է, որ «չնայած նրանք ուրացել էին Սուրբ Գրիգորի եւ մյուս Յայրերի ավանդույթը, այնուամենայնիվ, Քաղկեդոնի ժողովի եւ Քրիստոսի երկու բնության մասին նրանք անվարան էին 103 տարի շարունակ՝ Քաղկեդոնի ժողովից մինչեւ Դվինի ժողովը. սրանից հետո միայն նրանք անջատվեցին հունաց միաբանությունից»: Արսեն Սափարեւլին հատկապես շեշտում է Յայոց եկեղեցու պառակտման մեջ պարսից արքաների խաղացած դերը, որոնք իրենց իշխանությունը հայերի վրա հաստատելու մտահոգությամբ փորձում էին հայերին հակադրել հույներին կրոնական հողի վրա, որը տեղի ունեցավ, երբ «Սուրբ Գրիգորի տան հոգեւոր առաջնորդությունը վերացվեց», այսինքն, երբ վերջին շառավիղը՝ Սահակ Մեծը, աթոռակ արվեց պարսից արքայի պահանջով:

Ինչպես տեսնում ենք, Իրքի եւ հարակից աղբյուրների հաղորդած ավանդույթը Յայոց եւ Յունաց եկեղեցիների միջեւ դավանական պառակտություն չի ճանաչում մինչեւ Դվինի երկրորդ ժողովը. Իրքը չգիտի Դվինի առաջին ժողովի մասին, որտեղ նզովվել են «նեստորական» վարդապետությունները, որոնց թվում ենթադրաբար նաեւ Քաղկեդոնինը: Սակայն Բաբգէնի նման դիրքորոշումը չէր նշանակում Յունաց եկեղեցուց բաժանում, քանի որ Ձենոն եւ Անաստաս կայսրերի օրոք Կոստանդնուպոլսի պաշտոնական դավանանքը ներկայացված էր Յենոտիկոնով, որի արմատական մեկնաբանությունը հավասարազոր էր Քաղկեդոնի դատապարտմանը: Դվինի 505/06թթ. ժողովի կանոնական թուղթը իրապես արտահայտում է հայոց եւ հունաց դավանական միաբանությունը: 518թ., երբ Յուստինոս կայսեր գահ բարձրանալով Յենոտիկոնի ռեժիմը վերացվեց, հայերը շարունակեցին մնալ հակաքաղկեդոնական դիրքորոշման մեջ եւ այդպիսով փաստացի պառակտվեցին Կոստանդնուպոլսի պաշտոնական եկեղեցուց:

561թ. Յուստինիանոսի եւ Խոսրով I Անուշիրվանի միջեւ կնքված «հիսնամյա խաղաղության» դաշինքը իրականում տևեց տասը տարի: 572թ. Դվինի մարզպանի սպանությամբ սկսված ապստամբության ծա-

խողունից հետո պարագլուխ Վարդան Մամիկոնյանը եւ Յովհաննէս Բ կաթողիկոսը (557-574) մի քանի նախարարների եւ եպիսկոպոսների հետ փախչում են Կոստանդնուպոլիս, որտեղ ընդունում են Յունաց եկեղեցու հաղորդությունը: Ապա այստեղ է գալիս պարսիկ դեսպան Սեբուխտը եւ Յուստինոս II-ից (565-578) պահանջում խախտողության դաշինքով նախատեսված հասանելիք հարկը: Կայսրը մերժում է եւ սպառնում է հովանավորության տակ առնել Յայքը: Այսպես սկսվում է հույն-պարսկական «քսանամյա պատերազմը», որ ավարտվում է 591 թ. Մարիկ կայսեր (582-602) եւ Խոսրով II-ի (590-628) միջեւ կնքված դաշինքով:

Իրքում, ինչպես նաեւ մյուս երկու հարակից աղբյուրներում, այս իրադարձությունները ներկայացված են հետաքրքիր մանրամասնություններով, հատկապես Վարդանի եւ նրա հետ գնացածների հունական դավանանքին միաբանելու վերաբերյալ, որոնց մասին հայոց աղբյուրներից միայն Ստեփանոս Ասողիկն է շատ աղոտ ու կցկտուր հայտնում: Ըստ այդ տեղեկությունների, Սուրբ Խաչվերացի տոնի պատարագի ժամանակ Վարդանը հրաժարվում է հաղորդություն ընդունել, ասելով, որ իրենց վարդապետներից թույլտվություն չունեն հաղորդվելու, որից զարմացած՝ կայսրը հրաման է տալիս ժողովել հայոց եպիսկոպոսներին ու վարդապետներին եւ քննել խնդիրը: Գումարվում է հինգերորդ ժողովը, որի ժամանակ նրանք նզովում են Եւտիքէսի եւ Դիոսկորի աղանդի բոլոր հետեւորդներին: Այս առիթով հայերը դիմում են կայսերը՝ իրենց ծախսով Սուրբ Սոֆիայի արեւմտյան դուռը կառուցելու համար, որն այդպիսով անվանվում է «Յայոց դուռ»²²:

Այս փաստը հաստատվում է նաեւ դեպքերի ժամանակակից բյուզանդական այլ անկախ աղբյուրով, եւ, ուրեմն, կարող է համարվել պատմական: Իրքը նշում է երկու առանձին ժողով՝ մեկը միայն հայ վարդապետների եւ եպիսկոպոսների մասնակցությամբ, մյուսը՝ հինգերորդ տիեզերականը, որ միեւնույն ժամանակ գումարվել էր այլ թեմայով: Վերջինի հիշատակումը բացարձակ անաքրոնիզմ է, որովհետեւ տեղի է ունեցել 553թ. Յուստինիանոս կայսեր օրոք (527-565): Շփոթմունքի պատճառը կարող է լինել հայոց աղբյուրներում Յուստինիանոս եւ Յուստինոս կայսրերի նույնատիպ անվանումը՝ «Յուստինանոս»: Նմանապես, չի թվում, թե հույների հետ միությունից եւ ժողովից հետո հայկական խումբը կաթողիկոս Յովհաննէս Բ Գաբեղենացու գլխավորությամբ անմիջապես վերադարձած լինի Յայք, ինչպես նշում են Իրքը եւ Արսեն Սափարեւի, քանի որ կաթողիկոսը մահացել է Կոստանդնուպոլսում՝ դեպքերից երկու տարի անց, ինչպես եւ այն, որ Յայքում մարդկանց մի մասը դրական է ընդունել հունաց հետ միաբանությունը:

Դրա փոխարեն Իրքում պահպանված է մեկ այլ կարեւոր տեղեկություն, որ չի հանդիպում ոչ մի այլ աղբյուրում. երբ «վարդանականները» Կոստանդնուպոլսից վերադառնում են Յայք, որպես հետեւանք

²² Սուրբ Սոֆիայի տաճարը արեւմտյան կողմում ունի ինը դուռ, որոնցից երեք գլխավորները բյուզանդացիներն անվանում էին «արքայական», «արծաթյա» կամ «մեծ»: «Յայոց դուռը», անկասկած, այդ երեք դռներից մեջտեղին է, ամենամեծն ու կենտրոնականը, չնայած որ բյուզանդական աղբյուրներում հիշատակություն չկա այդ մասին:

կամ հակադարձ գործողություն՝ հակաքաղկեդոնականները ջանքեր են ծավալում իրենց կողմը գրավելու Աղվանքը, Սյունիքը²³ ու Վիրքը: Ի պատասխան ուղարկված նամակների, որտեղ հորդորվում է պաշտոնապես ընդունել Դվինի ժողովի հավատո հանգանակը, նգովել Քաղկեդոնի ժողովը եւ նեստորականներին եւ Երեքսրբեանին կցել «որ խաչեցար»-ը, Աղվանքի Աբաս կաթողիկոսը եւ Սյունիքի Վրթանես եպիսկոպոսը հրաժարվում են միանալ, իսկ վրացիները անգամ քշում են հայ պատգամավորներին՝ որպես հերձվածողների եւ հուղայականների:

Հայ պատմիչները նշում են, որ Աբասն ու Վրթանեսը իրենց տարածքներից քշել են քաղկեդոնականներին՝ հայոց կաթողիկոս Յովհաննեսի ուղարկած նամակներից հետո:

Յովհաննես Երուսաղեմցու նամակում, ուղղված նույն Աբաս կաթողիկոսին, նամակագիրը հորդորում է վերջինիս հավատարիմ մնալ Քաղկեդոնի դավանանքին: Սա վկայում է այն մասին, որ, մինչեւ հայոց ապստամբությունը եւ 572թ. Կոստանդնուպոլսի միությունը, Աբասն, իրոք, պաշտոնապես դեռ չէր կողմնորոշվել երկու դավանանքների միջև եւ չէր ընդդիմանում իր երկրում հակաքաղկեդոնականների ծավալած քարոզչությանը, ինչպես նաեւ այն, որ Աղվանքի եկեղեցին Երեքսրբեանը երգում էր միաբնակ հավելումով: Դրա փոխարեն այդ նույն ժամանակ Վրթանես եպիսկոպոսը, թվում է, այնքան էլ հակված չէր իր եկեղեցու համար միաբնակ դավանանքը որդեգրելուն:

Ինչեւէ, եթե անգամ հայոց աղբյուրների հաղորդած տեղեկությունը ճիշտ է, Յովհաննես կաթողիկոսի նամակները Աբասին եւ Վրթանեսին թվագրված են մինչեւ 572թ. դավանական միությունը, ուրեմն միանգամայն հնարավոր է, որ դրանից հետո երկուսն էլ մերժած լինեն հակաքաղկեդոնականների ուղերձները: Ինչ վերաբերում է Վրաց եկեղեցուն, ապա Իրքի հաղորդած այս կարեւոր տեղեկության համաձայն, մինչեւ Կիւրիոն կաթողիկոսի օրոք Հայոց եկեղեցուց պաշտոնական բաժանումն էլ (608/09թթ.) այն մնում էր հավատարիմ քաղկեդոնական դավանանքին (հետաքրքիր է, որ Արսեն Սափարելու տեքստում հայերի առաջարկի եւ վրացիների մերժման մասին խոսք չկա):

Հաջորդ պարբերության մեջ Իրքը մի քանի բառով անդրադառնում է 572-591 թթ. բյուզանդա-պարսկական «քսանամյա պատերազմին» եւ նշում ինչ-որ իշխանների խռովությունների մասին, որ տեղի են ունեցել պատերազմական ժամանակաշրջանում: Հնարավոր է, որ խոսքը վերաբերում է պարսկական կողմում Վահրամ Չորեմի ապստամբությանը, երբ Որմիզ IV-ը կորցրեց գահը, եւ նրա որդի Խոսրով II-ը կարողացավ հաղթել միայն Մաւրիկ կայսեր օգնության շնորհիվ, եւ հունական կողմում՝ Արեւելքի զորաբանակի անհնազանդությանը, երբ Պրիսկոսի փոխարեն ուժով հրամանատար է հռչակվում Գերմանոսը:

23 Հայտնի է, որ մինչեւ 572թ. հայոց ապստամբությունը Սյունիքի իշխան Վահանը պարսից արքա Խոսրովից ստացել էր Սյունիքը Հայքից քաղաքականապես անջատելու իրավունքը: Համապատասխանաբար, Սյունիքի Պետրոս եպիսկոպոսը, հավանաբար 555 եւ 558թթ. միջև, իր եկեղեցին դուրս էր բերել Հայոց եկեղեցու իրավասությունից եւ եպիսկոպոսական ձեռնադրությունները ստանում էր Աղվանքի կաթողիկոսից: Սրանով է բացատրվում, թե ինչու Իրքում Սյունիքը հակաքաղկեդոնականների կողմից դիտարկվում է նույն հարթության վրա, ինչպես եւ հարեւան երկու երկրները:

591թ. նոր բաժանումից հետո Հայքի բյուզանդական դարձած տարածքում վերսկսվում է Հայոց եկեղեցուն հունական ուղղափառության հետ միաբանելու մի նոր գործընթաց: Այս անգամ էլ հայոց հրամանատար Մուշեղ Մամիկոնյանը, գալով Կոստանդնուպոլիս, հրաժարվում է հաղորդվել դարձյալ Սուրբ Խաչվերացի տոնի պատարագին: Մաւրիկ կայսրը իր մոտ է հրավիրում Հայոց կաթողիկոսին եւ եպիսկոպոսներին, սակայն հրավերն ընդունում եւ հունական դավանանքին միանում են միայն բյուզանդական մասի եպիսկոպոսները: Վերջիններս, վերադառնալով Հայք, ընտրում են իրենց համար նոր կաթողիկոս հակաթոռ, քանի որ Մովսէս Բ Եղիվարդեցին (574-604) հրաժարվում է ճանաչել նրանց, եւ Քրիստոսի բնության շուրջ բանավեճն այսպիսով շարունակվում է մինչեւ Մաւրիկի մահը:

Իրքի եւ երկու հարակից աղբյուրների՝ Փոտի Թղթի եւ Արսեն Սափարելու շարադրանքները միանգամայն զուգահեռ են եւ բավական հանգամանորեն նկարագրում են իրադարձությունները: Իսկ հայ ազգային աղբյուրները, շատ համառոտ հաղորդելով նույն իրադարձությունները, պնդում են, որ Մաւրիկը հրամանի ուժով է պարտադրել քաղկեդոնականություն դավանել հայոց եկեղեցիներում եւ հաղորդությամբ միավորվել իր եկեղեցուն, եւ որ ոմանք փառասիրությունից դրդված՝ կատարել են, մինչդեռ շատերը կան փախստական են դարձել, կան էլ անխախտ մնալով հավատի մեջ՝ մնացել են իրենց տեղերում:

Այս երկու հակադիր տեսակետների համադրումով կարելի է հավաստել, որ դեպքերի հիմնական մասը՝ հայ-բյուզանդական ժողովը, հայոց դավանական միավորումը, Հայքի կրոնական պառակտումը, պատմական անվիճելի փաստեր են: Մուշեղ Մամիկոնյանի հանդիպումը Մաւրիկ կայսրի հետ, նրանց երկխոսությունը, Մովսէս կաթողիկոսին եւ հայոց եպիսկոպոսներին ուղղված՝ Մաւրիկի հրավերը, Մովսէսի հրաժարումը մեկնելուց, ժողովին մասնակցած եպիսկոպոսների թիվը՝ բոլոր արժեքավոր մանրամասներով հայտնի են դառնում միայն Իրքից եւ հարակից երկու աղբյուրից:

Մովսէս կաթողիկոսի հայտնի արհամարհական խոսքերը «փռի հացի» եւ «թերմոնի»²⁴ մասին վերաբերում են բյուզանդական ծիսակարգում ընդունված հաղորդության պատարագին, որի ժամանակ գործածվում էր թթխմորով թխված հաց եւ տաք ջրով բացված գինի: Սա պահպանված ամենահին պատմական վկայությունն է Հունաց եկեղեցուն պատարագից առաջ գինուն տաք ջուր խառնելու սովորույթի մասին: Հայոց եկեղեցին օգտագործում էր բաղարջակերաց հաց, այսինքն՝ առանց թթխմորի (ինչպես այսօրվա լավաշը, որ նույն հրեական բաղարջակերաց հացից է սերում – Ն.Ղ.), եւ մաքուր գինի:

Հայոց քաղկեդոնական աթոռի ստեղծումը եւ Յովհան Բագարանցու (591-602) կաթողիկոս օծվելը նշում են նաեւ հայ աղբյուրները, որոնցից մեկի՝ Յովհան Մայրագումեցու նամակի հաղորդած տեղեկությունը շատ

²⁴ Պատարագի գինու վրա ավելացվող տաք ջուր, որ երբեմն գործածվում է «տաք գինի» կամ «ջրով խառնած գինի» իմաստով:

արժեքավոր է, որովհետեւ հին է եւ ակնհայտորեն անկախ պատմիչների մոտ պահպանված ընդհանուր ավանդույթից: Ըստ այդմ, Հայոց եկեղեցու բաժանումից հետո մեծ պայքար է ծավալվում Մովսէս կաթողիկոսի եւ Կարին-Թեոդոսիուպոլսի եպիսկոպոս եւ «փիլիսոփայապետ» Թեոդորոսի միջեւ: Մովսէսը իր տարածքի եպիսկոպոսներին եւ վարդապետներին ժողովի է հրավիրում եւ պատվիրում ոչ միայն ամենեւին չհաղորդվել Քաղկեդոնի ժողովն ընդունող հույների հետ, այլեւ նրանցից չընդունել ո՛չ գրվածքներ, ո՛չ պատկերներ, ո՛չ մասունքներ: Թեոդորոսն էլ իր հերթին Կարինում ժողով է գումարում բյուզանդական կողմի եպիսկոպոսների հետ, որտեղ վճռում են իրենց համար կաթողիկոս ձեռնադրել եւ ընտրում են Յովհաննին, որ սյունական էր (ստիլիտ, այսինքն՝ մենակյաց վանական): Բյուզանդացիները նրա նստավայրը տեղադրում են Ավանում, որ հեռու չէր Դվինից. եւ երկու կաթողիկոսները խռովության մեջ էին, քանի որ Մովսէսը չէր ընդունում Յովհաննի ձեռնադրյալներին:

Այսպիսով, եւ Մայրագոմեցու նամակը, եւ Իրքը նշում են, որ հունական մասի հայ եպիսկոպոսներին է պատկանում քաղկեդոնական կաթողիկոս ընտրելու որոշումը, մինչդեռ հետագա հայ աղբյուրները այդ նախաձեռնությունը վերագրում են կայսր Մարիկին:

Մարիկի գահընկեցությունից եւ մահվանից հետո Խոսրով II-ը վերանվաճում է Հայքի կորցրած տարածքները, եւ Հայ եկեղեցու ներքին պառակտումն այդպիսով ավարտվում է. հունական մասի եպիսկոպոսական թեմերը կրկին ենթարկեցվում են նորընծա Աբրահամ Աղբաթանցի կաթողիկոսի (607-611) իրավասությանը:

Իրքն այս գործընթացը ներկայացնում է որպես հալածանքներով ուղեկցված հարկադիր միավորում՝ քաղկեդոնականությունը նգովելու կամ երկրից հեռանալու պայմանով: Այս մասում Իրքի եւ Արսեն Սափարելու տեղեկությունները տարբերվում են. ըստ առաջինի՝ հասկացվում է, թե բոլոր քաղկեդոնական հոգեւորականները հրաժարվում են իրենց դավանանքից, իսկ ըստ երկրորդի՝ Աբրահամը երկրից արտաքսում է Այրարատ նահանգի գրեթե բոլոր վանքերի վանականներին եւ միայն մի քանիսին ստիպում նգովել Քաղկեդոնի ժողովը: Գիրք Թղթոցում պահպանված եւ 607-ով թվագրված հնագանդության մասին պաշտոնական փաստաթղթից տեղեկանում ենք, որ Այրարատի եւ Տուրուբերանի մի շարք թեմերի եպիսկոպոսներ եւ վանահայրեր իրոք ստորագրել են միությունը, եւ եթե բերված ցուցակը ամբողջական է, նշանակում է, որ հունական կողմի բոլոր չնշված թեմերի եպիսկոպոսները հավատարիմ են մնացել կամ հետեւել են Յովհաննին, որ պարսիկների արշավանքից հետո ապաստանել էր Կարին-Թեոդոսիուպոլսում: 610 թ. պարսիկները ջախջախիչ պարտության են մատնում հունական զորքին, գրավում են Կարինը եւ բնակիչների հետ գերեվարում նաեւ Յովհաննին: Պարսիկների վերջնական հաղթանակից հետո Իրքը Աբրահամին երկրորդ անգամ է ներկայացնում՝ բոլոր քաղկեդոնականներին իր իրավասությանը ենթարկվելու պահանջով, նշելով, որ այս անգամ այդ կոչը

նույն հաջողությանը չի արժանանում, եւ շատ եպիսկոպոսներ լքում են երկիրը. շատերը հանգրվանում են Տայքում, ոմանք մեկնում են Բյուզանդիա: Հավանաբար, Տայքը, քաղաքականապես կրկին անցնելով պարսից տիրապետության տակ, կրոնական առումով չէր ենթարկվում Դվինի կաթողիկոսի իրավասությանը: Հայտնի է, որ հայ-վրացական սահամանային այս նահանգը Հայոց եկեղեցու դավանափոխությունից հետո էլ շարունակում էր հավատարիմ մնալ քաղկեդոնական ուղղափառությանը եւ անկասկած ավելի շատ կախված էր Վրաց քան Հայոց եկեղեցուց:

Գիրք Թղթոցի փաստաթղթերում ոչ մի հիշատակություն չկա Աբրահամի երկրորդ հնազանդության մասին, եւ հնարավոր չէ պարզել՝ Իրքի տեղեկությունը հավաստի՞ է, թե՞ պարզապես առաջինի փոփոխված արձագանքն է: Ինչեւէ, Արսեն Սափարելու տեքստի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ երկրորդ անդրադարձում նկարագրված մանրամասներն ավելի մոտ են պատմական իրողություններին:

Իրքում Կոմիտաս կաթողիկոսին (610-628) վերաբերող հատվածը նկատելիորեն տարբերվում է հայ պատմական աղբյուրների հաղորդած տեղեկություններից, որոնք նշում են երկու փաստ՝ Երուսաղեմի պատրիարք Մողեստի հետ նամակագրությունը եւ Սուրբ Հռիփսիմե եկեղեցու շինությունը: Մեր տեքստում Կոմիտասը հանդես է գալիս որպես մոլի հակաքաղկեդոնական, իսկ Արսեն Սափարելին ավելի մանրամասն է հաղորդում, թե ինչ միջոցներով է Հայոց կաթողիկոսը նգովել տալիս Քաղկեդոնի ժողովը. Աղվանքի եկեղեցին միաբանելու համար նա նվիրում է յոթ եպիսկոպոսական թեմ, Սյունիքի եպիսկոպոսին արտոնում է կաթողիկոսների նման խաչի առաջնորդությամբ շրջելու իրավունք եւ ընդարձակում նրա թեմը: Գիրք Թղթոցում պահպանված նրա նամակը ասորի եպիսկոպոսներին ակնհայտ միաբնակ կողմնորոշում ունի՝ յուլիանական երանգավորումով: Շատ կարելու է նշել, որ հակաքաղկեդոնականության նման ծավալումը զուգորդվում էր պարսից խոսրով արքայի՝ Բյուզանդական կայսրությունը ասպատակելու իրադարձություններին, երբ նա նույնիսկ գրավում է Երուսաղեմը եւ գերի տանում Սուրբ Խաչափայտի մասունքը:

Կոմիտաս կաթողիկոսի հետ աղբյուրներում հանդես է գալիս Հունաց եկեղեցու հետ միաբանության մեկ այլ մոլեռանդ հակառակորդ՝ Յովհան Մայրազոմեցին, որին կաթողիկոսը խոստացել էր իր հաջորդը լինել: Սակայն նրա փոխարեն աթոռին է նստում Քրիստափորը (628-630), իսկ այդ ընթացքում պատմաքաղաքական իրադարձությունները ծավալվում են հակադարձ ուղղությամբ. Հերակլ կայսրը (610-641թթ.) անցնում է հակահարձակման եւ լայնածավալ պատերազմից հետո հաղթանակ տանում պարսից դեմ, հետ վերցնում Խաչափայտի մասունքը: Կրկին հրապարակ է բերվում Հունաց եկեղեցու հետ հայոց դավանական միաբանության հարցը, եւ այս անգամ էլ Հերակլը ժողով է գումարում Կարին-Թեոդոսիուպոլսում (633), հրավիրում հայոց կաթողիկոսին (որ այդ ժամանակ Եզրն էր (630/31-641)), եպիսկոպոսներին,

վարդապետներին եւ բոլոր ազատներին՝ քննելու հավատի խնդիրները եւ Քաղկեդոնի դավանանքը: Հայ ժողովականները կաթողիկոսի գլխավորությամբ երրորդ անգամ ընդունում են Հունաց եկեղեցու հետ միաբանությունը: Այդ ժամանակ Յովհան Մայրագոմեցին ուժեղ ընդդիմադիր շարժում է հրահրում միության դեմ՝ զուր փորձելով պառակտման մեջ պահել Գարդմանի եպիսկոպոս Ստեփանոսին եւ Մաթուսաղա քերթողին (որ հետո դարձավ Սյունիքի եպիսկոպոս): Եզրի մահվանից հետո, կրկին չստանալով հայրապետական աթոռը, նա շարունակում է պայքարը Ներսէս Գ-ի օրոք (642-662), որը նրան հերձվածող հռչակելով՝ աքսորում է Կովկաս: Մայրագոմեցու մահվանից հետո նրա աղանդը իր աշակերտների շնորհիվ պահպանվում է մինչեւ Յուստինիանոս II-ի տիրակալությունը:

Քաղկեդոնական դիրքորոշում ունեցող մեր երեք աղբյուրների շարադրանքը նկատելիորեն տարբերվում է հայ ժամանակագիրների հաղորդած տեղեկություններից՝ հուշելով մեկ այլ բոլորովին անկախ ընդհանուր աղբյուրի գոյությունը, որին մոտ տեղեկություններ է հայտնում միայն Ստեփանոս Օրբելյանը: Այսպես, հայ աղբյուրները չեն խոսում Յովհան Մայրագոմեցու կաթողիկոսական հավակնությունների եւ դրանց շարունակ տապալման մասին եւ նրան նույնիսկ ներկայացնում են որպես արդար, իմաստուն եւ հավատի համար խոստովանող հոգևորական, որ հրաժարվել է ընդունել հերձվածի մեջ հայտնված կաթողիկոսին, նսեմացնում կամ գրեթե չեն նշում Կարնո երեսնօրյա եկեղեցական մեծ ժողովի գումարման փաստը՝ այն դիտարկելով որպես սոսկ հանդիպում Հերակլի եւ Եզրի միջեւ. ավելին, այս իրադարձությունների լուսաբանումը կախված է աղբյուրների դավանական կողմնորոշումից, մինչդեռ հայ պատմիչները Հունաց եկեղեցու հետ միաբանությունը համարում են որպես Եզրի անհատական նախաձեռնություն, քաղկեդոնամետ տեքստերը այն ներկայացնում են որպես հայ եկեղեցական ժողովի արդյունք: Հայկական միակ աղբյուրը, որ խոստովանում է Կարնո ժողովի գոյությունը՝ Օձնեցուն վերագրվող ժողովների պատմությունը, միաժամանակ հավատացնում է, որ Եզրն այդ ժողովում է կաթողիկոս ընտրվել՝ այսպիսով նրան ներկայացնելով որպես օտարի կողմից հովանավորվող քաղկեդոնական ապօրինի ինքնակոչ, եւ ոչ մինչ այդ օրինական կարգով ընտրված հայրապետ: Նույնը վերաբերում է ժողովի ընթացքում կայացած քննարկումներին եւ հայոց կողմից ժողովի որոշումը երդմամբ հաստատող գրավոր փաստաթղթին, որոնց մասին լռում են հայկական տեքստերը:

Տարբեր է նաեւ Մայրագոմեցու եւ Եզրի հանդիպման նկարագրությունը: Ըստ հայկական կողմի, Եզրն ինքն է հրաժարվում Յովհանին իր հետ տանել ժողովին, իսկ վերադարձին, երբ վերջինիս ուժով բերում են կաթողիկոսի մոտ, նրան հանդիմանում է գոռոզությամբ ընթուստանալու մեջ եւ զանահարել է տալիս, որին ի պատասխան՝ Մայրագոմեցին նրան դավաճան է կոչում եւ հայրերի հավատը ուրացող: Մինչդեռ Իրքը եւ Արսեն Սափարելին հայտնում են, որ Եզրը կշտամբում է Յովհանին, Ստեփանոսին ու Մաթուսաղային՝ ժողովին չներկայանալու համար՝

չնայած իր կողմից ուղարկած եռակի հրավերին, որից հասկացվում է, որ Մայրագոմեցին ժողովին չի ներկայացել սեփական ըմբոստությունից դրդված: Այա կաթողիկոսը բացատրում է, որ քաղկեդոնական դավանանքն ընդունել է՝ հիմնվելով եկեղեցու հայրերի գրվածքների ուսումնասիրության վրա, եւ նրանց էլ հորդորում իրենց հերթին դրանք քննել, որին Մայրագոմեցին պատասխանում է, որ վկայակոչած խոսքերը նեստորականների հավելումներ են ավետարանական տեքստերին: Իրողության այս երկրորդ տարբերակը բանասիրական տեսակետից ավելի արժանահավատ է թվում, որովհետեւ պարունակում է կոնկրետ եւ անձնական բնույթի տեղեկություններ. եզրը արդարացնում է իր վարքը մանրամասներով, որոնք հնարովի չեն թվում, մասնավորապես ժողովի ընթացքում հայրաբանական գրվածքների քննությունը, որ միանգամայն համապատասխան է տվյալ ժամանակաշրջանի դավանաբանական վեճերի ոգուն, իսկ Մայրագոմեցին հակադարձում է տեքստային քննադատության փաստարկներով, որոնք ավելի ծանրակշիռ են, քան հայ աղբյուրներում նրան վերագրված բանալ ու կաղապարային խոսքերը:

Հայոց աղբյուրները դարձյալ լռում են Ներսէս Գ-ի օրոք Մայրագոմեցու դատապարտման, պատժի եւ աքսորի մասին, որ, ինչպես պարզվում է Արսեն Սափարելու տեքստից, տեղի է ունենում այդ կապակցությամբ գումարված հանձնաժողովի եւ ոչ թե կաթողիկոսի միանձնյա որոշման հետեւանքով: Նույն տեքստից իմանում ենք նաեւ, որ Մայրագոմեցին Կովկասից վերադառնում է Հայք, բնակություն հաստատում «Հայոց ձորում» (Քնի եւ Յորայի հովտում) եւ մեծ քանակով աշակերտներ հավաքում այդ տարածքում եւ Հայաստանի հյուսիսում, իսկ Ներսէսի մահվանից հետո աշակերտների հետ գալիս է Այրարատ՝ իր նախկին բնակավայր Մայրագոմը կամ Մայրավանքը, որտեղ էլ խոր ծերության հասակում կնքում է մահկանացուն:

Այսպիսով, դատելով քաղկեդոնական եւ հայկական ազգային աղբյուրների տեղեկություններից՝ Յովհան Մայրագոմեցին հայ կրոնական ազգայնականության նշանակալի դեմքերից մեկն է, որ աչքի է ընկնում հպարտ եւ ըմբոստ բնավորությամբ, գիտելիքների խոր պաշարով, մտածողության ուժով եւ ուրույն ոճով: Նրա թողած ազդեցությունը այդ ժամանակվա հայ աստվածաբանական մտքի զարգացման վրա հավանաբար մեծ է եղել: Պատահական չէ, որ Իրքն ու Արսեն Սափարելին Մայրագոմեցուն են մեղադրում Հայքի հակաքաղկեդոնական դավանական կողմնորոշման մեջ եւ ըստ այդմ՝ իրենց ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների շարադրանքը ավելի շատ հյուսում են նրա անձի շուրջ:

Արսեն Սափարելին հայտնում է, որ Մայրագոմեցու մահվանից հետո նրա աշակերտները, միառժամանակ մնալով Մայրավանքի, Եղվարդի ու Սուրբ Թեոդորոս վանքի վանականներ, այնուհետեւ վտարվում են Իսրայել կաթողիկոսի (667-677) եւ իշխան Գրիգոր Մամիկոնյանի կողմից եւ սփռվում Հայքով մեկ:

Յունաց եկեղեցու հետ Յայոց հաջորդ միությունը, ըստ Իրքի, տեղի է ունենում Յուստինիանոս II կայսեր (668-711) հինգերորդ տարում (իրականում 690 թ.), երբ հայոց եպիսկոպոսները Սահակ հայրապետի գլխավորությամբ կանչվում են Կոստանդնուպոլիս, որտեղ ընդունում են երկաբնակ դավանանքը եւ գրավոր երդում տալիս՝ այս հարցում այլևս չհակառակվել: Վերադառնալով հայրենիք՝ նրանք բախվում են երկրում մնացածների ընդդիմությանը, որոնք հրաժարվում են ընդունել հույների դավանանքն ընդունած հոգեւոր վերակացության հեղինակությունը՝ կաթողիկոսից եւ մյուսներից պահանջելով վերադառնալ նախկին հավատին եւ նզովել հույներին: Վերջիններս, զիջելով ճնշմանը, նզովում են իրենց եւ հույներին:

Այս վերջին միությունը, Իրքից բացի, ոչ մի այլ աղբյուրում չի հանդիպում. Արսեն Սափարելու պատմությունն ավարտվում է Մայրագոմեցու դրվագով, Փոտ պատրիարքի Թուղթը չի հիշատակում Սահակին, իսկ հայ պատմիչները լռում են վերջինիս՝ բյուզանդական ուղղափառությունն ընդունելու, ապա մերժելու իրողությունը: Սա, իհարկե, չի նշանակում, որ այս դրվագը պատմական արժեք չունի. Իրքի հեղինակը բազում այլ ապացույցներ է տվել իր ճշմարտացիության եւ գերազանց իրազեկության վերաբերյալ, որպեսզի կասկածենք այս վերջին վկայության իսկությանը, հատկապես, որ այստեղ նկարագրված դեպքերը շատ մոտ են Իրքի շարադրման ժամանակաշրջանին: Բացի այդ, ինչպես կտեսնենք, բերված փաստերը հիանալի ներգրավվում են Յուստինիանոս II-ի ժամանակվա Յայոց պատմության մեջ:

Յայ հեղինակների լռությունը զարմանալի չէ. Սահակ Գ-ին (677-703) պարտադրված դավանական միությունը բավական վաղանցիկ էր, որ ազգային պատմագրությունը դրան չամոքադառնար, մանավանդ որ միշտ էլ միտում կար այս կարգի եղելությունները անտեսելու կամ նսեմացնելու, իսկ Բյուզանդական կայսրության տիրապետությունը թոթափելուց հետո Յայոց եկեղեցին իր անկախությունը պահպանելու համար հաճությամբ ջնջում էր Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին ենթարկվելու հին հետքերը:

Այդուամենայնիվ, Սահակ հայրապետի մասին հայոց աղբյուրներում պահպանված տեղեկությունները ինչ-որ չափով թույլ են տալիս կռահել այն, ինչ չի ասվում: Օրինակ, Ստեփանոս Տարոնացին պատմում է, որ Յուստինիանոս II-ը, մեծ զորքով արշավելով Յայք, պարտադրաբար իր մոտ է կանչում բոլոր նախարարներին, որոնցից մեկին երկրի իշխան է կարգում, մի քանիսին էլ պատանդ է վերցնում, այդ թվում նաեւ Սահակին եւ հինգ եպիսկոպոսների: Բացի այդ, բոլոր աղբյուրները նշում են, որ Սահակը գերեվարվել եւ Դամաս է տարվել Աբդալլահ ոստիկանի կողմից, եւ որ նա մահացել է վտարանդության մեջ՝ Յարրանում, արաբ իշխանությունների հետ բանակցելու համար մեկնած ճամփորդություններից մեկի ժամանակ:

Սահակին վերաբերող հայ պատմական ավանդությունը երեւում է նոր լույսի ներքո, երբ այն համադրում ենք Իրքի տեղեկության հետ.

իրոք, կաթողիկոսի եւ հինգ եպիսկոպոսների «գերությունը» Յուստինիանոսի կողմից կարելի է նույնացնել Կոստանդնուպոլսում տեղի ունեցած դավանական կոնֆերանսի եւ պարտադրված նոր միության հետ, իսկ նրա գերեվարությունը Ասորիք, որի պատճառը հայ աղբյուրները չեն նշում, սպառիչ կերպով բացատրվում է այս դավանական միության ենթատեքստում, քանի որ թշնամի կայսրության հետ ցանկացած հրապարակավ հարաբերություն կամ գործակցություն արաբ իշխանությունների մոտ պետք է որ կասկած առաջացներ, որն ավելի քան բավարար էր կաթողիկոսին Չայոց եկեղեցու վերակացությունից զրկելու համար:

Չայտնի է, որ թագավորության հենց առաջին տարիներին Յուստինիանոս II-ը ռազմական հաղթական արշավանքից հետո նվաճել էր ողջ Չայքը, եւ 688 թ. Աբդ ալ-Մելիք խալիֆը, քաղաքացիական պատերազմի պատճառով հայտնվելով կաթվածահար վիճակում, ստիպված ընդունել էր տասը տարվա հաշտության պայմանագիրը, որով մասնավորապես ճանաչել էր Չայքի զիջումը կայսրությանը: Իհարկե, Յուստինիանոսը չէր կարող բաց թողնել իր դինաստիայի եւ կայսրության քաղաքական ավանդույթը եւս մեկ անգամ գործի դնելու առիթը եւ երկիրը նվաճելուց անմիջապես հետո իր իշխանության բարեհաճությանը մատնված հայ հոգեւորականությունից չպահանջեր հավատով միավորվել կայսերական եկեղեցուն:

Եթե Յուստինիանոսի հետ Կոստանդնուպոլսում իրոք հինգ եպիսկոպոս է եղել, ապա պարզ է դառնում, թե ինչու վերադարձին Չայքում մնացածների ընդդիմությունը արագ հաղթանակ է տանում, եւ կնքված միությունը չեղյալ է դառնում: Միաժամանակ, պետք է նաեւ հաշվի առնել, որ այդ ընթացքում արաբները վերահաստատում են տիրապետությունը Չայքի վրա՝ 688թ. խաղաղության պայմանագիրն առաջինը խախտած Յուստինիանոսի դեմ հաղթանակ տանելով Սեբաստոպոլսի ճակատամարտում: Չասկանալի է, որ կայսերական եկեղեցու հետ դավանական միությունը չէր կարող դրանից հետո երկար գոյատևել:

Սահակ Գ-ի՝ հունաց միությունից հրաժարվելուց հետո երկրում ստեղծված կրոնական իրադրության պայմաններում էլ Իրքի հեղինակն ավարտում է շարադրանքը՝ բյուզանդական ուղղափառությունը կրկին մերժած հայերին ուղղելով Պետրոս առաքյալի խոսքերը:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր: Ավարտել է Նյու Յորքի «Սոցիալական ուսումնասիրությունների նոր դպրոցը» (New School for Social Research): Մի քանի լեզուներով հրատարակված «Պետական կրոնը ժամանակակից աշխարհում» (Public Religions in the Modern World) գրքի հեղինակն է:

ԻՍՊԱՆԻԱ. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՅՄ ԻՄԵՉԵՒ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՄԱՆՈՒՄ

52

Քրիստոնյաների կողմից մուսուլման նվաճողներից Իբերական թերակղզու դարեր շարունակվող վերանվաճումը հանգեցրեց կրոնական և ազգային ինքնությունների նույնականացման: Այդ ժամանակահատվածում կաթոլիկ թագավորների ղեկավարման ներքո տեղի էր ունենում վաղ իսպանական պետության ձևավորումը, ինչպես նաև իսպանական կաթոլիկ եկեղեցու վերափոխումը ռազմականացված եկեղեցական կառույցի: Կրոնական մոբիլիզացիան էական դեր ունեցավ իսպանական պետության կայացման գործում: Եվ, իսկապես, Իսպանիայում 1481թ. ծայր առած ինկվիզիցիական շարժումն ունեցավ պետականաստեղծ գործառույթ և դարձավ ազգային, միասնական ու կենտրոնական առաջին պետական ինստիտուտը: Իսպանիայից հրեաների, մուսուլմանների և մորիսկոների արտաքսումը տեղի ունեցավ հասարակական ճնշման և կրոնական մոբիլիզացիայի հետևանքով¹:

Եվրոպային արագ ինտեգրվելու նպատակով Իսպանիան իր համար երկու անցանկալի կրոններից ձերբազատվեց ճիշտ այն ժամանակ, երբ Եվրոպան բաժանվել էր բողոքական ռեֆորմացիայի և կաթոլիկ հակառեֆորմացիայի միջև: Հակառեֆորմացիայով ավարտվեցին Իսպանիայի վաղ արդիականացման շրջանում սկսված տնտեսական, քաղաքական և մշակութային փորձարկումները: Հաքսբուրգյան միապետությունը, Տիեզերական եկեղեցին և ամերիկյան գաղութային կայսրությունը պետք է զոհաբերեին նորաստեղծ իսպանական ազգային պետությունը «Տիեզերական քրիստոնեական միապետության» իդեալին ու մատերիական շահին, որը պատմական նախատիպն էր եվրոպական պետությունների միջազգային համակարգի²:

Ռազմականացված եկեղեցին շարունակում էր պայքարն իսլամի դեմ Սիջերկրականի ափերին, հեթանոսների դեմ՝ Ամերիկայում և հերետիկոսների դեմ՝ Եվրոպայում: Իսպանիայի իդեալիստական իմպերիա-

¹ Իսպանիայի պատմության վերաբերյալ համառոտ, բայց ամբողջական աշխատություններն են՝ Jaime Vicens Vives, *Approaches to the History of Spain* (Berkeley: University of California Press, 1970; Pierre Vilar, Spain, a Brief History, Oxford: Pergamon Press, 1967 և այլն:

² S. Fernand Braudel, *The Mediterranean and the Mediterranean World in the age of Philip II*, 2 vols., New York: Harper & Row, 1973; Perry Anderson, *Lineages of the Absolutist State*, London: New Left Books, 1974; Immanuel Wallerstein, *The Modern World System*, New Yprk: Academic Press, 1974 և այլն:

լիզմի պարտությունը հանգեցրեց նրա ամբողջական մեկուսացմանը ժամանակակից Եվրոպայից: Պետությունը և եկեղեցին միասնաբար որոշեցին իսպանական պետության տարածքում պահպանել կրոնաքաղաքական միասնության տիեզերական ու կաթոլիկ իդեալը, որի պահպանումը Եվրոպայում ուժի միջոցով ձախողվել էր: Հակառակ եվրոպական այլ ազգերի՝ Իսպանիան չէր վերականգնվելու տասնյոթերորդ դարի ճգնաժամից³:

18-րդ դարում Բուրբոնները դանդաղեցրին դեպի Եվրոպա ուղղված վերակողմնորոշման գործընթացը: Բայց խնդիրն առավել բարդացավ նրանով, որ «լուսավորչական» բարեփոխումներին հակադրվող ուժերը հրաժարվեցին ընդունել այն հանգամանքը, որ Իսպանիայի և Եվրոպայի միջև եղած տարբերությունը այն բազմաթիվ խոչընդոտներից մեկն էր, որը որակական խզում էր առաջացրել երկու իրար բացառող քաղաքակրթությունների միջև: Երբ 18-րդ դարի Իսպանիայում նորից ի հայտ եկավ 16-րդ դարին բնորոշ բախումը «հնադավանների» և «արդիականացման կողմնակիցների» միջև, այն սկսեց նմանվել Արևելյան Եվրոպայի երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, և ոչ արևմտյան քաղաքակրթություններում ընդունվելիք ձևերին, որոնք հակադրվում են արևմտականացմանը⁴:

18-րդ դարի Իսպանիայում բախումն, առաջին հերթին, ի հայտ եկավ եկեղեցու ներսում, մի կողմից՝ օգոստինականների կողմից ղեկավարվող բարենորոգչական թևի ու լուսավորչական գաղափարներով տոգորված հոգևորականների, մյուս կողմից՝ ճիզվիտների ու դոմինիկանների կողմից ղեկավարվող ավանադապաչտ թևի միջև: Ուլտրամոնատանական ճիզվիտներն առավել դիմադարձ էին կանգնում բուրբոնների ռեգալիզմին և բարենորոգիչների պուրիտանական յանսեմիզմին, մինչդեռ սխոլաստ դոմինիկանները համառ դիմադրություն էին ցույց տալիս իսպանական համալսարաններում մոդեռն փիլիսոփայության և մոդեռն գիտության դասավանդմանը: Մադրիդում տեղի ունեցած մի շարք բողոքի ցույցերից հետո 1776թ. իսպանական իշխանությունների տարածքներից ճիզվիտների վտարումը նշանավորեց բարենորոգչական գալլիական կեսարապապության ժամանակավոր հաղթանակը: Բայց ֆրանսիական հեղափոխությունը և իսպանական քաղաքականության մեջ Նապոլեոնի ինտերվենցիան արգելակեցին լուսավորչական էլիտայի կողմից վերևից վերահսկվող բարեփոխումները, վերացրին բացարձակ միապետության «աուրան» և դրա փոխարեն հրապարակ նետեցին քաղաքական բախումների ու կոլեկտիվ գործողությունների մոդեռն ձևերը⁵:

3 St'u R. Boxer, *The Church Militant and Iberian Expansion, 1440-1770*, Baltimore: John Hopkins University Press, 1978; Geoffrey Parker, *The Army of Flanders and the Spanish Road, 1567-1659*, Cambridge: Cambridge University Press, 1972 և այլն:

4 St'u Luis Sanchez Agesta. *Espana al Encuentro de Europa*, Madrid: B.A.C., 1971; Pedro Lain Entralgo, *Espana Como Problema*, Madrid: Aguilar, 1957 և այլն:

5 St'u Richard Herr, *The Eighteenth Century Revolution in Spain*, Princeton: Princeton University Press, 1958; Jose A. Ferrer Benimeli, *Masoneria, Iglesia e Ilustracion*, 4 vols., Madrid: F.U.E., 1957-77; William J. Callahan, *Church, Politics and Society in Spain, 1750-1874*, Cambridge, Mass.: Harvard University Press, 1984.

Եկեղեցին առանցքային դեր խաղաց իսպանական ժողովրդին և պոլիտոնի ներխուժման դեմ համախմբելու ժամանակ: Անկախության պատերազմը, որը տեղերում ղեկավարում էին պարտիզան հոգևորականները, մղվում էր իբրև կրոնական խաչակրաց պատերազմ «Սատանայի սրբապիղծ հյուրերի» դեմ: Դրանից հետո առավել ուժեղացավ կաթոլիկական հավատքի ու իսպանացիների ավանդական իդենտիֆիկացիան: Մինչդեռ, Իսպանիայի մնացյալ մասից անջատված և ինքնակոչ քաղաքական էլիտաները 1812թ. հանդիպեցին Կադիզում և ընդունեցին 1812թ. լիբերալ Սահմանադրությունը՝ ամրագրելով ազգի ինքնիշխանության սկզբունքը: Ֆեոդալական կարգերի և եկեղեցական հողերի բռնագրավումից հետո 1813թ. դադարեցվեց ինկվիզիցիայի գործունեությունը, որը սուր տարածայնությունների տեղիք տվեց ազատականների ու պահպանողականների միջև: Հանրահայտ ազատական հոգևորականները առաջնորդեցին հարձակումը ինկվիզիցիայի Սուրբ գրասենյակի վրա: Իսկապես, իր 97 ներկայացուցիչներով հոգևորականությունը կազմում էր Սահմանադիր ժողովի գրեթե մեկ երրորդը: Բայց բարձրաստիճան եկեղեցականությունը և գյուղական քահանաները հանդես եկան ինկվիզիցիայի լուծարման դեմ և կարողացան բոլոր սլաքները ֆրանսիական ներխուժողներից շեղել դեպի ներքին հերետիկոսները՝ լիբերալ ֆրանսամետները: Կաթոլիկական Իսպանիան այժմ կրոնական խաչակրաց արշավանք սկսեց լիբերալ Իսպանիայի դեմ: Այսպիսով, սկիզբ դրվեց «Երկու Իսպանիաների» ֆենոմենին, երբ կաթոլիկական Իսպանիան դեմ կանգնեց ազատական եվրոպականացված Իսպանիային⁶:

1814թ. Մադրիդի բնակչությունը ոգևորված ողջունեց հետ վերադարձած թագավորին՝ բացականչելով «կեցցեն կապանքները»՝ դրանով ծաղրելով ազատական լուսավորիչների կարգախոսը՝ «Եկեք կոտրենք կապանքները»: 19-րդ դարի սկզբին եկեղեցական բարձրաստիճան հոգևորականները և քահանաների մեծ մասը սատար կանգնեցին թագավորին և հասարակ մարդկանց՝ ընդդեմ բարեփոխիչ ազատական էլիտայի ներկայացուցիչների: Բացարձակ միապետության վերականգնումը հանգեցրեց նրան, որ իսպանացի ազատականներն աքսորվեցին կամ ընդհատակ անցան ու վերածվեցին մասոնական օթյակների և գաղտնի խմբերի: Այնուհետև տեղի ունեցավ ազատականների և հակակղերականների միաձուլում լատինական եղանակով, ինչպես նաև ազատականների և պրետորիանական քաղաքական գործիչների միաձուլում տիպիկ իբերական եղանակով⁷:

Կրոնական հավատքի և ազգի նույնականացումը, որն ընկած էր վաղ մոդեռն պետության կազմավորման հիմքում և զերծ էր պահել Իսպանիան այդ ժամանակաշրջանի եվրոպային բնորոշ կրոնաքաղաքա-

6 St u Miguel Artola, Antigu Regimen y Revolucion Liberal, Barcelona: Ariel, 1978; Jose Fontana Lazaro, La Quiebra de la Monarquia Absoluta, Barcelona: Ariel, 1971; Richard Herr, An Historical Essay on modern Spain, 1808-1939, Oxford: Oxford University press, 1970 և այլն:

7 St u Stanley Payne, politics and the Military in Modern Spain, Stanford: Stanford University Press, 1967; Antoni Jutglar, Ideologias y Clases en la Espana Contemporanea, Madrid: Edicusa, 1968:

ցիական պատերազմներից, այժմ դարձավ ժամանակակից պետության կազմավորման ճանապարհին ընկած մի լուրջ խոչընդոտ և քաղաքական բախումները վերափոխեց կրոնական պատերազմների: Ժամանակակից Իսպանիայի երեք քաղաքացիական պատերազմները՝ առաջին կառլիստական պատերազմը (1833-40թթ.), երկրորդ կառլիստական պատերազմը (1870-76թթ.) և իսպանական քաղաքացիական պատերազմը (1936-39թթ.) սկսվել են իբրև արդիականացման դեմ ուղղված հակահեղափոխություններ և կաթոլիկ եկեղեցու կողմից սրբացվել են որպես կրոնական պատերազմներ ընդդեմ անաստված ազատականության կամ աթեիստական կոմունիզմի: Հակառակ այս միտումի, 1830-ական թթ. սկսված՝ եկեղեցիների և կոնվենտների այրումը, հոգևորականների ու մենուհիների սպանությունները դարձան Իսպանիայի մոդեռն քաղաքական անկարգությունների պարբերաբար կրկնվող բնորոշիչը, երբ հակակղերական առաջին հասարակական պայթյունը տեղի ունեցավ Մադրիդում և այլ մեծ քաղաքներում, ու այդ գործընթացը շարունակվեց մինչև 1930-ական թթ.⁸:

Իսպանիայում տեղի ունեցած զարգացումները եզակի չէին իրենց բնույթով: Նրանք ներկայացնում էին Դավիդ Մարտինի կողմից «ֆրանսիական (լատինական) ձևի» սեկուլարիզացիա բնորոշված երևույթի ծայրահեղական տարբերակը: Ըստ Մարտինի՝ այս ձևում «նման հեղափոխական պայթյունները դառնում են ներհատուկ, և կրոնը հաճախակի հանդես է գալիս իբրև կրոնական խնդիր: Մի էթնոսը հակադրվում է այլընտրանքային էթնոսի, մասնավորապես այնտեղ, որտեղ աշխարհիկ լուսավորչականության էլիտար մշակույթը ձեռք է բերում մասսայական բաղադրիչ և պատմականացված գաղափարախոսություն, ինչպիսին, օրինակ, մարքսիզմն է»⁹:

Իսպանիայում տեղի ունեցած զարգացումների յուրահատկությունն առաջին հերթին Իսպանիայի քաղաքացիական պատերազմում կաթոլիկական հոսանքի հաղթանակն էր մոդեռն աշխարհիկության ջատագովների նկատմամբ, և, երկրորդ, «հնադավանների» ու «մոդեռնիստների» միջև երկարաձգված կրոնաքաղաքական պայքարը Իսպանիայում ստացել էր կաթոլիկական Իսպանիայի և ազատական եվրոպականացված Իսպանիայի միջև քաղաքակրթական բախման տեսք:

1830-ական թթ. Հյուսիսային Իսպանիայում գյուղացիությանը հանելով նոր սահմանադրական միապետության դեմ՝ եկեղեցուն հաջողվեց երկրում օտարել հիմնական սոցիալական շերտերին և ուժերին: Դրան ի պատասխան՝ պետությունը եկեղեցական հողերը զրկեց ժառանգականության իրավունքից, վերացրեց տասանորդը և ցրեց վանական օրդենները: Աճուրդում եկեղեցական հողերի արագ վաճառքը պետական զանձարանին ապահովեց բոլոր անհրաժեշտ միջոցներով կառլիստական ապստամբությունը ճնշելու համար, սակայն մինևույն

8 Stú Gerald Brenan, *The Spanish Labyrinth*, Cambridge: Cambridge University Press, 1943; Martin Blinkhorn, *Carlism and the Crisis in Spain, 1931-1939*, Cambridge: Cambridge University Press, 1975 և այլն:

9 David Martin, *A General Theory of Secularization*, New York: Harper & Row, 1978, p.6.

ժամանակ տապալեց ազատական ռեժիմին լոյալ և հողի սեփականություն ունեցող գյուղացիության ձևավորմանն ուղղված հին ազատականների ծրագիրը: Հողը և ունեցվածքը հայտնվեցին պահպանողականների ձեռքում, որոնք հիմնականում հետապնդում էին իրենց նյութական շահերը: Այսպիսով, «դավաճանված» ազատական հեղափոխությունը միավորեց Կենտրոնական և Հարավային Իսպանիայի մեծ հողատերերին, մինչդեռ եկեղեցին կորցրեց իր գյուղացիական տնտեսությունները և գյուղացիական պրոլետարիատի հետ ունեցած կապերը: Քանի որ կառլիստական խնդիրը զուգորդվեց բասկերի ու կատալոնացիների ազգայնական հարցերին, եկեղեցին կարողացավ ուժեղացնել իր ներկայությունը այդ ծայրագավառներում ևս¹⁰:

Արդեն դարակեսին իսպանական եկեղեցին գույքի բռնագրավման հետևանքով բավական աղքատ հաստատություն էր: Մենաստանների փակումը և վանական օրդենների լուծարումը զրոյացրին եկեղեցու ազդեցությունը, որը ձևավորվում էր կրթության ու բարեգործությունների միջոցով: Բացառությամբ հյուսիսի, եկեղեցին դարձավ լքված հաստատություն, որ բաժանված էր պետությունից և իշխող դասակարգից: Հոգևորականության թվի կտրուկ նվազումը (1808թ. մոտավորապես երկու հարյուր հազար հոգևորականությունից 1860թ. մնացել էր 60 հազար), չնայած Իսպանիայի բնակչության կտրուկ աճին, բավականին խոսում ցուցիչ էր իսպանական հասարակության ներսում տեղի ունեցած սեկյուլարիզացիայի վերաբերյալ¹¹:

Այնուամենայնիվ, եկեղեցին շուտով ազատական օլիգարխիկ պետության հետ նորացված համագործակցության շնորհիվ վերսկսեց իսպանական հասարակության վերանվաճումը: 1851թ. Կոնկորդատը թուլացրեց եկեղեցու և պետության միջև առկա լարվածությունը: Վատիկանը ճանաչեց իսպանական ազատական ռեժիմը՝ դրա փոխարեն ստանալով կաթոլիկության աստիճանական և մասնակի վերահաստատման հնարավորություն: 1868թ. «փառավոր հեղափոխությունը» հանգեցրեց երկրորդ, ավելի կարճատև եկեղեցական ազդեցության թուլացման: Սակայն 1874թ. «ռեստավրացիայով» վերահաստատվեց եկեղեցու և պետության միջև գոյություն ունեցող համագործակցությունը¹²: Բարեհաջող ավարտելով իրենց հեղափոխությունը՝ բուրժուազիան ու հողատերերը որոշեցին վերականգնել իրենց հարաբերությունները ֆինանսական դժվարություններ ունեցող եկեղեցու հետ: Նոր կառավարող դասակարգը կարողացավ հարգանքի ու եկեղեցու հետ կարևոր համագործակցության շնորհիվ արգելակել արմատական ժողովրդավարների քաղաքական և ցածր դասակարգերի տնտեսական

¹⁰ Sté Edward Malefakis, *Agrarian Reform and Peasant revolution in Spain*, New Haven: Yale University Press, 1970; Pascual Carrion, *Los Latifundios en Espana*, Madrid: Graficas Reunidas, 1932 և այլն:

¹¹ Sté Antonio Ramos Oliveira, *Politics, Economics and Men of Modern Spain*, London: Victor Gollancz, 1946, p. 426; Jaime Vicens-Vives, *Historia de Espana y America*, vol. 5, Barcelona: Editorial Vicens Vives, 1961, pp. 140-141:

¹² Չնայած այլ կրոնների նկատմամբ հանդուրժողական լինելու դրույթին, 1876թ. Սահմանադրության 11-րդ հոդվածը հռչակում է, որ «Հռոմեական կաթոլիկությունը պետության կրոնն է» և որ «Ազգը պարտավորություն ունի պահպանելու (կաթոլիկ) պաշտամունքը և նրա հոգևորականներին»:

պահանջները: Բուրժուազիան աջակցեց եկեղեցական կառույցին, սակայն դա կատարեց մշակութային կաթոլիկության արտաքին դրսևորման միջոցով: Հիմնականում հիմնվելով հյուսիսի հողատեր գյուղացիության աջակցության վրա՝ իսպանական կաթոլիկությունը դարձավ քաղաքային ու «բուրժուազիական» հաստատություն: Միևնույն ժամանակ, աճող քաղաքային ու գյուղական պրոլետարիատն արագորեն «ապաքրիստոնեականացվում էր»: Ցանկանալով եկեղեցի վերադարձնել կաթոլիկ հավատացյալներից շատերին՝ եկեղեցին իրենից օտարեց առավել մեծ խմբերի: 20-րդ դարասկզբին աշխատավորների և օլիգարխիկ իշխանությունների միջև տեղի ունեցած մշտական բախումների ժամանակ իսպանական եկեղեցին որոշ բացառություններով կանգնում էր իշխանական վերնախավի կողքին¹³:

Բայց ազատական իսպանական պետությունը ևս ստիպված էր մեծ ուշադրություն դարձնել կաթոլիկ եկեղեցու օրինականացման խնդրին: Դրանից հետո պետությունը պետք է տնտեսապես օգներ հոգևորականներին, որով բավարարվում էին պետության ու պետական կառավարման մաս կազմող եկեղեցու դեմ առաջացող դժգոհությունները: Բայց ամենակարևորն այն է, որ պետությունը եկեղեցու վերահսկողությանը հանձնեց հանրային ու մասնավոր կրթության կազմակերպումը՝ դրանով եկեղեցուն տալով մոդեռն ազգ ձևավորելու և քաղաքացիների գաղափարական հիմքերը կառուցելու կարևորագույն գործիքը: Ուղղակիորեն և անուղղակի տրվող կղերական կրթությունն ուժգնացրեց և առավել կարևորեց կրոնական, դասակարգային և էթնիկ-ազգային ինքնությունները, քան իսպանական ազգային ինքնությունը: Ավելին, կոնֆեսիոնալ պետության վերահաստատումն, իր հերթին, ուժգնացրեց «պաշտոնական» իսպանական ազգային պետության և կաթոլիկական հավատքի նույնականացումը այն ժամանակ, երբ ժողովրդական լայն զանգվածները լքում էին եկեղեցին ու ընդունում մարտնչող աթեիզմի դրույթները: Եվ զարմանալի չէ, որ հակակղերական և հակապետական գաղափարախոսություններն ի հայտ էին գալիս միաժամանակ¹⁴:

Կաթոլիկ եկեղեցու և իսպանական պետության դաշինքն ավարտվեց Իսպանիայի երկրորդ Յանրապետության (1930-36թթ.) տարիներին: Պետության հիմնադրումով եկեղեցին անջատվեց պետությունից, եկեղեցուց վերցվեց հանրային կրթության կազմակերպման նրա գործառույթը, ինչպես նաև նոր թափ ստացավ իսպանական հասարակության աշխարհականացման գործընթացը: Երբ Յանրապետության ղեկավար Մանուել Ազանան հայտարարեց, որ Իսպանիան դադարում է կաթոլիկ լինելուց, նա դրանով հայտարարում էր նոր սահմանադրական իրողության մասին: Բայց Յանրապետությունում աճող հակակղերականության և աշխարհականացման համատեքստում կաթոլիկ եկե-

13 St u Frances Lannon, Privilege, Persecution, and Prophecy: The Catholic Church in Spain, 1875-1975, Oxford: Clarendon Press, 1987; Payne, Spanish Catholicism: Manuel Tunon de Lara, La Espana del Siglo XIX, 2 vols., Barcelona: Laia, 1980 և այլն:

14 St u Yvonne Turin, L'education et l'ecole ed Espagne de 1874 a 1902, Paris: P.U.F., 1959; J.B. Tremd, The Origins of Modern Spain, New York: Russel & Russel, 1965 և այլն:

ղեցին այս հայտարարությունը ընկալեց իբրև նոր մարտահրավեր: Եկեղեցին հրապարակայնորեն ընդդիմացավ նոր հանրապետական կարգերին, քանի որ պարզ դարձավ, որ Իսպանիայի կաթոլիկ եկեղեցին դեմ է եկեղեցին պետությունից անջատելու ազատական սկզբունքին, պետության կողմից կրթության կազմակերպմանը, խղճի ազատությանը, կրոնական ազատությանը և կաթոլիկության մասնավորեցմանը: Չցանկանալով ընդունել իրենց արտոնյալ վիճակի փոփոխության հանգամանքը, վախենալով պետության սանձազերծած հակակղերական հարձակումներից և անխուսափելի սոցիալիստական հեղափոխության կողմից եկող առավել լուրջ սպառնալիքներից՝ կաթոլիկ եկեղեցին միացավ ռազմական խռովությանը՝ սրբացնելով արյունալի քաղաքացիական պատերազմն իբրև ազատության համար մղվող խաչակրաց արշավանք: Հանրապետության տարբեր մասերում սանձազերծված բռնի և անսահմանափակ կրոնական հետապնդումները հաստատեցին եկեղեցու վատթարագույն կանխատեսումները իսպանացի ձախակողմյանների ռազմական աթեիզմի նկատմամբ: Այնուամենայնիվ, եկեղեցին ազգայնականների շրջանում ստիպված էր համակերպվել առավել բռնի ու անխտրական պետական հալածանքներին¹⁵:

Քաղաքացիական պատերազմում տարած հաղթանակն ապահովեց կաթոլիկ Իսպանիայի բացարձակ հաղթանակն «այլ Իսպանիայի» նկատմամբ: Կաթոլիկությունը մեկ անգամ ևս դարձավ պետական կրոն: Եկեղեցին հետ վերադարձրեց իր բոլոր ինստիտուցիոնալ առավելությունները և ժամանակակից վարչական միջոցների գործածությամբ վերահաստատեց կրոնական միահեծան դիրքը ու պարտադրեց ազգի ու հավատքի միություն: Պետական ուժի կիրառման միջոցով իսպանական հասարակությունը նորից կաթոլիկ դարձավ: Չնայած իր նվաստացուցիչ բովանդակությանը՝ «ազգային կաթոլիկությունը» դարձավ այն ամենատարածված եզրը, որով բնորոշվում էր ֆրանկոյական ռեժիմը: Չնայած ֆրանկոյական ռեժիմն իր գաղափարախոսության մեջ ներառեց ֆաշիզմի բազմաթիվ արտաքին դրսևորումները, դրա կազմակերպչական և գաղափարախոսական դրույթներն ու սիմվոլիկ ատրիբուտները, այնուամենայնիվ, չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ կաթոլիկ եկեղեցին էր այդ ռեժիմի հիմնական ինստիտուցիոնալ ու գաղափարական հիմնասյունը¹⁶:

Եկեղեցին ռեժիմին տվեց քաղաքացիական պատերազմի գաղափարական օրինականացման բոլոր հիմնավորումները և դարձավ զանգվածների մոբիլիզացման գլխավոր աղբյուրը: Պատերազմից հետո կաթոլիկության կորպորատիվիզմը դարձավ ռեժիմի միակ գաղափարա-

15 Sté u E. Allison Peers, Spain, the Church and the Orders, London: Eyre & Spottiswoode, 1939; Gabriel Jackson, The Spanish Republic and the Civil Blough, "Religious Conflict and Consensus in Spain: A Tale of Two Constitutions", World Affairs 143, Spring 1981; Herbert R. Southworth, El Mito de la Cruzada de Franco, Paris: Ruedo Iberico, 1963 և այլն:

16 Sté u Guy Hermet, Les Catholiques dans l'Espagne franquiste, 2 vols., Paris: Presses de la Fondation nationale de sciences politiques, 1980; Rafael Abella, Por el Imperio Hacia Dios, Barcelona: Planeta, 1978; J.M. Laboa, El integrista, Madrid: Narcea, 1985; William Ebenstein, Church and State in Franco Spain, Princeton: Center for International Studies, 1960 և այլն:

կան ու կազմակերպչական սկզբունքը: Կաթոլիկական աշխարհիկ կազմակերպությունները՝ էլիտար բնույթ ունեցող Պրոպագանդիստների կաթոլիկ ազգային ասոցիացիան (Asociacion Catolica Nacional de Propaganidistas - ACNdP), ինչպես նաև հետագայում ի հայտ եկած ու առավել էլիտար բնույթ ունեցող Օպիուս Դեյը ֆրանկոյական պետությանն ապահովեցին բոլոր անհրաժեշտ վարչական կադրերով: Երբ միջազգային հանրությունն սկսեց բոյկոտել ու խուսափել ֆրանկոյական ռեժիմի հետ շփումներից, կաթոլիկ եկեղեցին Վատիկանի և այլ կաթոլիկ եկեղեցիների հետ ունեցած իր կապերի միջոցով ապահովեց ռեժիմի միջազգային օրինականացման առաջին հիմքերը¹⁷:

Պաշտոնական հռետորաբանության մեջ ֆրանկոյական ռեժիմը ներկայացվում էր իբրև եկեղեցի-պետություն հարաբերությունների իդեալական կաթոլիկական մոդել և իբրև կաթոլիկական «երրորդ ուղու» փայլուն օրինակ լիբերալ-դեմոկրատական կապիտալիզմի և տոտալիտար սոցիալիզմի միջև: Ինքը՝ Ֆրանկոն, իր հրապարակային ելույթներում ու գրագրություններում օգտագործում էր տիպիկ կաթոլիկական հակամոդեռն պատմության փիլիսոփայությունը՝ հայտարարելով, որ քաղաքացիական պատերազմը խաչակրաց արշավանք էր մասոնականության, ֆրանսիական էնցիկլոպեդիստների և բոլոր արդի գաղափարախոսական հոսանքների՝ լիբերալիզմի, կապիտալիզմի ու սոցիալիզմի դեմ: 18-րդ դարի Լուսավորականության շրջանից մինչև Երկրորդ իսպանական հանրապետությունը արդի ազատական Իսպանիան ճնշվելու էր և մոռացվելու: «Նոր Իսպանիան» մերժել ու հրաժարվել էր հնացած մոդեռն աշխարհի հետ ունեցած իր բոլոր տեսակի կապերից: Կաթոլիկ թագավորների իմպերիալիստական ժամանակաշրջանից և հակառեֆորմացիայից հետո ընկած շրջանում պետք է ամփոփել Իսպանիայի պատմությունը, քանի որ հետագայում դրսից ներթափանցած հերետիկոսություններն արագացրին նրա անկումը¹⁸:

Զնայած եկեղեցու և պետության, կաթոլիկության և ռեժիմի միաձուլմանը, 1960-ական թթ. սկսված դանդաղ, բայց կայուն տարանջատումը եկեղեցու և պետության միջև և 1970-ական թթ. սկսված բախումն ու վերջնական խզումը կարևոր էին ռեժիմի ճգնաժամի և վերջնական անկման համար¹⁹: Եկեղեցում տեղի ունեցած այս փոփոխությունների բացատրությունն, իբրև ինստիտուցիոնալ հարմարման գիտակցված ռազմավարություն, բավարար չէ խնդիրն ամբողջականորեն նկարագրելու համար: Եթե նույնիսկ այս բացատրությունը բավարար համարվի, ապա անհրաժեշտություն կառաջանա բացատրելու, թե ինչպես իսպա-

17 St'u Juan J. Linz, "An Authoritarian Regime: the Case of Spain" in E. Allardt and Yrjo Littunen, eds. *Cleavages, Ideologies and Party Systems*, Helsinki: Academic Bookstore, 1964; Hermet, *les Catholiques*, vol. 1, *Les acteurs du jeu politique*; Rafael Gomez perez, *Politica y Religion el el Regimen de Franco*, Barcelona: Dopesa, 1976 և այլն:

18 St'u Francisco Franco Bahamonde, *Palabras del Caudillo, 1937-1943*, Madrid: Editora Nacional, 1943; *Discurson y Mensajes del Jefe del Estado, 1955-1959*, Madrid: Editora Nacional, 1960; *Pensamiento Político de Franco*, Madrid: Ed. Del Movimiento, 1975 և այլն:

19 Jose Casanova, "Modernization and Democratization: Reflections on Spain's Transition to Democracy", *Social research* 50, no. 4, Winter 1983; Francisco Gil Delgado, *Conflicto Iglesia-Estado (1808-1975)*, Madrid: Sedmay, 1975.

նական եկեղեցին կարողացավ հետ կանգնել ավանդական ռեակցիոն քաղաքականությունից և առաջին անգամ իր արդի պատմության մեջ ընդունել փոփոխված հանգամանքերին հարմարվելու ռացիոնալ և ապագային ուղղված ռազմավարություն²⁰: Երեք իրար փոխկապակցված գործընթացների միասնական դիտարկման պարագայում կարելի է մասնակիորեն բացատրել իսպանական կաթոլիկ եկեղեցու ռազմավարության փոփոխությունը պետականակենտրոնից դեպի հասարակակենտրոն:

Իսպանական կաթոլիկության ներքին փոխակերպությունը

Մեծ իմաստով, քաղաքացիական պատերազմից հետո իսպանական հասարակության մեծամասշտաբ կաթոլիկացումը բավական մակերեսային էր, քանի որ այն հիմնականում տեղի էր ունեցել վարչական ուժի գործադրման և հասարակական ճնշման միջոցով: Վարչական հարկադրանքի և հասարակական ճնշման նվազմանը զուգընթաց՝ սկսեց դանդաղել նաև կաթոլիկության վերակենդանացման գործընթացը: Բայց այդ գործընթացի որոշ ասպեկտներ ռեալ էին ու խոր ազդեցություն էին ունենալու իսպանական կաթոլիկության փոխակերպության և եկեղեցի, պետություն ու հասարակություն հարաբերությունների վրա²¹: Իսպանական կաթոլիկության ներքին փոփոխությունների մասին վկայող՝ կաթոլիկության վերակենդանացման արտաքին դրսևորումներն էին՝

- Առաջին անգամ Իսպանիայի պատմության մեջ ի հայտ եկած աշխարհիկ կաթոլիկ ինտելեկտուալների ինքնուրույն խմբերը, որոնք պետք է էական դեր խաղային ֆրանկոյական Իսպանիայի օրոք բավականին թուլացած ինտելեկտուալ դիսկուրսի վերականգնման գործում և պետք է միջնորդ դառնային «երկու Իսպանիաների» միջև առաջացած անջրպետը լցնելու համար: Արանգուրենի, Լահին Էնտրալգոյի ու Տովարի նման կերպարները դարձան այս շարժման առաջամարտիկները: Առաջին անգամ էր նաև, որ աշխարհիկ կաթոլիկ մտավորականներն ազդեցություն էին ունենում իսպանական կաթոլիկության աստվածաբանական քննարկումների վրա²²:

- Կաթոլիկ եկեղեցու ներսում ի հայտ եկած երկու արդի կրոնական շարժումները, որոնք կոչված էին կարևոր դեր խաղալու ֆրանկոյական Իսպանիայում, և որոնք տարածվելու էին Իսպանիայի սահմաններից այն կողմ՝ դառնալով իսպանական կաթոլիկության առաջին մոդեռն ներդրումը Տիեզերական եկեղեցու մեջ: Կուրսիլոս դե Կրիստիանդադն առաջին անգամ իսպանական կաթոլիկ եկեղեցու ներսում առաջացած կաթոլիկական տիպի ավետարանական ուղղությունն էր: Նմանապես, Օպիուս Դեյը իսպանական կաթոլիկության ներսում բողոքական էթի-

20 Stü u David Martin, A General Theory of Secularization, New York: Harper & Row, 1978, pp. 244-78:

21 Aurelio Orensanz, Religiosidad Popular Espanola (1940-1965), Madrid: Editora Nacional, 1974.

22 Stü u Jose I. I. Aranguren, Catolicismo y Protestantismo Como Formas de Existencia, Madrid: Revista de Occidente, 1952; Catolicismo Dia Tras Dia, Barcelona: Noguera, 1955 և այլն:

կայի ռազմական տիպի առաջին ուղղությունն էր: Մասնավորապես, աշխարհիկ կաթոլիկական շարժման գաղտնի կազմակերպություն համարվող Օպիուս Դեյը քաղաքացիական պատերազմից հետո ցույց տվեց իր արդյունավետությունը երիտասարդ էլիտայի ներկայացուցիչներին համախմբելու առումով, որը հաջողվեց իրականացնել մասնագիտական աշխատանքի սրբացմանն ու մասնագիտական կոչումին ուղղված նվիրվածության նոր ուղերձով²³:

● Իսպանիայի պատմության մեջ առաջին անգամ ի հայտ եկած «Կաթոլիկ գործողությունից» անջատված իրական սոցիալական կաթոլիկությունը: Կաթոլիկ աշխատավորների շարժման ներսում առաջացած խմբերը՝ Hermandades Obreras de Accion Catolica (HOAC) և Juventudes Obreras Catolicas (JOC), 1950-ական թթ. արմատական դարձան և սկսեցին պայքար մղել կաթոլիկական նվիրապետության ու ֆրանկոյական ռեժիմի դեմ²⁴:

Ռեժիմի կառուցվածքային փոխակերպումները

1956թ. Մադրիդի համալսարանում տեղի ունեցան մի շարք կատաղի բախումներ կաթոլիկ և ազգայնական (Falange) ուսանողների միջև, որոնք պայքար էին մղում ուսանողական շարժումը ղեկավարելու համար: Ուսանողական բախումները զուգորդվեցին պետական կառավարչական մարմիններում կաթոլիկ և ազգայնական առաջնորդների միջև տեղի ունեցած բախումներով: Երկու ուժերն էլ փորձում էին մշակել նոր տնտեսական քաղաքականության ուղենիշները՝ ռեժիմի կողմից երկիրը տնտեսական փակուղուց հանելու համար: Անսպասելիորեն Ֆրանկոն ազատ արձակեց երկու հակամարտող կողմերին ու կառավարություն հրավիրեց Օպիուս Դեյի անդամներին: Օպիուս Դեյի «տեխնոկրատները» արմատական փոփոխություններ կատարեցին ռեժիմի տնտեսական քաղաքականության մեջ՝ խթանելով արտահանմանն ուղղված ակտիվ տնտեսական քաղաքականությունը, պետական կառավարչական մարմինների ռացիոնալացումը և Իսպանիայի ինտեգրումը համաաշխարհային կապիտալիստական համակարգին²⁵:

Ռեժիմի սկզբնավորման օրվանից սկսած՝ նրան ծառայող կաթոլիկ եկեղեցու նվիրապետությանը մոտ կանգնած «Կաթոլիկ գործողության» էլիտար խմբերի փոփոխությունն Օպիուս Դեյի ներկայացուցիչներով կասկածների տեղիք տվեց ոչ միայն եկեղեցու, այլև տնտեսական, քաղաքական և մշակութային շրջանակներում, որոնց նպատակը եկեղեցուն և այլ հաստատված էլիտար խմբերին աստիճանաբար հե-

23 P. Llabres i martorell, 'Curssets de Cristiandat: un moviment apostolic mallorqui pels quatre vents del mon', Questions de Vida Cristiana 75-76, 1975; Jose casanova, 'the First Secular Institute: The Opus Dei as a Religious Movement-organization', Annual Review of the Social Sciences of Religion 6, 1982; and The Opus Dei Ethic and the Modernization of Spain.

24 St'u Jose Castano Colomer, la JOC en Espana (1946-1970), Salamanca: Sigueme, 1978; and Hermet, Les Catholiques:

25 St'u Jose Casanova, 'The Opus Dei Ethic, the Technocrats and the Modernization of Spaint', Social Science Information 22, no. 1, 1983:

ռացնելն էր գործող ռեժիմից: Իշխանական համակարգից դուրս գալով՝ իշխանական նախկին էլիտայի ներկայացուցիչները ձևավորեցին կիսահրավական, կիսաժողովրդավարական ընդդիմություն և դարձան միջնորդ օղակ առավել արմատական ժողովրդավարական ընդդիմության ու իշխանության միջև: Ավելին, տեխնոկրատիան, զարգացման և «գաղափարախոսության ավարտը» հայտարարող գաղափարախոսությունները եկան փոխարինելու կաթոլիկությանը՝ իբրև ռեժիմի նոր գաղափարախոսական հիմքի: Կաթոլիկ էլիտայի որոշ ներկայացուցիչներ ընդունեցին նաև քրիստոնյա-դեմոկրատիայի դրույթները՝ դրանով կապեր ստեղծելով եվրոպական քրիստոնյա-դեմոկրատիայի հետ²⁶:

Տեխնոկրատների կողմից նոր քաղաքական ուղեգծի շնորհիվ ի հայտ եկած սոցիալական փոփոխությունները հանգեցրին նրան, որ հարավի որոշ կաթոլիկ եպիսկոպոսներ սկզբնապես անհատական եղանակով, ապա միասնաբար իրենց հովվական նամակներում սկսեցին բացահայտորեն քննադատել կառավարության վարած սոցիալական քաղաքականությունը: Այս իմաստով, չնայած Իսպանիայի պարագայում արմատականացման միտումներն առավել թույլ էին արտահայտված, սակայն հարավի եպիսկոպոսները խաղացին այն նույն դերը, ինչ Բրազիլական եկեղեցու արմատականացման պարագայում խաղացին այդ երկրի հյուսիս-արևելքի եպիսկոպոսները: Իսպանական եկեղեցու պայքարը առաջնորդեց եպիսկոպոս Անովերոսը, իսկ Բրազիլական եկեղեցու պայքարը՝ Դոմ Զելդեր Կամարա եպիսկոպոսը: Նույն ձևով, չնայած Իսպանիայի պարագայում այն առավել թույլ էր արտահայտված, իշխանությունների դեմ պայքարող կաթոլիկ քահանաների ու աշխարհականների դեմ իրականացվող բռնաճնշումները հանգեցրին նրան, որ եկեղեցական առավել լայն շերտերն սկսեցին բացահայտորեն պայքարել ռեժիմի դեմ՝ միևնույն ժամանակ աջակցելով քաղաքացիական հասարակության շրջանակներից դուրս եկող նոր ընդդիմադիր շարժումներին²⁷:

Իսպանական հասարակության կտրուկ աշխարհականացումը, որն ուղեկցվում էր ինդուստրիալիզացման և ուրբանիզացիայի արագ գործընթացներով, առաջին հերթին տազնապալի էր եկեղեցական նվիրապետների համար: Այնուամենայնիվ, իսպանական կաթոլիկության ամենագիտակից հատվածները դանդաղ եղանակով սկսեցին Իսպանիայի մասին խոսել ոչ որպես կաթոլիկ ժողովրդի, որը պետք է նորից վերանվաճվի որպես առաքելության երկիր (pais de mision): Կաթոլիկական հավատքը չէր կարող այլևս պարտադրվել վերևից, այլ այն պետք է ազատ կամքով ընդունվեր անհատական մակարդակում: Վատիկանի նոր քաղաքականության պաշտոնական ընդունումով Իսպանիայի կա-

26 St'ú Xavier Tusell, la Oposicion Democratica al Franquismo, barcelona: Planeta, 1977; Gonzalo Fernandez de la Mora, El Crepusculo de las Ideologias, Buenos Aires: Ed. Andina, 1970; Laureano Lopez Rodo, politica y Desarrollo, Madrid: Aguilar, 1970; ,Prologot, to W.W.Rostow, Politica y Etapas de Crecimiento, Barcelona: Dopesa, 1972:

27 St'ú Javier Angulo Uribarrí, Documentos socio-políticos de obispos espanoles (1968-1972), Madrid: Propaganda Popular Catolica, 1972:

թուլիկ եկեղեցին առաջին անգամ դադարեց դիմագրավել աշխարհականացման արդի գործընթացներին: Կամաց-կամաց եկեղեցին սկսեց հարմարվել աշխարհականացման աճող միտումներին և նույնիսկ այն դիտարկել որպես «ժամանակների նշան»²⁸:

Կաթոլիկության արտաքին փոխակերպումները

Վատիկանի երկրորդ ժողովում իսպանացի եպիսկոպոսները համդես էին գալիս որպես կաթոլիկ նվիրապետության ամենապահպանողական խմբերից մեկը: Ժողովից առաջ իսպանական հոգևորականության և աշխարհիկ շրջանակների որոշակի հատվածներ սկսեցին արդիականացման (*aggiornamento*) իրենց յուրահատուկ գործընթացը: Սակայն նրանց նախաձեռնությունները լուրջ արձագանք չգտան հոգևորականության շրջանում: Դրանից հետո Յոհնի պաշտոնական քաղաքականությունը Իսպանիայի կաթոլիկ եկեղեցու մոդերն հատվածներին օժտեց բոլոր այն միջոցներով, որոնք անհրաժեշտ էին նվիրապետական կարգը ճնշելու և ռեժիմին հակադրվելու համար²⁹:

Pacem in Terris էնցիկլիկայի հրատարակությունը (1963թ.) նոր դարաշրջանի սկիզբն ազդարարեց: Կրթության նախկին նախարար Ռուիզ Գիմենեզի և նրա ազդեցիկ ամսագրի (*Cuadernos para el Dialogo*) շուրջ համախմբված քրիստոնյա դեմոկրատական հատվածը դարձավ առաջամարտիկ՝ պահանջելով օրենքի գերիշխանության հաստատում, ռեժիմի տրանսֆորմացիա (*Rechtsstaat*), իսպանացի ժողովրդի, մարդու, քաղաքացու և քաղաքական իրավունքների պաշտպանություն: Յետաքրքրական է, որ միևնույն կաթոլիկ խմբերն ու անհատները, որոնք 1950-ական թթ. ռեժիմի ներկայացուցիչներն էին իրենց տեղական վայրերում և արտասահմանում, այժմ դարձան ռեժիմի օրինականությունը հարցականի տակ դնող գլխավոր ուժերից մեկը: Ավելին, պատերազմից հետո տպագրված կաթոլիկական նյութերը, որոնք չէին ենթարկվել պետական գրաքննության, այժմ կարող էին օգտագործվել ռեժիմին քննադատելու և արտահայտման ազատության ու մամուլի ազատության ընդհանուր սկզբունքները պաշտպանելու համար³⁰:

Իսպանական կաթոլիկության փոխակերպումը և՛ հանկարծակի էր, և՛ բավական ուժգին: Լեզվի փոփոխությունը լատիներենից տեղական լեզվին ուղեկցվում էր կարևոր փոփոխություններով: Նույնիսկ 1950-ական թթ. հրատարակությունների մակերեսային համեմատությունը 1960-ական թթ. հրատարակությունների հետ ցույց է տալիս այդ տարբերությունը³¹: Ճեմարաններում հոգևորականների ուսուցումը արմա-

28 St'u Alfonso C. Comin, *Espana, Pais de Mision?* Barcelona: Salvaterra, 1966; Rogelio Duocastella et al., *Analisis Sociologico del Catolicismo Espanol*, Barcelona: Nova Terra, 1967; Fundacion Foessa, *Informe Sociologico Sobre la Situacion Social de Espana*, Madrid: Euramerica, 1971:

29 St'u Pierre Jobit, *L'eglise d'Espagne a l'heure du Concile*, Paris: Spes, 1965:

30 St'u Javier Tusell, *Historia de la Democracia Cristiana en Espana*, 2 vols., Madrid: Edicusa, 1974; Manuel Fernandez Areal, *La Politica Catolica en Espana*, Barcelona: Dopesa, 1970 and *La Libertad de Prensa en Espana, 1938-1971*, Madrid: Edicusa, 1971, Rafael Gomez Perez, *Conciencia Cristina y Conflictos Politicos*, Barcelona: Dopesa, 1972:

31 St'u , օրինակ, *Ecclesia, Vida Nueva, Razon y Fe*:

տական բարելավման էր ենթարկվել: Սխալաստիկական մտածողությունը փոխարինվեց ժամանակակից փիլիսոփայություններով ու աստվածաբանություններով: Քահանաների նոր սերունդը հետագա գործունեության նոր ուղի ընտրեց՝ դրանով իսկ հակադրվելով իրենց ավագ կոլեգաներին, նրանց հիերարխիային և խառնաշփոթ համայնքին³²: Իսպանական հայտնի կրոնատածությունն արդեն բավականին թուլացել էր նույնիսկ համեմատած Լեհաստանում տիրող իրավիճակի հետ և անկարող էր դիմակայել նոր պատարագի պատկերամարտական հարձակումներին ու նոր քահանայական պրակտիկային: Կաթոլիկ եկեղեցու ակտիվ ներկայացուցիչները, ինչպես նաև հատկապես միջին խավից աշխարհիկ որոշ հատվածներ բավականին լավ ընդունեցին կաթոլիկության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, սակայն շատ կաթոլիկներ, չհամակերպվելով ստեղծված նոր իրավիճակին, դադարեցրին իրենց կրոնական գործունեությունը: Երիտասարդ և նույնիսկ տարեց քահանաներից շատերը չէին համակերպվում խորհրդապաշտական միջնորդ լինելու իրենց տրված ավանդական դերին և հակված էին առավել անձնական ու սոցիալական քահանայական ծառայության, որը շատ հաճախ ընդունում էր սոցիալական ծառայության կամ քաղաքական ակտիվության տեսք: Կրոնական կոչումը, ավանդական սոցիալական ակտիվությունները կորցրին իրենց նշանակությունը, իսկ դրան զուգահեռ սովորական և աշխարհիկ հոգևորականության շրջանում զգալիորեն աճեցին աշխարհականացման միտումները: Օրինակ, ճեմարանականների թիվը 1961-62թթ. արձանագրված 8397-ից 1972-73թթ. նվազեց մինչև 2791-ի: Տարեկան մոտ 400 քահանաներ հրաժարվում էին քահանայությունից 1966 և 1971թթ. ընկած շրջանում, իսկ իսպանական ճիզվիտների մեկ երրորդը հեռացավ օրդենից 1966 և 1975թթ. միջև ընկած շրջանում³³:

1960-ական թթ. Իսպանիայի կաթոլիկ եկեղեցին բաժանվեց երկու մեծ սերունդների՝ մի կողմից՝ վաթսուն տարեկանից բարձր մեծաքանակ եպիսկոպոսների ու փոքրաքանակ քահանաների, մյուս կողմից՝ քառասուն տարեկանից ցածր փոքրաքանակ եպիսկոպոսների ու մեծաքանակ քահանաների միջև: Վատիկանի միջամտությամբ Իսպանիայի կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցած կազմակերպական կառուցվածքի ու իսպանական եպիսկոպոսության կազմավորման հետ կապված փոփոխությունները ուժեղացրին նոր կաթոլիկության դիրքերը: 1970-ական թթ. բարենորոգիչներն իրենց վերահսկողության տակ վերցրին նորաստեղծ՝ Եպիսկոպոսների ազգային կոնֆերանսը, որը փոխարինելու եկավ նախկին Միտրոպոլիտների կոնֆերանսին: Առաջին հերթին, չցանկանալով հրաժարվել եպիսկոպոսներին ներկայաց-

32 Երիտասարդ ուրբանիզացված քահանայի ու իսպանական գյուղում առկա ավանդական կաթոլիկության միջև բախումը լավ երևում է այդ ժամանակաշրջանի իսպանական գյուղի ազգագրության մեջ: Sté u William Christian, Jr., *Person and God in the Spanish Village*, New York: Seminar Press, 1972; Joseph Aceves, *Social Change in a Spanish Village*, Cambridge, Mass.: Schenkman, 1971 և այլն:

33 Sté u Lannon, *Privilege*, pp. 89-115; Payne, *Catolicismo*, pp. 225ff.; Victor Perez Diaz, *El Retorno de la Sociedad Civil*, Madrid: Instituto de Estudios Economicos, 1987, chap. 15; Enrique Miret Magdalena, *Los Nuevos Catolicos*, Barcelona: Nova Terra, 1966:

նելու իր իրավունքից, ֆրանկոյական ռեժիմը լուրջ խոչընդոտներ հարուցեց Վատիկանի առջև իսպանական եպիսկոպոսությունը վերանորոգելու առումով: Բայց Վատիկանին հաջողվեց հաղթահարել այս խոչընդոտը՝ ստիպելով ծեր եպիսկոպոսներին գնալ թոշակի, դրանով զրկելով Ազգային կոնֆերանսում նրանց քվեարկելու իրավունքից, իսկ նրանց փոխարեն նշանակեց քվեարկության իրավունք ունեցող առավել երիտասարդ եպիսկոպոսների: Երիտասարդ եպիսկոպոսների նշանակմամբ Վատիկանին հաջողվեց բացառել եպիսկոպոսների նշանակման հարցում ռեժիմի միջամտության բոլոր փորձերը: 1966թ. իսպանական եպիսկոպոսության մաս կազմող յոթանասուն եպիսկոպոսներից 65-ը 60 տարեկանից բարձր էր, և միայն 5 երիտասարդ եպիսկոպոսներ կային: 1973թ. 77 եպիսկոպոսներից 17-ն էր երիտասարդ, իսկ 60 տարեկանից բարձր եպիսկոպոսների թիվը կրճատվել էր՝ հասնելով 40 տոկոսի³⁴:

1971թ. տեղի ունեցած երկու կարևոր իրադարձություններ դարձան իսպանական եկեղեցու փոխակերպության կարևորագույն հանգրվանը: Այդ տարի մեծամասնություն համարվող եպիսկոպոսներին ներկայացնող կարդինալ Տարանկոն ընտրվեց Ազգային կոնֆերանսի նախագահ: Այդ պահից սկսած՝ եկեղեցին բացահայտորեն սկսեց պահանջել ռեժիմի ժողովրդավարացում և ազատականացում: Ոչինչ առավել լավ չի ներկայացնում ֆրանկոյական ռեժիմի շրջանի կաթոլիկ եկեղեցու ներքին վիճակը, որքան 1973թ. բասկերի ահաբեկչական ԷՏԱ կազմակերպության կողմից սպանված՝ կառավարության նախագահի թաղման ժամանակ տեղի ունեցած հայտնի դեպքը, երբ ծայրահեղ աջերից մեկը գոռաց նախագահող կարդինալի վրա՝ «դեպի պատը և ձեռքերդ վեր» (Tarancon al paredon): Այն պահից սկսած, երբ իսպանացի ձախերը հրաժարվեցին իրենց ավանդական հակակղերական դիրքորոշումից, եկեղեցու դավաճանությունից վիրավորված իսպանացի աջերը, չնայած ռեժիմի կողմից ստացած արտոնություններին, հրաժարվեցին եկեղեցուց³⁵:

1971թ. տեղի ունեցած հաջորդ կարևոր իրադարձությունը եպիսկոպոսների և քահանաների առաջին միավորված ազգային համաժողովն էր, որով հրապարակայնորեն իրենց մեղքերի թողություն էին հայցում հոգևորականները Իսպանիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ Իսպանիայի կաթոլիկ եկեղեցու խաղացած դերի կապակցությամբ: Ժողովի տեքստում ասվում է. «Մենք խոնարհաբար ընդունում ենք մեր մեղքը և հայցում թողություն, քանզի մենք չգիտեինք, թե ինչպես դառնալ ճշմարիտ «հաշտեցման քահանաներ» եղբայրասպան պատերազմում ոչնչացված մեր ժողովրդի համար»³⁶: Հաշտեցման այս

34 Stiu Jose M. Martin Patino, «La iglesia en la sociedad espanolat», in Juan J. Linz, ed., Espana: Un Presente para el Futuro, vol. 1, La Sociedad, Madrid: Instituto de Estudios Economicos, 1984; Ruiz Rico, Papel de la Iglesia, pp.189 and 213:

35 Stiu Jose L. Martin Descalzo, Tarancon, el Cardenal del Cambio, Barcelona: Planeta, 1982:

36 Ruiz Rico, papel de la Iglesia, p. 236.

քաղաքականությունը, թերևս, Իսպանիայի կաթոլիկ եկեղեցու կարևորագույն ներդրումն էր Իսպանիայի՝ դեպի ժողովրդավարություն անցման շրջանում:

Եկեղեցու դերն անցման շրջանում

Եթե եկեղեցու առանձնացումը ֆրանկոյական ռեժիմից հանգեցրեց ռեժիմի իրավական ճգնաժամին, ապա եկեղեցու աջակցությունը ժողովրդավարական ընդդիմությանը նպաստեց քաղաքացիական հասարակության ուժեղացմանը: Ժողովրդավարացման գործընթացում եկեղեցու ունեցած դերը կարելի է վերլուծել երեք տարբեր մակարդակներում:

Մարտաշունչ կաթոլիկ ակտիվիստները ժողովրդավարական ընդդիմության մեջ

66

1950-ական թթ. սկսած՝ կաթոլիկներն ակտիվ դերակատարում ունեցան նոր ժողովրդավարական ընդդիմադիր շարժման մեջ: Կաթոլիկները ներգրավված էին ընդդիմադիր բոլոր կուսակցությունների ղեկավար մարմիններում՝ սկսած միապետականներից մինչև ծայրահեղ ձախեր: Սկզբնական շրջանում որոշ իրադարձություններ ունեցան սիմվոլիկ նշանակություն: Օրինակ, աստվածապետական, միապետական կարխստական շարժումը, որը 1830-ական թթ. մինչև 1930-ականները երեք քաղաքացիական պատերազմներում դարձել էր հակահեղափոխական կաթոլիկության հիմնական շարժիչ ուժը, վերածվեց ռեժիմին ընդդիմադիր արմատական ուժի և որդեգրեց «սոցիալիստական» գաղափարախոսություն: Ընդհատակում գտնվող որոշ ամենաարմատական ընդդիմադիր ուժեր, որոնցից էին Castroist Frente de Liberacion Popular (FLP) Trotskyist Organizacion Revolucionaria de Trabajadores (ORT), ունեին կաթոլիկական ծագում: Այնուամենայնիվ, այս խմբերից ոչ մեկը չկարողացավ պահպանել իր գոյությունը ժողովրդավարական ընտրություններով ձևավորվող քաղաքականության պայմաններում: Պատմական կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ Իսպանիայի պատմության մեջ առաջին անգամ կաթոլիկները միավորվեցին և կարևոր դեր խաղացին ձախակողմյան կուսակցությունների (սոցիալիստական կուսակցություն (PSOE) և կոմունիստական կուսակցություն (PCE)) պատմության մեջ: Իսկապես, ընդհատակյա ընդդիմության մեջ գտնվող կաթոլիկների ու աշխարհիկ ձախերի միաձուլումը կարևոր գործոն դարձավ իսպանական քաղաքականության մեջ հակակղերականության վերացման համար³⁷:

1950-ական թվականների կաթոլիկ աշխատավորների շարժման ծնունդ համարվող քահանաներն ու աշխարհիկ ակտիվիստները նույնպես էական դերակատարում ունեցան 1960-ական թթ. առաջացած նոր

37 St'u Alfonso C. Comin, *Cristanos en el Partido, Comunistas en la Iglesia*, Barcelona: Laia, 1977:

աշխատավորական շարժման և գաղտնի արհմիությունների (Comisiones Obreras և Union Sindical Obrera) ստեղծման գործում:

Կաթոլիկ ակտիվիստները մեծ դերակատարում ունեցան նաև 1960-ական թթ. կատալոնական ու բասկերի ազգայնական շարժումների կրկին ակտիվանալու գործում: Սակայն այս փաստը այնքան էլ նշանակալից չէ, քանի որ երկու տարածաշրջաններում էլ կաթոլիկ եկեղեցին պատմականորեն մշտապես աջակցել է ազգայնական շարժումներին՝ պահպանելով համագործակցությունը կենտրոնամետ կաստիլական պետությանը ընդդիմադիր ուժերի հետ:

Ժողովրդավարական ընդդիմության պաշտպանությունը եկեղեցու կողմից

Նույնիսկ ֆրանկոյական ռեժիմի բռնաճնշումների ամենավատ փուլերում ազատական Իսպանիայի ժողովրդավարական ավանդույթները և քաղաքացիական հասարակության նորմերն ու արժեքները պահպանվել ու փոխանցվել են ընտանիքի, աշխատավորական դասակարգի և մտավոր ցանցերի միջոցով: Երբ 1960-ական թթ. սկզբին պետական բռնաճնշումները թուլացան, ռեժիմին հակադրվող ընդդիմադիր գործողությունները տարածվեցին ողջ երկրով մեկ ու ներթափանցեցին հասարակության բոլոր ոլորտները: Այս կապակցությամբ Իսպանիայի դեմոկրատական ընդդիմադիր շարժումը գործում էր անկախ՝ առանց եկեղեցական կառույցի աջակցության³⁸: Ի հակադրություն Բրազիլիայի կամ Լեհաստանի կաթոլիկ եկեղեցիների՝ Իսպանիայի կաթոլիկ եկեղեցին կարիք չունեւ դառնալու «ձայնազուրկների ձայնը» կամ քաղաքացիական հասարակության վերակազմավորման խթանողը: Բայց եկեղեցին աջակցեց ժողովրդավարական ընդդիմության համախմբմանը երկու ճանապարհով՝

ա) ապահովելով ընդդիմության կողմից պաշտպանվող ժողովրդավարական սկզբունքների կրոնական արդարացումը, ինչպիսիք էին արտահայտման ազատությունը, միավորումներ կազմելու ազատությունը, քաղաքացիական ու քաղաքական իրավունքները, եկեղեցին հակադրվեց ռեժիմի բռնաճնշումներին և ուժեղացրեց ընդդիմությանը: Ռեժիմի կողմից ժողովրդավարական ընդդիմությանն ուղղված ավանդական մեղադրանքները, իբրև արտաքին ուժերի և, հատկապես, կոմունիստական ուժերի կողմից հրահրվող երևույթ, արդեն կորցրել էին իրենց նշանակությունը, և, հետևաբար, անօրինական ուժային համակարգը բռնաճնշումները շարունակեց միայն ուժի կիրառման միջոցով: Երբ 1960-ական թթ. ռեժիմը սկսեց ազատականացմանն ուղղված իր առաջին միջոցառումները, ընդդիմությունն առավել համարձակ դարձավ ու սկսեց ընդդիմադիր գործողություններ իրականացնել: Եվ երբ 1960-ական թթ. վերջին կառավարությունը փորձեց առավել բռնի միջոցներով ճնշել

³⁸ Stéu Jose M. Maravall, Dictatorship and Political Dissent: Workers and Students in Franco's Spain, London, Tavistock, 1978:

ընդդիմության գործողությունները, պարզ դարձավ, որ կառավարությունն այլևս ի վիճակի չէ վերահսկողության տակ պահել հասարակական կարգը: Ի հավելումն, կառավարությունը կորցրեց նաև անտարբեր իսպանացիների մեծամասնության մեջ ունեցած լեգիտիմության վերջին նշույլները:

բ) Եկեղեցին իր կրոնական շենքերը, մենաստանները և եկեղեցիները տրամադրում էր ընդդիմության միջշրջանային, միջդասակարգային և միջկուսակցական հատվածների համեմատաբար ապահով հանդիպումներ կազմակերպելու համար: Դրանով իսկ եկեղեցին նպաստում էր ժողովրդավարական ընդդիմության տարբեր հատվածներին համակարգելուն և նրանց՝ ավտորիտար պետության դեմ ծավալվող քաղաքացիական հասարակության շարժման մեջ միավորելուն: Ոստիկանության կողմից եկեղեցական շինություններ մուտք գործելու և ընդդիմադիր արհեստակցական միությունների և Կատալոնիայի ժողովրդավարական ընդդիմության հավաքները վերահսկելու դեպքերն առավել խորացրին ռեժիմի նկատմամբ անվստահությունը, քանի որ ամբողջ բնակչությունը հասկացավ, որ ժողովրդավարական ընդդիմությունը աջակցություն է ստանում եկեղեցու կողմից:

Եկեղեցու դերը ազգային հաշտեցման գործում

Ընդդիմության հանդիպումների համար ֆիզիկական տարածք ապահովելուց առավել կարևոր էր եկեղեցու այն դերակատարությունը, որով նա սիմվոլիկ տարածք տրամադրեց բոլոր իսպանացիների հաշտեցման համար: Կրոնական-աշխարհիկ պառակտումը կործանարար դեր խաղաց ժամանակակից իսպանական քաղաքականության մեջ՝ գերազանցելով կապիտալի ու աշխատուժի դասակարգային կոնֆլիկտը, ինչպես նաև հեգեմոն կաստիլիական կենտրոնի և ծայրամասերի ազգայնականության միջև առաջացած խզումը: Կաթոլիկ եկեղեցու կողմից ժամանակակից աշխարհի լեգիտիմության վերջնական ընդունումը և իսպանացի ծախսերի կողմից իրենց ավանդական հակակղերականությունից հրաժարումը ժամանակակից Իսպանիայում վերջ տվեցին կրոնական-աշխարհիկ կոնֆլիկտին՝ այսպիսով հնարավոր դարձնելով մյուս կոնֆլիկտների լուծումը բանակցությունների և փոխզիջումների ճանապարհով: Իսկապես, փոխզիջման ոգին, կոնսենսուսի որոնումները և համաձայնության հասնելու ձգտումը դարձան անցման շրջանի Իսպանիայի ամենաբնորոշ բնութագրիչները: Ժողովրդավարական անցման շրջանի դիսկուրսում, ինչպես նաև նախընտրական արշավներում ու պառլամենտական քննարկումներում առավել հաճախ հանդիպող բառեր դարձան համաձայնությունը, հանդուրժողականությունը, խաղաղությունը, համաձայնագիրը, պակտը և նմանատիպ այլ բառեր: Ռազմական հեղաշրջման սպառնալիքի և աջերի ու ծախսերի կողմից ահաբեկչական գործողությունների սպառնալիքի վտանգով է բացատրվում քաղաքական ուժերի մեծ մասի դրսևորած փոխզիջու-

մային քաղաքականությունը: Բայց միայն ոչ հեռավոր անցյալի քաղաքացիական պատերազմի բացասական փորձառության կոլեկտիվ հիշողությամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ անցման շրջանի Իսպանիան բնորոշող քաղաքական կոնսենսուսը վերջիվերջո ինքնանպատակ դարձավ³⁹:

Ժողովրդավարական անցմանը վերաբերող երկու մեծ պատմական համաձայնագրերը արտացոլում են այս կոնսենսուսային քաղաքականությունը: Կառավարության և հիմնական քաղաքական կուսակցությունների կողմից սիմվոլիկ կերպով առաջարկված 1977թ. Մոնկլոայի համաձայնագիրն առաջին պատմական փոխզիջումն էր կապիտալի և աշխատուժի միջև: Չնայած դրան, առավել մեծ պատմական նշանակություն ուներ մեկ տարի անց հիմնական քաղաքական ուժերի միջև կնքված սահմանադրական համաձայնագիրը: Այս համաձայնագրի շնորհիվ հնարավոր դարձավ նախագծել սահմանադրություն, որն առաջին անգամ Իսպանիայի պատմության մեջ ոչ թե հաղթողների քաղաքական կամքի պարտադրումն էր պարտվողներին, այլ քաղաքական էլիտաների միջև զաղտնի բանակցությունների վերջնական արդյունքը⁴⁰:

Անցման շրջանում կաթոլիկ եկեղեցու խաղացած դերը կարելի է բնորոշել որպես ոչ հրապարակային, դրական և անդրկուլիսային: Չնայած նրան, որ եկեղեցին կարողացավ 1978թ. Սահմանադրության մեջ ամրագրել այն փաստը, համաձայն որի՝ սոցիոլոգիական տեսանկյունից Իսպանիայի բնակչության մեծ մասը պատկանում է կաթոլիկ եկեղեցուն, այնուամենայնիվ, Իսպանիայի կաթոլիկ եկեղեցին պաշտոնապես և վերջնականորեն ընդունեց եկեղեցու՝ պետությունից անջատվածության և կրոնական ազատությունների մասին սկզբունքները⁴¹: Բավականին կարևոր որոշում էր նաև այն, որ եկեղեցին որոշում ընդունեց չսատարել որևէ «կաթոլիկ» կուսակցության կամ էլ ուղղակիորեն աջակցել քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություններից որևէ մեկին: Անցման շրջանում կաթոլիկ եկեղեցու քաղաքական չեզոքությունը պայմանավորված էր մի շարք գործոններով. կրոնական խաղաղության հաստատմանն ուղղված իրական ցանկությունը, կաթոլիկ համայնքի, այդ թվում՝ հոգևորականության, քաղաքական բազմախոհության առաջացումը. միայն մեկ քրիստոնեական կուսակցության չաջակցելու որոշումը, ինչպես նաև վախճան առ այն, որ եկեղեցու կողմից պաշտոնապես հովանավորվող որևէ կուսակցություն կարող էր ստանալ փոքրամասնության աջակցությունը, և դրանով կասկածի տակ կդրվեին կաթոլիկության՝ Իսպանիայի ազգային կրոն լինելու եկեղեցու պնդումները:

39 Juan J. Linz, religion and Politics in Spain: From Conflict to Consensus above Cleavage, Social Compass 27, nos. 2-3, 1980; Rafael del Aguila y Ricardo Montero, El Discurso Politico de la Transicion Espanola, Madrid: C.I.S., 1984.

40 Բասկ ազգայնականները միակ կարևոր քաղաքական ուժն էին, որոնք որոշեցին չմասնակցել նոր սահմանադրության կազմման աշխատանքներին: Sté u Antonio Hernandez Gil, El cambio politico espanol y la constitucion, Barcelona: Planeta, 1982; Emilio Attard, La constitucion por dentro, Barcelona: Planeta, 1983:

41 Sté u Richard Gunther and Roger Blough, Religious Conflict and Consensus in Spain: A Tale of Two Constitutions, World Affairs 143, Spring 1981:

Մրցակցող երեք քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություններից որևէ մեկը ի վիճակի չէրավ հաղթահարել 1977թ. ընտրությունները: Այդ իմաստով, անցման ժամանակաշրջանում եկեղեցու քաղաքական չեզոքությունը նշանակում էր, որ Իսպանիայի կաթոլիկ եկեղեցին ոչ միայն ընդունել էր պետությունից իր անջատվածությունը, այլև հրաժարվել էր կաթոլիկ աշխարհիկ հատվածին կազմակերպելու միջոցով քաղաքական ասպարեզ մտնելու ավանդական նկրտումներից:

Եվ, վերջապես, այս ամբողջ գործընթացը հանգեցրեց կրոնական պատկանելության կամավոր սկզբունքի ամրագրմանը: Իսպանական եկեղեցին ընդունեց այն փաստը, որ այլևս ազգային պատկանելության հետ զուգորդվող միակ պարտադիր հավատքի կառույցը չէ: Կաթոլիկ հավատքը դե ֆակտո և սկզբունքորեն դարարեց լինել ազգային հավատք: Վերջիվերջո, կրոնական հավատքի, ազգային ինքնության ու քաղաքական պատկանելության սկզբունքներն Իսպանիայում պետք է դիտարկել առանձնացվածության տեսանկյունից: Ավելին, Իսպանիայի բազմազգ պետություն լինելու սահմանադրական դրույթը ցույց է տալիս իսպանական ազգի միասնականության սկզբունքը: Իսպանական պետության կայացմանը մասնակցած տարբեր ազգեր դարձան բազմախոս քաղաքացիական հասարակության առանձին ինստիտուտներ, իսկ եկեղեցին դարձավ քաղաքացիական հասարակության ներսում գործառնող ուժեղ դեմոնիսացիա⁴²:

Ժողովրդավարական կարգերի հաստատումից հետո անցկացված սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ Իսպանիայի ազգաբնակչությունը ևս ընդունել է այս սկզբունքները: 1984թ. իսպանացիների գերիշխող մեծամասնությունը (86%) իրեն համարում էր կաթոլիկ⁴³: Բայց ակտիվորեն եկեղեցի հաճախող կաթոլիկների թիվը զգալիորեն ցածր էր և տատանվում էր բնակչության 38%-ի սահմանում: Կաթոլիկություն դավանող իսպանացի երիտասարդների թիվը ևս փոքր է: Կիրակնօրյա պատարագին մասնակցող երիտասարդների թիվը 1975թ. 62 %-ի համեմատ 1982թ. կազմել էր 35 %⁴⁴: Ակներև է, որ զոյություն չունի նաև հասարակության շերտերին կամ քաղաքական ընտրազանգվածին բեռնացնող կրոնական խզվածք: Եկեղեցի կանոնավոր այցելող կաթոլիկները համեմատաբար հավասարաչափ են բաշխված Իսպանիայի ազգաբնակչության մեջ: Նրանք կազմում են վերին միջին խավի 44%-ը, ցածր միջին խավի 38%-ը և աշխատավոր խավի 34%-ը: Թերևս սա ամենադրամատիկ պատմական փոփոխությունն էր՝ համեմատած քաղաքացիական պատերազմին նախորդող շրջանի հետ: Նմանապես, չնայած ոչ հավասարաչափ բաշխմանը, եկեղեցի կանոնավոր այցելող

⁴² Այս հարցերին աստվածաբանորեն ու համակարգայնորեն մոտենալու նոր փորձերի համար տես Olegario Gonzalez de Cardenal, *Espana por Pensar: Ciudadania Hispanica y Confesion Catolica*, Salamanca: Ediciones Universidad de Salamanca, 1984. Իսպանիայի պարագայում կաթոլիկության հետ մրցակցող հիմնական աշխարհայացքը ոչ թե կրոնական, այլ աշխարհիկ բնույթի էր, որը շատ իսպանացիների կարծիքով պետք է փոխարիներ ավանդական կրոնական հայացքներին:

⁴³ Stéu Centro de Investigaciones Sociologicas (C.I.S.), *Iglesia, religion y politica*, Revista Espanola de Investigaciones Sociologicas, no. 27 (July-September, 1984):

⁴⁴ Stéu J. J. Toharía, *Los Jovenes y la Religión*, Madrid: Fundacion Santa Maria, 1985:

կաթոլիկները տարաբաշխված են իսպանական ողջ ընտրագանգվածում⁴⁵: 1982թ. իշխանության եկած սոցիալիստական կուսակցության օգտին քվեարկածների 25 %-ն ակտիվ կաթոլիկներ էին⁴⁶: Ներկայումս Իսպանիայում այլևս գոյություն չունի եկեղեցու կողմից վերահսկվող կաթոլիկ ընտրագանգված:

Բացի այդ, կաթոլիկ եկեղեցին ոչ միայն չի կարող այլևս կանոնա-կարգել շարքային իսպանացիների բարոյական չափորոշիչները, այլև չի կարող վերահսկել կաթոլիկ հավատացյալների բարոյականության սահմանները: 1984թ. հետազոտության համաձայն՝ իսպանացիների 65%-ը հաստատել է հակաբեղմնավորիչների օգտագործումը, 54%-ի համար ընդունելի են ամուսնացած քահանաները, իսկ մեծամասնությամբ ամուսնալուծված ժամանակ (47%-ը ընդդեմ 40%-ի) և նախաամուսնական շրջանում սեռական հարաբերություններ է ունեցել (45%-ը ընդդեմ 41%-ի)⁴⁷: Ուստի, զարմանալի չէ, որ կաթոլիկ եկեղեցուն իր ինստիտուցիոնալ ճնշումների կամ կաթոլիկների համախմբման միջոցով չհաջողվեց արգելափակել կամ փոփոխել սոցիալիստական կառավարության կողմից առաջ քաշվող նոր օրենսդրական փոփոխությունները այնպիսի հարցերի կապակցությամբ (որոնք եկեղեցին համարում է իր իրավասության շրջանակներում մտնող), ինչպիսիք են կրոնական կրթությունը, ամուսնալուծությունը կամ հղիության արհեստական ընդհատումը: Նույն հարցումը ցույց է տալիս, որ իսպանացիների մեծամասնությունը կարծում է, որ եկեղեցին չպետք է ազդեցություն ունենա կառավարության վրա (43%-ը ընդդեմ 32%-ի), աղեկվատ պատասխաններ չունի անհատներին հուզող հարցերի (43%-ը ընդդեմ 39%-ի) կամ ընտանեկան կյանքի պրոբլեմների (49%-ը ընդդեմ 34%-ի) վերաբերյալ, և որ եկեղեցու կողմից բարոյական հեղինակության շեշտադրումը հիմնված չէ իրականության գիտակցման վրա (41%-ը ընդդեմ 27%-ի)⁴⁸:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Իսպանիայում կրոնական հավատքը և բարոյականությունը դառնում են մասնավոր ու անհատական իրողություններ: Իսպանիան ոչ միայն միացել է եվրոպական ընտանիքին, այլև ընդունել է աշխարհականացման եվրոպական ընդհանուր սկզբունքները: Հետաքրքրական է, թե արդյոք կաթոլիկ եկեղեցին կպաշտպանի ավանդաբար իրենը համարվող ինստիտուցիոնալ հետաքրքրությունների շրջանակը, կկարողանա՞ օգտագործել իր ինստիտուցիոնալ ու բարոյական կշիռը քննադատություններ անելու, հանրային քննարկումներին հավասարության սկզբունքով մասնակցելու և դրանով Իսպանիայի քաղաքացիական հասարակության հանրային կյանքն աշխուժացնելու համար:

Իսպանիայում տեղի ունեցած մի շարք հանրային քննարկումների ժամանակ կաթոլիկ եկեղեցու մասնակցությունը գնահատվել է

45 Տե՛ս Martin Patiano, *La Iglesia en la sociedad*, pp. 202ff.

46 Տե՛ս Perez Diaz, *El Retorno, de la Sociedad*, p. 457:

47 Տե՛ս նույն տեղում, էջ 459:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 460:

անարդյունավետ, քանի որ, բազմաթիվ պատճառներից զատ, եկեղեցին չկարողացավ իրեն ներկայացնել որպես այնպիսի կազմակերպություն, որը պահպանողականության դիրքերից չի զբաղվում միայն սոցիալիստ կառավարության քննադատությամբ և ոչ էլ զբաղված է դատարկ ավանդապաշտության դիրքերից արդի աշխարհիկ մշակույթի քննադատությամբ: 1990թ. ամռանը կաթոլիկ եկեղեցու կողմից իսպանական մշակույթում տիրող անբարո վիճակի և Իսպանիայի քաղաքական համակարգում տարածված կոռուպցիայի հրապարակային դատապարտումն այն ժամանակ, երբ սոցիալիստները հայտնվել էին հրապարակային սկանդալների մեջ, միայն ազդեց սոցիալիստ կառավարության վարկանիշի նվազման ու քաղաքականությունից հիասթափվածների թվի աճի վրա, սակայն որևէ կերպ առաջ չբերեց լուրջ քննարկումներ մոդեռն հասարակությունների մեջ անհատական և հանրային բարոյականության իմաստի ու բնույթի վերաբերյալ: Նույն կերպ Յոռոմի պապի կողմից Իսպանիայի «ապաքրիստոնեականացումը» և բարոյական անկումը դեպի «նեոհեթանոսություն» ընկալվեց իբրև աշխարհիկ մշակույթի ավանդական կրոնական քննադատություն, չնայած նրան, որ Պապը հայտարարեց, թե եկեղեցու քննադատության ընդունումը դժվարանում է անցյալում նրա ունեցած հակամոդեռն դիրքորոշման պատճառով⁴⁹: Ավելին, սոցիալիստական կառավարության պաշտպանողական հակառեակցիան ներկայացվեց իբրև անցյալի իսպանական քաղաքականությանը բնորոշ կղերական-հակակղերական հակասությունների շարունակական վկայություն: Նույնիսկ այնպիսի քննադատ-աստվածաբաններ, ինչպիսիք են Կասիանո Ֆլորիստան և Էնրիկո Միրետ Մազոլալենան, ազդվելով Վատիկանից եկող բարենորոգչական միտումներից, անկարող եղան մասնավոր վիճաբանությունները վերածել լուրջ հանրային քննարկումների և մերժեցին եկեղեցու քննադատությունները՝ իբրև վերադարձ հերետիկոսական մոդեռնիզմի դատապարտությունների:

⁴⁹ St'u El Pais, Edición Internacional, Madrid, 30 September 1991, pp.16-17:

**Վերլուծությունը պատրաստել է «Համագործակցություն
հանուն ժողովրդավարության» կենտրոնը «Կրոնական
հանդուրժողականությունը Հայաստանում» ծրագրի՝
շրջանակում:**

**Կրոնական խնդիրների լուսաբանումը
Հայաստանի ՁԼՄ-ներում - 2010**

Ուսումնասիրության մեջ վերլուծվել և ներկայացվում են հայկական ՁԼՄ-ների այն նյութերը, որոնք արտահայտում են կրոնի կամ կրոնական կազմակերպությունների նկատմամբ տեսակետները, մեկնաբանությունները:

Մամուլի նյութերի համար աղբյուր է ծառայել մեր կազմակերպության www.religions.am կայքը², որտեղ ներկայացված են կրոնին առնչվող հայկական մամուլի նյութերը (որոնք ընտրված են էլեկտրոնային տարբերակներ ունեցող այն կենտրոնական թերթերից և կայքերից, որոնց տպաքանակը կամ այցելուների օրական քանակը գերազանցում է 2000-ը): 2010 թվականի հունվարի 31-ից դեկտեմբերի 31-ը դիտարկել ենք մոտ 800 նյութ, որոնք տեղադրված են www.religions.am կայքի «Մամուլի տեսություն» բաժնում: Ուսումնասիրությունը կատարելիս մեզ չեն հետաքրքրել քանակական տվյալները: Մեր նպատակն է եղել բացահայտել կրոնական անհանդուրժողականություն, խտրականություն կամ թշնամանք պարունակող հրապարակումների դրդապատճառները, արժեքային ընկալումները և հեղինակների աշխարհայացքը: Այդ առումով դիտարկել ենք այն հոդվածները, որոնք հիմնավորում կամ պատճառաբանում են տարբեր կրոնական խմբերի նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքը: Երբեմն ծավալուն մեջբերումներ ենք կատարում նպատակահարմար համարելով Հայաստանում առկա կրոնական թշնամանքի հիմնավորումները հասկանալու առումով: Որոշ դեպքերում չենք մեկնաբանում նյութերը, քանզի դրանց բովանդակությունն ինքնին տալիս է կրոնական խնդիրների մասին հեղինակների պատկերացումների կամ լրատվամիջոցների կողմից վարվող քաղաքականության մասին սպառնիչ պատասխանները:

Նյութը կարող է օգտակար լինել ոչ միայն կրոնական խնդիրներն ուսումնասիրողների, այլև Հայաստանի լրատվամիջոցների աշխարհայացքը հասկանալու համար, որն արտահայտվում է նաև քաղաքական ու հասարակական այլ ոլորտները և խնդիրները լուսաբանելիս:

¹ Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Թագավորության կառավարության աջակցությամբ:

² Կայքը ստեղծվել է «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի կողմից՝ «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում: Կրոնական խնդիրներին առնչվող նյութերը տեղադրված են կայքի «Մամուլի մոնիթորինգ» բաժնում:

Օրենսդրությունը

ՁԼՄ-ներով կրոնական թշնամանքի և անհանդուրժողականության քարոզն արգելված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի **24-րդ հոդվածով**, որի համաձայն՝ *«արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել... բ) ազգային, ռասայական և կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու նպատակով»*: Մինչդեռ ՁԼՄ-ներում հանդիպում են բազմաթիվ հոդվածներ, որոնք կրոնական թշնամանք են պարունակում, սակայն այս հետազոտության հեղինակներին հայտնի չէ որևէ դեպք, երբ նման հրապարակումների հեղինակներին պատկան մարմինները պատասխանատվության ենթարկեն:

Խղճի ազատությանն են անդրադառնում նաև ՀՀ Սահմանադրության 8.1-ին³, 26-րդ⁴, 14.1-ին⁵, 27-րդ⁶ և 28-րդ⁷ հոդվածները:

Քրեական օրենսգրքում սահմանված են խղճի և կրոնի ազատության պաշտպանությանն ուղղված հետևյալ հանցակազմերը. «խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը» (հոդված 160), «Անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելը կամ ղեկավարելը» (հոդված 162), «Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը» (հոդված 226) և այլն:

Բացի նշվածից, ՀՀ գործող քրեական օրենսգիրքը 63-րդ հոդվածում քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների շարքում ամրագրել է նաև *«հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը»*:

74

3 «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

4 «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ հանոգմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար»:

5 «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, եթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

6 «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն...»:

7 «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք»:

Թեև սույն զեկույցը պատրաստելիս հեռուստաընկերությունների մոնիթորինգ չի իրականացվել, այդուհանդերձ կրոնական կազմակերպությունների դեմ թշնամական, արհամարհական ու նսեմացնող արտահայտություններ կարելի է հաճախ լսել հեռուստաընկերությունների եթերով:

2010-ի փոտրվարի 15-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը ընդունել է «Էրոտիկ բնույթի հեռուստահաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջությանը, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչներ» «N 1-Ն» որոշումը, որտեղ թվարկվում են «Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները»: Այդ չափորոշիչների «բ» կետում գրված է. «նսեմացնում և վարկաբեկում են ազգային եկեղեցուն և նրա կողմից քարոզվող արժեքները»: Անհասկանալի է, թե էրոտիկ հեռուստահաղորդումներին նվիրված որոշումը ինչ կապ ունի կրոնական խնդիրների հետ, սակայն փաստն այն է, որ ցանկացած հաղորդում, որը այս կամ այն կերպ կասկածի տակ կդնի «ազգային եկեղեցին», անկախ այն բանից՝ դա վերաբերում է եկեղեցու աստվածաբանական պատկերացումներին, թե պատմական դերակատարությանը, թե որևէ այլ ոլորտի վերաբերող դերակատարությանը, արգելվում է հեռուստաեթերներով ցուցադրելը:

Պետական պաշտոնյաների մոտեցումները կրոնական խնդիրների հանդեպ և նոր մոտեցումներ հասարակական դիսկուրսում

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ հատկապես վերջին երկու տարիների ընթացքում կրոնական ազատությունների սահմանափակման տենդենցը Հայաստանում ձեռք է բերում համակարգային բնույթ: Եթե անցած տարիներին կրոնական անհանդուրժողականությունը չէր կարելի համարել որպես կառավարության քաղաքականություն, ապա վերջին երկու տարիներին հիմքեր կան ենթադրելու, որ կառավարությունը վարում է նման քաղաքականություն: Նման եզրակացության համար հիմքեր են տալիս ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությունները, վարչապետի, կրթության և գիտության նախարարի հրապարակային հայտարարությունները, կրթական հաստատություններում տիրող իրավիճակը, իշխանամետ հեռուստաընկերությունների լրատվական քաղաքականությունը, իրավապահ մարմինների անգործությունը կրոնական խտրականության ակնհայտ դեպքերի ժամանակ: Այս ամենի մասին է վկայում մեր կազմակերպության կատարած «Կրո-

նական հանդուրժողականությունը Հայաստանում» ուսումնասիրությունը⁸, որտեղ ներկայացրել ենք կրոնին առնչվող օրենսդրությունը, ինչպես նաև կրոնական ազատության իրավիճակը տարբեր բնագավառներում: Տեղին է հիշել նաև 2009-ի սեպտեմբերի «Ազգ» օրաթերթի ներկայացմամբ ՀՀ վարչապետի խոսքերը. «Ուշագրավ էր վարչապետի որակումը, թե «եկեղեցին տարանջատված է պետությունից» միտքը հնամաշ է: «Եթե եկեղեցին մենք ենք, ապա ես ինչպե՞ս և ո՞ր պահին տարանջատեմ իմ մեջ քրիստոնյա մարդուն»⁹:

ՀՀ ոստիկանապետը բացահայտորեն հայտարարում է, որ պետք է պայքարել «աղանդավորականների» դեմ. «Ու ոչ միայն էմոնների, ընդհանրապես աղանդավորական շարժումների դեմ պետք է պայքարենք, որովհետև նրանք մեր ժողովրդին լուրջ բարոյական վնաս են բերել»¹⁰:

www.panorama.am կայքը տեղեկացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարության նոր նախաձեռնությունների մասին. «Արդեն 7-րդ տարին է, ինչ Հայ Առաքելական եկեղեցին և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կազմակերպում են «Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն» և բնագիտական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների ուսուցիչների մրցույթ: Եվ, ինչպես հաղորդում են ԿԳՆ-ից, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում այսօր կայացավ 2010 թվականի մրցույթի հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը», որից հետո ներկայացնում է նախարարի ելույթից հատվածներ. «Մեր Սահմանադրությունը ճանաչում է Հայ Առաքելական եկեղեցու բացառիկ դերն ազգային ինքնության պահպանման, հոգևոր և մշակութային դաստիարակության հարցում, իսկ ազգային ինքնությունը մտածելակերպ է, որը քեզ համահունչ է դարձնում քո ազգին բնորոշ քաղաքակրթական տարրերին: Ո՞վ դա կանի ավելի լավ, քան եկեղեցին», - իր խոսքում հայտարարել է ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը: Նախարարը կարևորել է նաև եկեղեցի-կրթություն- բանակ համագործակցությունը և ընդգծել, որ առանց եկեղեցու չկա կրթություն, չկա բանակ, և այդ համագործակցությունն օրեցօր ավելի մեծ զարգացում է ստանում, քանի որ «Հայ դպրոցը ստեղծվել է հոգևոր արժեքների շուրջ և հայ դպրոցի մշտական հովանավորն ու պահապանը եղել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին»¹¹:

ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը բուհերի ուսխորհուրդների նախագահների հետ հանդիպման ժամանակ ասել է. «Ուսանողությունը պետք է վերադառնա դեպի եկեղեցի: Մի ինստիտուտ է եկեղեցին, որի հետ և որի համար դուք պարտավոր եք աշխատել»¹²:

8 http://religions.am/eng/index.php?option=com_content&view=article&id=85:religious-tolerance-in-armenia&catid=1:articles

9 Տե՛ս «Ազգ» օրաթերթ #167, 13-09-2008 (<http://azg.am/AM/2008091316>):

10 «Հրապարակ», 6/12/2010. «Էմոնները կխախտեն մեր գեմոֆոնը»:

11 <http://www.panorama.am/am/education/2010/11/23/armen-ashotyan/>, 23/11/2010:

12 Տե՛ս «Առավոտ» օրաթերթ, 02/10/2010:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ եկեղեցին»: Նույն օրենքի «Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները» վերտառությամբ 5-րդ հոդվածի 6-րդ կետում ասված է, որ ուսումնական հաստատություններում կրթությունն ունի աշխարհիկ բնույթ: Փաստորեն, նախարարը հարցականի տակ է դնում կրթության աշխարհիկ բնույթի մասին օրենքի պահանջը:

Մյուս կողմից՝ Հայաստանում ուժեղանում է քաղաքացիական արժեքների ազդեցությունը, որի հետևանքով Հայաստանյայց առաքելական եկեղեցին արդեն դիտարկվում է ոչ միայն որպես ազգային-ավանդական ինստիտուտ, ի տարբերություն մյուս կրոնական կազմակերպությունների (որը Հայաստանում կրոնական անհամդուրժողականության քարոզման հիմնական մեխն է), այլև որպես հասարակական-քաղաքական ինստիտուտ:

П

«Այսօր բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիներում և կազմակերպություններում տխուր իրավիճակ է տիրում՝ եկեղեցու առաջնորդները (կաթողիկոսները, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները և այլ եկեղեցականներ) իրենց անդամների նկատմամբ հաստատում են կամ փորձում են հաստատել ուժեղ, ավտորիտար բնույթի իշխանություն: Չնայած այս առաջնորդներից շատերը լավ նպատակներ են հետապնդում, հաճախ, սակայն, ավտորիտարիզմի հիմքում ընկած է իշխանության և վերահսկողության ծարավը: Այս առաջնորդները ռացիոնալացնում են և պաշտպանում նմանօրինակ վարքը սիրո և հովվության շղարշի ներքո: Աստվածաշունչն, անշուշտ, եկեղեցու առաջնորդներին օժտում է որոշակի հոգևոր իշխանությամբ, սակայն չափազանց հաճախ է այդ իշխանությունը չարաշահվում՝ անցնելով Սուրբ Գրքում թույլատրված սահմանները»¹³:

«Հայերը քրիստոնյա չեն, հայերը քրիստոնեության հետ կապ չունեն. այստեղ գալիս է արդեն երկրորդ подмена понятия-ն, որովհետև մենք քրիստոնեության համակարգը շատ հաջող փոխարինում ենք եկեղեցական ծիսական համակարգով: Քրիստոնեությունը մարդու ներքին բարոյական ցենզն է, որը մարդուն ինքնին թույլ չի տալիս անել այս կամ այլ արարքները եւ որը, մարդը կրելով իր մեջ, տանում է դեպի հասարակություն: «Մի՛ գողացիր» պատվիրանը որքանո՞վ է աշխատում մեր հասարակության մեջ, երբ մեզ մոտ ռեալ պատվիրան է գողացիրը, մյուս պատվիրանն էլ սպանիրն է, դրանից հետո մենք դեռ կարող ենք խոսել քրիստոնեության մասի՞ն: Իսկ մենք վերցրել ենք երևույթի ծիսա-

¹³ Հատված «Հայ առաքելական եկեղեցու Պատվո խորհուրդ»-ի հայտարարությունից (Council of Dignity of the Armenian Apostolic Church), <http://www.Iragir.am/armsrc/society41622.html>, 08/12/2010:

կան կողմը, ինչպես պետության մեջ ծիսական կողմը: Եվ պետությունը, քանի որ չունի իրավապահ ողնաշար, իր համար ստեղծում է ծիսական ողնաշար՝ եկեղեցական մոդել»¹⁴:

Փոփոխության են ենթարկվում պաշտոնական եկեղեցու թե՛ հասարակական ընկալումները, թե՛ եկեղեցուց (ինչպես նաև մյուս կրոնական կազմակերպություններից) հասարակության կողմից ակնկալվող սպասելիքները: Այսինքն, եկեղեցին և մյուս կրոնական կազմակերպությունները գնահատվում են արդեն ոչ միայն ավանդական պատկերացումներից ելնելով, այլև նրանց կոնկրետ դերից՝ ժողովրդավարության և հասարակական կյանքի կարևոր խնդիրների հանդեպ ունեցած մոտեցումներից: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, փորձագիտական շրջանակները խղճի ազատության հարցին սկսում են մոտենալ՝ ելնելով քաղաքացիական արժեքներից: Մյուս կողմից՝ կրոնական տարբեր կազմակերպություններ սկսել են ցուցաբերել քաղաքացիական դրսևորումներ հասարակությանը հուզող խնդիրների հանդեպ, որը ոչ վաղ անցյալում չի եղել: Դրա մասին են վկայում այս տարի հասարակական հնչեղություն ունեցող մի շարք նախաձեռնությունների ժամանակ (լեզվի մասին օրենքում փոփոխություններ, «Սոսկվա» կինոթատրոնի տեղում եկեղեցու կառուցման խնդիրը, էկոլոգիական խնդիրներ և այլն) կրոնական կազմակերպությունների հրապարակային դիրքորոշումները: Այսինքն, քաղաքացիական հասարակությունը սկսել է ձևավորել իր վերաբերմունքը այս կամ այն կրոնական կազմակերպության նկատմամբ՝ ելնելով երկրի համար կարևոր խնդիրների հանդեպ նրանց ունեցած դիրքորոշումներից:

Նախկին վարչապետ Զրանտ Բագրատյան. «*Իսկ կառավարությունը, չգիտեմ, կառավարության շենքում ինչ-որ մատուռներ է բացում, աղոթք են անում: Վարչապետը ինչ-որ տերտերների հետ է հայտնվում էկրանին, անհասկանալի բաներ են կատարվում, սրանք շատ լուրջ բաներ են: Էս էր պակաս, այ մարդ, արդեն կրոնն ու կառավարությունը լրիվ խառնվել են*»: Ըստ նրա՝ սովորաբար իսլամական պետության մեջ հնարավոր չէ կրոնը անջատել պետությունից: «*Հիմա սրանք (կառավարությունը) բան չեն կարողանում անել, կպել են եկեղեցուն՝ ամենուրեք ներգրավելով: Իբր էդ եկեղեցին էական դրական դեր է խաղացել մեր պատմության մեջ...Սի անգամ տեսե՞լ եք Հայ առաքելական եկեղեցու եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռը մամուլում տպված: Որտեղի՞ց այդ փողերը: Ո՞վ է սահմանում մոմի գինը: Սա կոչվում է ստվերային տնտեսություն: Եղել են տարիներ, երբ Հայ առաքելական եկեղեցուն եղել են լուսավորյալներ, որոշակի առաջադեմներ, բայց հիմնականում՝ ռեակցիոն: Պատահական չէ, որ ամեն մի թուրքական սուլթան կամ պարսկական շահ, որ նստում էր գահին, առաջին հերթին հայ կաթողիկոսներին մի քանի հատ հերոսի կոչում էր տալիս: Այս մասին մենք չենք սիրում խոսել: Հիմա իբր սա մի պրոգրեսիվ կառույց է, հետո էլ՝ մտել է*

¹⁴ Հատված քաղաքագետ Անուշ Սեդրակյանի հարցազրույցից <http://www.Iragir.am/armsrc/inter-view41722.html>, 10/12/2010:

կառավարություն», - նշեց ՀՀ նախկին վարչապետը¹⁵:

Ի տարբերություն էլեկտրոնային լրատվամիջոցների, ՁԼՄ-ներում կարելի է հանդիպել նաև սուր քննադատական հոդվածներ՝ ուղղված Հայաստանյայց առաքելական եկեղեցուն, մասնավորապես www.1in.am, www.7or.am, www.lragir.am կայքերում և «Ժամանակ», «Հրապարակ», «Չորրորդ ինքնիշխանություն», «Հայկական Ժամանակ» թերթերում: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավելի հաճախ կրոնական թշնամության և խտրականության կոչեր կամ միակողմանի կերպով լուսաբանվող հոդվածներ են լինում «Առավոտ», «Իրավունք», «168 Ժամ», «Ազգ», ինչպես նաև ռուսալեզու «Գոլոս Արմենիի» և «Նովայա գազետա» թերթերում:

«Աղանդ» և «հոգեորություն» եզրերի շահարկումը, կրոնական և ազգային պատկանելության միահյուսումը

Հայաստանում կրոնական անհանդուրժողականության քարոզչությունը հիմնականում հիմնված է երկու եզրի՝ «աղանդի» և «հոգեորության» վրա, որոնք Հայաստանում ունեն յուրահատուկ երանգ և կարող են բացատրել կրոնական անհանդուրժողականության դրսևորումների հիմնավորումները: Կրոնական անհանդուրժողականության կոչերը հիմնականում խարսխված են «ազգի» և «Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու»¹⁶ նույնականացման վրա և այստեղից հետևում է, որ, պայքարելով մյուս կրոնական ուղղությունների դեմ, հեղինակները ցանկանում են «փրկել» ազգը «պառակտումներից», որը «ազգային անվտանգության» կամ «հոգևոր անվտանգության» խնդիր է: Մամուլում և հեռուստատեսությամբ հաճախ է կրկնվում այն միտքը, որ Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունները, բացի ՀԱՍԵ-ից, որոնք որակվում են որպես «աղանդներ», «դավեր են նյութում» հայ ազգի դեմ, և նրանց դեմ պետք է պայքարել բոլոր միջոցներով:

79

Ազատական համարում ունեցող «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիրը թերթի համարներից մեկի խմբագրականում գրում է. *«Դավադրությունների տեսության մասին մենք սովորաբար խոսում ենք քամահրանքով՝ ծաղրելով այն որպես մարդկային երեւակայության խաղ: Իբր, առաջ մարդիկ հավատում էին, որ մեր կյանքին միջամտում են ինչ-որ հրեշներ ու չարքեր, հիմա էլ այդ առասպելները փոխարինվում են գաղտնի կազմակերպությունների մասին պատկերացումներով, եւ դրանց միջոցով մարդիկ արհեստականորեն բարդացնում են սովորական ու երբեմն նաեւ պատահական երեւույթները: Քաղքեմիական, «պատի տակի» խոսակցությունների վերաբերյալ այդ գնա-*

¹⁵ 1in.am, 23/12/2010, Հ. Բագրատյան, «Մեր եկեղեցին անպատժելի մի կառույց է՝ Քրիստոսի ու հավատի հետ կապ չունեցող»:

¹⁶ Այսուհետ՝ ՀԱՍԵ:

հատականը, իհարկե, ճիշտ է: Հայերը, մասնավորապես, սիրում են նման առասպելաբանություն հյուսել հրեաների մասին՝ 20-րդ դարի սկզբի ռուս «սեւհարյուրակայինների» ոգով: Բայց ամբողջությամբ հերքել, որ կան մեզ անհայտ խմբեր, որոնք, մասնավորապես, մեր երկրում որոշակի ծրագրեր են իրականացնում, նույնպես այնքան էլ խելամիտ չէ: «Եթե դուք տառապում եք պարանոյայով, դա չի նշանակում, որ ձեզ ոչ ոք չի հետեւում», - սրամտել էր ամերիկացի հետազոտողներից մեկը: Քիչ հետո խմբագիրը ավելացնում է. «Իսկ ինչ են մեր երկրում անում աղանդները՝ այդ հարցի պատասխանը միայն առաջին հայացքից է պարզ թվում: Այո, նրանք օգտվում են մեր ժողովրդի ծանր սոցիալական վիճակից եւ մեր համաքաղաքացիներին քաշում են իրենց կողմը: Եթե իշխանությունները ընտրակաշառք են բաժանում, ապա նրանք, այսպես ասած՝ «կրոնակաշառք»: Այդ իրողությունն, իհարկե, սարսափելի է, բայց դա աղանդավորների գործունեության միայն տեսանելի մասն է: Վերջերս ընկերներիցս մեկը, որը երեւակայությամբ տրվելու սովորություն չունի, ինձ ներկայացրեց մի պատմություն, որը ցույց է տալիս, թե որքան մեծ է աղանդավորների ազդեցությունը մեր քաղաքական եւ տնտեսական վերնախավի բարձրագույն «էլեւոններում»: Ցավոք, առայժմ այդ պատմությունը չեմ կարող ներկայացնել, փոխարենը սկսել եմ հավատալ ոչ թե դավադրությունների տեսությամբ, այլ բուն դավադրություններին: Համեմայնդեպս, 1998-2008 թվականներին աղանդների ծաղկման պատճառները, վստահ եմ, միայն սոցիալական չեն»¹⁷:

2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններից հետո որոշ իշխանամետ լրատվամիջոցներ փորձում էին ընդդիմության ակտիվությունը բացատրել «աղանդավորական» կազմակերպությունների ակտիվությամբ, մասնավորապես նման հոդվածներ էին տպագրել ռուսալեզու «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա» և «Հայոց աշխարհ»¹⁸ թերթերը, սակայն որևէ հիմնավորում այդ հոդվածների հեղինակները չեն բերել, նույն միտքը շարունակում է զարգացնել «Առավոտի» խմբագիրը նույն հոդվածում. «... 1989 թվականի ապրիլի 9-ին Թբիլիսիում խորհրդային բանակը հարձակվել էր ցուցարարների վրա, ինչի արդյունքում սպանվել էր առնվազն 19 քաղաքացի: Երբ այդ իրադարձություններից մի քանի օր անց Կենտրոնական հեռուստատեսության թղթակիցը հարցրեց վրացի նշանավոր գրող Չաբուա Ամիրաջեբիին՝ ո՞ւմ էր այս կոտորածը ձեռնտու, վերջինիս պատասխանը հակիրճ էր. «Սատանային»: Այսօր, մարտի 1-ի իրադարձությունների լույսի տակ, հակված եմ մտածելու, որ Ամիրաջեբիի ասածը զուտ գրողական չափազանցություն չէր»¹⁹:

17 «Առավոտ», 2010-09-04:

18 www.religions.am, «2008 թվականի մամուլի տեսություն»:

19 «Առավոտ», 2010-09-04:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու քննադատներին իշխանա-
մետ «Հայոց աշխարհ» օրաթերթում իր բաց նամակում այսպես է պա-
տասխանում ՀՀ ՊԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադե-
միկոս-քարտուղար Վիլեն Հակոբյանը. «*Բարոյականության եւ ազգա-
յին նկարագրի անօրինակ ոտնահարմամբ նրանք ամենազագրելի հեր-
յուրանքներ են տարածում Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց կաթողի-
կոսի դեմ՝ Նորին Սրբության հանուն ազգային համերաշխությանը նպա-
տակաուղղված գործունեությունը գիտակցաբար նենգափոխելով:....
Ամբողջ մահմեդական աշխարհն ընդվզել էր, երբ իրենց հավատքի
նկատմամբ աննշան ոտնձգություն էր եղել, եւ երեւի շատ վտանգավոր
հետեւեւանքներ կարող էին լինել, եթե հանդես չգային հեղինակավոր
միջնորդ երկրները: Անմոռանալի են մարդկության համար կործանա-
րար քարոզչական կեղծ տեղեկատվությունները:...*

Հազարամյակների պատմությամբ ծանրաբեռ Հայաստան աշխար-
հի գոյությանը սպառնացող բոլոր օրհասական պահերին, երբ վտանգ-
վել է հայ ազգի անվտանգությունը, վճռորոշ է եղել ազգի միասնական
ոգին, որը գլխավորել է Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր գահակալնե-
րով, քանզի հարյուրամյակներ շարունակ մենք չենք ունեցել պետակա-
նություն:... Եկեղեցին եւ նրա հովվապետները եղել եւ մնում են հայ ազ-
գի գոյատեւման խորհրդանիշը: Լեզուն ու խաչը, սերն ու հավատը,
ահա թե ինչպես գոյատեւեցինք այս երկար եւ մաքառումներով լի դա-
րերում...»²⁰:

Կրոնական կազմակերպությունների կամ «աղանդների» դեմ հան-
դես եկողների հիմնական մոտիվը բխում է «ազգի» և «հավատի» նույ-
նացման թեզից: «Աղանդներին» քննադատող հողվածներից և ոչ մե-
կում չկար աստվածաբանական կամ դավանաբանական հիմնավորում:
Հիմնական պատճառը «ազգային միասնության» պառակտման մտա-
հոգությունն է:

«Ժամանակ» օրաթերթին տված հարցազրույցում Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնի թանգարանների և արխիվների տնօրեն Ասողիկ քահանան
այսպես է բնորոշում ազգ-եկեղեցի կապը. «*Մենք չպետք է մոռանանք
պատմական այն ճշմարտությունները, որ դարեր առաջ արձանագրել
են մեր այրերը: Եղիշեն ասում է՝ Ավետարանը մեր հայրն է, եկեղեցին
մեր մայրն է, եթե մենք մեր կաշին քերենք, ապա դրա տակից եկեղեցի
դուրս կգա, որովհետեւ հավատքը, կրոնը նույնացվել են մեր էությանը,
դարձել են մեր մաշկի գույնը: Եվ այսօր մեր հասարակությանը ապա-
կողմնորոշել, այսպես անջատել, եկեղեցին մեկ այլ մարմնի վերածել՝
ճիշտ չէ: Դա նշանակում է՝ ազգին, ժողովրդին զրկել իր ինքնություն-
նից»²¹:*

20 «Հայոց աշխարհ», 01.07.2010թ., «Կանխենք մեր սրբությունների նկատմամբ ոտնձգությունները»:

21 «Ժամանակ», 25.03.2010թ., «Միայն քաղցր խոսքերով չես կարող մարդուն ճշմարտություն ուսուցա-
նել»:

«Իրավունք» թերթի գլխավոր խմբագիրը լուսաբանում է կրոնական ազատությանը նվիրված մի ուսումնասիրության շնորհանդեսը. «Ուղիղ մեկ շաբաթ առաջ «Կոնգրես» հյուրանոցում ներկայացվում էր «Կրոնի ազատությունը Հայաստանում» ուսումնասիրությունը, որ կատարվել է Հայաստանի հելսինկյան կոմիտեի կողմից: Ծիշտն ասած, կյանքումս առաջին անգամ էի տեսնում այդքան շատ աղանդավորական կառույցների առաջին դեմքեր՝ մի դահլիճում մեկտեղված: Եթե մի կողմ դնես լրագրողներին ու ավանդապահ ուղղություն ունեցող մի քանի մասնակիցների, ապա, ինչպես կասեր ռուսը, բոլորը տեղում են, պակասում է միայն մի կանխատր բենզինը»: Նման վերաբերմունքի պատճառը հեղինակն այսպես է մեկնաբանում. «Այսօր տարատեսակ իրավապաշտպան կազմակերպությունները, միջազգային հանրություն կոչեցյալը եւ այլն, կենտրոնացել են կրոնական փոքրամասնությունների պաշտպանության վրա եւ, ի դեպ, առավելագույն պաշտպանության են արժանանում հատկապես այնպիսիք, որոնք առավելագույնս ազդեցիկ են եւ հակազգային»: Այնուհետև խմբագիրը հոդվածում Սահմանադրական իրավունքի միություն կուսակցության անունից, որի անդամ է նա, հանդես է գալիս օրենսդրական առաջարկություններով. «ՍԻՍ կուսակցությունն առաջարկել է պարզ մեխանիզմ՝ ՀՀ տարածքում թույլատրելի եւ օրինական համարել միայն այն կրոնական կազմակերպությունների գործունեությունը, որոնց հոգեւոր կենտրոնը գտնվում է Հայաստանում: Իսկ մյուսներին ժամանակ տալ, որպեսզի համապատասխանեցնեն իրենք իրենց այդ պահանջին: Այդ պահանջին այսօր համապատասխանում են միայն Հայ առաքելական եկեղեցին եւ Արորդիների ուխտը²². մեկը մեր պատմության 17 դարերի մշտական ուղեկիցն է, մյուսն արտացոլում է հազարամյակների խորքից եկած ավանդույթներն ու մտածողությունը: Բայց, օրինակ, պարզապես ամոթ է, որ արդեն հազար տարի հայ կաթոլիկներ կան, բայց մինչ օրս չեն անկախացել Վատիկանից, եւ նրանց հոգեւոր հովիվը ընդամենը Հռոմի պապի ենթականերից մեկն է»: Հոդվածը վերջանում է հետևյալ տողերով. «Մի բան էլ շատ հետաքրքիր է. ըստ աղանդավորների եւ վերջիններիս պաշտպանների, կրոնի ազատության մեծագույն թշնամին մեր երկրում լրատվամիջոցներն ու լրագրողներն են: Էլ ինչ ասես մեզ անվանեցին՝ էլ զրպարտիչներ, էլ սոցետներ, էլ խտրականություն իրականացնողներ... Հետաքրքրական է, որ նույն բաները մեր հասցեին ասում են եւ հոմոսեքսուալիստները՝ իրենց պաշտպաններով հանդերձ: Եվ քայքայիչ փոքրամասնությունների այդ երկու տեսակներն էլ փորձում են ՋԼՄ-ների վզին փաթաթել իրենց «տղերանտական» տերմինաբանությունը. եթե երկնագույնները ուզում են արգելած լինել «համասեռամուլ» եւ «այլասերված» բառերը, ապա աղանդավորները ուզում են շրջանառությունից հանել «աղանդ» եւ «հոգեորություն» տերմինները: Դե, եթե սրանց մայենք, վաղը գլխներիս կնստեն: Բայց, ինչեւէ, աղանդավորաց պաշտ-

²² Իրենց հեթանոսներ համարող շարժում:

պաններից այդքան լուստանքներ լսելուց հետո ահագին բարձրացավ կարծիքս իմ իսկ գործընկերների մասին: Ուրեմն, այնուամենայնիվ, բավականին գործ անում ենք, որ դարձել ենք սրանց աչքի գրողը, քանզի ինչպես 1992-ին արտահայտվել էր ազատամարտիկներից մեկը՝ «Ձեր գործի մեծությունը չափեք թշնամու ատելության չափով»²³:

«Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը քանդելու և տեղում խորհրդային շրջանում քանդված եկեղեցու փոխարեն նոր եկեղեցի կառուցելու՝ կառավարության որոշման դեմ հասարակական շարժումը պատճառ դարձավ, որ ՋԼՄ-ներում բուռն քննարկում ծավալվի, որին Հայաստանի մյուս կրոնական կազմակերպությունները չեն մասնակցել, սակայն «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիրը այստեղ ևս տեսնում է «աղանդավորականների» ազդեցությունը. «Իսկապես պետք էր խնայվեր մեզ այս առճակատումը: Դրանից ոչ ոք չի կարող շահել, բացի մեր թշնամիներից, խլրդային աշխատանքի լծված աղանդավորներից: Այսինքն՝ վնասը կրելու ենք բոլորս, ե՛լ ազգային մեր եկեղեցին, ե՛լ հասարակությունը:

Անշուշտ, կարիք չկա բացատրելու, որ խոսքը վերաբերում է «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի փոխարեն եւ նույն տեղում 1923-26 թթ. քանդված-պայթեցված Սբ Պողոս-Պետրոս եկեղեցի կառուցելուն»²⁴:

83

Ուշագրավ տեսակետներ են հայտնում «Голос Армении» ռուսալեզու թերթի կազմակերպած քննարկման մասնակիցները: «Թշնամի մարդեն այստեղ» խորագրի տակ տպագրված «Բաժանում են, որ տիրեն» հոդվածը նվիրված է «աղանդավորներին»: Թերթն այսպես է ներկայացնում այդ քննարկման նպատակը. «Այս ազդեցությունների վտանգավորությունը պետական մակարդակի վրա դեռևս այնքան խոր չի գիտակցվում: Անհրաժեշտ միջոցառումներ չեն կազմակերպվում: Ոչ դպրոցները, ոչ բուհերը չեն զբաղվում երիտասարդների դաստիարակությամբ: Երևանի պետական համալսարանը և Սլավոնական համալսարանը չկարողացան համապատասխան մասնակիցներ ընտրել այս քննարկմանը մասնակցելու համար»²⁵:

Այնուհետև ներկայացվում են քննարկման մասնակիցների կարծիքները. Հայր Շնավոն (Ս. Հովհաննես եկեղեցու քահանա). «Օգտվելով ժողովրդավարական ազատություններից՝ Հայաստան ներխուժեցին աղանդները և ոչ ֆորմալ կազմակերպությունները: Նրանց հետևում կանգնած դեստրուկտիվ ուժերն իրենց գործունեությունը կողմնորոշում են դեպի երիտասարդություն: Նրանց իրական նպատակ-

23 «Իրավունք», 11.06.2010թ., «եղծ աղանդոց կամ հայկրոնության հրամայականը»:

24 «Ազգ», 2010/03/27, «Եկեղեցի-հասարակություն այս հակադրությունը մեզ բնավ պետք չէ»:

25 Опасность этих воздействий пока еще полностью не осознается на государственном уровне. Необходимые меры не принимаются. Ни школы, ни вузы не занимаются воспитанием молодежи. Ереванский государственный университет и Славянский университет не смогли найти подходящих людей для участия в круглом столе "ГА", посвященном духовным и нравственным проблемам молодежи Армении»:

ներն են՝ ազգային միասնության քայքայում, նրա բարոյական և հոգևոր հիմքերի խարխիլում, մեր պետության անվտանգության մակարդակի իջեցում: Քայքայիչ ուժերը գործում են հետևողական և ակտիվ՝ օգտագործելով գիտակցության վրա ազդելու անօրինական մեթոդներ: Այդ ազդեցությունների վտանգավորության աստիճանը պետական մակարդակում դեռ չի ընկալվում: Անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվում: Ո՛չ դպրոցներում, ո՛չ բուհերում երիտասարդության դաստիարակությամբ չեն զբաղվում: Ո՛չ երևանի պետական համալսարանը, ո՛չ էլ Սլավոնական համալսարանը չկարողացան գտնել համապատասխան կադրեր երիտասարդության հոգևոր և բարոյական խնդիրներին նվիրված՝ մեր թերթի կողմից կազմակերպված կլոր սեղանին»²⁶, - այնուհետև Հայր Շնավունը շարունակում է. «Այժմ նրանք օգտագործվում են ազգային անվտանգության խարխիլման համար: Մեր պետությունը պետք է լրջագույն ձևով մտածի Հայաստանի ապագայի մասին: Մենք դադարում ենք լինել միասնական հավատքով ժողովուրդ լինելուց: Ընթանում է միասնական ազգը հոգևոր հակամարտության մեջ գտնվող բնակչության վերածվելու ծայրագույն վտանգավոր գործընթաց: Նման արդյունքի մենք պատահականորեն չենք հանգել: Աղանդավորականների հանդեպ պետք չէ պատրանքներ ունենալ: Հարցը այն չէ, որ մեկը այսպես է հավատում, մեկը այնպես...: Բոլոր քայքայիչ աղանդների և շարժումների նպատակը ազգը պառակտելն է՝ ազգային գիտակցության քայքայումը: Մենք բոլորս ջանում ենք դառնալ եվրոպացիներ, մոռանալով այն մասին, որ Եվրոպան պայքարում է ազգային պետության հասկացության ու ազգային ինքնագիտակցության դեմ: Դա համարվում է ֆաշիզմի արտահայտություն: Հերիք է նայել Եվրոպայի վիճակի վրա, որպեսզի լրջորեն մտածել այն մասին, թե որքանով վտանգավոր են եվրոպական իդեալները: Արդյո՞ք մեզ պետք են միասեռական ընտանիքներ և դեմոկրատիայի նմանատիպ այլ դրսևորումներ: Հայերը գոյատևել են այն ազգային ավանդույթների և արժեքների շնորհիվ, որոնք այսօր հետևողականորեն ոչնչացվում են դրսի ուժերի կողմից: Իսկ մենք ընդունում ենք այդ քայքայիչ հասկացությունները, համարելով, որ հենց դրանք են եվրոպական արժեքները: Նայեք, թե ինչպիսի հզոր ճնշման է ենթարկվում կրթական համակարգը:

Ակտիվորեն ներդրվում են արևմտյան կրթական մեթոդները, որոնք դպրոցականներին և ուսանողներին վերածում են դեբիլների: Ես կարդացել եմ ամերիկյան դպրոցականների շրջանում անցկացված սոցիալոգիկական արդյունքները: 70%-ն ասել է, որ երկրագունդը տափակ

26 Воспользовавшись демократическими свободами, в Армению хлынули секты и неформальные движения. Стоящие за ними деструктивные силы ориентируют свою деятельность в первую очередь на молодежь. Их истинные задачи - разрушение единства нации, подрыв ее духовных и нравственных основ, снижение уровня безопасности нашего государства. Разрушительные силы действуют последовательно и активно, используя незаконные методы влияния на сознание. Опасность этих воздействий пока еще полностью не осознается на государственном уровне. Необходимые меры не принимаются. Ни школы, ни вузы не занимаются воспитанием молодежи. Ереванский государственный университет и Славянский университет не смогли найти подходящих людей для участия в круглом столе "ГА", посвященном духовным и нравственным проблемам молодежи Армении.б, "РАЗДЕЛЯЮТ, ЧТОБЫ ВЛАСТВОВАТЬ", "Голос Армении", 22.06.2010.

է, ինչ-որ տոկոս ասել է, որ երկրագունդը կլոր է, սակայն վստահ չեն, որ այն պտտվում է Արեգակի շուրջը: Մենք դա ենք ուզում: Եվրոպական արժեհամակարգի ներդրման շնորհիվ մեր հասարակությունը, որը ժամանակին շատ վատ էր վերաբերվում համասեռականներին, այժմ սկսել է նրանց ընկալել բարյացակամորեն: Ոչ թե եկեղեցին է ընդունում օրենքները, այլ պետությունը, որը այդ վտանգավոր երևույթներին մատերի արանքից է նայում»:²⁷

«Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության և վերականգնողական կենտրոնի» նախագահ Ալեքսանդր Ամարյանն ասում է. «Ես նախկին զինվորական եմ, աշխատել եմ հատուկ ծառայություններում, անցել եմ հատուկ պատրաստվածություն: Վերջերս իմ ձեռքն ընկավ եհովականների մի ձեռնարկ, որտեղ սովորեցնում են բնակչության հետ աշխատանքին: Քաղաքացիների հավաքագրման համար եհովականները օգտագործում են այն մեթոդները, որոնք 80-ականներին օգտագործում էին հատուկ ծառայությունները: Այստեղ մորմոնների կողմից աշխատում են 50 արտասահմանցիներ: Այստեղ աշխատելով որոշակի ժամանակ՝ նրանք համալրում են հատուկ ծառայությունները: Մորմոնների ղեկավարները կադրային զինվորականներ են: Այս կազմակերպության երկրորդ ղեկավարը չզհետս ինչու պետք է լինի ԱՄՆ դեսպանատան աշխատակից: Սակայն այդ մասին ոչ մի տեղ չի ասվում: Ավետարանականները նույնպես գլուխ են գովում ԱՄՆ դեսպանատան հետ ունեցած իրենց կապերով: Աղանդները կծաղկեն այնքան ժամանակ, մինչև նրանց գործունեության մասին ամբողջական ինֆորմացիա չլինի: Այսօր մենք ողջ ազգով ձգտում ենք Եվրոպա, չմտածելով, թե որքան բացասական հետևանքներ դա կարող է ունենալ մեր երկրի համար: Իսկ Եվրոպան, որը հենց ինքն է հայտնվել բազմաթիվ պորբլեմների առջև, ձգտում է մեզ թելադրել գաղափարներ, որոնք բացարձակապես անհեռանկարային են մեր պայմանների համար, իսկ եթե անգամ դրանք ներդրվեն, ապա կհանգեցնեն ծանր հետևանքների, այդ թվում նաև հոգեբուժական»:

27 Сейчас они применяются для подрыва национальной безопасности. Наше государство должно очень серьезно задуматься о будущем Армении. Мы перестаем быть народом, объединенным единой верой, духовностью. Идет крайне опасный процесс превращения единой нации в население, раздраемое духовными противоречиями. К такому результату мы пришли не случайно. Иллюзии в отношении сектантства недопустимы. Дело не в том, что кто-то верит так, а кто-то иначе..... Цель всех деструктивных движений и сект - разделение нации, подавление национального самосознания. Мы изо всех сил пытаемся стать европейцами, забывая о том, что Европа борется с понятиями национального государства и национального самосознания. Это считается проявлениями фашизма. Достаточно посмотреть на состояние современной Европы, чтобы серьезно задуматься о том, насколько опасны европейские идеалы. Нам нужны однополые браки и другие подобные проявления демократии? Армяне выжили благодаря тем национальным традициям и устоям, которые сегодня последовательно разрушаются силами извне. А мы принимаем разрушительные понятия, полагая, что это и есть европейские ценности. Посмотрите, какое сильное давление испытывает система образования. Активно внедряются западные методы обучения, которые делают из школьника или студента дебила. Я читал результаты соцопроса, проведенного с американскими школьниками. 70% ответили, что Земля плоская, какой-то процент ответил, что Земля круглая, но не уверены, что Солнце вращается вокруг нее. Мы этого хотим? В результате внедрения европейских ценностей наше общество, которое крайне отрицательно относилось к сексуальным меньшинствам, стало воспринимать их почти благодушно. Вы спрашиваете, что делает Церковь? А что могут сделать 300 священников в 3-миллионной стране? И не Церковь принимает законы, а государство, которое смотрит на эти опасные процессы сквозь пальцы. և , "РАЗДЕЛЯЮТ, ЧТОБЫ ВЛАДСТВОВАТЬ", "Голос Армении", 22.06.2010.

Հոգեբանական գիտությունների թեկնածու Կարինե Նալչաջյանը «աղանդների» դեմ պայքարի ծներ է առաջարկում. «Աղանդների և քայքայիչ շարժումների դեմ պայքարի, երիտասարդության հոգեբանական և հոգևոր պրոբլեմների հաղթահարման համար անհրաժեշտ է մեր հասարակության բոլոր առողջ ուժերի կոնսոլիդացիա:

Անհրաժեշտ է վերածնել ազգային արժեքները, որոնք կորել են վերջին քսան տարվա ընթացքում, լուծել կրթական համակարգի խնդիրները: Հայտնի է, որ բարոյականության և կրթական համակարգի միջև կա անքակտելի կապ: Քիչ հավանական է, որ բարձր ինտելեկտուալ մակարդակ ունեցող մարդը հայտնվի որևէ աղանդում կամ դառնա քայքայիչ շարժման հետևորդ:

Մինևույն ժամանակ պետք է նշել, որ աղանդները գրագետ են աշխատում, օգտագործելով գիտության առաջընթացը և հավաքագրման արդյունավետ մեթոդներ: Սակայն երիտասարդության շրջանում նրանց հաջողությունները առաջին հերթին պայմանավորված են կրթական մակարդակի նվազմամբ, առողջ կողմնորոշիչների և հայրենասիրական տրամադրության բացակայությամբ:

Ինչպես արդեն ասվել է, աղանդավորականների համար չկա հայրենակցի հասկացությունը: Նրանց քույրերն ու եղբայրները միայն իրենց աղանդի անդամներն են»²⁸:

Հայաստանում գործող ոչ պաշտոնական կրոնական կազմակերպությունների անդամների նկատմամբ ատելության սերմանում, թշնամու կերպարի ստեղծում

Մայիս ամսվանից սկսած՝ ՁԼՄ-ներում սկսեցին տպագրել հոդվածներ «էմո» կոչվող երիտասարդական շարժման դեմ: Ըստ որոշ գնահատականների՝ Հայաստանում կան մի քանի տասնյակ (ըստ որոշ կարծիքների՝ հարյուրից ավելի) դպրոցականներ, որոնց կարելի է համարել այդ շարժման անդամ, համեմայն դեպս, տասնյակ հոդվածներում և հեռուստահաղորդումներում նախ ներկայացվում է այդ շարժումը, սակայն այդպես էլ լայն հասարակությունը չի կարողանում հասկանալ, թե ովքեր են այդ «էմոները» և ինչ վտանգ կարող են ներկայացնել հասարակությանը: Բնութագրական է, որ հոդվածներում էմոների «վտանգը» բացատրելուց հետո, որպես կանոն, անցում է կատարվում «աղանդներին», և այդ վտանգը ընդհանրացվում և տարածվում է կրոնական կազ-

28 Борьба с сектами и деструктивными движениями, преодоление психологических и духовных проблем молодежи требуют консолидации всех здоровых сил нашего общества. Необходимо возродить национальные ценности, утерянные в течение двух последних десятилетий, решить проблемы системы образования. Известно, что между нравственностью и образованием существует неразрывная связь. Маловероятно, что человек с высоким интеллектуальным уровнем, хорошо образованный попадет в секту или станет последователем деструктивного движения. При этом приходится отмечать, что секты работают грамотно, используют научные достижения и эффективные методики вербовки. Но успех их деятельности в молодежной среде обусловлен в первую очередь снижением уровня образования, отсутствием здоровых ориентиров и патриотического настроения. Как уже было сказано, для сектантов нет понятия "соотечественник". Их братья и сестры - только члены их секты :,"РАЗДЕЛЯЮТ, ЧТОБЫ ВЛАСТВОВАТЬ", "Голос Армении", 22.06.2010.

մակերպությունների վրա: Հիմնական վտանգը էմոների ինքնասպանության «հակումն» է, սակայն Հայաստանում էմոների ինքնասպանության որևէ կոնկրետ դեպք այդպես էլ այդ հոդվածներում չի ներկայացվում, այլ նշվում է այն մտահոգությունը, որ այդ «ինքնասպանությունները չեն բացահայտվում»:

«Էմո կործանիչ շարժումը վաղուց արդեն ներթափանցել է հայաստանյան դպրոցներ, մշակութային-կրթական հաստատություններ, հասարակական կյանք...»

Էմո շարժման երիտասարդ անդամներին, որոնցից շատերը ժամանակ առ ժամանակ ինքնասպանության փորձ են կատարում, տրվում է «Աստիճանաբար պլանավորեք Ձեր ինքնասպանությունը» պատգամը: Այդ փորձերից շատերն, ինչպես հայտնի է, ողբերգական ավարտ են ունենում: Հայաստանում, սակայն, ինքնասպանությունները մնում են չբացահայտված:

Վերջին տարիներին Հայաստան մուտք գործած արևմտյան շարժումներից ամենավտանգավորը, թերևս, մեզ համար նորույթ, բայց եվրոպական երկրների և Ռուսաստանի համար հայտնի՝ էմոական (emo) շարժումն է: Մասնավորապես, մայրաքաղաքի փողոցներում այսօր կարելի է տեսնել երիտասարդական այնպիսի խմբերի, որոնք հագուկապով, սանրվածքով, շպարով և կեցվածքով խիստ տարբերվում են իրենց հասակակիցներից: Գաղտնիք չէ, որ մեզանում երիտասարդների միջավայրը հեղեղված է տարբեր շարժումների փոխտոփայություններ կրող խմբերով՝ ադանդավորներ, սատանիստներ, միասեռականներ, սադիստներ, պանկեր և այլն: Նաև բոլորիս է հայտնի, որ վերջին մի քանի տարիների ընթացքում երիտասարդների ինքնասպանությունների դեպքերը ոչ միայն շատացել են, այլև մնում են չբացահայտված և խորհրդավոր քողի տակ»:²⁹

«Մեր թերթի նախորդ համարներից մեկում տպագրված «Ահազանգ. էմոները պատանիներին դրդում են ինքնասպանության» վերնագրով հրապարակմանն արձագանքել են ՀՀ քաղաքացիները»³⁰: Որպես կանոն, նման «արձագանքները» լինում են անանուն, որը բնորոշ է կրոնական հողի վրա «ինքնասպանությունների» մասին պատմող բազմաթիվ հեռուստատեսային հաղորդումների և հոդվածների: Անանուն են նաև «ինքնասպանություն» գործողները:

«168 ժամ» թերթի հաջորդ հոդվածն արդեն սարսափազդու վերնագիր ունի՝ «Սատանա կա քաղաքում», որտեղ հասարակությունը զգուշացվում է. «Այս լուսանկարներում պատկերվածը միայն մակերեսային պատկերացում կարող է հաղորդել այն սարսափելի երեւույթի մասին, որով արդեն բավական երկար ժամանակ վարակվել է մեր երի-

²⁹ «168 ժամ», 25/09/2010, www.168.am/am/articles/24283, «Ահազանգ. էմոները պատանիներին դրդում են ինքնասպանության»:

³⁰ «168 ժամ», 02/10/2010, www.168.am/am/articles/24408, «Զուշացեք EMO-ներից»:

տասարդության զգալի հատվածը: «ԵՄՈ» կոչվող սատանիստական փիլիսոփայությանը մոտ այս շարժումը, որին զուցե շատերը լուրջ չեն վերաբերվում, այնպիսի տարածում է ստացել դեռահասների շրջանում, որ մեր ոչ այնքան մեծաթիվ ազգաբնակչության համար իսկական հոգեւոր եւ ֆիզիկական աղետի կարող է վերածվել»³¹

«Մինչդեռ ակնհայտ է, որ այս դեպքում իսկապես գործ ունենք հասարակությանը սպառնացող լրջագույն վտանգի հետ, որի դեմ պետք է պայքարեն ոչ միայն իրավապահները, այլեւ Ազգային անվտանգության ծառայությունն ու մնացած պետական կառույցները եւ Հայ Առաքելական եկեղեցին»³²:

Նույն թերթում տպագրվել է «Քայքայիչ պաշտամունքից տուժածների վերականգնողական եւ օգնության կենտրոն» հ/կ-ի նախագահ Ալեքսանդր Ամարյանի հետ հարցազրույցը, որը վերնագրված է «Ուժային կառույցներին ձեռնտու չէ պայքարել աղանդների դեմ»: Ամարյանը, սակայն, չի բացատրում, թե ինչու ուժային կառույցները չեն ցանկանում պայքարել «աղանդավորականների» դեմ, և ինչ կապ ունեն էմոները կրոնական կազմակերպությունների հետ:

«- Հայաստանում կրոնական շարժառիթներով բազմաթիվ ինքնասպանություններ են կատարվում: Մի քանի ամիս առաջ հերթական ինքնասպանությունը տեղի ունեցավ, երբ 12-ամյա տղան էմոների երիտասարդ խմբավորումների զոհ դարձավ: Ընդ որում, երիտասարդական էմո-խմբավորումները բոլորիս հայտնի աղանդավորական խմբավորումներից առավել վտանգավոր են համարվում: Դրանից առաջ 2004թ. կրկին կրոնական շարժառիթներով գրանցվեց 12-ամյա աղջկա ինքնասպանության դեպքը, որը կրկին որակվեց կենցաղային հողի վրա կատարված ինքնասպանություն: Մինչ օրս Հայաստանում գրանցվել է կրոնական շարժառիթներով ինքնասպանության որեւէ դեպք:

- Մեզ մոտ կրոնական շարժառիթներով կատարված հանցագործությունները որակավորվում են որպես կենցաղային, հակառակ դեպքում՝ տվյալ կրոնական կառույցի գրանցումը (եթե ունի) չեղյալ է համարվում: Իհարկե, կրոնական շարժառիթներով ինքնասպանության դեպք չի գրանցվել մեզ մոտ, որովհետեւ համապատասխան մասնագետներ չունենք...»³³:

«- Իսկ որո՞նք են, այսպես սասած, հարակից պատճառները:

- Ընդհանրապես, ցանկացած սպանություն իրավապահ մարմինների մերկայացուցիչներին ձեռնտու է ձեւակերպել որպես ինքնասպանություն. եւ՝ բացահայտումն է լինում արագացված, եւ՝ խնդիրներն են քիչ:

- Ունե՞ք տվյալներ, թե մեզանում ինքնասպանության դեպքերը հիմնականում ո՞ր աղանդների հողի վրա են կատարվում:

- Կարելի է ասել՝ բոլոր աղանդների մոտ էլ կան, բացի մորմոններից, որոնց մոտ ինքնասպանության դեպքերը ավելի շատ գրանցվում են արտասահմանում: Կրոնական այդպիսի կառույցները քարոզում են, որ

31 «168 ժամ», 25/09/2010, www.168.am/am/articles/24283, «Ահազանգ. էմոները պատանիներին դրդում են ինքնասպանության»:

32 «168 ժամ», 02/10/2010, www.168.am/am/articles/24408, «Զուլշացեք EMO-ներից»:

33 «168 ժամ», 02/10/2010, www.168.am/am/articles/24416, «Սատանա կա քաղաքում»:

ինքնասպանությունը փրկում է մարդուն: «Աստված կյանքը տվեց, Աստված էլ տարավ: Ինքնասպանության դեպքում մարդն ավելի շուտ կհասնի Աստծո թագավորությանը», - ասի այսպիսին են նրանց դիտարկումները... »:³⁴

«- Ավելի շատ են սատանայապաշտների՞ զոհերը, այո՞:

- Սատանայապաշտների մոտ ինքնասպանության դեպքեր չկան, այնտեղ կատարվում են սպանություններ: Ծիշտ է, նրանք կարող են սպանությունը քողարկել իբրև ինքնասպանություն, բայց դրանք ինքնասպանություններ չեն: Մենք նման դեպք ունեինք Չայաստանում՝ 2003թ. ոսկերչի սպանությունը: Առաջին ցմահ ազատագրկումն էր: Սատանայապաշտներն իրենք իրենց վնաս չեն տալիս: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե սատանայապաշտներից որեւէ մեկը պատրաստվում է լքել իրենց «շարքերը»:

- Քանի՞ սատանայապաշտ կա մեր երկրում:

- Մոտ 1,5 հազար սատանայապաշտ կա, ավելին՝ սատանայապաշտների «Աստվածաշունչը» թարգմանվել է Երեւանի պետական համալսարանում:

- Կոնկրետ հավաքատեղի ունե՞ն:

- Իհարկե, ունեն: Ես երբեք չեմ ասի նրանց հավաքատեղիի անունը՝ Ձեր շահերից ելնելով (վերցնում է ձայնագրիչը՝ նայելով ժամացույցին-Մ.Ս) »:³⁵

Ինքնասպանության ներկայացված դեպքերում չի նշվում ոչ անուն, ոչ վայր: Հակառակը, միշտ նշվում է, որ իրավապահ մարմինները չեն ցանկանում հետաքննել ինքնասպանության դեպքերը, և պարզ չէ, թե ով է բնութագրում ինքնասպանությունների կրոնական բնույթ լինելը:

Թերթի՝ էմոներին նվիրված շարքը ավարտվում է հոգեբանի հետ հարցազրույցով, որտեղ նկարագրվում են նրանց կողմից կատարվող «բազմաթիվ ինքնասպանությունների» պատճառները³⁶:

«Հայոց աշխարհ» օրաթերթը նույնպես անդրադառնում է այդ խնդրին ««էմո»-ականները իսկական աղետ են» հոդվածում. «Մեր դիտարկումներով, «էմո»-ականների կողմից ինքնասպանության դիմելու փորձերը օրեցօր շատանում են:

Փաստերին անդրադառնալը եւ կոնկրետ անուններ նշելը դեմ է էթիկայի կանոններին: Բացի այդ, ցանկություն չունենք որդեկորույս ծնողների սրտում դարձյալ կսկիծ առաջ բերել, սակայն փաստը մնում է փաստ, որ դրանք մեծ թիվ են կազմում եւ զնալով ահազանանում են: Տազնապալի է այն հանգամանքը, որ «էմոյական» շարժումը տարածում է գտել ոչ միայն Երեւանում, այլեւ մարզերում, ուր արդեն իսկ արձանագրվել են ինքնասպանության դեպքեր...

Նման սուբնյակային տարածումը անչափահասների, երիտա-

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում:

36 «168 ժամ», 06/11/2010, www.168.am/am/articles/25058, «Երեխայի հետ սիրո կամուրջները չի կարելի այրել»:

սարդության միջավայրում իսկական աղետ է, եւ անհրաժեշտ է ամեն ինչ անել տվյալ երեւոյթը արմատախիլ անելու համար»³⁷:

«Ազգ» օրաթերթը նույնպէս մտահոգված է այդ հարցով: ««Սպիտակ եղեռն» դպրոցներում» հոդվածում ներկայացվում է այդ թերթի վերաբերմունքը խնդրին. «2004-ից Հայաստանում գործում են մի շարք երիտասարդական խմբավորումներ, որոնց գործունեությունը աղանդավորությունից ոչնչով չի տարբերվում: «Քայքայիչ պաշտամունքից տուժածների վերականգնողական եւ օգնության կենտրոնի» տնօրեն Ալեքսանդր Ամարյանը հատկապէս առանձնացնում է էմոնների եւ գոտերի խմբավորումները, որտեղ ներգրավված երիտասարդները հեռանում են ընտանիքից, ընկերներից, սկզբունքներից ու զաղափարներից՝ վերածվելով գոմբիի... Վիճակագրական տվյալներ չկան նաեւ, թե կատարված ինքնասպանությունների որքան տոկոսն է կրոնական շարժառիթի հիման վրա կատարվել:

2006 թ. Հայաստանում կատարված ինքնասպանությունների թիվը կազմում էր 400: Միջազգային առողջապահական կազմակերպության տվյալների համաձայն՝ ինքնասպանությունների միայն 51 տոկոսն է կենցաղային հիմքերի վրա, մնացյալ 49-ը՝ անհայտ պատճառներով: Չի բացառվում, որ «անհայտ պատճառներ» արտահայտության մեջ կան կրոնական շարժառիթներով ինքնասպանության դեպքերը»³⁸:

www.Iragir.am կայքը ներկայացնում է պաշտոնական տեղեկություն «էմոների ինքնասպանությունների վերաբերյալ. «ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության երրորդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանն այսօր լրագրողներին ասել է, որ այս տարի Հայաստանում ինքնասպանություն է գործել 13, ինքնասպանության փորձ է կատարել 25 անչափահաս: Համեմատելու համար, նախորդ տարի ինքնասպանության և ինքնասպանության փորձերի թիվն ընդհանուր առմամբ կազմել է 23:

Նելլի Դուրյանը նաեւ խորհուրդ է տվել ձեռնպահ մնալ անչափահասների ինքնասպանության դեպքերի աճը էմո շարժման հետ կապելուց, ինչը լայն տարածում է գտել հայկական ՁԼՄ-ներում»³⁹:

«Ազգ» թերթը ներկայացնում է Լիզա անունով մի աղջկա հետ հարցազրույց, որի անձի մասին այլ տեղեկություն չկա.

«- Հիմնականում որտե՞ղ եք հավաքվում:

- Մեծ մասամբ Կասկադում եւ մանկական երկաթուղում:

- Իսկ ինչո՞ւ հենց մանկական երկաթուղում:

- Դա խորհրդանշում է, որ մենք հոգով մանուկ ենք:

- Ինչո՞ւ եք կամուրջներից նետվում:

- Դա էլ իր բացատրությունն ունի: Մենք համոզված ենք, որ եթե իսկական էմո ենք, ուրեմն ցած նետվելուց թեւեր են առաջանում»⁴⁰:

37 «Հայոց աշխարհ», 16/12/2010, «էմո»-ականները իսկական աղետ են »:

38 «Ազգ», 22/10/2010, ««Սպիտակ եղեռն» դպրոցներում»:

39 www.Iragir.am, 24/11/2010, «Անչափահասների շրջանում մեծացել է ինքնասպանությունների թիվը»:

40 «Ազգ», 22/10/2010, «Եթե իսկական էմոներ ենք, ուրեմն կամրջից ցած նետվելուց թեւեր են առաջանում...»:

Կամրջից էմոների ցած նետվելու որևէ կոնկրետ դեպք թերթը չի ներկայացնում ընթերցողներին, սակայն Լիզան պատմում է կամրջից ցած նետվելու՝ էմոների մոտ տարածված զանգվածային սովորության մասին:

Էմոյական շարժման վտանգների մասին անսպասելի եզրահանգումներ է անում «Իրավունք» շաբաթաթերթը՝ «Էմո-ներից կարող են ստեղծել ֆաշիստական խմբեր»։ ««Յետաքննության» մեր վերջին համարում տարբեր տեսանկյուններից անդրադարձել էինք վերջին ժամանակներս բուռն զարգացում ունեցող էմո-ներին: Սակայն դրանով այդ թեման, հաշվի առնելով երեւոյթի սոցիալական դերն ու վտանգը, չի կարելի սպառված համարել: Իսկ ո՞րն է հոգեբանների կարծիքը էմո-ների հոգեբանական բնութագրի հետ կապված: Այս թեմայով մեր հարցերին պատասխանեց հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր մասնագետ, «Այգ» հոգեբանական ծառայության կենտրոնի տնօրեն ՌՈՒԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ»⁴¹:

Հոգեբանը նկարագրում է էմոների հոգեբանական կերպարը, աշխարհայացքը և վերջում ներկայացնում այդ «վտանգի» քաղաքական կողմը:

91

«- Իսկ ո՞ր քաղաքական ուժին են հարկավոր էմո-ները:

- Ես չգիտեմ, թե դա որտեղից կարող է դեկավարվել, բայց Հայաստանին ավելի վերահսկելու, ուղղորդելու կամ իրենց ենթարկելու համար դա պետք է Արեւմուտքին: Իսկ եթե Հայաստանը ուժեղ լինի, ապա նա հարկավոր չէ Արեւմուտքին: Էմո-ները ներմուծված են եղել դրսից, եւ այդ ուղղությամբ լավ աշխատանք է տարվել»⁴²:

«Իրավունքն» իր վերաբերմունքն է հայտնում ոստիկանների կողմից մի քանի աղջիկների՝ ոստիկանական բաժին տանելու դեպքի կապակցությամբ: Ըստ ՋԼՄ-ների հաղորդագրության՝ աղջիկներին ոստիկանները կասկածել են «էմո-ական շարժմանը» մասնակից լինելու մեջ: Ըստ լրատվամիջոցների՝ ոստիկանները քաշել են աղջիկների մազերից և մի քանի ժամ պահել ոստիկանությունում. «18 տարեկան երեխան պետք է գնա բանակ՝ թուրքի դեմ կռվելու, բռնում ինքնասպան է լինում, բա եղա՞վ», - մեկ ամիս առաջ լրագրողների հետ հանդիպման ընթացքում վրդովված ասաց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս ՂԵՎՈՆԴ քահանա ՄԱՅԻԼՅԱՆԸ: Բանակ գնալուն, պարզվում է, ինքնասպանության փորձերով եւ դրա բացահայտ հակումներով խոչընդոտում է երիտասարդների մի խումբ, որն իրեն կոչում է «էմո»: «Քայքայիչ պաշտամունքներից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոնի» նախագահ Ալեքսանդր Ամարյանը, որը աղանդների գծով մեր երկրի լավագույն փորձագետներից է, ասում է, որ էմոներին կարելի էր հանգիստ վերաբերվել, եթե չլինեին նրանց բնորոշ մի քանի գործողությունները: Յուրաքանչյուր էմո մինչեւ 17 տարեկանը պետք է

41 «Իրավունք», 26/11/2010, «Էմո-ներից կարող են ստեղծել ֆաշիստական խմբավորումներ»:

42 Նույն տեղում:

գոնե մեկ անգամ ինքնասպանության փորձ կատարած լինի, սա պարտադիր պայման է: Էմոնների վերաբերյալ վիճակագրական տվյալներ չկան, բայց Ալեքսանդր Ամարյանն իր մոտավոր հաշվարկներով գիտի, որ Հայաստանում այսօր կան մոտ 3000-4000 էմոններ: Նա նշում է, որ այս ենթամշակույթը Հայաստանում գործում է աղանդավորական կազմակերպությունների հոգեորսության մեթոդով»⁴³:

Փաստորեն, ըստ Ամարյանի՝ 2004-ից ի վեր Հայաստանում առնվազն պետք է լինեն 3000-4000 ինքնասպանության փորձ այս շարժման անչափահասների կողմից, որի մասին տվյալները բացակայում են:

Այդ դեպքին նվիրված՝ աղջիկների հարցազրույցին է վերաբերում հոդվածի շարունակությունը. «Սակայն անդրադառնալով բուն ասուլիսին: Օրինակ, ինչ ասես արժեն բերման ենթարկվածներից ամենատարեցի՝ միանգամայն չափահաս ոմն Ծոմակի դատողությունները «քաղաքացիական հասարակության» եւ ոստիկանների «ահավոր անմարդկայնության» մասին: Ո՞ւմ է տրվել ամբիոն: Ներկայացնենք՝ ֆեմինիստուհի, «պանկ-ռոք» նվագող, Հայաստանի հանրահայտ բլոգեր Տիգրան Քոչարյանի (pigh.tv) կարծիքով՝ «Էս Ծոմակն էլ լեսբի ա, եթե չեն սխալվում», ու ահա, նույն Ծոմակի վկայությամբ՝ «Երեխեքի հետ գնացել էինք մանկական երկաթուղի, ես հեծանիվով էի, գնացինք ման գանք, զրուցենք, աղջիկներից մեկը հանեց փոքրիկ հուշանվեր-խանջալը, երկու հատ են իրար հետ, շատ սիրում, որ նվիրի աղջիկներից մեկին: Ոստիկանները ման էին գալիս էնտեղերքով ու տեսան, որ հանեց հուշանվերը: Մոտեցան, ասին՝ էդ ի՞նչ ա, ասինք՝ սուվենիր ա: Ասին-սուվենիր չի, դա սառը զենք ա »:

Դե արի ու մի ասա. էդ «երեխեքի» ծնողների աչքերն ո՞ւր են... Բայց ահա բերման ենթարկվածների ծնողներից մեկի՝ Զարուհի Ղուկասյանի մոտեցումը: Նա մասնավորապես հայտնել է, որ մեկ շաբաթ առաջ իրենց տուն է ժամանել անչափահասների հարցերով տեսուչ Խաչիկ Ավագյանն ու փորձել համոզել ծնողներին, որ Բելլան էմոն է: Ոստիկանը զգուշացրել է, որ եթե ծնողները միջոցներ չձեռնարկեն, «այդ պատմությունը վատ ավարտ» կունենա: Հիմա, ասացեք խնդրեմ, Հայաստանում ոստիկանը որեւէ նորմալ վարքագծով աղջկա հարցով ծնողին կանհանգստացնի՞, կամ, առավել եւս, նույնիսկ ամենասրիկա ոստիկանը Հայաստանում աղջիկ երեխայի վրա «գործ կսարքի՞»: Բայց ոմանք չեն էլ ուզում տեսնել այդ տարրական ճշմարտությունը... »⁴⁴:

«www. PanARMENIAN.Net» կայքը դեկտեմբերի 2-ին տարածել է «Հատուկ նշանակության ջրկատի վետերանների երիտասարդական թևը պայքարում է Հայաստանում էմո ենթամշակութային շարժման աղավաղված ընկալման դեմ» վերնագրով տեղեկատվությունը.

«ՀՀ ոստիկանության հատուկ նշանակության ջրկատի վետերանների երիտասարդական թևը երևանում խաղաղ երթ է անցկացրել «Պայ-

43 «Իրավունք», 23/11/2010, «Ովքեր են մեր երեխաներին տանում պատանի ինքնասպանների ակումբներ»:

44 Նույն տեղում:

քարենք միասին օտարածին այլասերվածության դեմ» կարգախոսով, որպես բողոքի նշան ընդդեմ «Էմո» ենթամշակութային շարժման աղավաղված գաղափարախոսության:

«Մենք հանդես ենք գալիս ոչ թե «Էմո» շարժման դեմ որպես այդպիսին, քանի որ դա զգացմունքային ռոք-արվեստ է, այլ մեր երկրում նրա աղավաղված ընկալման դեմ: «Էմոները» ուղղակի ձգտում են ապրել ազատ ու անկախ և ոչ ոքի չեն վնասում», - դեկտեմբերի 2-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտարարել է երիտասարդական թևի նախագահ Չայարիի Ալավերդյանը:

Ըստ նրա՝ «Էմո» աղավաղված գաղափարախոսությունը շատ վատ է անդրադառնում դեռահասների վրա, իսկ դպրոցներում հարցը բավականին սուր է դրված: «Մենք տեղեկություններ ունենք, որ նրանց դասագրքերում ածելիներ են գտնում: Մեր ակցիայով մենք ցանկանում ենք կանխել այդ գաղափարախոսության տարածումը, որը սուիցիդալ գործողությունների է հորդորում: Մենք նաև բուկլետներ կբաժանենք անցորդներին», - ասել է Ալավերդյանը:

Նա հավելել է, որ շարժումը թափանցել է Չայաստան 2007թ. և բավական արագ տարածվել: «Ուստի, մենք այն եզրակացության ենք եկել, որ այս շարժումը հովանավորվում և ֆինանսավորվում է որոշ անձանց կողմից», - ասել է Ալավերդյանը:

«Հրապարակ» օրաթերթը ներկայացնում է ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի ասուլիսը, որը վերնագրված է «Էմոները կխախտեն մեր գենոֆոնդը»⁴⁵: Ոստիկանապետը այսպես է գնահատում էմոների վտանգը. «Ու ոչ միայն էմոների, ընդհանրապես աղանդավորական շարժումների դեմ պետք է պայքարենք, որովհետև նրանք մեր ժողովրդին լուրջ բարոյական վնաս են բերել», ինչը ցույց է տալիս, որ «Էմոների» շուրջ ՁԼՄ-ներում տարվող արշավի նպատակը Չայաստանի կրոնական կազմակերպություններն են: ՀՀ ոստիկանության հատուկ նշանակության ջոկատի վետերանների երիտասարդական թևի երթի մասին ոստիկանապետը ասում է. «Սա միլիցիայի հատուկ նշանակության ջոկատների երթն է, որը հասարակական կազմակերպություն է: Դրա մեջ հիմնականում ներառված են ոստիկանության այն վետերանները, որոնք մասնակցել են երկրի սահմանների պաշտպանությանը, Արցախյան ազատամարտին: Ես էլ, ճիշտն ասած, էս կազմակերպության պատվավոր նախագահն եմ: Ես ինքս իմ հավանությունը տվել եմ, որ մարդիկ այս ակցիան կատարեն: Իհարկե, էմոներին վատ են վերաբերվում, անսահման վատ, ես դա չեմ ընդունում»: Ոստիկանապետը նաև կարծում է, որ՝ «Ինչ վերաբերում է էմոներին, սրանք մեր գենոֆոնդը հնարավոր ախախտեն», սակայն չի մեկնաբանում, թե ինչպես են էմոները խախտելու գենոֆոնդը: Ոստիկանապետը նաև համարում է, որ պետք է «պայքարել աղանդների դեմ»:

«Իրավունք» թերթը այսպես է ներկայացնում «Էմոների շարժման»

45 «Հրապարակ», 6/12/2010, «Էմոները կխախտեն մեր գենոֆոնդը»:

քաղաքական ենթատեքստը «Ուլքեր են մեր երեխաներին տանում պատանի ինքնասպանների ակումբներ-2» հողվածում. «Չարցագրույցում դեռահաս Լիկան «մոռացել» է հիշատակել մի կարեւոր ատրիբուտ, որ բնորոշ է էմոներին ամբողջ աշխարհում՝ կոկաինի պարբերական օգտագործումը... Եվ ահա այդպես՝ էմոն սիրում է երակ կտրել, էմոն պատրաստ է հրաժարվել հարազատ ծնողներից... Էմո աղջկանից երբեք չի ստացվի նորմալ, առավել եւս ավանդապահ մայր: Էմո տղայից երբեք չի ստացվի զինվոր:

Ու առաջիկա 2-3 տարիներին, միգուցե ավելի շուտ, պաշտպանության նախարարությունը բախվելու է մի սահմնկելի խնդրի հետ: Ջորակոչիկների զանգվածային ինքնասպանություններ զորանոցներում եւ մարտական դիրքերում, անգամ հավաքակայանում ու ծառայության վայր տանելու ճանապարհին...

Ահա ինչ նպատակներով են առաջնորդվում մեր երկրի ու ազգի թշնամիները, ջանք չխնայելով էմոների կործանարար «ենթամշակույթը» ստվարացնելու համար: Որպեսզի մոտ ապագայում երկիրը չունենա մայրեր եւ զինվորներ ու դառնա դյուրամարս պատահ:

Վերջապես ե՞րբ է իշխանությունը բռնելու այդ հրեշավոր մանկապիղծների ձեռքը, որոնք հասցրել են սարդոստայն հյուսել, որով որսում են մեր ապագան՝ արյունաքամ անելու նպատակով:⁴⁶

Ի տարբերություն ոստիկանապետի, ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ Նելլի Դուրյանը հակառակ պատկերն է ներկայացնում և այն հիմնավորում է օպերատիվ տվյալներով.

«2009 թվականին Հայաստանում ինքնասպանություն է գործել 28 անչափահաս,- երեկ մամուլի ասուլիսի ժամանակ նշեց ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ Նելլի Դուրյանը,- անչափահասների շրջանում ինքնասպանությունների հիմնական պատճառը կենցաղային խնդիրներն են կամ անպատասխան սերը: Կրոնական հողի վրա ինքնասպանություններ չեն արձանագրվել», - հավելեց նա:⁴⁷

Ուշագրավ է, որ մինչ այդ ՁԼՍ-ներում բացակայում էին «էմո» շարժման մասին հողվածները կամ տեղեկությունները: Միաժամանակ, ՁԼՍ-ներին սկսեց հետաքրքրել այդ թեման, տպագրվեցին բազմաթիվ հողվածներ: Որոշ ժամանակ անց այդ թեման իսպառ դուրս մղվեց մամուլից, որից կարելի է եզրակացնել, որ կամ էմոները որոշեցին այլևս «ինքնասպանություն» չգործել կամ դադարեցին «գործել», կամ մի այլ պատճառով այդ թեման այլևս կորցրեց իր հրատապությունը:

Հաջորդ թեման, որին պարբերաբար անդրադառնում է մամուլը, «աղանդների», «ինքնասպանության» և «հոգեկան առողջության» խն-

46 «Իրավունք», 24/11/2010, «Ուլքեր են մեր երեխաներին տանում պատանի ինքնասպանների ակումբներ-2»:

47 «Առավոտ» օրաթերթ, 06/08/2010, «2009թ. կրոնական հողի վրա ինքնասպանություններ չեն արձանագրվել»:

դիրն է, սակայն, որպես կանոն, որևէ դեպք, ինչպես նշել ենք, չի մատնանշվում:

Զնայած հանրապետությունում կատարված վերոբերյալ ինքնասպանությունների մասին պաշտոնական հաղորդագրությանը, «Առավուտը» նույնպես մտահոգված է կրոնական հողի վրա կատարվող «ինքնասպանությունների» խնդրով:

«Վերջին տարիներին նկատվում է հոգեկան հիվանդությունների թվի աճ ու երիտասարդացում: Դրա հիմնական պատճառը սոցիալական պայմաններն են, փաստում են հոգեբույժները, միաժամանակ նշելով, որ հիվանդների մի մասն էլ աղանդավորական խմբերի մեջ ընկնելով է հոգեկան խանգարում ստացել: Նրանց զառանցանքները հիմնականում կրոնական բնույթի են: Արարատյան հայրապետական թեմի Աբ Յովհաննես եկեղեցու հոգեւոր սպասավոր տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանը եւ Հայաստանի հոգեբուժական ասոցիացիայի տեխնիկական պատասխանատու, հոգեբույժ Արամ Յովհաննիսյանը, անդրադառնալով Հայաստանում հոգեկան հիվանդությունների եւ դրանց ավելացման վրա աղանդների ազդեցության մասին, նկատեցին, որ դա նաեւ պետության խնդիրն է: Պարզապես, վերջին շրջանում թե՛ աղանդավորական շարժումների, թե՛ դրանց դեմ տարվող պայքարի մասին շատ քիչ է խոսվում: Արդյո՞ք անցել է վտանգը, թե՞ համակերպվել ենք նրանց համատեղելիության հետ»:⁴⁸

«Մշտապես խոսվում է աղանդների խնդրի եւ հետեւանքների մասին, բայց ինչպե՞ս պայքարել դրանց դեմ: Ակնհայտ է, որ աղանդավորական շարժումները լուրջ ֆինանսներ են ներդնում եւ շատ դեպքերում քարոզի համար ընտրում անգամ բաց տարածքներ՝ մարզադաշտեր: Ինչպե՞ս կարող են պաշտպանվել հարակից տարածքի բնակիչներն այդ քարոզի հնարավոր հետեւանքներից: Քահանա Ղեւոնդյանի փոխանցմամբ՝ «դա ոչ միայն եկեղեցու, այլեւ պետության խնդիրն է: Պետությունն ընդունել է մի շարք օրենքներ, այլ խնդիր է, թե այդ օրենքներն ինչպես կարող են կիրառվել: Պարզապես պետք է ավելի հզորացնել իրավական դաշտը, օրենքը կիրառելու բոլոր հմտություններն ու լծակներն ուժեղացնել, որոնցով նախեսառաջ այդօրինակ գործողությունը պետք է կանխվի, արգելվի, նաեւ պատժվի: Մենք օրենք ունենք, որով այդ կարգի գործունեությունները քրեորեն հետապնդելի են, բայց առ այսօր այդ գործունեությամբ զբաղվող որևէ աղանդավոր քրեորեն չի հետապնդվել»:⁴⁹

«Աղանդավորականների ինքնասպանություններին» նվիրված բազմաթիվ հոդվածներ չեն մատնանշում կրոնական հողի վրա իրականացված որևէ ինքնասպանության դեպք, սակայն նույնքերին Սևան քաղա-

48 «Առավուտ», 29/10/2010, «Աղանդները՝ հոգեկան խանգարման պատճառ»:

49 Նույն տեղում:

քում ծնողներին սպանած մի անձնավորության կրոնական պատկանելության մասին տեղեկատվությունը հեղեղել էր հայկական լրատվամիջոցները:

«Իրավունք» թերթի խմբագիրը այսպես է մեկնաբանում դեպքը. «Նոյեմբերի 8-ին Սեւան քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 33 շենքում տեղի ունեցավ սահմուկեցուցիչ հանցագործություն, որը ցնցեց ամբողջ երկիրը: 23-ամյա Արման Խաչիկի Թորոսյանը խոշտանգելով, ծեծելով, ջարդոխտուրդ անելով սպանեց հարազատ հորն ու մորը՝ Խաչիկ եւ Մարիետա Թորոսյաններին: Հանցագործության վայրում հայտնաբերվել է եւ 3 կգ-անոց գազի բալոնը, արյան հետքերով, որը ճիվաղային խոշտանգման գործիքներից մեկն էր:

Արման Թորոսյանը Եհովայի վկա է եւ ծնողներին սպանել է հենց այն բանի համար, որ չեն ուզեցել համակերպվել իր աղանդավորության հետ: Երբ աղմուկ-աղաղակ, ճիչեր ու հայիոյանքներ լսած հարեւանները շտապ ոստիկանություն են կանչել, ոստիկանները, 2-3 րոպեում տեղ հասնելով, տեսել են շենքից դուրս վազող Արմանին ու տեղում ձեռքակալել: Եվ ինչ ասած լինի նա՝ որ սպանվածները ոչ թե իր հայրն ու մայրն են, այլ երկու սատանա, որոնց նա ոչնչացրել է Եհովայի հրամանով»⁵⁰: Այնուհետև մեկնաբանում է դեպքի քաղաքական կողմը. «Ինչ է հուշում մեզ Սեւանի սարսափելի նախադեպը: Սարսափելի ու տագնապահարույց մի բան. եթե զոմբիների վերածվող Եհովայի վկաների առջև առավել քան 20 տարի դրված խնդիրն էր հավաքագրել նորանոր զոմբիների, ապա այժմ եկել է այդ կենդանի ռոբոտներից ֆանատիկոս քիլլերներ եւ ահաբեկիչներ պատրաստելու ժամանակը: Սեւանի ողբերգությունը թերեւս պետք է համարել ընդամենը «առաջին փորձարկում»:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Եհովայի վկաների արտերկրում գտնվող տերերը հաշվարկել են, որ հոգեորսության ռեսուրսը մոտենում է սպառվելուն, որ հավաքագրել են գործնականում այնքան զոմբիներ, որքան հնարավոր էր հավաքել, իսկ այժմ արդեն այդ զոմբիները պետք է կատարեն միանգամայն այլ հանձնարարություն: Երբեք չհավատաք, թե Եհովականներին իրենց ուսմունքը արգելում է սպանել, քանզի նույնիսկ հրաժարվում են զենք վերցնել եւ բանակ գնալ: Նույն հաջողությամբ այդ ուսմունքը արգելում էր մասնակցությունն ընտրություններին, սակայն Եհովականները մեկ մարդու պես 2007-ին ներկայացան ընտրատեղամասեր եւ հրամանով քվեարկեցին «Ժառանգության» օգտին, իսկ 2008-ին նույն կարգով իրենց քվեները տվեցին LSՊ-ին: Եհովա աստվածը, որը հայրց դիցաբանությամբ ամենայն չարյաց Յահվահ աստվածն է, շատ քմահաճ է եւ ըստ նպատակահարմարության փոխում է իր ուսմունքի բովանդակությունը, արգելքների եւ պարտադրանքների համակարգը: Ինչպիսին է վիճակը այդ նույն Եհովականների տարածման առումով: Ամբողջ Հայաստանում կա 14 հազար Եհովայի վկա, այսինքն՝ միջինը 300-ից մեկը Եհովական է, որոնց առա-

50 «Իրավունք», 12.10.2010, «Հայաստանը թևակոխում է աղանդավորական ահաբեկչության փուլ»:

վելագույն խտությունը հենց սահմանամերձ շրջաններում է: Մասնավորապես՝ Արցախում կա 3000 եհովական, այսինքն՝ 40-ից մեկը եհովական է: Կռահեցի՞ք, ինչո՞ւ է ապահովվել եհովականների այդպիսի անհամասեռ տեղաբաշխումը ի նպաստ արտաքին թշնամու... Այս ամենը ցույց է տալիս, որ ոստիկանությունը, ԱԱԾ-ն, դատախազությունը պարտավոր են ամեն ինչ անել՝ պարզելու համար, թե ով եւ ինչպես է հրահանգավորել Արման Թորոսյանին ու վերածել ծնողասպան մեքենայի: Եվ, առհասարակ, իրավապահները պարտավոր են բացահայտել այդ հանցագործ աղանդի ամբողջ կառուցվածքը եւ հրամանների փոխանցման ու հաշվետվության համակարգը՝ նախապատրաստելու այն անհերքելի իրավական հիմքը, որը թույլ կտա օրենքի գործումը փակել «Եհովայի վկաներ» տոտալիտար աղանդը եւ մեկուսացնել դրա առաջնորդներին: Եթե հանկարծ անհրաժեշտ քննչական գործողությունները չկատարվեն, փորձ արվի երիտասարդ ծիվաղին ներկայացնել որպես անմեղաունակ, ապա հանրությունը բոլոր հիմքերը կունենա կասկածելու, որ կատարվում է կոռուպցիոն գործընթաց: Ի դեպ, աղանդների գծով լավագույն մասնագետներից մեկը՝ Քայքայիչ պաշտամունքներից տուժածների վերականգնողական կենտրոնի տնօրեն Ալեքսանդր Ամարյանը, հրապարակել էր Չայաստանում գործող աղանդավորական կառույցների տարեկան ֆինանսական շրջանառությունը: Մի ահավոր թիվ է՝ տարեկան շուրջ մեկ միլիարդ դոլար: Այսինքն՝ այնպիսի գումարներ, որոնցով հնարավոր է իրագործել ամենալայնածավալ կաշառումները... Այսպիսով, մեր ազգն ու երկիրը այժմ դեմահանդիման են մի նոր, ահագնացող վտանգի: 30-ից մեկը օտարի գործակալ է, օտարի կամակատար, օտարի հրամանով ցանկացած գործողությունների պատրաստ: Իսկ պետական այրերը, իրավապահ համակարգը այդ ցեցի դեմն առնելու փոխարեն տարատեսակ եվրախորհուրդներ ու եվրոպական չափանիշներ են խաղացնում: Սակայն ով է տեսել, որ հրդեհի ժամանակ սմոքինգներ հագնեն եւ թավշյա ձեռնոցներ դնեն...»⁵¹:

«Եհովայի վկաներ» կազմակերպությունը հրապարակայնորեն հայտարարել էր, որ այդ անձնավորությունը իրենց կազմակերպության հետ որևէ առնչություն չունի, և լուրը տարածվել է իրենց վարկաբեկելու նպատակով, և դիմել են դատարան՝ մի շարք լրատվամիջոցներից հերքում պահանջելու համար:

«Ազգ» թերթը, չսպասելով դատարանի որոշմանը, մեկնաբանում է «Եհովայի վկաներ» կազմակերպության այդ քայլը «Եհովայի վկաները» հրաժարվում են իրենց տականքից» հողվածում. «Սեւան քաղաքում «Եհովայի վկաներ» աղանդավորական կազմակերպության անդամ Արման Թորոսյանի կողմից իր ծնողների դաժան սպանությունը այս կազմակերպության թողած արյունոտ հետքերից առաջինն ու, ցավոք, վերջինը չէ: Կարելի է միայն ենթադրել, թե ուղեղների լվացման կամ ինչպես իրենք են ասում «մշակման» ի՞նչ ճանապարհ են անցնում

51 Նույն տեղում:

այդ կազմակերպությունում, որ պատրաստ են սպանել անգամ ծնողներին, եթե նրանք փորձեն հետ պահել իրենց զավակին կործանարար ճանապարհից: Տեղի ունեցածն իսկապես ահասարսուռ էր, եւ Հայաստանի ողջ բնակչությունը ցնցված էր: Ամբողջ բնակչությունը, բացառությամբ «Եհովայի վկաների» կազմակերպության ղեկավարների ու նրանց ցանցը ընկած զոմբիների, որոնք, ինչպես ակնկալում էին նրանց գործելակերպը մոտիկից ճանաչողները, անմիջապես հերքեցին տվյալ երիտասարդի պատկանելությունը «Եհովայի վկաներին»:

«Ազգի» խմբագրությունը երեկ ստացավ Հայաստանում «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության հայտարարությունը: Նշելով, որ իրենք եւս ցնցված են այդ «սարսափելի» հանցագործությունից, վերոնշյալ կազմակերպությունը հերքում է Արման Թորոսյանի պատկանելությունը եւ անգամ որեւէ առնչությունը «Եհովայի վկաների» հետ, «բացարձակ անհիմն եւ սուտ տեղեկություններ տարածելու», «անպատասխանատու», «ոչ պրոֆեսիոնալ» մոտեցման մեջ մեղադրելով Հայաստանի լրատվամիջոցներին: Ինչը, ըստ նրանց, «արատավորում է ամբողջ աշխարհի «Եհովայի վկաների» բարի անունը, պատիվը եւ արժանապատվությունը»: Ըստ այդ հայտարարության, պարզվում է, որ «Եհովայի վկաները» հայտնի են որպես ծնողների եւ մերձավորի նկատմամբ խոր հարգանք տածող մարդիկ, ովքեր կյանքը թանկ են գնահատում»⁵²:

«Այդուհանդերձ, հարց է ծագում, թե ինչո՞ւ այս կազմակերպությունը որոշեց հրապարակային հայտարարությամբ հրաժարվել ծնողներին սպանած սեփական տականքից: Պատասխանը պարզ է՝ «Եհովայի վկաներ» կազմակերպությունը կարող է իրավական պատասխանատվություն կրել որպես հանցագործության դրդիչ:

Այս ամենից հետո ուղղակի որպես զավեշտ է հնչում Հայաստանի մարդու իրավունքների «խրոխտ» պաշտպան Արմեն Հարությունյանի հայտարարությունը՝ քանի դեռ գործը քննվում է, մարդասպան երիտասարդին չանվանել «Եհովայի վկա»: Իսկ զուցե մարդու իրավունքների պաշտպանը կոչ անի նրան նաեւ մարդասպան չանվանել, իսկ զուցե ոչ ոք էլ չի՞ սպանվել, եւ արյուն ու դիակներ ոչ ոք չի՞ տեսել: Մարդու իրավունքների պաշտպանը գոնե մեկ անգամ փորձե՞լ է պաշտպանել այն ծնողների իրավունքները, որոնց զավակներն այլեւս իրենցը չեն, այլ լրացրել են «Եհովայի վկաների» գլխաքանակը եւ նույնը պարտադրում են անել իրենց հարազատներին»⁵³:

Օմբուդսմենի այն հայտարարությունը, որ որակումներ տալուց առաջ պետք է սպասել սպանության քննության ավարտին, վրդովեցրել է թերօին:

«Առավոտ» օրաթերթում տպագրված «Աղջիկս երզվել է իմ արյունով լվացվել» հոդվածում պատմվում է «աղանդավորականների» հերթական «չարագործությունների» մասին:

«Մայրը վստահեցնում է, որ իր հարազատ աղջիկը սատանայա-

52 «Ազգ», 13/11/2010, «Եհովայի վկաները» հրաժարվում են իրենց տականքից:

53 Նույն տեղում:

պաշտ դառնալուց հետո աղանդավորական կազմակերպությանը նման խոստում է տվել:

«Ընդամենը մի քանի տարի առաջ ես համերաշխ ընտանիք ունեի, ապրում էի աղջկաս հետ, պատրաստ էի կյանքս տալ նրա ու նրա ապագայի համար, սակայն սատանայապաշտները տուներս քանդեցին, մեր խաղաղ ու համերաշխ ընտանիքում կռիվ գցեցին», - արցունքները սրբելով՝ պատմում էր «Առավոտի» խմբագրություն եկած 60-ամյա էդմիլա Միխայելյանը:

«Առավոտը» հաճախ է անդրադառնում այս կամ այն աղանդավորական կազմակերպության հոգեորսությանը: Մենք բազմիցս հրապարակել ենք, թե «Եհովայի վկաների», «Սորմոնների», «Կյանքի խոսք» և մյուս կազմակերպությունների քարոզչությունն ու տարածած զաղափարախոսությունը մարդկանց վրա ինչ հոգեբանական խնդիրներ ու շեղումներ են առաջացնում, սակայն տիկին էդմիլայի պատմությունը տիպիկ օրինակ է, թե ինչպես կարող է նորմալ, բարձրագույն կրթությամբ, բանիմաց ու խելացի, դաստիարակված մարդը աղանդավորական կազմակերպության ազդեցության տակ կտրուկ վերափոխվել ու այնքան ազդեցիկանալ, որ հարազատ մորը ստիպի ինքնասպանության դիմել»⁵⁴:

Չոդվածը պատմում է մոր և աղջկա ծանր հարաբերությունների մասին, որոնք սկսվել են աղջկա «աղանդավորական» դառնալուց հետո, սակայն չի նշվում, թե կոնկրետ որ կազմակերպության անդամ է աղջիկը: Չոդվածագիրը չի հանդիպել աղջկա՝ կոնֆլիկտի մյուս կողմի հետ, որպեսզի պարզի, ներկայացնի մյուս կողմի տեսակետը. «Աղջկա պատճառով էդմիլան վաճառել է Նորքի տունն էլ եւ մեկ ուրիշ տուն է գնել Արտաշատի Մասիս գյուղում: Երբ խնդրեցինք, որ էդմիլան աղջկա՝ Վեոլորա Խոսրովյանի կոորդինատները տա, որպեսզի գրուցենք նրա հետ նույնպես՝ կինն ասաց, որ ջնջել է նրան իր կյանքից եւ որեւէ կապ չունի»⁵⁵:

Չոդվածագիրը այսպես է ներկայացնում խնդրի բարոյախրատական կողմը. «Չոգեբանները վստահեցնում են, որ աղանդավորական կազմակերպությունների պատճառած հոգեկան խնդիրները շատ լուրջ են: Աղանդի ներսում ինչ որոշում կայացվում է՝ դա բոլոր անդամների համար օրենք է: Եթե մարդկանց հրահանգեն, որ պետք է ինքնասպան լինեն՝ ապա նրանք կգնան ու իրենց, օրինակ, պատուհանից կզցեն:

Աղանդները վտանգավոր են նրանով, որ աղանդի մեջ մտած մարդկանց եւ նրանց հարազատների հետ կապը խզվում է, աղանդավորի համար մի հեղինակություն է լինում իր աղանդը եւ այդտեղ գործող օրենքները: Ուստի զարմանալի չէ, որ հայ ընտանիքներում հնարավոր է աղջիկը մորը «տականք», «լկտի» կոչի, ցանկանա սպանել նրան, իրեն պահած-մեծացրած կնոջը հասցնի հոգեկան անհավասարակշռության»⁵⁶:

54 «Առավոտ», 7/07/2010, <http://aravot.am/am/articles/education/0/view/all>, «Աղջիկս երդվել է իմ արյունով լվացվել»:

55 Նույն տեղում:

56 Նույն տեղում:

«Հայոց աշխարհ» շաբաթաթերթը այսպես է մեկնաբանում կրոնական կազմակերպությունների խնդիրը Հայաստանում «Ի՞նչ է վկայում զանազան «վկա»-ականների բազմացումը» հոդվածում. «Ընդհանրապես եթե իրերը կոչենք իրենց անուններով, ապա «Եհովայի վկաներ» աղանդը վաղուց ի վեր պետք է արգելված լիներ Հայաստանում որպես հակապետական, հասարակության ու քաղաքացիների հոգեւոր առողջությանը, հանրության բարոյական նորմերին սպառնացող «զաղափարներ» տարածող ու դրանց համարժեք քայքայիչ գործունեություն ծավալող կազմակերպություն... Դե, իսկ հիմա դրանց գումարեք զանազան «հոգեզալստականների», «հիսունականների», «մորմոնների», չգիտես թե էլ ի՞նչ զահրումարի, ասենք՝ «սատանայապաշտներին», ինչ-որ «էմո»-ների ու «գոթ»-երի, եւ պատկերը կամբողջանա իր սարսափազդու տեսքով: Թեպետ ուրիշ էլ ի՞նչ կարելի էր ակնկալել, եթե չկա այն, ինչն ընդհանրական ձեւակերպվում է որպես «պետական գաղափարախոսություն», եւ եթե չկա այն, ինչը կոչվում է «հայրենասիրական դաստիարակություն»: Նույնիսկ ավելին՝ նշվածները ոչ միայն չկան, այլև չկան դրա սաղմնային դրսևորումները: Ինչ-ինչ փարիսեցիներ, ասես ձայները մեկ արած, ծաղրուծանակի առարկա են դարձնում (հիշեք, թե ոչ այնքան վաղուց ինչպես սվիններով ընդունվեց հանրակրթական դպրոցներում Հայաստանի պետական օրհներգի կատարման արարողություն մտցնելը):

Մի խոսքով, աղանդավորական էքսպանսիայի մասին ահազանգելու համար արդեն ուշ է, շատ ուշ: Հիմա «զանգել» է պետք, ավելի պարզ ասած՝ գործել:

25-30 եւ ավելի բարձր տարիքի «աղանդավորական զանգվածը» կարելի է ազգի, պետության եւ հասարակության համար կորած համարել: Եվ հասկանալի է, որ փրկարարական ջանքերն այդ տարիքային խմբերում շատ ցածր արդյունավետություն կարող են ունենալ: Հակառակ դրան՝ պետք է հնարավոր բոլոր ջանքերը ներդնել առնվազն մատաղ սերնդին այդ աղանդավորական ու «էմո-գոթ»-ական աղտեղությունից զերծ պահելու համար... Ակնհայտ է, որ մի նոր բան է պետք մտածել, մի նոր՝ համընդգրկուն շարժում, որը կխարսխավեր ազգ-պատմություն-մշակույթ-բնություն-առողջ ապրելակերպ-ավանդույթ-ազգային եւ համամարդկային արժեքների ամբողջության վրա, եւ որը հնարավորինս հեռու կպահեր մեր վաղվա օրվա ճարտարապետներին աղանդավորական վարակներից»:⁵⁷

Կրթության ոլորտում կրոնական գործունեության լուսաբանումը

Կրոնական խնդիրներին վերաբերող բանավեճը մուտք է գործել դպրոց և կարելի է համարել, որ կրթության և գիտության նախարարությունը այս ոլորտում հատուկ քաղաքականություն է վարում:

57 «Հայոց աշխարհ», 09/11/2010, «Ի՞նչ է վկայում զանազան «վկա»-ականների բազմացումը»:

«Առավուտը» լուսաբանում է կրթության և գիտության նախարարի հանդիպումը բարձրագույն կրթական հաստատությունների ուսանողական խորհուրդների հետ. «Դուք այնպիսի հնարավորություններ ունեք, որ մենք կերազեցինք ունենալ: Ես ձեզ հորդորում եմ՝ ակտիվ եղեք եւ օգտագործեք այն բոլոր հնարավորությունները, որ ունեք», - նկատի ունենալով ուսանողական կազմակերպություններից քաղաքական դաշտ մտածներին, ովքեր կարող են ուսխորհուրդներին անհրաժեշտ լոբբինգն անել տարբեր հարթություններում, երեկ ասաց ԳԳ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը՝ բուհերի ուսխորհուրդների նախագահների հետ հանդիպման ժամանակ»: Այնուհետև նախարարը հայտարարել է. «Նախարարի մոտ երեկ հորդորներն ուղղակի հորդում էին: Բացի վերոնշյալներից՝ նա նաեւ հորդորեց ուսանողական միջոցառումներ կազմակերպելիս առաջնահերթ նկատի ունենալ եկեղեցին, բանակն ու Արցախը: «Ուսանողությունը պետք է վերադառնա դեպի եկեղեցի: Մի ինստիտուտ է եկեղեցին, որի հետ եւ որի համար դուք պարտավոր եք աշխատել», - ուսխորհուրդների ուսերին պարտավորություն դրեց նախարարը»⁵⁸:

Դպրոցներին տրվող օգնության որևէ կրոնական կազմակերպության անուղղակի օգնության հնարավորության մասին հետաքննություն է վարում «Առավուտ» օրաթերթը:

«ԱՄՆ դեսպանատնից ուղարկված հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ երեկ ԱՄՆ փոխդեսպան Ջոզեֆ Փենինգտոնը, ԱՄՆ պետական դեսպարտամենտի մարդասիրական օգնության գրասենյակի տնօրեն Ջերրի Օբերնդորֆերը, ԳԳ կառավարման մարմինների ներկայացուցիչները, միջազգային հասարակական կազմակերպությունները եւ այլ հյուրեր մասնակցեցին Արարատի մարզի Դարբնիկ գյուղի դպրոցում ջեռուցման համակարգի եւ սանհանգույցների կառուցման ծրագրի բացմանը: 1966թ. կառուցված այս դպրոցում չեն եղել ոչ ջուր, ոչ ջեռուցում եւ ոչ էլ սանհանգույցներ: Ծրագիրն իրականացվել է «Միջազգային օգնություն եւ զարգացում» կազմակերպության կողմից՝ ԱՄՆ պետդեսպարտամենտի տրամադրած 19 հազար դոլար ֆինանսավորման շնորհիվ: Իրենց աջակցությունն են բերել «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կազմակերպությունը (մորմոնները) (\$4000) եւ Քերոլայն ու Ջորջ Նաջարյանները՝ ԱՄՆ-ից (\$4000):

Փորձեցինք ճշտել Սայր աթոռի վերաբերմունքը՝ արդյո՞ք մտահոգ չեն, որ մորմոններն են դպրոցում բարեգործություն իրականացնում: Տեղեկատվական համակարգից հայր Դակոբը խոստացավ ավելի ուշ պատասխանել, իսկ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն հայր Վարդանը՝ տեղեկատվությունը այլ աղբյուրներից ճշտելուց հետո»⁵⁹:

Սակայն նույն թերթը գովեստով է գրում Դայաստանյայց առաքելական եկեղեցու մասնակցությունը հանրակրթական դպրոցի դասերին:

«Շաբաթ օրը թիվ 119 դպրոցում հոգևոր թեմայով միջոցառում էր

58 «Առավուտ», 02/10/2010, «Նախարարի «հորդորակները»:

59 «Առավուտ», 15/05/2010, «Մորմոններն էլ օգնեցին»:

կազմակերպվել: «Մեղավորը» հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Գոհար Մելիք-Ստեփանյանն էր՝ 6 բ դասարանի իր աշակերտների հետ: Ներգրավված էին առանց բացառության բոլոր երեխաները՝ անկախ ընդունակություններից ու կարողություններից: Լուրջ աշխատանք էր տարված՝ երեխաները ոչ միայն մեկնաբանեցին հոգեւոր տոներն ու մասնավորապես Ձատիկը, այլեւ աղոթքներ, շարականներ կարդացին ու երգեցին: Նրանք խաչեր էին կրում ու կրծքներին սեղմել էին մանկական Աստվածաշունչը: Ցերեկույթին ներկա էր նաեւ ծանաչված մանկավարժ, մայրենիի դասագրքի ու զանազան ձեռնարկների հեղինակ Ռուբինա Նազարյանը, ով հաջորդ ուստարվանից աշխատելու է հարազատ դպրոցում, իսկ մինչ այդ 8 տարի մանկավարժական գործունեություն էր ծավալել ԱՄՆ-ում: Տիկին Նազարյանը գոհ էր իր աշակերտուհի, այժմ 20-ամյա ստաժով ուսուցչուհի Գ. Մելիք-Ստեփանյանի աշխատանքից: Դպրոցի տնօրեն Յովհաննես Կարապետյանն էլ, ողջունելով ուսուցչուհուն եւ աշակերտներին, ասաց, որ նման ձեռնարկները նպաստում են, որպեսզի երեխաները ոչ միայն կայանան իբրեւ փոքրիկ քրիստոնյաներ, այլեւ քայլեն Քրիստոսի նախանշած ուղիով՝ հետագայում»⁶⁰:

Սակայն այդ թերթի մեկ այլ հոդվածում մտահոգություն է հայտնվում, որ կրոնական կազմակերպությունները փորձում են մուտք գործել դպրոց. «Ալեքսանդր Ամարյանը հիշատակեց, որ տարիներ առաջ, երբ հանրապետության դպրոցներում եւ մանկապարտեզներում տուփերով նվերներ էին բաժանվում, դրանց մեջ պարտադիր տեղ էին գտնում պատկերազարդ եւ զունագեղ կրոնական գրքեր՝ «Բոլոր նվերներից լավագույնը» խորագրով: Նրա բնորոշմամբ՝ դրանք աղանդավորական խմբերի քարոզի, նոր կյանք մտնող երեխային իրենց ետեւից տանելու լավագույն ձեւն էին, որ շարունակվում են մինչ օրս. «Ես իմ տանը այս գրքերից 30 օրինակ ունեմ, դրանցից մեկն էլ իմ երեխային է հասել»⁶¹:

Կրթության և գիտության նախարարի առաջնորդությամբ, պաշտոնյաների, Աժ պատգամավորների մասնակցությամբ Մայր աթոռում կազմակերպվել է «ուսուցիչների օրհնությունը»:

«Օգոստոսի 31-ին՝ Գիտելիքի օրվա նախօրեին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Գարեգին Բ կաթողիկոսի գլխավորությամբ տեղի է ունեցել կրթության մշակների օրհնության կարգ, որով սկիզբ է դրվել մի նոր՝ կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության: Ձանգերի հանդիսավոր դողանքների ներքո եկեղեցականների թափորը Գարեգին Բ-ի եւ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի ուղեկցությամբ մտել է Մայր տաճար, ուր կատարվել է շուրջ 200 մանկավարժների օրհնության կարգը: Արարողությանը նաեւ ներկա են եղել ներկայացուցիչներ Աժ կրթության մշտական հանձնաժողովից, ԿԳՆ աշխատակիցները, ՀՀ մարզպետարանների կրթության վարչությունների պետերը, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկ-

60 «Առավոտ», 13/04/2010, «119-ի փոքրիկ քրիստոնյաները»:

61 «Առավոտ», 05/07/2010, «Նվերների տուփերում՝ աղանդավորական գրքեր»:

տորները, ՀՀ քուլեջների եւ ուսումնարանների տնօրենները, Երեւանի եւ մարզերի դպրոցների ու մանկապարտեզների ներկայացուցիչներ, Մայր աթոռի կրթական հաստատությունների՝ Գեւորգյան հոգեւոր ծեմարանի, Սեւանի Վազգենյան դպրանոցի, «Էօրնեկյան» հանրակրթական դպրոցի տեսչության անդամները»⁶²:

«Գոլոս Արմենիի» թերթը առաջարկում է մտցնել հայ ուսուցչի և աշակերտի «պատվի օրենսգիրք».

«Սենք առաջարկում ենք հայ ուսուցչի և իր աշակերտի իրավունքների օրենսգիրք:

Հայը իրավունք ունի՝

-Հայաստանի Հանրապետության քաղաքացիության,

-Հայ առաքելական Սուրբ եկեղեցու համայնքի անդամության,

-ազգային դպրոցի դասասեղանի մոտ տեղի,

-հայ ազգային մշակույթի աշխարհում տեղի,

-Ընտանիքի, Դպրոցի, Պետության և Հայության սիրելիի,սանի և մոնթի տեղի»⁶³:

103

07.04.2007-ին ուժի մեջ մտած «ՀՀ և Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը կանոնակարգում է պետական կրթական հաստատություններում եկեղեցու իրավունքները. «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները.», սակայն ըստ 3-րդ կետի՝ «Պետությունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը՝ կամավորության հիման վրա»:

Ըստ էության, կամավորության սկզբունքի խախտում է հանդիսանում ինչպես ուսուցիչների երդման արարողությունը եկեղեցում կատարելու փաստը վերադասի՝ կրթության և գիտության նախարարի մասնակցությամբ, այնպես էլ ուսուցիչների և տնօրենների կողմից հանրակրթական դպրոցներում կրոնական արարողությունների և միջոցառումների կազմակերպումը:

«Գիտելիքի օրվան նվիրված եկեղեցական պատարագից հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն հայտարարեց, որ ինքն անձամբ է հետեւում, որ դպրոցներում «Հայ եկեղեցու պատմություն» առարկան որակյալ դասավանդվի եւ արդյունքներն արդեն զգալ են

62 «Ազգ», 01/09/2010, «Ամենայն հայոց հայրապետն օրհնեց մանկավարժներին»:

63 “Голос Армении”, 17/08/2010, “КОДЕКС АРМЯНСКОГО УЧИТЕЛЯ И ЕГО УЧЕНИКА”, Мы предлагаем “Кодекс прав и обязанностей Армянского учителя и его Ученика.

АРМЯНИН ИМЕЕТ ПРАВО:

- на гражданство Республики Армения;

- на место в пастве Святой Апостольской Армянской Церкви;

- на место за партой в национальной школе;

- на место в мире национальной армянской культуры;

- на место любимца, воспитанника и послушника Семьи, Школы, Государства и Армянства”

տալիս, քանի որ երիտասարդ-եկեղեցի կապն ամրանում է»⁶⁴:

Միևնույն ժամանակ, լրատվամիջոցները փորձում են բացահայտել այն դպրոցները, որտեղ հնարավոր է այլ կրոնական կազմակերպությունների գործունեությունը:

«Հայաստանում նախորդ շաբաթ փակված մասնավոր դպրոցներն աղանդավորական կառույցներ են եղել», - գրում է «Չորրորդ ինքնիշխանություն» թերթը:

Պարբերականի համաձայն, Հայաստանի ազգային անվտանգության ծառայության աղբյուրները տեղեկացրել են, որ «Հուլյսի փարոս» և «Կյանքի խոսք» դպրոցներում քարոզվում էին կոնկրետ աղանդավորական գաղափարախոսություններ:

Նույն աղբյուրը հայտնել է, որ երեխաների ուսուցման վճարն իրականացրել են գաղտնի աղանդավորական կազմակերպությունները, որոնք վերոնշյալ դպրոցների հովանավորներն են, և հենց այս հանգամանքներն են պատճառ դարձել դպրոցների փակման համար:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանն իր հերթին հայտարարել է, որ լիցենզիայի դադարեցման վերաբերյալ որոշում ընդունելիս կրթության նախարարությունն առաջնորդվել է լիցենզավորման մասին օրենքով, և համապատասխան ստուգումները թույլ են տվել հայտնաբերել խախտումներ, որոնք հիմք են հանդիսացել նման որոշում ընդունելու համար:

Նախորդ շաբաթ կրթության նախարարի հրամանով փակվել են մի քանի մասնավոր դպրոցներ, որտեղ սովորում է 450 աշակերտ»⁶⁵:

Այստեղ մենք հանդիպում ենք երկակի մոտեցման դրսևորումների, տարբեր կազմակերպությունների հանդեպ տարբեր մոտեցումներ են կիրառվում:

«Արդեն 7-րդ տարին է, ինչ Հայ Առաքելական Եկեղեցին և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կազմակերպում են «Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն» և բնագիտական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների ուսուցիչների մրցույթ: Եվ, ինչպես հաղորդում են ԿԳՆ-ից, Սայր աթոռ Սուրբ Էջմիածնում այսօր կայացավ 2010 թվականի մրցույթի հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը»⁶⁶:

«Կրթական համակարգը պատրաստում է ապագայի հայ քաղաքացուն, ով իր մեջ, բացի գիտելիքից, ժողովրդավարական և այլ արժեքներից, պետք է կրի նաև հայ քրիստոնյայի դարավոր արժեքները: Մեր Սահմանադրությունը ճանաչում է Հայ Առաքելական Եկեղեցու բացառիկ դերն ազգային ինքնության պահպանման, հոգևոր և մշակութային դաստիարակության հարցում, իսկ ազգային ինքնությունը մտածելա-

64 Hetq.am, 2010/08/31, <http://hetq.am/am/society/garegin-b-2/>. «Կաթողիկոսի տվյալներով՝ աղանդավորները քչացել են»:

65 «Նովոստի-Արմենիա», 27/ 04/ 2010, <http://ar.newsarmenia.ru/arm1/20100427/42239365.html>, «Հայաստանում փակված մասնավոր դպրոցներն աղանդավորական կառույցներ են եղել»:

66 Panorama.am, 23/11/2010, <http://www.panorama.am/am/education/2010/11/23/armen-ashotyan/>, «Ա. Աշոտյան. «Հայ Առաքելական Եկեղեցին՝ հայ դպրոցի պահպան»:

կերպ է, որը քեզ համահունչ է դարձնում քո ազգին բնորոշ քաղաքակրթական տարրերին: Ո՞վ դա կանի ավելի լավ, քան եկեղեցին», - իր խոսքում հայտարարել է ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը:

Նախարարը կարևորել է նաև եկեղեցի-կրթություն- բանակ համագործակցությունը և ընդգծել, որ առանց եկեղեցու չկա կրթություն, չկա բանակ, և այդ համագործակցությունն օրեցօր ավելի մեծ զարգացում է ստանում, քանի որ «Հայ դպրոցը ստեղծվել է հոգևոր արժեքների շուրջ, և հայ դպրոցի մշտական հովանավորն ու պահապանը եղել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին»⁶⁷:

«Լրագիր» կայքին տված հարցազրույցում այսպես է մեկնաբանում իր քաղաքականությունը ԿԳ նախարար Ա. Աշոտյանը.

«Դա ավելի շատ ավանդույթի խնդիր է: Եվ հետո արտաքին ժեստերի, միմիկանների միջոցով չի կարելի գնահատել այս կամ այն ազգի՝ հավատքին հավատարիմ լինելու երևույթը: Մեր Առաքելական եկեղեցին հետևողականորեն վերականգնում է իր դերն ու կշիռը հայ հասարակական կյանքում՝ դառնալով հիմնական գործոններից մեկը, և սա ես՝ որպես ՀՀ քաղաքացի, միայն ողջունում եմ: Վեհափառը հետևողականորեն նախաձեռնություններ է իրականացնում կրթական ոլորտում: Որպես կրթության լիազոր մարմնի պատասխանատու՝ այս ընթացքում և հետայսու պատրաստ եմ հետևողականորեն աջակցություն ցուցաբերել եկեղեցուն՝ իր դաստիարակչական արժեքային բաղադրիչով մտնելու մեր դպրոցներ և կրթական համակարգ ընդհանրապես»⁶⁸:

Կրոնական խնդիրների շահարկումը ներքաղաքական այայբարում

2008 թվականի նախագահական ընտրություններից հետո Հայաստանում տեղի էին ունեցել ընտրությունների օրինականությունը վիճարկող զանգվածային բողոքի ակցիաներ, բազմահազարանոց հանրավաքներ և երթեր: 2008-ի մարտի 1-ին իշխանությունները ուժի կիրառման շնորհիվ ճնշել են հուզումները, որի հետևանքով եղել է առնվազն 10 զոհ: Ընդդիմադիր թեկնածուն Լևոն-Տեր Պետրոսյանն էր:

Այդ դեպքերից հետո որոշ լրատվամիջոցներ տպագրել են տեղեկություններ, իբր հանրահավաքներին մասնակցել են նաև կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները: 2009 թվականին մեր պատրաստած «Կրոնական անհանդուրժողականությունը Հայաստանում, Մամուլի մոնիթորինգ-2009» ուսումնասիրության մեջ մենք ներկայացրել էինք նման մի քանի հոդվածների ուսումնասիրությունը⁶⁹:

67 Նույն տեղում:

68 iragir.am, 23/04/2010, «Մաքսիմալ ընդունելի լուծումներ»:

69 http://www.religions.am/index.php?option=com_content&view=article&id=1946:%D4%BF% D5%B8%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1% D5%B6% D5% B0% D5% A1% D5% B6% D5%A4%D5%B8%D6%82%D6%80%D5%AA%D5%B8%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%80% D5%A1%D5% B5% D5% A1%D5%BD% D5% BF% D5%A1%D5%B6% D5%B8%D6%82% D5%B4&catid=187 :analitika & Itemid =856

Նման հոդվածներ տպագրվել են նաև 2010-ի ընթացքում:

Մինչ դրանք ներկայացնելը, մեջբերենք 2009-ին պատրաստված մամուլի մոնիթորինգի այդ վերլուծությունից մի հատված.

«Աղանդները չէ՞ն մասնակցում քաղաքական գործընթացներին»⁷⁰ հոդվածում բերվում են տվյալներ, որոնց աղբյուրի մասին հոդվածագիրը գաղտնի է պահում. «Մեր ստացած հավաստի տեղեկատվության համաձայն, Հայաստանում գործող «Եհովայի վկաներ» քայքայիչ եւ անբողջատիրական աղանդի անդամները, ինչպես նաեւ նշված աղանդին հարողները (պիոներները կամ անդամության թեկնածուները), փոքր բացառությամբ, մասնակցել են 2007թ. Ազգային ժողովի եւ 2008թ. նախագահական ընտրություններին: Ի դեպ, սա եւ այլ մանրամասներ մեզ հայտնի դարձան շնորհիվ Եհովայի վկաներից ոմանց անզգուշության եւ տեղեկատվության արտահոսքի, ինչպես նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշ անդամների ուշիմության: Նրանք նկատել էին խմբերով ընտրության եկած անձանց, որոնց ծանաչել են որպես Եհովայի վկաների:

Ինչպես հայտնի է, Եհովայի վկաները, որոշ այլ աղանդների անդամների նման, հրապարակայնորեն եւ մասնավոր զրույցներում հայտարարել ու հայտարարում են քաղաքական գործընթացներին, այդ թվում՝ ընտրություններին իրենց չմասնակցելու վերաբերյալ: Նախկինում թերեւս հենց այդպես էլ կար: Սակայն ելնելով վերը նշվածից, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում Եհովականները, ամենայն հավանականությամբ ենթարկվելով ինչ-որ մի վերին հրամանի կամ հրահանգի, որոշել են հանուն Եհովայի բացառություն կատարել: Այսինքն՝ համարել են, որ եկել է այդ պահը..

Թերեւս առավել ուշագրավն այն է, որ Եհովայի վկաները, մեր ստացած տեղեկությունների համաձայն, Ազգային ժողովի ընտրություններին քվեարկել են «ժառանգություն» կուսակցության եւ հիշյալ կուսակցության առաջադրած թեկնածուների օգտին: Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների ժամանակ էլ քվեարկել են հօգուտ թիվ 9-ի, այսինքն՝ քվեաթերթիկում 9-րդ համարի դիմաց նշված L. Տեր-Պետրոսյանի»:

Հոդվածում «Եհովայի վկաներ» կազմակերպության անդամներին մեղադրանք է ներկայացվում մի բանում, որը նրանց սահմանադրական իրավունքն է: Մյուս կողմից՝ որպես ինֆորմացիայի աղբյուր է նշվում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների տվյալները, որը «Ընտրական օրենսգրքի» խախտում է, քանզի ընտրություններին մասնակցությունը եւ քվեարկությունը համարվում է գաղտնի: Հոդվածում փորձ է արվում այն միտքը ներշնչել ընթերցողներին, որ Հայաստանի նկատմամբ գոյություն ունի դավադրություն արտերկրից, իսկ կրոնական կազմակերպությունները հանդիսանում են օտար ուժերի գործիքը այդ դավադրության մեջ: Միաժամանակ, մեղադրանքներ են հնչեցվում «ժառանգություն» կուսակցության նկատմամբ, որը նույնպես մասնակցում է այդ «դավադրությանը» եւ այդ պատճառով «խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ մտցնելու նախագծին դեմ է քվեարկել:

⁷⁰ «Հայոց աշխարհ», 20/03/2009թ. #51:

Հողվածը շարունակում է «բացահայտել» նաև «Կյանքի խոսք» եկեղեցուն եւ նրա ղեկավարին. «Հայաստանում «Կյանքի խոսք» «եկեղեցիների» միության նախագահ, 1995 թվականից երեւանյան եկեղեցու ավագ պաստոր (բողոքականների քահանա) Արթուր Սիմոնյանը, մեզ հասած հավաստի տեղեկատվության համաձայն, 2007թ. դեկտեմբերից մինչեւ 2008թ. հունվարի 15-ը, այսինքն՝ նախագահական ընտրությունների նախօրեին, գտնվել է ԱՄՆ-ում, մասնավորապես՝ Լոս Անջելեսում, Սիեթլում, Պորտլենդում, Սակրամենտոյում...»: Հողվածում շարունակվում են «ապացույցներ» բերվել ընտրությունների ժամանակ կրոնական կազմակերպությունների «դավադրության» մասին: Թերթի հաջորդ համարում հողվածը շարունակվում է⁷¹. «Մոտ մեկ տարի առաջ մարտյան հայտնի իրադարձություններից հետո «Կյանքի խոսքի» (աղանդի հայաստանյան կառույցի) կայքում զետեղվեց մի ուշագրավ տեղեկատվություն, որը ներկայացնում ենք թարգմանաբար եւ հատվածաբար, մեր հարցադրումներով ու մեկնաբանություններով հանդերձ.

«Փետրվարի 19-ին Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնցից հետո, պաշտոնական տվյալներով, առաջին ընտրական փուլում ծայների մեծամասնությունը տրված է այժմ գործող վարչապետին: Սակայն մեծամասնությունը համոզված է, որ ընտրությունների արդյունքները կեղծված են: Դա ժողովրդի մեջ հուզումների պատճառ է հանդիսացել»:

Հետաքրքիր է՝ քաղաքական գործընթացներից «հեռու» այս աղանդն այդ ինչի՞ հիման վրա որոշեց, թե ընտրությունների արդյունքների կեղծված լինելու համոզմունքը ընտրողների մեծամասնությանն է: Մի՞թե սրանով չի փաստվում իբրեւ կրոնական կազմակերպություն հանդես եկող կառույցի եւ կողմնակալ դիրքորոշումը, եւ ինչ-ինչ առնչությունը քաղաքական գործընթացներին:

Եւս մեկ մեջբերում «Կյանքի խոսքի» կայքի հիշյալ տեղեկատվությունից. «Վարչապետի կողմնակիցները ցանկացած գնով ուզում են պահել իշխանությունը, դրա հետ կապված սկսվել են ընդդիմության գործիչների եւ նրանց կողմնակիցների հետապնդումները»:

Բնավ չենք զարմանա, եթե վերը բերված զրպարտելի տեղեկատվությանը կամ հայտարարությանը հանդիպեինք հիշական մամուլում, լեւոնականների որեւէ կայքում, բայց ընդգծում ենք, այն «Կյանքի խոսքի» կայքից է:

Վերջինիս նույն տեղեկատվության մեջ նշված է նաև. «Միաժամանակ առաջացել է երկրի հավատացյալների կրոնական ազատությունների խախտման սպառնալիք: Դա պայմանավորված է նրանով, որ գործող վարչապետին նախընտրական ամբողջ արշավի ընթացքում ակնհայտորեն աջակցում էին կաթողիկոսը եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քահանաները, որոնք նույնպես անմիջական ներկայություն են ունեցել քաղաքական իրադարձություններում»:

71 «Հայոց աշխարհ», 21/03/2009թ. #2:

Եթե մի պահ նույնիսկ ընդունենք, թե դա այդպես է եղել, ապա այն ժամանակ վարչապետ եւ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին կաթողիկոսի եւ այլ հոգեւորականների բարոյական աջակցությունը եւ օրհնությունն ինչպե՞ս կարող էին «երկրի հավատացյալների կրոնական ազատությունների խախտման սպառնալիք» առաջացնել: Այդպիսի կապի մասին հայտարարելը, կարծում ենք, նույնիսկ անհեթեթ է:

Թերեւս առավել ուշագրավը «Կյանքի խոսքի» հիշյալ տեղեկատվության վերջին նախադասությունն է. «Ներկա վարչապետին աջակցող այդ իսկ ուժերը (նկատի ունի կաթողիկոսին եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու քահանաներին.- Ա.Յ.) Հայաստանում հոգեւոր մենաշնորհի կողմնակիցներ են եւ ավետարանչական եկեղեցիներին համարում են աղանդներ, որոնց մեղադրում են ընդդիմության թեկնածուի քվեարկությանը կազմակերպված մասնակցության մեջ»:

Նման մեղադրանք մեզ հայտնի չէ, բայց, այնուհանդերձ, ինչպե՞ս չհարցնել՝ մի՞թե հիշյալ քվեարկությանը կազմակերպված մասնակցությունը չի համապատասխանում իրականությանը: Հանենայն դեպս, ավետարանական ընտանիքի անդամ եկեղեցի հանդես եկող «Կյանքի խոսքի» աղանդ լինելը, ինչպես նաեւ նրա անդամների կողմից կազմակերպված մասնակցությունը հօգուտ Լ.Տեր-Պետրոսյանի քվեարկության՝ գոնե մեզ կասկածի տեղիք չի տալիս»:

2009-ի փետրվարին «Հայոց աշխարհ» օրաթերթի խմբագրի հոդվածում զուգահեռներ են տարվում քաղաքական ընդդիմության եւ կրոնական կազմակերպությունների միջեւ, որոնք անվանվում են «աղանդներ»։ «...Հիշեցնենք, որ օրինագիծը զգալիորեն հեշտացնում է աղանդների գործունեությունը մեր երկրի տարածքում: Ըստ որում՝ ոչ միայն «Եհովայի վկաների», մորմոնների եւ ամեն տեսակի, ներողություն արտահայտությանս համար, «Պարող եղբայրների» կարգի կրոնական աղանդների, այլեւ քաղաքական աղանդների: Մասնավորապես՝ «Լեւոնի աղանդի»... Կրկնում ենք, սեփական աղանդ ստեղծելու Տեր-Պետրոսյանի որոշումն ընդհանուր առմամբ բացատրելի է: Դժվարությամբ է բացատրվում մեկ այլ բան. ինչո՞ւ է կոալիցիան ցանկանում ընդունել աղանդների գործունեությունը հեշտացնող օրենք:

Եվ ինչո՞ւ է, թույլ տվեք հարցնել, օրինագծում բացակայում Նեռի մասին հոդվածը՝ Քրիստոսի եւ Աստծո այդ հակառակորդի, «ծովից ելնող զազանի», որը պիտի հայտնվի աշխարհի վերջից առաջ եւ առաջնորդի խավարի ուժերը: Կոալիցիան ջայլամի պես նախընտրում է մտցնել զլուխն ավագի մեջ ու ձեւացնել, թե ոչինչ չի՞ տեսնում: Նույնիսկ այն, որ կաթողիկոսին մերժած Լեւոն-Նեռը արդեն մեկուկես տարի թափառում է հայոց աշխարհում:

Ի դեպ, ինչպես հայտնի է, Նեռի չարագործությունների ընդհանուր ժամկետը 42 ամիս է, այսինքն՝ երեքուկես տարի, ինչը հայելային արտացոլմամբ համապատասխանում է Քրիստոսի քարոզչության տեւողությանը:

Այնպես որ՝ հույսներս չդնենք խորհրդարանի վրա, այլ զինվենք համբերությամբ, քույրեր եւ եղբայրներ: Բարոյական չարիքի թագավորությանը, որտեղ «մարդիկ կլինեն եսամոլ, արծաթասեր, մեծամիտ, ամբարտապան, զագրախոս, ծնողամերժ, երախտամոռ, սրբապիղծ, անբարյացակամ, անհաշտ, զրպարտիչ, զեխ, դաժան, բարիատյաց, դավաճան, լկտի, գոռոզ, ավելի շատ տարփասեր, քան աստվածասեր, մնացել է ընդամենը երկու տարի»⁷²:

2010-ին նույն տրամաբանությամբ հողվածները շարունակվել են տպագրվել: «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության և վերականգնողական կենտրոնի» նախագահ Ալեքսանդր Ամարյանը նորից է անդրադառնում 2008-ի մարտի 1-ի դեպքերին «աղանդավորականների մասնակցության» խնդրին:

«Մարտի 1-ի դեպքերի հետ կապված՝ ես տեսա, որ օպերայի հրապարակում աղանդավորներ էին հավաքվել: Չեմ ասի՝ 100-տոկոսանոց, բայց մեծ մասը աղանդավորներ էին, -այսօր լրագրողների հետ զրույցի ընթացքում ասել է Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության և վերականգնողական կենտրոնի նախագահ Ալեքսանդր Ամարյանը՝ հավելելով, թե նրանք խարիզմատիկ եկեղեցու հետևորդներն էին:

Նա նաև ավելացրել է, որ կրոնը գործունե կերպով մտել է քաղաքականության մեջ, և պետություն-կրոն հարաբերությունները քաղաքականացվում են:

-Ու դա մեր պետությունը, չգիտես ինչու, լուրջ չի ընդունում»⁷³:

Հասարակության մեջ կրոնական կազմակերպությունների նկատմամբ թշնամու կերպարի ձևավորման քաղաքականությունը փորձ է արվում օգտագործել քաղաքական ընդդիմադիր շարժումների նկատմամբ: «Եհովայի վկաներ» կազմակերպության անվանման նմանությամբ շրջանառության մեջ է դրվել քաղաքական ընդդիմության «անվանում»՝ «Լևոնի վկաներ»: Ընդդիմության ղեկավարը Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն է: Փորձ է արվում կրոնական կազմակերպությունների հետ կապել նաև ընդդիմադիր «ժառանգություն» կուսակցությանը: Այս ամենի զավեշտն այն է, որ հենց Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք՝ 1994-95-ին կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների նկատմամբ տեղի են ունեցել հարձակումներ և հալածանքներ, որոնք կատարվել են ոստիկանների ներկայությամբ: Դրանից հետո նման զանգվածային հարձակումներ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների նկատմամբ Հայաստանում չի եղել: Ավելին, Տեր-Պետրոսյանի կողմից առաջնորդվող ընդդիմությունը երբեք հանդես չի եկել խղճի ազատության սկզբունքի պաշտպանությամբ: Այնուամենայնիվ, նրա նկատմամբ «մեղադրանքները» շարունակվում են:

⁷² «Զինվենք համբերությամբ, քույրեր եւ եղբայրներ», «Հայոց աշխարհ», 25/02/2009:

⁷³ 7or.am, 11/12/2010, <http://7or.am/hy/news/2010-12-11/20846/>, «Մարտի 1-ին օպերայում հավաքվածների մեծ մասն աղանդավորներ էին»:

«Մեր աղբյուրները փաստում են, որ վերջերս իր առանձնատանը Լևոն Տեր-Պետրոսյանը երկարատև առանձնազրույց է ունեցել «Երևանի ավետարանական եկեղեցի» աղանդավորական կառույցի ղեկավար Լևոն Պարտազյանի հետ: «Երևանի ավետարանական եկեղեցու» գործունեությունը կարելի է գնահատել որպես հակահայկական, քանի որ այդ աղանդի գաղափարախոսությունը տարբերվում է Հայ առաքելական եկեղեցու դավանաբանությունից և խորթ է հայ ժողովրդի պատմականորեն ձևավորված աշխարհայացքին, ինչի մասին բազմիցս է խոսվել լրատվության զանգվածային միջոցներում:

Մի՞թե այդ ամենը հայտնի չէ ԼՏՊ-ին: Ինչպիսի քննարկման ընդհանուր թեմա կարող են ունենալ իրեն Հայ առաքելական եկեղեցու հետևորդ ներկայացնող քաղաքական գործիչը և Հայ եկեղեցու ու հայ հասարակության դեմ պայքար վարող աղանդի ղեկավարը:

Երևի տեղին կլիներ հիշեցնել, որ հենց ԼՏՊ-ն իր իշխանության տարիներին ոչ մի քայլ չի ձեռնարկել սահմանափակելու աղանդավորականության տարածումը, իսկ այսօր նա երկարատև զրույցներ է ունենում մի աղանդի ղեկավարի հետ, որին հասարակությունը չի ընդունում: Ակնհայտ է, որ ԼՏՊ-ն, կորցնելով Կոնգրեսի կառավարման բոլոր լծակները և քայլ առ քայլ մերժվելով հասարակության գիտակից զանգվածի կողմից, փորձում է համախոհներ ձեռք բերել աղանդավորների շրջանում, անկախ նրանց բարոյական, հոգևոր և քաղաքական պատկերացումներից ու արժեքներից: Միայն թե իրեն չմերժեն:

ԻՆՉՊԻՍԻ ՆՊԱՏԱԿ Է ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԼՏՊ-Ի ԱՅՂ ՔԱՅԼԸ: Կամ նա հույս ունի ապահովել իր համար իրենց ղեկավարներին հնազանդ աղանդավորական ընտրազանգվածով կամ էլ փորձում է ստանալ արտասահմանում գործող տարբեր աղանդավորական կենտրոնների ֆինանսական կամ այլ կարգի աջակցություն: ԼՏՊ-ն հասկանալով, որ կորցրել է իր ընտրազանգվածը և առհասարակ իր աջակիցների մեծամասնությունը, ըստ երևույթին, փորձում է ձեռք բերել նորերին»:⁷⁴

74 «Голос Армении», 17/07/2010, «ОТ ПОЛИТИЧЕСКОГО АВАНТЮРИЗМА - К ПОЛИТИЧЕСКОЙ ДЕГРАДАЦИИ», «Так, наши источники свидетельствуют, что недавно Левон Тер-Петросян в своем особняке имел длительную беседу с руководителем сектантской организации Евангелическая Церковь Еревана Левоном Бердакчяном, человеком, который не имеет ничего общего с Армянской Апостольской Церковью, всячески охаивает ее и занимается прозелитизмом. Деятельность "Евангелической Церкви Еревана" можно расценить только как антиармянскую, так как идеология секты существенно отличается от вероучения Армянской Апостольской Церкви и чужда исторически сформировавшемуся мировоззрению армянского народа, о чем неоднократно говорилось и в средствах информации. Неужели все это неизвестно Л.Т.-П.? Какие могут быть общие темы для обсуждения у политического деятеля, представляющего себя обществу в качестве верного последователя Армянской Апостольской Церкви, и руководителя секты, ведущей духовную борьбу против Армянской Церкви и армянского общества? Может быть, уместно напомнить, что именно Л.Т.-П. в годы, когда он руководил страной, не предпринимал никаких шагов для ограничения распространения сектантства, а сегодня он проводит длительные беседы с руководителем секты, не приемлемой обществом. Очевидно, что Л.Т.-П., утративший все свои рычаги управления конгрессом и постепенно отвергаемый сознательной частью общества, пытается найти единомышленников в среде сектантов, независимо от их моральных, духовных, политических представлений и ценностей. Лишь бы его не отвергали.

КАКУЮ ЦЕЛЬ ПРЕСЛЕДУЕТ ПОДОБНЫЙ ШАГ Л.Т.-П.? То ли он надеется обеспечить себя в дальнейшем выборным электоратом с помощью послушных своему лидеру сектантов, то ли желает получить финансовую и иную поддержку от различных религиозных центров зарубежья. Л.Т.-П., осознавая, что утратил свой электорат и вообще большинство своих сторонников, вероятно, пытается приобрести новых»

«Յոգեբան Կարինե Նալչաջյանն, այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսելով աղանդների ու նրանց տարածվածության մասին, նշել է, թե դա նախ և առաջ հոգեբանական ազդեցություն է, որտեղ շահարկվում են մարդկանց կրոնական զգացմունքները.

-Նկատել է՞ք՝ քարոզիչները փողոցում երբեք մենակ չեն լինում, նրանք միշտ ման են գալիս զույգերով, որովհետև իրար վերահսկում են: Այսինքն՝ տոտալ վերահսկում է ներսից, տոտալ զրպարտություններ են, այնտեղ վերահսկվում է ամեն ինչ՝ մարդու անձնական կյանքի պարզ, ինտիմ մանրամասներով:

Յոգեբանն ավելացրել է, որ Եհովայի վկաները մարդու հոգեբանության վրա ազդեցության շատ նուրբ մեխանիզմներ են օգտագործում: Իսկ իրենց կառույցներն ամուր պահելու համար ուսումնասիրում ու օգտագործում են հոգեբանության ժամանակակից բոլոր մեթոդները:

Նա նաև շատ վտանգավոր է համարել այն փաստը, որ Հայաստանում և արդեն իսկ Արցախում էլ աղանդավորական շարժումների թիվը մեծացել է: Դա, ըստ հոգեբանի, Հայաստանի պես փոքր երկրի համար շատ վտանգավոր է և նույնիսկ կործանարար»⁷⁵:

Կրոնական խնդիրների արծարծման տարբեր դիրքորոշումները ՋԼՄ-ներում

Այս բաժնում ներկայացնում ենք տարբեր խնդիրների կոնկրետ դեպքերի վերաբերմունքի մասին մեջբերումներ, որոնք փաստում են, որ խղճի ազատության հարցը արդիական է Հայաստանում, սակայն հրապարակային բաց քննարկումներ, որոնց ժամանակ կինչեն տարբեր տեսակետներ, դիրքորոշումներ, Հայաստանում չեն կազմակերպվում: Հասարակական տեսակետների կանոնակարգումը բացակայում է: Հեռուստատեսային եթերը ներկայացնում է միայն մեկ տեսակետ: Այս բաժնում ներկայացնում ենք տարբեր հրապարակումներից մեջբերումներ՝ առանց մեկնաբանության:

«Զինվորական ծառայությունից հրաժարվող անձանցից շատերը փորձում են խուսափել պարտադիր և նույնիսկ այլընտրանքային զինծառայությունից՝ դա պատճառաբանելով կրոնական սկզբունքներով: Այսօր այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության և վերականգնողական կենտրոնի նախագահ Ալեքսանդր Ամարյանը:

Նա նաև հավելել է, թե իրականությանը չեն համապատասխանում կրոնական կառույցների գործունեությունը ոտնահարելու և խափանելու վերաբերյալ տեղեկությունները, քանի որ Հայաստանի Հանրապետությունում չկա մի այնպիսի օրենք, որով արգելվի, սահմանափակվի կրոնական կառույցի գործունեությունը, չկա մի օրենք, որով կարողա-

⁷⁵ 7or.am, 11/12/2010, <http://7or.am/hy/news/2010-12-11/20854/>, «Յոգեբան. «Աղանդավորական շարժումները մեր երկրի համար կործանարար են»:

ման մտնեն՝ այդ կառույցը ստուգեն: Չկան մասնագետներ՝ ոչ իրավաբաններ, ոչ հոգեբաններ, ոչ կրոնագետներ:

Ըստ բանախոսի՝ Հայաստանում չկա մի օրենք, որը ինչ-որ չափով կսահմանափակեր աղանդավորական շարժումների գործողությունները, և դա կապված է նրա հետ, որ իշխանությունը վախենում է Եվրախորհրդի արձագանքից ու գերադասում ընդհանրապես ոչինչ չձեռնարկել՝ թույլ տալով, որ դրանք խարխլեն պետության, հասարակության հիմքերը»⁷⁶:

«Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ Գուգարքի թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը Թուրքիայում պատրիարքի թեկնածության ընտրություններում անհաջողության հասնելուց հետո վերադարձել է Լոռու մարզ, որտեղ նրա հայտնվելուց հետո կրոնական անհանդուրժողականությունը նոր որակներ է ձեռք բերում:

Դպրոցներում տիրող իրավիճակի մասին մենք նախորդ տարի մեր ընթերցողներին տեղեկացրել ենք, այս տարի հերթը հասել է բանակին: Ըստ Վանաձորի ավետարանական հավատքի եկեղեցու ավագ հովիվ Ռաֆայել Գրիգորյանի տեղեկատվության, Լոռու մարզի զինկոմիսարիատի մի պաշտոնյայի ցանկանում են աշխատանքից հեռացնել, պատժառաքանելով, որ նա իրենց եկեղեցու անդամ է, ինչն իրականության հետ ոչ մի առնչություն չունի:

112

Եկեղեցու հովիվը պաշտոնական տեղեկանք է ներկայացրել զինկոմիսարիատ առ այն, որ այդ պաշտոնյան իրենց եկեղեցու անդամ չէ, սակայն մեզ մտահոգող խնդիրը այլ է:

Պնախարար Սեյրան Օհանյանը պարտավոր է մեզ բացատրել, թե սահմանադրության որ կետի կամ ՀՀ օրենսդրության որ օրենքի և որ հոդվածի հիման վրա է բանակում կատարվում հավատաքնություն, այն էլ այս կամ այն կրոնին չպատկանելու մասին պաշտոնական փաստաթղթի հիման վրա, և առհասարակ Հայաստանյայց առաքելական եկեղեցին ի՞նչ կապ ունի ՊՆ կադրային քաղաքականության հետ: Անհամբեր սպասում ենք պարոն Օհանյանի պարզաբանմանը»⁷⁷:

«Այս տարվա՝ ՀՀ նախագահի պետական մրցանակի դափնեկիր, երիտասարդ արձակագիր Արամ Պաչյանի նկատմամբ հետապնդումներ եւ սպառնալիքներ են սկսվել: Օրերս անհայտ անձինք ֆեյսբուքում սպառնալիքներով լի նամակներ են հղել նրան եւ դրանք բացատրել են նրա կողմից Ամենայն հայոց կաթողիկոսի դեմ ուղղված ոտնձգություններով: Հիշեցնենք, որ նա իր գրական գործում հանդգնել էր կաթողիկոսի մասին գրել այնպես, ինչպես կգրեր շարքային մահկանացուների մասին: Ավելի ուշ հայտնի է դարձել, որ կաթողիկոսն եւս անմասն չէ այս հետապնդումներից՝ նա նամակներ է հղել պետական մրցանակ տրամադրող հանձնաժողովին եւ Գրողների միության նախագահ Լևոն Ամանյանին: Նրանցից

76 7or.am,11/12/2010, <http://7or.am/hy/news/2010-12-11/20851/>, «ՀՀ-ում չկա մի օրենք, որով աղանդավորական շարժումների գործողությունները սահմանափակվեն»:
77 www.iragir.am, 12/11/2010, «Հավատաքնություն բանակում»:

հաշիվ պահանջել, թե՛ այս ո՞ւմ եք նրցանակ տվել: Անանյանին անգամ հրավիրել են էջմիածին բացատրություն տալու»⁷⁸:

«Աղանդավորական շարժումները, ներառելով մեր իրականության բոլոր ոլորտները, այնքան են ընդլայնվել, որ սովորական երևույթ են դարձել՝ խախտելով ժողովրդի մեջ արմատացած բարոյահոգեբանական չափանիշների ողջ համակարգը: Սրան նպաստում են նաև պետության և եկեղեցու ցուցաբերած անտարբերությունն ու թերևս թաքուն և բացահայտ աջակցությունը:... Ներկայիս Հայաստանում գործող բազմաթիվ աղանդների շարքում են եհովայի վկաները, հոգեգալստականները, մորմոնները, մունիստները...»⁷⁹:

«Բաց հասարակության ինստիտուտը» ներկայացրել է Հայաստանում կրոնական հանդուրժողականության մասին զեկույց՝ անդրադառնալով բացառապես կրոնական փոքրամասնությունների խնդիրներին և պնդելով, թե Հայաստանում պարբերաբար ոտնահարվում են դրանց իրավունքները:

ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի վարչությունն իր հերթին մեղադրում է զեկույցի հեղինակներին՝ պնդելով, որ վերջիններս միտումնաբար են պաշտպանում օտար կառույցներին, քանի որ ֆինանսավորվում են դրանց կողմից:

Ըստ վարչության պատասխանատուների, Հայաստանում իսկապես եղել են կրոնական առանձին խմբերի գրանցումը մերժելու դեպքեր, սակայն միայն այն ժամանակ, եթե փորձագիտական եզրակացությունը փաստել է, որ նրանց գործունեության ու երկրի օրենսդրության պահանջների միջև առկա է անհամապատասխանություն:

Այդ հիմնավորմամբ մերժված հայտերից վերջինը «եհովայի վկաներ» կազմակերպությանն էր:

Մեկ այլ դեպքում բացահայտվել է, որ Հելսինկյան իրավապաշտպան կազմակերպությունը, սնվելով Սայենթոլոգիայի եկեղեցուց, պաշտպանում է նրա շահերը: ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունները 66-ն են, բայց կան բազմաթիվ այլ կրոնական խմբավորումներ, համայնքներ, որոնք գրանցված չեն կամ գրանցված են որպես հասարակական կազմակերպություն, օրինակ՝ չինական «քրիստոնեական» համայնքը՝ Մունի եկեղեցին»⁸⁰:

«ԱՄՆ-ի պետդեպարտամենտը վերջերս հրապարակել է 2010 թ. «Կրոնական ազատությունների մասին» զեկույցը, որտեղ Հայաստանը ներկայացվում է որպես կրոնական փոքրամասնությունների ազատությունը սահմանափակող պետություն: Ըստ զեկույցի, բնակչությունը հիմնականում բացասաբար է վերաբերվում կրոնական փոքրամասնությունների բոլոր խմբերին, նրանք ընկալվում են պետության համար սպառնալիք: Ներկայացված է նաև զինվորական ծառայությունից կամ

78 «Հրապարակ», 24/06/2010թ. «Հետապնդումներ»:

79 www.ankakh.com, 15.11.2010, <http://ankakh.com/2010/11/68891/>, «Աղանդները Հայաստանում»:

80 <http://asekose.com/?p=1654>, 31/05/2010, «Միջամտելով Աստծո գործերին»:

այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար ազատագրված Եհովայի վկաների թիվը:

Ցավալին այն է, որ հսկայածավալ զեկույցը դարձել է խլուրդային գործունեություն ծավալող եւ նորմալ մարդկանց տականքի վերածող մի շարք աղանդավորական կազմակերպությունների խոսափող»:⁸¹

«Յետեւաբար, հասարակական անհանդուրժողականությունը պետք է միշտ լինի ու արդարացված է: Պետք է պայքարել աղանդավորների դեմ, քանի դեռ նոր զոհեր չեն արձանագրվել, քանի դեռ նոր ծնողասպաններ ի հայտ չեն եկել: Յայաստանը փոքր պետություն է, որի 350.000 բնակչությունն արդեն լրացրել է այդ գլխաքանակը. պայքարը նրանց դեմ պետք է սկսել այսօրվանից, վաղը ուշ կլինի»⁸²:

«Ընդհանուր առմամբ ստացվում է, որ Յայաստանում պետական մակարդակով գործունեություն չի իրականացվում աղանդների դեմ պայքարելու համար: Կրոնական կառույցների վերաբերյալ օրենքները ուղղակի չեն գործում, հոգեորոշյալ մասին օրենքն էլ «օդում կախված» վիճակում է»⁸³:

81 «Ազգ», 30/11/2010, «Զեկույցը թերի է, հասարակության անհանդուրժողականությունը»:

82 Նույն տեղում:

83 «Ազգ», 11/12/2010, « Քաղաքացիներին պաշտպանել հոգեբանական պատերազմից և հեռու պահել աղանդներից»:

Նախագիծ

Հայաստանի Հանրապետության օրենքը «Խղճի և կրոնական ազատությունների մասին»

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի խղճի, կրոնի և համոզմունքի, այդ թվում՝ կրոնը կամ համոզմունքը փոխելու իրավունքի ազատության, ինչպես նաև կրոնական խմբերի և կազմակերպությունների գործունեության, իրավունքների և պարտականությունների հետ առնչվող հարաբերությունները:

Հոդված 2. Խղճի, կրոնի և համոզմունքի ազատության ապահովման երաշխիքները

115

1. Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի համար երաշխավորվում է խղճի, կրոնի և համոզմունքի ազատությունը:
2. Այս իրավունքը ներառում է ցանկացած կրոն դավանելու կամ չդավանելու, համոզմունք ունենալու կամ չունենալու, կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, կրոնը կամ համոզմունքը ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ հրապարակավ կամ մասնավոր կարգով ուսուցման, քարոզի, եկեղեցական արարողությունների կամ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը, այդ թվում՝ առօրյա կյանքում սեփական կրոնի և համոզմունքների համաձայն գործելու ազատությունը:
3. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է ծնողների և խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:
4. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական միավորումների ազատությունը:

Հոդված 3. Խտրականության և միջամտության արգելքը

1. Հայաստանի Հանրապետությունում բոլոր մարդիկ, անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից, կրոնական պատկանելիությունից կամ համոզմունքներից, հավասար են օրենքի առջև: Ցանկացած խտրականություն՝ պայմանավորված անձի կրոնական

պատկանելիությամբ կամ կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, արգելվում է:

2. Խղճի, կրոնի և համոզմունքների ազատության ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, այդ թվում նաև պաշտամունքի անհատական կամ խմբային դրսևորումների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կրոնական հողի վրա հետապնդումները, կրոնական թշնամանքի հարուցումը կամ ատելության հրահրումը անթույլատրելի են և օրենքով նախատեսված դեպքերում առաջացնում են վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Պ-լուխ 2. Խղճի, կրոնի և համոզմունքի ազատության արտահայտման սահմանափակումները

116

Հոդված 4. Խղճի, կրոնի և համոզմունքի ազատությունը սահմանափակելը

1. Խղճի, կրոնի և համոզմունքի ազատության արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ հասարակական անվտանգության, մարդկանց առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Այս սահմանափակումը ներառում է նաև հոգեորսության (ոչ պատշաճ պրոսեկիտիզմ) և կրոնական կազմակերպությունների գաղտնի գործելու արգելքը:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է այլ կրոնական կամ դավաբանական պատկանելիություն կամ հայացքներ ունեցող անձանց նկատմամբ այնպիսի քարոզչական ներգործությունը, որն անհամատեղելի է խղճի, կրոնի կամ համոզմունքի ազատությունը հարգելու հետ:
3. Հոգեորսությունը այլ կրոնական կամ դավաբանական պատկանելիություն կամ հայացքներ ունեցող անձանց նկատմամբ դավանափոխ անելու նպատակով կրոնական բնույթի ցանկացած քարոզչական ներգործություն է, որը դրսևորվում է այդ անձի կամ նրա մերձավորի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, նյութական կամ սոցիալական բնույթի առավելություն տրամադրելով կամ կախվածությունը օգտագործելով, այլ կրոնի, համոզմունքի կամ կրոնական կազմակերպության նկատմամբ թշնամանք հարուցելով կամ ատելություն հրահրելով, անձին երկու կամ ավելի անգամ հե-

տապնդելով, տասնչորս տարին չլրացած անչափահասի նկատմամբ՝ առանց նրա ծնողների կամ խնամակալների համաձայնության:

4. Հոգեորսությունը օրենքով նախատեսված դեպքերում առաջացնում է քրեական կամ վարչական պատասխանատվություն:
5. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է այն կրոնական միավորումների և կազմակերպությունների գործունեությունը, որոնք իրենց գործունեության ընթացքում իրականացնում են կամ փորձում են իրականացնել իրենց անդամների անձնական կյանքի, առողջության, սեփականության եւ վարքի վերահսկողություն:
6. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է առանց ծնողների համաձայնության կրոնական քարոզչությունը կամ կրոնական քարոզչության փորձերը այն դաստիարակչական կամ նախակրթական կամ կրթական հաստատություններում, որտեղ դաստիարակվում կամ ուսումնառում են անչափահաս անձինք:

117

Գլուխ 3. Կրոնական միավորումները

Հոդված 5. Կրոնական միավորումները և կրոնական կազմակերպությունները

1. Յուրաքանչյուր ոք կրոնը կամ համոզմունքը հրապարակավ կամ մասնավոր կարգով դավանելու, ուսուցանելու, եկեղեցական արարողությունների կամ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու նպատակով իրավունք ունի այլ անձանց հետ կազմելու կրոնական միավորումներ:
2. Կրոնական միավորումը Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձանց կամավոր միություն է, որը ստեղծվում է իրենց հավատքը համատեղ դավանելու ու տարածելու նպատակով:
3. Կրոնական միավորումները կարող են ստեղծվել կրոնական խմբի և կրոնական կազմակերպության տեսքով:
 - 1) Կրոնական խումբը մինչև 25 չափահաս հետևորդներ ունեցող անձանց միավորում է, որը ստեղծվել է մասնակիցների հավատքը համատեղ դավանելու և տարածելու նպատակով և գործում է առանց պետական գրանցման:
 - 2) Կրոնական կազմակերպությունը կրոնական այն միավորումն է, որը ստեղծվել է մասնակիցների հավատքը համատեղ դավանելու և տարածելու նպատակով, ունի առնվազն 25 չափահաս անդամ և օրենքով սահմանված կարգով գրանցվել է որպես իրավաբանական անձ:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են.
 - 1) Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր ավանդական կազմակերպություններով.
 - 2) կրոնական այլ կազմակերպություններ:

Հոդված 6. Կրոնական կազմակերպության պետական գրանցումը

1. 25 և ավելի չափահաս հետևորդներ ունեցող կրոնական խումբը ենթակա է պարտադիր պետական գրանցման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից, եթե առկա չեն սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված մերժման հիմքերը:
2. Կրոնական կազմակերպությունը գրանցելու համար պետք է ներկայացվեն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները բավարարող կանոնադրությունը:
3. Կրոնական կազմակերպության կանոնադրությունը պետք է տեղեկություններ պարունակի կրոնական կազմակերպության բնույթի, դավանական պատկանելության, հավատքի կամ համոզմունքի նկարագրության, կրոնական միավորման կառուցվածքի, գործելու վայրի, աղոթատեղիների և գույքային դրության, կազմակերպություններ հիմնելու, ուսումնական և հրատարակչական հաստատություններ ստեղծելու մտադրությունների, գործունեության դադարեցման դեպքում գույքային և այլ հարցերի լուծման կարգի մասին, ինչպես նաև կազմակերպության գործունեության այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

Հոդված 7. Կրոնական կազմակերպության գրանցումը մերժելու հիմքերը

1. Կրոնական կազմակերպության պետական գրանցումը մերժվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածով և 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները չբավարարելու դեպքում:

Գլուխ 4. Կրոնական կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները

Հոդված 8. Կրոնական կազմակերպությունների իրավունքները

1. Կրոնական կազմակերպությունների իրավունքներն են.
 - 1) իրենց շուրջ համախմբել իրենց հավատացյալներին.

- 2) ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական կարիքների ու պահանջմունքների բավարարումը.
 - 3) կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ աղոթատներում և դրանց պատկանող տարածքում, ուխտատեղիներում և դրանց անցկացման համար նախատեսված այլ վայրերում, ինչպես նաև գերեզմանոցներում, քաղաքացիների տներում և բնակարաններում, հիվանդանոցներում, ծերանոցներում, ազատազրկման վայրերում, զորամասերում՝ այնտեղ գտնվող և տվյալ կրոնական կազմակերպության անդամ հանդիսացող քաղաքացիների խնդրանքով.
 - 4) սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով չնախատեսված դեպքերում հրապարակային ժամասությունները, կրոնական ծեսերն ու արարողությունները կատարվում են «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
 - 5) ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր իրենց անդամների ու նրանց երեխաների կրոնական կրթության համար՝ ծնողների համաձայնությամբ, այդ նպատակով օգտագործելով իրենց պատկանող կամ հատկացված շինությունները.
 - 6) զբաղվել աստվածաբանական, կրոնական, պատմամշակութային ուսումնասիրություններով.
 - 7) պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր իրենց հոգևոր կենտրոնների կրթական հաստատություններում.
 - 8) ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության նյութեր և առարկաներ.
 - 9) կապեր հաստատել այլ երկրների կրոնական կազմակերպությունների հետ, հրավիրել նրանց ներկայացուցիչներին, իրենց հավատացյալներին գործուղել արտասահման՝ ուխտագնացության, ժողովների և կրոնական այլ միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև ուսման կամ հանգստի նպատակով.
 - 10) ձեռք բերել օրենքով չարգելված ցանկացած գույք և օրենքով ու իր կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինել, օգտագործել և տիրապետել այդ գույքը:
2. Կրոնական կազմակերպությունները կարող են դիմել այլ անձանց և կազմակերպություններին կամավոր դրամական և այլ նվիրատվությունների խնդրանքով, ստանալ և տնօրինել դրանք:
 3. Կրոնական կազմակերպությունների ստացած դրամական և այլ նվիրատվությունները, անձանցից ստացվող հասույթները հարկման ենթակա չեն:
 4. Սույն հոդվածով սահմանված իրավունքներն առաջանում են տվյալ կրոնական կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստանալու պահից:

**Հոդված 9. Կրոնական կազմակերպությունների
պարտականությունները**

1. Կրոնական կազմակերպությունները պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլ կրոնական կազմակերպությունների և խմբերի, այդ թվում՝ այլ կրոնական կամ դավանաբանական պատկանելիություն ունեցող անձանց խղճի և կրոնի, համոզմունքի ազատությունը:
2. Կրոնական կազմակերպությունները պարտավոր են ապահովել պետության կողմից որպես սեփականություն իրենց հանձնված կառույցների, տարածքների և մյուս ունեցվածքի, ինչպես նաև իրենց սեփականություն հանդիսացող պատմական հուշարձանների պահպանությունը և ըստ նշանակության օգտագործումը:
3. Կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել օտարերկրյա պետություններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից:
4. Կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների կողմից և ֆինանսավորել նրանց:

120

**Գլուխ 5. Պետության և կրոնական կազմակերպությունների
հարաբերությունները**

**Հոդված 10. Պետության և կրոնական կազմակերպությունների
հարաբերությունները**

1. Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատված է պետությունից:
Սույն հիմնադրույթի համաձայն՝ պետությունը՝
 - 1) չի միջամտում եկեղեցու և կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին, արգելում է եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն.
 - 2) արգելում է եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու և կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական ֆունկցիա:
2. Պետությունը ճանաչում է խոստովանության գաղտնիությունը: Քրեական հետապնդման մարմիններում և դատարանում որպես վկա չի կարող հարցաքննվել ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը գործի այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ:

Հոդված 11. Լիազոր մարմնի իրավասությունները

1. Պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունները կարգավորում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից, որը՝
 - 1) գրանցում է կրոնական կազմակերպություններին.
 - 2) վերահսկողություն է իրականացնում կրոնական կազմակերպությունների գործունեության նկատմամբ.
 - 3) միջնորդում է դատարանին կասեցնելու կամ դադարեցնելու օրենքը խախտող կրոնական կազմակերպությունների գործունեությունը.
 - 4) կրոնական կազմակերպությունների խնդրանքով աջակցում է առանձին հարցերի շուրջ պետական մարմինների հետ համաձայնության գալու և անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս այդ հարցերի լուծմանը պետական մարմինների կողմից.
 - 5) պետության անունից որպես միջնորդ մասնակցում է Հայաստանի կրոնական կազմակերպությունների միջև ծագած հարցերի և վեճերի լուծմանը.
 - 6) իրականացնում է սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

121

Գլուխ 6. Կրոնական կազմակերպության գործունեության հրապարակայնությունը

Հոդված 12. Կրոնական կազմակերպության գործունեության հրապարակայնությունը

1. Կրոնական կազմակերպության գործունեությունը հրապարակային է:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջն ապահովելու նպատակով կրոնական կազմակերպության բարձրագույն մարմնի կողմից ձևավորված գործադիր մարմինը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ը իր պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակել կազմակերպության՝
 - 1) տարեկան եկամուտների (այդ թվում՝ անդամավճարների) ընդհանուր գումարը.
 - 2) տարեկան ծախսերի ընդհանուր գումարը.
 - 3) նախորդ տարվա ընթացքում իրականացված գործունեության նկարագրությունը, ծրագրերի անվանումներն ու վայրերը (եթե իրականացվել են).
 - 4) տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմակերպության անդամների քանակը.
 - 5) կազմակերպության ղեկավար մարմինները և դրանք պաշտոնա-

վարող անձանց անուններն ու ազգանունները.
6) կազմակերպության գտնվելու վայրը:

3. Կազմակերպությունն իր պաշտոնական կայքէջի հասցեի վերաբերյալ ծանուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը (այսուհետ՝ լիազոր մարմին):
4. Պաշտոնական ինտերնետային կայքէջ չունեցող կազմակերպությունները սույն հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկատվությունը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացնում են լիազոր մարմնին՝ լիազոր մարմնի համապատասխան կայքէջում հրապարակելու համար:

Պլուխ 7. Կրոնական կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը

Հոդված 12. Կրոնական կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը

122

1. Կրոնական կազմակերպության կողմից օրենքների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:
2. Կրոնական կազմակերպության կողմից օրենքների պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում, որոնք կարող են վերացվել կազմակերպության ձեռնարկած միջոցառումներով, լիազորված մարմինը կազմակերպություն է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ դրանում սահմանելով հայտնաբերբած խախտումների վերացման կարգն ու ժամկետները:

Պլուխ 8. Կրոնական կազմակերպության գործունեության կասեցումը և դադարեցումը

Հոդված 13. Կրոնական կազմակերպության գործունեության կասեցումը

1. Սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում լիազոր մարմինը կարող է միաժամանակ դիմել դատարան՝ կրոնական կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջով, եթե առանց դրա հնարավոր չի լինի վերացնել կամ կանխել խախտումները:
2. Կրոնական կազմակերպության գործունեությունը կարող է կասեցվել ոչ ավել, քան 6 ամիս ժամկետով:

3. Կրոնական կազմակերպությունը կասեցման ժամանակահատվածում կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացնելու դեպքում կարող է դիմել դատարան՝ կասեցումը վերացնելու պահանջով:
4. Սահմանված ժամկետում կրոնական կազմակերպության կողմից խախտումները չվերացվելու դեպքում պետական լիազոր մարմինը կարող է դիմել դատարան կասեցման ժամկետը երկարաձգելու կամ սույն օրենքի 14-րդ հովածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված հիմքով կրոնական կազմակերպությունը լուծարելու պահանջով:
5. Կասեցման ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավել, քան 2 ամիս ժամկետով:

Հոդված 14. Կրոնական կազմակերպության լուծարումը

1. Կրոնական կազմակերպությունը կարող է լուծարվել՝
 - 1) կրոնական կազմակերպության բարձրագույն մարմնի որոշմամբ.
 - 2) սնանկության հետևանքով՝ օրենքով սահմանված կարգով.
 - 3) դատական կարգով՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:
2. Դատական կարգով կրոնական կազմակերպությունը ենթակա է լուծարման, եթե՝
 - 1) կրոնական կազմակերպության գործունեությունն ուղղված է սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասայական, կրոնական ատելություն կամ թշնամանք հրահրելուն կամ բորբոքելուն, բռնություն կամ պատերազմ քարոզելուն.
 - 2) կրոնական կազմակերպության կողմից՝ օրենքների պահանջների այնպիսի խախտումներ կատարելու դեպքում, որոնք չեն կարող վերացվել կազմակերպության ձեռնարկած միջոցառումներով.
 - 3) կրոնական կազմակերպությունը սույն օրենքի 12-րդ հովածի 2-րդ մասով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստանալուց հետո սահմանված ժամկետում չի վերացրել խախտումները.
 - 4) կրոնական կազմակերպությունը սույն օրենքի 12-րդ հովածի 2-րդ մասով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույնաբնույթ խախտում.
 - 5) կազմակերպության պետական գրանցման ժամանակ ներկայացված փաստաթղթերը պարունակել են էական նշանակություն ունեցող կեղծ տվյալներ:
3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով կրոնական կազմակերպության լուծարման համար դատարան է դիմում լիազոր մարմինը:

4. Սույն հոդվածի 2–րդ մասով սահմանված հիմքերով կրոնական կազմակերպությունը լուծարվում է, եթե խախտումը վերացնելու կամ կանխելու այլ միջոցները սպառված են կամ այլ կերպ հնարավոր չէ վերացնել խախտումները:
5. Դատարանը կարող է սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետով կասեցնել կրոնական կազմակերպության գործունեությունը, եթե խախտումները հնարավոր է վերացնել կամ կանխել առանց կրոնական կազմակերպության լուծարման:
6. Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Գլուխ 9. Եզրափակիչ և անցումային դրույթներ

Հոդված 15. Եզրափակիչ և անցումային դրույթներ

124

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Եթե մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացվել է կրոնական կազմակերպություն գրանցելու դիմում և մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը այդ կազմակերպությունը չի ստացել պետական գրանցում, ապա դրա գրանցումը իրականացվում է սույն օրենքի պահանջներին համապատասխան:
3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» 1991 թվականի հունիսի 17-ի Ն-0333-Վ օրենքը:

Նախագիծ

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության եվ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ- 80-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին հոդվածով.

«Հոդված 12.1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և պետության հարաբերությունները

1. Պետությունը չի խոչընդոտում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մենաշնորհի հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը.
 - 1) ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանաբանության պաշտոնական լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով կամ զանգվածային միջոցառումների ժամանակ կարող է իրականացվել միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հավանությամբ.
 - 2) վերստեղծել իր պատմական ավանդույթները, կառուցվածքը, կազմակերպությունները, թեմերն ու համայնքները.
 - 3) կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող պատմական հուշարժան-եկեղեցիները ինչպես հավատացյալների խնդրանքով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ.
 - 4) նպաստել հայ ժողովրդի հոգևոր կրթությանը օրենքով սահմանված կարգով նաև պետական կրթական հաստատություններում.
 - 5) գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը.
 - 6) ծավալել բարեգործական և բարեխնամ գործունեություն.
 - 7) ունենալ մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, զառամյալների և հաշմանդամների տներում, զորամասերում, ազատագրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարանները:
2. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին որպես ազգային եկեղեցի, որը գործում է նաև հանրապետության տարածքից դուրս, ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝ միջազգային իրավական նորմերի սահմաններում:
3. Ազգային տաղավար տոներին հաջորդող աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է տեղափոխվել նախորդ կամ հաջորդ շաբաթ օրը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ

Հայաստանի Հանրապետության օրենքը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 205.2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 205.2. Անչափահասների նկատմամբ կրոնական քարոզչությունը

1. Առանց ծնողների համաձայնության կրոնական քարոզչությունը կամ կրոնական քարոզչության փորձերը այն դաստիարակչական կամ նախակրթական կամ կրթական հաստատություններում, որտեղ դաստիարակվում կամ ուսումնառում են անչափահաս անձինք, առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:
2. Կրոնական քարոզչություն իրականացնելու նպատակով՝ տանաչորս տարին չլրացած անչափաս անձանց մասնակցությամբ, առանց նրանց ծնողների համաձայնության կրոնական խմբեր կազմավորելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով»:

Հոդված 2. Օրենսգրքի 205.3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 205.3. Կրոնական խումբը գրանցելուց խուսափելը

1. Կրոնական խմբի ղեկավարի կողմից 25 և ավելի չափահաս հետևորդներ ունեցող կրոնական խումբը գրանցելուց խուսափելը կամ գրանցման համար ներկայացված փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից հարյուրապատիկի չափով»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 205.4-րդ հոդվածով.

«Հոդված 205.4. Դավանափոխ անելու նպատակով հետապնդելը կամ նյութական կամ սոցիալական բնույթի առավելություններ տրամադրելը

1. Դավանափոխ անելու նպատակով այլ կրոնական կամ դավաբանական պատկանելիություն կամ հայացքներ ունեցող անձի նկատմամբ

կրոնական բնույթի ցանկացած քարոզչական ներգործություն, որը դրսևորվում է այդ անձին երկու կամ ավելի անգամ հետապնդելով կամ նյութական կամ սոցիալական առավելություն տրամադրելով՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով»:

Հոդված 4. Օրենսգրքի 206-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 206. Կրոնական կազմակերպությունների կողմից օրենքի պահանջները խախտելը

1. Կրոնական կազմակերպության կողմից յուրաքանչյուր տարվա համար մինչև դրան հաջորդող տարվա մարտի 25-ը իր պաշտոնական ինտերնետային կայքէջում իր տարեկան եկամուտների և ծախսերի գումարի, նախորդ տարվա ընթացքում իրականացված գործունեության նկարագրության, ծրագրերի անվանումների ու վայրերի, այդ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմակերպության անդամների քանակի, կազմակերպության ղեկավարների և դրանք պաշտոնավարող անձանց, նախորդ տարում անցկացված բարձրագույն և ղեկավար մարմինների նիստերի քանակի, կազմակերպության գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվություն չհրապարակելը կամ ինտերնետային կայքէջ չունենալու դեպքում այդ տեղեկատվությունը ՀՀ արդարադատության նախարարություն չներկայացնելը կամ դրանում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:
2. Կրոնական կազմակերպությունների կողմից օտարերկրյա պետություններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ֆինանսավորում ստանալը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից հազարապատիկի չափով:
3. Կրոնական կազմակերպությունների կողմից կուսակցություններին ֆինանսավորելը կամ նրանցից ֆինանսավորում ստանալը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:
4. Կրոնական կազմակերպությունների կողմից իրենց անդամների անձնական կյանքի, առողջության, սեփականության եւ վարքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ մտնում է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ

Հայաստանի Հանրապետության օրենքը

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 160-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

128

- «1. Անձի՝ ցանկացած կրոն դավանելու կամ չդավանելու, համոզմունք ունենալու կամ չունենալու, կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությանը, կրոնը կամ համոզմունքը ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ հրապարակավ կամ մասնավոր կարգով ուսուցման, քարոզի, եկեղեցական արարողությունների կամ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությանը, այդ թվում՝ առօրյա կյանքում սեփական կրոնի և համոզմունքների համաձայն գործելու ազատությանը կամ կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությանը խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը նվազագույն աշխատավարձի երեք-հարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:
2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից.
 - 2) պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով.
 - 3) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ազգային, ռասայական կամ կրոնականատելության կամ մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 160.1-ին հոդվածով.

160.1 Հոգեորսությունը

- «1. Հոգեորսությունը այլ կրոնական կամ դավաբանական պատկանելիություն կամ հայացքներ ունեցող անձանց նկատմամբ կրոնական

բնույթի ցանկացած քարոզչական ներգործություն, որը դրսևորվում է նյութական, սոցիալական կամ ցանկացած այլ բնույթի առավելություն տրամադրելով կամ կախվածությունը օգտագործելով, այլ կրոնի, համոզմունքի կամ կրոնական կազմակերպության նկատմամբ թշնամանք հարուցելով կամ ատելության հրահրելով, տասնչորս տարին չլրացած անչափահասի նկատմամբ՝ առանց նրա ծնողների կամ խնամակալների համաձայնության, բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Հոգեորությունը, որը կատարվել է՝
 - 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից.
 - 2) պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով պատժվում է տուգանքով՝ առավելագույնը նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը՝ երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Հոգեորությունը, որը կատարվել է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

ԿՐՈՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

130

Համար 15
օգոստոս, 2011

Տպագրությունը օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ 70գմ²,
չափսը՝ 70x100 1/16, ճավալը՝ 8.25 տպ. մամ.,
տպաքանակը՝ 400 օրինակ:

